

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՕՂԱԿԱԶԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ CS/01  
(Վարկ No. 2752-ARM)



Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր,  
ՏՐԱՆՇ 2

Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույց  
Նախնական գնահատման հայտ

Խորհրդատու



Ֆինանսավորող  
գործակալություն



Ասիական զարգացման  
բանկ

Իրականացնող մարմին



*Ծրագրի No:*

*130115 L*

*Ծրագրի նախաձեռնող՝*

«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերությունը  
«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության  
հայաստանյան մասնաճյուղի  
միջոցով

**Գրանցման համարը՝ N 01 Բ936183**

*Ծրագրի նախաձեռնողի հասցեն՝* ՀՀ, ք. Երևան, Ջեյմս Բրայսի 19/1

*Ծրագիր՝*

*«Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույց»*

ընդհանուր երկարությունը՝ 6.5 կմ

*Նպատակը՝*

ճանապարհի կառուցում

*Ծրագրի իրականացման վայրը՝*

*Կենտրոն, Շենգավիթ, Մալաթիա-  
Սեբաստիա վարչական շրջաններ*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 7

    Ա1. Ծրագրի նախապատմությունը..... 8

    Ա2. Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակը ..... 9

Բ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ..... 11

    Բ1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը ..... 11

    Բ 2. Միջազգային բնապահպանական կանոնակարգեր..... 14

    Բ3. Վարչական շրջանակը..... 16

Գ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 20

    Գ1. Ծրագրի տեսակը ..... 20

    Գ2. Ծրագրի տեղադիրքը..... 22

    Գ 3. Աշխատանքների նկարագրությունը ..... 23

Դ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ..... 25

    Դ1. «Զրոյական» այլընտրանք ..... 255

    Դ2. «Երևան նախագծի» այլընտրանք ..... 266

    Դ3. ՔԿԶՆԾ-ի այլընտրանք ..... 26

Ե. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ..... 28

    Ե1. Ընդհանուր շրջանակը ..... 28

    Ե2. Օդի որակ ..... 32

    Ե3. Աղմուկ ..... 35

    Ե4. Թրթռումներ..... 37

    Ե5. Մակերեսային և ստորգետնյա ջրեր..... 39

    Ե6. Տեղագրություն, հողային ռեսուրսներ, երկրաբանություն, սեյսմոլոգիա ..... 42

    Ե7. Կենսաբազմազանություն ..... 444

    Ե8. Սոցիալ- տնտեսական պայմանները..... 53

Զ. ԿԱՆԻԱՏԵՍՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

    Զ1. Դրական արդյունքներ ..... 577

    Զ2. Բացասական ազդեցություններ..... 58

    Զ 3. Համապարփակ ազդեցության գնահատում..... 80

Է. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ..... 82

Նախնական գնահատման հայտ

Է1. Տեղեկատվության հրապարակում..... 82

Է2. Քննարկումներ և լուսմներ ..... 83

Է3. Բողոքների լուծման մեխանիզմ ..... 85

Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... 888

Ը1. Մեղմացնող միջոցառումներ ..... 90

Ը 2. Մոնիթորինգ..... 115

Ը 3. Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ) ..... 118

Ը.4 Իրականացման միջոցառումներ..... 118

Ը5. Հաշվետվողականություն ..... 118

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթիկ  
ՀԱՎԵԼՎԱԾ Բ: Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակի  
աղյուսակ 130

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծություն  
ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Հաստատումներ և թույլտվություններ  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ1 Նախագծման թույլտվություն  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ2. Նախագծային փորձաքննության եզրակացություն  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ-3. Նախագծող Խորհրդատուի դիմումը շինարարական աղբի  
տեղադրման վայրի վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Ելակետային հետազոտություններ  
ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Ծրագրի ազդեցությունները  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-1 Իսակով - Արշակունյաց ճանապարհահատվածի ծրագծի  
զգայուն ազդակիրների թերթիկ  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-2. Հատման ենթակա Սոսի արևելյան ծառերի և  
ապամոնտաժվող պարիսպի տեղադիրքը Արշակունյաց պողոտայում .  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-3. ԱԶԸ-րին պատճառված ուղղակի (D) և անուղղակի (I)  
ազդեցություններ  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-4. Ազդեցությունների խստությունը  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-5. Ազդեցության մեծությունը մինչև մեղմացնող միջոցառումների  
իրականացումը և դրանիցից հետո

ՀԱՎԵԼՎԱԾ Է. Հանրային լուսմների և հաղորդակցության մասին հաշվետվություն  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1. Ներածական հանդիպումներ Շենգավիթ, Կենտրոն և  
Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների ղեկավարների հետ  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2 Պաշտոնական ծանուցումներ ուղղված Շենգավիթ, Կենտրոն,  
Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների ղեկավարներին

## Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3. 1-ին հանրային քննարկման մասին հաշվետվություն

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-1. Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2020թ.-ի նոյեմբերի 4-ի համարում լույս տեսած հանրային քննարկման մասին հայտարարությունը

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-2. 2020թ.-ի նոյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-3 2020 թ. նոյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկումների մասնակիցների ցուցակը

ՀԱՎԵԼՎԱԾ Շ. Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի աղյուսակ..  
ՀԱՎԵԼՎԱԾ Թ. Կապալառուի Շինարարության բնապահպանական կառավարման պլանի կառուցվածքը

ՀԱՎԵԼՎԱԾ Ի. Պատահարի/ միջադեպի մասին հաշվետվության ձևանմուշ

ՀԱՎԵԼՎԱԾ Լ. Կանաչապատման նախագիծ

## ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ Ա-1. Իրականացնող մարմնի պատասխանատվությունների շրջանակ

Աղյուսակ Գ-1. Երթևեկության գոտիները՝ ըստ պիկետաժի

Աղյուսակ Ե-1. Ելակետային տվյալների հավաքագրման ծրագիր

Աղյուսակ Ե-2. Կլիմայական տարրերի արժեքները

Աղյուսակ Ե-3. Փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) կոնցենտրացիաները

Աղյուսակ Ե-4. Աղմուկի ելակետային չափագրումների արդյունքներ

Աղյուսակ Ե -5. Աղմուկի սահմանային թույլատրելի արժեքները

Աղյուսակ Զ-1. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման չափորոշիչներ

Աղյուսակ Զ-2. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նշանակության գնահատում

Աղյուսակ Զ-3. Ազդեցությունների ժամանակային ընդգրկումը

Աղյուսակ Զ-4. PM<sub>2.5</sub> և PM<sub>10</sub>-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները

Աղյուսակ Զ-5. Անցողիկ և շարունակական թրթռման սահմանները՝ ըստ շինության տեսակի

## ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Նկար Ե-1. Աղմուկի ելակետային չափագրումների համար ընտրված կետերի տեղադիրքը

## Նախնական գնահատման հայտ

Նկար Ե-2. Թրթռումների թեստային չափագրումների համար ընտրված կետերի տեղադիրքը

Նկար Ե-3. Հատված 1-ում (Մոնթե Մելքոնյան - Իսակով) և Հատված 2-ում (Արշակունյաց) հորատանցքերի վայրերը՝ ջրատար հորիզոններով

Նկար Ե-4. Ճանապարհի ծրագծի հատակագիծը

Նկար Ե-5. Ծրագրի տեղադիրքը Կենտրոն վարչական շրջանում

Նկար Ե-6. Ծրագրի տեղադիրքը Շենգավիթ վարչական շրջանում

Նկար Զ-1 Էսքիզային նախագծի, այդ թվում՝ բնապահպանական և սոցիալական ասպեկտների քննարկում

Նկար Զ-2. Մթնոլորտային օդի որակի չափագրումների կետերի գտնվելու վայրը

Նկար Զ-3 Թրթռումների շրջանակի պատկեր

Նկար Զ-4 Հնագիտական տեսանկյունից զգայուն տարածքի տեղադիրքը

Նկար Է-1 Բողոքների լուծման մեխանիզմի գրաֆիկական պատկերը

Նկար Է-3-3 2020 թ. նեյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկումների լուսանկարներ

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱ	Ազդակիր անձ
ԱԱԱ	Աշխատանքային անվտանգություն և առողջություն
ԱԱՀ	Աշխատանքների Առաջընթացի Հաշվետվություն
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն և շրջակա միջավայր
ԱԲԳ	Արագ բնապահպանական գնահատում (ստուգաթերթիկ)
ԱԳ	Ազդեցության գնահատում
ԱԶԱ	Արժեքավոր զգայուն ազդակիր
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԶԲ ԱՔՀ	Ասիական զարգացման բանկի Անվտանգության քաղաքականության հիմնադրույթներ
ԱՄ	Ազդակիր մարդիկ
ԲԳՈՒՇ	Բնաառահանանան անահատման և ուսումնասիրության շրջանակներ
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԲՊՄԿ	Բնության պահպանության միջազգային կազմակերպություն
ԲՄ	Բրիտանական ստանդարտներ
ԲՄՀ	Բրիտանական ստանդարտների հաստատություն
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ԳԿ	Գլխավոր կապալառու
ԳՄ	Գործադիր մարմին
ԳՕՍՏ	ՀՀ կողմից ընդունված ստանդարտներ
ԵԿ	Ենթակապալառու
ԵԿՆ ԾԻԳ	Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ
ԵՔ	Երևանի քաղաքապետարան
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԹՎԺ	Թերությունների վերացման ժամանակահատված
ԻՄ	Իրականացնող մարմին
ՀԼՀՊ	Հանրային լուսմների և հաղորդակցության պլան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն

## Նախնական գնահատման հայտ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՄԱԱ	Մասնիկի առավելագույն արագություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄՆԽ	Մանրամասն նախագծման խորհրդատու
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՇԲԿՊ	Շինարարության բնապահպանական կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՇՄՆՈՒ	Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
ՇՄԱ	Շեմի սահմանային արժեքը
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՍՄԿ	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ՎԽ	Վերահսկողության Խորհրդատու (Ինժեներ)
ՏԲԿՊ	Տեղանքի բնապահպանական կառավարման պլան
ՏՀԾ	Տվյալների հավաքագրման ծրագիր
ՔԹՊ	Քիմիական թթվածնի պահանջ
ՔԿԶՆԾ	Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր
ՕԳ	Օտարման գոտի

## Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Ա1. Ծրագրի նախապատմությունը

1. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (ՔԿԶՆԾ) Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույց CS/01 (վարկ No.2752-ARM), Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի իրականացումը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Բազմափուլային ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով: Բանկի քաղաքականությունը պահանջում է, որ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող և ֆինանսավորվող բոլոր ծրագրերը համապատասխանեն Անվտանգության քաղաքականության հիմնադրույթների (ԱՔՀ, 2009) պահանջներին: Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի ծրագիրը ամենայն հավանականությամբ պարունակելու է բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ, ուստի անվտանգության հիմնադրույթները կարևորվում են:

2. Շրջակա միջավայրի անվտանգության դրույթները կիրառվել են Ծրագրի բնապահպանական գննության և կատեգորիայի որոշման միջոցով: Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի գննությունն իրականացվել է ԵՔ ԾԻԳ-ի կողմից՝ Մանրամասն նախագծման խորհրդատուի (ՄՆԽ) միջոցով: Գործընթացն իրականացվել է՝ համաձայն ԱԶԲ ԱՔՀ-ի՝ ապահովելով առաջարկվող ծրագրի բնապահպանական անվտանգությունն ու կայունությունը և օժանդակելով Ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բնապահպանական նկատառումների դիտարկմանը: Այն հնարավորություն ընձեռեց Ծրագիրը դասակարգել ԱԶԲ ԱՔՀ-ի և ազգային նորմատիվային պահանջներին համապատասխան:

3. Բնապահպանական և սոցիալական գննության հիմնական նպատակն էր ապահովել, որ բնապահպանական և սոցիալական նկատառումները հաշվի առնվեն մանրամասն նախագծման վաղ փուլում՝ նպատակ ունենալով ցույց տալ առաջարկվող ծրագրի կայունությունը: Որոշվել է ազդեցության հետագա ուսումնասիրության և գնահատման խորության մակարդակը հաշվի առնելով ազգային և միջազգային նորմերի պահանջները, ինչպես նաև համապատասխան տվյալների և տեղեկատվության հավաքագրման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների շրջանակը և մեթոդաբանությունը: Ստուգման արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են Բնապահպանական գննության հաշվետվության մեջ:

4. Ծրագրի իրականացման պատասխանատուն կամ Իրականացնող մարմինը՝ Երևանի քաղաքապետարանն է (Պատվիրատու), որը գործում է Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵԿՆ ԾԻԳ) միջոցով: Ծրագրի վարչական շրջանակը, ներգրավված մարմինների պատասխանատվության շրջանակը և գործողությունները ներկայացված են 6-րդ պարբերությունում և մանրամասն ներկայացված են Բ3 բաժնում (Վարչական շրջանակը):

5. Սույն Նախնական գնահատման հայտի հաշվետվությունը պատրաստվել է ՇՄԱԳ-ի շրջանակում ԵԿՆ ԾԻԳ -ի կողմից՝ ի դեմս Մանրամասն նախագծման խորհրդատուի (ՄՆԽ)՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (2014 թ.)՝ ապահովելով առաջարկվող ծրագրի բնապահպանական անվտանգությունը և կայունությունը և օժանդակելով Ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բնապահպանական նկատառումների դիտարկմանը:

<sup>1</sup> Ինչպես սահմանված է Պայմանագրում՝ «Առաջադրանք 6-րդ»: Խորհրդատուին չի տրվել տեխնիկական վերահսկողության առաջադրանք:



**Ա2. Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակը**

6. Աղյուսակ Ա-1-ը ներկայացնում է Ծրագրի Իրականացնող մարմնի խնդիրները և գործողությունները: Այս աղյուսակը կազմված է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար (ՇՄԱԳ) Ծրագրի բնապահպանական դասակարգման հիման վրա, որի մանրամասները նկարագրված են ստորև<sup>2</sup>:

**Աղյուսակ Ա-1. Իրականացնող մարմնի պատասխանատվության և գործողությունների շրջանակը**

	<b>Առաջադրանքը</b>	<b>Ժամանակացույցը</b>	<b>Հետագա քայլեր/ձեռնարկվող գործողություն</b>
1	Ծրագրի դասակարգումը որոշելու նպատակով լրացնել Բնապահպանական նախնական գննության Արագ գնահատման ստուգաթերթիկը	ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից՝ ՄՆԽ -ի միջոցով Բնապահպանական նախնական գննության հաշվետվության փուլում	Բնապահպանական դասակարգումն իրականացվել է ԱԶԲ-ի կողմից
2	ՇՄ վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստված է ՀՀ օրենսդրական պահանջների և ԱԶԲ ԱՔՀ (2009) –ին համապատասխան	ՄՆԽ-ն՝ ԵԿՆ ԾԻԳ-ի հանձնարարությամբ, ծրագրի բնապահպանական դասը որոշելուց հետո	ՀՀ ՇՄՆ-ի եզրակացությունը ձեռք է բերվելու ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից ՄՆԽ -ի միջոցով  ՇՄԱԳ հաշվետվության հաստատումը ԱԶԲ-ի կողմից
3	Իմաստալից քննարկումներ և խորհրդակցություններ ազդեցության ենթակա շահագրգիռ կողմերի հետ՝ ԱԶԲ պահանջներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան	Կազմակերպվում է ՇՄԱԳ-ի շրջանակում ՄՆԽ -ի կողմից՝ ԵԿՆ ԾԻԳ-ի հանձնարարությամբ	Ձեռք է բերվել ազդեցության ենթակա Երևան համայնքի նախնական համաձայնությունը և ազդակիր վարչական շրջանների ղեկավարների նախնական հավանությունը
4	ՇՄԱԳ հաշվետվության հրապարակում	ԱԶԲ-ի հաստատումը ստանալուց հետո	Կիրառարակվի ԱԶԲ-ի և ԵԿՆ ԾԻԳ-ի պաշտոնական կայքերում
5	Թույլտվությունների և հաստատումների ձեռքբերում պետական գերատեսչական մարմիններից	Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը  և/կամ  աջակցություն կցուցաբերվի կապալառուին	ՀՀ ՇՄՆ-ի կողմից փորձաքննության եզրակացության ձեռքբերումը ՄՆԽ-ի կողմից՝ ԵԿՆ ԾԻԳ-ի հանձնարարությամբ  Ծառահատման թույլտվությունը՝ ԵԶ-ից
6	ՇՄԱԳ/ԲԿՊ-ն՝ որպես մրցութային և պայմանագրային փաստաթղթերի մի մաս	Նախքան մրցույթը	ԵԿՆ ԾԻԳ-ը ապահովում է, որ ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներառված լինեն մրցութային և պայմանագրային փաստաթղթերում
7	ՇՄԱԳ/ԲԿՊ հաշվետվությունների հասանելիությունը	Նախքան մրցույթը	ԵԿՆ ԾԻԳ-ն ապահովում է որ ա) ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներառված լինեն մրցութային և

<sup>2</sup> Ծրագրի ողջ ընթացքում բոլոր պատասխանատու մարմինների պատասխանատվության և գործողությունների աղյուսակը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Բ-ում:

Նախնական գնահատման հայտ

	Կապալառուների համար		<p>պայմանագրային փաստաթղթերում ՄՆԽ-ի կողմից</p> <p>բ) ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրվեն պաշտոնական կայքում,</p> <p>գ) ՇՄԱԳ/ԲԿՊ-ի թղթային օրինակը, այդ թվում՝ Պարտականությունների ամփոփագիրը փոխանցվեն Կապալառուին</p>
8	Շինարարական աշխատանքների բնապահպանական կառավարման պլան (ՇՄԿՊ)	Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը	<p>Կպատրաստվի Կապալառուի կողմից՝ ՄՆԽ-ի աջակցությամբ</p> <p>Կդիտարկվի և կհաստատվի ԵԿՆ ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կողմից</p>
9	ՇՄԱԳ/ԲԿՊ-ի պատշաճ իրականացում	Շինարարական աշխատանքների փուլում և թերությունների շտկման ժամանակահատվածում	Շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՇՄԱԳ/ԲԿՊ-ի պահանջներին վերահսկվում է ԾԻԳ-ի և Վերահսկող Խորհրդատուի կողմից՝ կանոնավոր ստուգայքերի միջոցով
10	ՇՄԱԳ-ի վերանայում և ազդեցության լրացուցիչ գնահատում	Նախագծում/կամ գործողություններում զգալի շեղումների կամ փոփոխությունների դեպքում	Փոփոխությունները և շեղումները ուսումնասիրվելու են, անհրաժեշտության դեպքում դմելու են ՇՄՆ և ԱԶԲ-ին Հնարավոր է ՇՄՆ կողմից եզրակացության և ԱԶԲ-ի կողմից բնապահպանական կատեգորիայի վերանայում
11	ԱԶԲ-ին ներկայացնել հաշվետվություն	Կիսամյակային հաշվետվություններ շինարարական աշխատանքների փուլում և թերությունների վերացման ժամանակահատվածում	ԵԿՆ ԾԻԳ-ի կողմից

## Բ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

### Բ1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը

7. Հայաստանն ունի բավական լավ մշակված շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրական և կարգավորման շրջանակ: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը (06.12.2015 թ.) սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների պատշաճ օգտագործման վերաբերյալ:

8. Օրենսդրական դաշտը պարունակում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող ավելի քան 30 օրենք և ավելի քան 100 օժանդակ իրավական կարգավորումներ: Ազգային քաղաքականությունը և օրենսդրական կարգավորումների շրջանակը, որոնք այս կամ այն չափով կիրառելի են ճանապարհաշինության ոլորտում, ինչպես նաև դրանց գործնական կիրառումը ուսումնասիրվել են նախնական գնմության փուլում: Բնապահպանական և սոցիալական պաշտպանության և ազդեցությունների գնահատման գործընթացի հետ առնչվող որոշ առավել կիրառելի ՀՀ օրենքներ և կանոնակարգեր թվարկված են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

### Բնապահպանական

#### *Օրենսգրքեր և օրենքներ*

- ✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (հուլիսի 22, 2014 թ.) պահանջում է որպիսի ծրագրերը ենթարկվեն բնապահպանական գնմությանն ու դասակարգմանը՝ ըստ գործունեության տեսակի, իրականացվի դրանց ազդեցությունների գնահատումը, այնուհետև իրականացվի ՇՄ գնահատման հաշվետվությունների փորձագիտական քննություն և փորձագիտական եզրակացության տրամադրում: Մույն օրենքի շրջանակում Շրջակա միջավայրի նախարարությունը հաստատում է զարգացման ծրագիրը: Համաձայն Գլուխ 3, հոդված 14-ի՝ սահմանված ցուցակում ընդգրկված ցանկացած գործունեություն իր նախագծման փուլում ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և միայն ՇՄՆ-ի դրական եզրակացությունը ստանալուց հետո ծրագրի գործողությունները կարող են մեկնարկել: Կարևոր են նաև Գլուխ 4-ի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացին վերաբերող ընթացակարգերը և պահանջները, ինչպես նաև Գլուխ 6-ը՝ Հանրային ծանուցման և հանդիպումների ընթացակարգերն ու պահանջները:
- ✓ «Թափոնների մասին» օրենքը (2004 թ.) կարգավորում է թափոնների (այդ թվում՝ շինարարական) հավաքումը, փոխադրումը, պահեստավորումը, մշակումը, վերաօգտագործումը և հեռացումը,
- ✓ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (2005 թ.) կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպումը:
- ✓ «Հայաստանում ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» օրենքը (2000 թ.) կարգավորում է տնտեսական գործունեության տեսչական ստուգումների կատարման ընթացակարգերը:

## Նախնական գնահատման հայտ

- ✓ «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը» (1994 թ., վերջին անգամ լրամշակվել է 2007թ.-ին) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային խտությունները և այլն:
- ✓ «ՀՀ ջրային օրենսգիրքը» (2002) ապահովում է իրավական հիմքեր երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների ապահովման համար: Համապատասխանում են «Ջրային օրենսգրքի» (2002 թ.) հետևյալ կանոնակարգերը և ընթացակարգերը՝ (ա) թույլտվությունների տրամադրման ընթացակարգը, (բ) սանիտարական ելքերը, (գ) ջրահեռացման ջրերի օգտագործումը, (դ) ջրային ռեսուրսների այլընտրանքային հաշվառում, (ե) անդրսահմանյան ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունների հասանելիություն, (զ) ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանություն, (է) պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցում, (ը) հանրության իրազեկում և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված փաստաթղթերի հրապարակում, ինչպես նաև ջրային ոլորտին և բնապահպանական խնդիրներին առնչվող ուղեցույցներ և այլ նորմատիվ փաստաթղթեր:
- ✓ «ՀՀ հողային օրենսգիրքը» (2001) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից:
- ✓ «Բուսական աշխարհի մասին» (1999) և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքները (2000) սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այն նաև սահմանում է տեսակների, մասնավորապես՝ էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիտորինգի և գնահատման պահանջները:
- ✓ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (11.11.1998 թ.):

### *Այլ իրավական ակտեր*

- ✓ ՀՀ կառավարության թիվ 1325-Ն որոշումը «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» (19.11.2014 թ.),
- ✓ ՀՀ կառավարության թիվ 121-Ն «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» որոշումը (30.01.2003թ.), նախատեսում է նշված գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշումը «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» (8.09.2011 թ.),
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1404-Ն որոշումը «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները

## Նախնական գնահատման հայտ

- սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-Ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ( 2. 11. 2017 թ.)
- ✓ ՀՀ կառավարության թիվ N108- Ն որոշումը «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-Ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (8.02. 2018 թ.)
  - ✓ ՀՀ առողջապահության թիվ 138 առ 06.03.2002 թ. հրամանը «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» № 2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին,
  - ✓ ГОСТ 17.2.4.05-83 «Բնության պաշտպանություն, մթնոլորտ, փոշու կախյալ մասնիկների որոշումը գրավիմետրիկ մեթոդով»,
  - ✓ ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների -ՄԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» (02.02.2006 թ.),
  - ✓ ՀՀ կառավարության թիվ N 75-Ն որոշում «Կախված տեղանքի առանձնահատկություններից յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» (27 հունվարի 2011 թ.)
  - ✓ ՀՀ կառավարության թիվ N967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» (14.08.2008 թ.)
  - ✓ ՀՀ կառավարության թիվ 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» (20.04.2002 թ.):
  - ✓ Շրջակա միջավայրի Նախարարի հրաման N64-L «Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի համակարգչային ծրագրերը սահմանելու մասին» (18.02.2020թ.)

## Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում

### *Օրենսգրքեր և օրենքներ*

- ✓ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը (2005 թ.),
- ✓ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (1998 թ.):

### *Այլ իրավական ակտեր*

- ✓ ՀՀ կառավարության թիվ 1631-Ն որոշումը «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (2004 թ.),
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշումը «Բժշկական գննության մասին» (2004 թ.),
- ✓ ՀՀ կառավարության թիվ 2390-Ն որոշումը «Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (2006 թ.):
- ✓ ՀՀ Առողջապահության նախարարի թիվ N 15-Ն հրամանը «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» (19 սպետեմբերի 2012 թ.)

## Ծրագրի դասակարգումը

9. Համաձայն ՀՀ ՇՄԱԳ մասին օրենքի Հոդված 14, կետ 5, 3) ա-ի՝ առաջարկվող Ծրագիրը դասակարգվում է որպես «Կատեգորիա Բ» և ենթակա է Հայաստանի պետական բնապահպանական փորձաքննության ընթացակարգի 2 փուլով՝ նախնական և հիմնական,

որի նպատակով պատրաստվել և սույն Նախնական գնահատման հայտի հաշվետվությունը, և այնուհետև ներկայացվելու է ՇՄԱԳ հաշվետվությունն ամբողջ ծավալով:

10. ՀՀ օրենսդրությամբ Ծրագրի բնապահպանական կատեգորիան որոշելու համար հաշվի են առնվել Ծրագրի հետևյալ չափանիշները.

- ✓ Հրազդան գետի վրայով 252 մ երկարությամբ և ավելի քան 28 մ երկարությամբ թռիչքներով ե/բ կամրջի կառուցումը,
- ✓ կառուցվող ճանապարհի ընդհանուր 6.5 կմ ընդհանուր երկարությունը (ներառյալ իջատեղերը), որը չի գերազանցում 10 կիլոմետր շեմը:

## Բ 2. Միջազգային բնապահպանական կանոնակարգեր

Բ2.1 Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին և արձանագրություններին

11. ՀՀ-ն ստորագրել և վավերացրել է ավելի քան 35 միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնցից 24-ը վավերացվել են սկսած 1993 թ.-ի գերխոնավ տարածքների պահպանության մասին Ռամսարի կոնվենցիայով: Առաջարկվող նախագիծը գննվել է միջազգային պարտավորությունների տեսանկյունից և եզրակացություն է արվել, որ Ծրագրի արդյունքում դրանցից ոչ մեկը չի խախտվելու:

Բ2.2 ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հիմնադրույթեր (2009 թ.)

12. Սույն ուսումնասիրությունն իրականացվել է՝ համաձայն ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հիմնադրույթների (ԱՔՀ, 2009), Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցի (2003 թ.) և Բնապահպանական ուսումնասիրության և գնահատման շրջանակի (ԲԳՈԻՇ), որոնք համաձայնեցված են ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև: Միջազգային ստանդարտներն ու ուղեցույցները, այդ թվում Համաշխարհային բանկի «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ընդհանուր ուղեցույցները» (2007թ.) կիրառվելու են ազգային ստանդարտների բացակայության դեպքում:

13. Բանկի քաղաքականությունը պահանջում է, որ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող և ֆինանսավորվող բոլոր ծրագրերը համապատասխանեն Անվտանգության քաղաքականության հիմնադրույթների (ԱՔՀ, 2009) պահանջներին, որոնք սահմանում են քաղաքականության սկզբունքները և նախանշում ԱՔՀ-ի իրագործման գործընթացը: Մասնավորապես, պետք է կիրառվեն բնապահպանական անվտանգության մեխանիզմները<sup>3</sup>:

14. Անվտանգության քաղաքականության հիմնադրույթները (ԱՔՀ, 2009) սահմանում է ազդեցության գնահատման (ԱԳ) պահանջներ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող բոլոր ծրագրերի համար: ՇՄ ազդեցության գնահատման հաշվետվությունը պահանջվում է բոլոր «Ա» և «Բ» բնապահպանական կատեգորիաների ծրագրերի համար, ընդ որում «Ա» և «Բ» կատեգորիաների հաշվետվությունների մանրամասնությունն ու ընդգրկունությունն ուղղակիորեն կապված են բնապահպանական ռիսկերի և պոտենցիալ ազդեցության մեծության հետ: ԱԶԲ Քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը՝ առաջարկվող ծրագրի գննության գործընթացի հնարավորինս վաղ սկսելն է՝ շրջակա միջավայրի

<sup>3</sup> ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագիր (2009 թ.), Ա. Համապարփակ հայտարարագիր ԱԶԲ-ի պարտավորության և քաղաքականության սկզբունքների վերաբերյալ, էջ 14, 1. Բնապահպանական անվտանգության մեխանիզմներ, քաղաքականության սկզբունքները, էջ 16:

## Նախնական գնահատման հայտ

գնահատման համապատասխան շրջանակը և հաշվետվության տեսակը որոշելու համար, որպեսզի ձեռնարկվեն հնարավոր ազդեցություններին և ռիսկերին համարժեք ուսումնասիրություններ:

### Բ 2.3 Նախնական գնություն և դասակարգում

15. Ծրագրի բնապահպանական կատեգորիան որոշելու նպատակով ՄՆԽ-ն ԾԻԳ-ի հանձնարարությամբ և ի աջակցություն ԱԶԲ-ի իրականացրել է նախնական գնություն և դասակարգում: Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցը որպես ՔԿԶՆ Ծրագիր գնվել է ԱԶԲ-ի դասակարգման համակարգի հիման վրա: Առաջարկվող Ծրագիրը ենթարկվել է մանրամասն գնության իր տեսակի, գտնվելու վայրի, մասշտաբի և հնարավոր բնապահպանական ազդեցությունների մեծության և ազդակիրների զգայունության տեսանկյունից:

16. ՄՆԽ-ի կողմից լրացվել է ԱԶԲ-ի Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկը, որը կցվել է սույն հաշվետվությանը որպես Հավելված Ա: Զննության արդյունքում եզրակացվեց, որ առաջարկվող ծրագիրը մեծ հավանականությամբ շրջակա միջավայրի վրա նշանակալի անդառնալի, անկառավարելի կամ աննախադեպ բացասական ազդեցություններ չի ունենալու: Ծրագրի հնարավոր բնապահպանական բացասական ազդեցությունները տեղանքային բնույթի են, դրանցից անշրջելիները սակավաթիվ են և հիմնականում կառավարելի են մեղմացնող միջոցառումների շնորհիվ: Այս ազդեցությունների գոտին չի տարածվի կաշիսատանքի իրականացման շինհրապարակների ֆիզիկական սահմաններից դուրս:

17. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկի հիման վրա Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի Ծրագիրը դասակարգվեց «Բ» խմբում, ուստի, համաձայն ԱԶԲ ԱՔՀ (2009)-ի անհրաժշտ կլինի պատրաստել ազդեցության գնահատման Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության (ՇՄՆՈԻ) հաշվետվություն:

### Բ2.4 Ստանդարտներ և կանոնակարգեր

18. Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրությունը (ՇՄՆՈԻ) իրականացվում է՝ համաձայն ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հիմնադրույթների (ԱՔՀ, 2009 թ.), Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցի (2003 թ.) և Բնապահպանական ուսումնասիրության և գնահատման շրջանակների (ԲԳՈԻՇ), որոնք համաձայնեցված են ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև:

19. Այն դեպքում, երբ ազգային ստանդարտները բացակայում են (օրինակ՝ ոռոգման ջրի որակի համար), կկիրառվեն միջազգայնորեն ճանաչված չափանիշները, իսկ այն դեպքերում, երբ ֆոնային էլակետային տվյալները կգերազանցեն ազգային օրենսդրական նորմերը ազգային ուղեցույցների բացակայության պայմաններում կկիրառվեն միջազգային ուղեցույցները: Բոլոր նման դեպքերում ՇՄՆՈԻ հաշվետվությունը կհիմնավորի տվյալ ծրագրի կամ տեղանքի համար ընտրված շեմերն ու մոտեցումները.

- ✓ Համաշխարհային բանկի «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ընդհանուր ուղեցույցները» (2007 թ.)
- ✓ Համաշխարհային բանկի «Աղտոտվածության կանխարգելման և մեղմացման ձեռնարկը»
- ✓ ՄՄԿ (ISO) 5667-14, Ջրի որակ. Նմուշառում. Մաս 14. Բնական ջրի նմուշառման և օգտագործման ժամանակ որակի ապահովման ուղեցույց
- ✓ «Մակերևութային ջրերի նմուշառում» (EPA), 28.02.2013 թ.

### Բ3. Վարչական շրջանակը

#### Վերահսկիչ մարմին

20. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծագրերի (ՔԿԶՆԾ) կառավարման խորհուրդը, որը գլխավորում է ՀՀ վարչապետը, կազմված է Էկոնոմիկայի նախարարության, Ֆինանսների նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արդարադատության նախարարության, Երևանի քաղաքապետի, Կենտրոնական բանկի, Կադաստրի կոմիտեի և Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ-ի ներկայացուցիչներից: Կառավարման խորհուրդը ստեղծվել է Ծրագրի իրականացմանը հետևելու նպատակով:

#### Գործադիր մարմին

21. ՔԿԶՆԾ Գործադիր մարմինը (ԳՄ)՝ Էկոնոմիկայի նախարարությունն է ստեղծված Կառավարման խորհրդի ներքո: ԳՄ-ն կկատարի Ծրագրի իրականացման և վարկային միջոցների բաշխման վերահսկողությունը:

#### Իրականացնող մարմին

22. Ծրագրի Իրականացնող մարմինը (ԻՄ) Երևանի քաղաքապետարանն է (Պատվիրատու), որը պատասխանատու է Ծրագրի իրականացման ընթացքի ընդհանուր վերահսկողության համար: Քաղաքապետարանը նաև պատասխանատու է աղբի/թափոնների կառավարման ծառայությունների համար, որը ներառում է շինարարական աղբի/թափոնների հավաքման և տեղադրման համար թափոնավայրեր հատկացնելու, ինչպես նաև տարածքի հետագա կանաչապատման համար:

#### Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ

23. Երևանի քաղաքապետարանի ներքո ստեղծված Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակը (ԵԿՆԾԻԳ) պատասխանատու է ծրագրերի ամենօրյա կառավարման համար: Այն ղեկավարվում է լրիվ դրույքով աշխատող Ծրագրի տնօրենի կողմից: ԵԿՆԾԻԳ-ը ներառում է մասնագետներ հետևյալ ոլորտներում՝ ինստիտուցիոնալ, տեխնիկական, ֆինանսական, մոնիտորինգի և գնահատման, իրավական/պայմանագրերի կառավարման, գնումների, տարաբնակեցման, բնապահպանության, հասարակայնության հետ կապերի, ինչպես նաև օգնական/թարգմանիչ: ԵԿՆԾԻԳ-ի պարտականությունները ներառում են՝

- (i) գնումների պլանի պատրաստում և թարմացում,
- (ii) մրցույթների կազմակերպում, հայտերի գնահատում և պայմանագրերի շնորհում,
- (iii) պայմանագրերի կառավարում,
- (iv) Տեխնիկական վերահսկողության (Ինժեների) գործողությունների կառավարում,
- (v) վերահսկողություն,
- (vi) որակի հսկողություն,
- (vii) համապատասխան գործակալություններից հաստատումների և թույլտվությունների ձեռքբերում,
- (viii) Պայմանագրի շնորհման ժամանակացույցի պատրաստում և վարկի հատկացում՝ ըստ ԱԶԲ ուղեցույցների,
- (ix) Կապալառուի կողմից իրականացվող մեղմացնող միջոցառումների ստուգում՝ ԲԿՊ-ում սահմանված կարգով,



## Նախնական գնահատման հայտ

- (x) կանոնավոր կերպով կիսամյակային բնապահպանական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում ԱԶԲ –ին,
- (xi) հանդիսանալ հասարակության հետ կապի օղակ՝ մտահոգությունների և բողոքների առնչությամբ,
- (xii) փոխգործակցել Կառավարության և քաղաքային իշխանությունների, Ծրագրի կառավարման խորհրդատուների, ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության և Ծրագրի իրականացմամբ հետաքրքրված այլ շահագրգիռ կողմերի հետ՝ իրականացնելով պատշաճ խորհրդատվություն, արձագանքելով արտակարգ իրավիճակներին և ծանուցելով համապատասխան ղեկավար մարմիններին ողջամիտ ժամկետներում,
- (xiii) տեղեկացված լինել ղեկավար մարմինների պահանջներին և օրենսդրության փոփոխություններին և արձագանքել համապատասխանաբար:

## Մանրամասն նախագծման խորհրդատու (ՄՆԽ)

24. Խորհրդատուի հիմնական պարտավորությունները ներառում են՝

### *Նախագծային փուլում*

- I. Մշակել մանրամասն նախագիծ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Կոնցեպտուալ (հայեցակարգային) նախագծի հիման վրա,
- II. Իրականացնել ազդեցությունների գնահատում (ԱԳ) և պատրաստել ՇՄԱԳ հաշվետվությունը այդ թվում՝ Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանը (ԲԿՊ), ինչպես նաև այլ պահանջվող փաստաթղթերը,
- III. Իրականացնել ՄՉՀ հետազոտություն և մշակել Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը,
- IV. Պատվիրատուին ներկայացնել ՇՄՆՈԻ հաշվետվությունը՝ ԱԶԲ-ի կողմից դիտարկման և հաստատման համար,
- V. իրականացնել անհրաժեշտ հանրային լսումները՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ԱԶԲ և ՀՀ կառավարության միջև համաձայնեցված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրությունների շրջանակի (ԲԳՈԻՇ),
- VI. Իրականացնել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի դիմել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ դրական եզրակացություն ստանալու նպատակով:

Տեխնիկական վերահսկողության խորհրդատու (Ինժեներ, որը տվյալ պահին ներգրավված չէ)

25. Ինժեների հիմնական առաջադրանքները ներառում են՝

### *Շինարարական աշխատանքների փուլում*

- I. Ծրագրի շինարարության տեխնիկական վերահսկողություն, ներառյալ՝ ԲԿՊ-ի և ՇԲԿՊ-ի իրականացումը,
- II. ապահովել բոլոր աշխատանքների իրականացման լիարժեք համապատասխանությունը նախագծին և մասնագրերին, ինչպես նաև կիրառելի ազգային և միջազգային բնապահպանական, առողջության ու անվտանգության ստանդարտներին,

## Նախնական գնահատման հայտ

- III. կառավարել պայմանագրային փոփոխությունները, Կապալառուի հայտերը և վերանայումները,
- IV. մոնիտորինգի ենթարկել ծրագրի իրականացումը, օգուտները և ապահովել համապատասխանությունը սոցիալական բոլոր պահանջներին, ապահովել տարաբնակեցման ու բնապահպանական պահանջների, ճանապարհային անվտանգության, առողջության և անվտանգության, մոնիտորինգի իրականացումը՝ համաձայն համապատասխան անվտանգության փաստաթղթերի, ԱԶԲ Անվտանգության քաղաքականության և ՀՀ գործող օրենսդրության,
- V. աջակցել և ուղղորդել շինարարության Կապալառուին՝ ՇԲԿՊ և մանրամասն ՏԲԿՊ-ն պատրաստելիս,
- VI. ապահովել շինարարության Կապալառուի կողմից ՇԲԿՊ-ի և մանրամասն ՏԲԿՊ-ների պատրաստումը,
- VII. հաշվետվություն ներկայացնել ԵԿՆԾԻԳ-ին:

### *Հետշինարարական փուլում*

- VIII. մոնիթորինգի իրականացման նպատակով կատարել տեղամասային այցելություններ թերությունների վերացման ժամանակահատվածում:

## Կապալառու

26. Կապալառուի հիմնական պարտավորությունները թվարկված են, սակայն սահմանափակված չեն ստորև բերվածով.

- I. Կապալառուն, որպես աշխատանքային շինարարական փաստաթուղթ և հիմնվելով ՇՄԱԳ/ԲԿՊ հաշվետվության վրա, կմշակի Շինարարության բնապահպանական կառավարման պլաններ (ՇԲԿՊ)՝ ներառյալ մեղմացնող միջոցառումների համար նախատեսված բյուջեն, անհրաժեշտության դեպքում կթարմացնի ՇԲԿՊ-ն շինարարության ընթացքում և ձեռք կբերի Ինժեների հաստատումը թարմացված մասի վերաբերյալ,
- II. Կապալառուն կվարձի մեկ ամբողջ դրույքով աշխատող բնապահպանության մասնագետ և մեկ առողջության և անվտանգության մասնագետ կամ մեկ բնապահպան՝ առողջապահության և անվտանգության ոլորտի կրթությամբ, ինչպես նաև մեկ սոցիալական հարցերի մասնագետ, այս պահանջը սահմանված է մրցութային փաստաթղթերում,
- III. իրականացնել ՇԲԿՊ-ն՝ որպես պայմանագրի հատուկ մասի և հատուկ պայմանների բաղկացուցիչ մաս, Ինժեների հետ համաձայնեցնել ԲԿՊ-ի, ներառյալ՝ մոնիտորինգի տարբեր բաղադրիչների իրականացման վերաբերյալ,
- IV. արտակարգ իրավիճակների և պատահարների դեպքում անհապաղ ծանուցել Ինժեներին և արտակարգ իրավիճակների հարցերով լիազոր մարմիններին,
- V. ձեռք բերել անհրաժեշտ թույլտվությունները և հաստատումները համապատասխան մարմիններից և դրանց պատճենը տրամադրել Ինժեներին,
- VI. իրականացնել շինարարական աշխատանքների կանոնավոր ինքնամոնիտորինգ և տրամադրել ուղղիչ միջոցառումների մասին հաշվետվություն,
- VII. ներկայացնել հաշվետվություն բնապահպանական ծրագրի վերաբերյալ, ինչպես սահմանված է ՇՄԱԳ/ԲԿՊ-ում:

## Ասիական զարգացման բանկ

27. Ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում ԱԶԲ-ն կարող է իրականացնել պարբերական դիտարկումներ, ստուգումներ և ծրագրի վերահսկողություն՝ ԱՔՀ 2009 թ.

## Նախնական գնահատման հայտ

սկզբունքներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ն կաջակցի ԵԲ-ին՝ սոցիալական և բնապահպանական ազդեցությունների և ռիսկերի կառավարման գործում դրանով իսկ նպաստելով ներդրումների երկարաժամկետ կայունությանը: Այս նպատակով ԱԶԲ-ն միջոցներ կձեռնարկի, որպեսզի ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում ԵԲ-ն հետևի ԱԶԲ-ի սոցիալական և բնապահպանական անվտանգության պահանջներին:

28. ԱԶԲ-ն նույնպես իր ներդրումը կունենա Ծրագրի մասին տեղեկությունների հրապարակման գործում, մասնավորապես՝ ՇՄՆՈԻ-ի և ԲԿՊ-ի ը, ինչպես նաև բնապահպանական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվությունների անգլերեն տարբերակները կայքում տեղադրելու միջոցով:

29. Ստորև թվարկված է պարտականությունների այն շրջանակը, որոնք ԱԶԲ-ն կիրականացնի ծրագրի տարբեր փուլերում:

### *Նախաշինարարական փուլում*

- I. դիտարկում է ծրագրի բնապահպանական գննության արդյունքները և վավերացնում է ծրագրի բնապահպանական դասը,
- II. դիտարկում և հաստատում է ՇՄՆՈԻ-ն՝ «չեմ առարկում» ձևաչափով,
- III. հրապարակում է ՇՄՆՈԻ-ն ԱԶԲ-ի կայքում

### *Շինարարության փուլում*

- IV. դիտարկում է կիսամյակային հաշվետվությունները և ԵԿՆ ԾԻԳ-ին տրամադրում անհրաժեշտ խորհրդատվությունը,
- V. իրականացնում է տարեկան բնապահպանական առաքելության ստուգայցեր

### *Հետշինարարական փուլում*

- VI. դիտարկում է հետշինարարական փուլի աուդիտի հաշվետվությունները:

30. Պետական մարմինները և նրանց դերակատարությունը, որ կարող են ներառվել Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի ծրագրում, հետևյալն են.

## Շրջակա միջավայրի նախարարություն

31. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) պատասխանատու է բնական ռեսուրսների պաշտպանության, կայուն օգտագործման, վերականգնման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ ղեկավարությունը վերահսկում է ազգային քաղաքականության, շրջակա միջավայրի չափորոշիչների և ուղենիշների զարգացումը և դրանց կիրառումը: ՇՄՆ-ն այդ գործառնություններն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: ԲՆ հիմնական ստորաբաժանումը, որը վարչական իշխանություն ունի ՇՄԱԳ/ՇՄՆՈԻ-ի և ծրագրի հաստատման գործընթացի վրա «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ն է, որը պատասխանատու է գնահատման հաշվետվությունների դիտարկման և փորձաքննության եզրակացության հաշվետվությունների համար, նաև՝ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով պայմանների ավելացման համար,

32. ՇՄՆ-ն նաև Կառավարության լիազոր մարմին է թափոնների կառավարման ոլորտում՝ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (24.11.2004 թ):

## Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

33. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (ԲԸՏՄ) ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որը պատասխանատու է ծրագրերի ստուգման համար՝ ապահովելով ծրագրի իրականացման գործընթացի համապատասխանությունը ՇՄՆ-ի կողմից սահմանված պայմաններին և Ծրագրի ԲԿՊ-ին:

## Գ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Գ.1. Ծրագրի տեսակը

34. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (ՔԿԶՆԾ) ի լրացումն Երևան քաղաքի գլխավոր հատակագիծի մշակվել է կայուն, ինտեգրված և տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը խթանելու նպատակով, հետևաբար՝ բարելավելով քաղաքային տրանսպորտի համակարգը Երևանում: Այն երկարաժամկետ մոտեցում է՝ ուղղված երթևեկությանն ու քաղաքային տրանսպորտին և կրեոնաթափի Երևանի կենտրոնը տարանցիկ երթևեկությունից՝ նոր, հուսալի և արդյունավետ շրջանցիկ ճանապարհի միջոցով: Սա քաղաքաշինության ռազմավարական ծրագրի մի մասն է, որը ձեռնարկվել է ԵԲ-ի կողմից: Այս Ծրագիրը հիմնված է ճանապարհային քարտեզի, քաղաքականության շրջանակի և մինչև 2025 թ. երկարաժամկետ ներդրումային ծրագրի վրա՝ և ներառում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ: Կարճաժամկետ կտրվածքով հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օղակի բացակայող ճանապարհային հանգույցները:

35. ՔԿԶՆԾ-ն ներառում է հետևյալ բաղադրիչները և ակնկալվող արդյունքները.
- I. Բաղադրիչ Ա. տրանսպորտի քաղաքային ենթակառուցվածքի ամբողջականացում, ընդլայնում, վերականգնում և բարելավում Հայաստանի քաղաքային բնակավայրերում:
  - II. Բաղադրիչ Բ. ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման պլան, համապատասխան համայնքներում քաղաքային տրանսպորտի ինստիտուցիոնալ և կառավարման կարողությունների հզորացմամբ, ներառյալ՝ կոնցեսիաները (ոչ ֆիզիկական ներդրումները):
  - III. Բաղադրիչ Գ. Ծրագրի կառավարման հաստատություն. աջակցող և խորհրդատվական ծառայություններով՝ Ծրագրի իրականացման և կառավարման նպատակով, ինչպես նաև ԲՖԳ ներքո բոլոր հատուկ ծրագրերը (ոչ-ֆիզիկական ներդրումները):

36. Սույն Ծրագիրը մտնում է Ա բաղադրիչի մեջ, որը ներառում է հետևյալ ճանապարհային հանգույցները (<https://sudipyerevan.am/en/road-construction/>) (տե՛ս Նկար Գ-1):

### Տրանշ 1.

- I. Ճանապարհային հանգույց 1, Արշակունյաց պողոտայի 1.3 կմ հատվածի լայնացում (շինարարական աշխատանքներն ավարտվել են)
- II. Ճանապարհային հանգույց 2, Նոր Շիրակ փողոցի կառուցումը և Արտաշատի մայրուղու լայնացումը (շինարարական աշխատանքներն ավարտվել են)

### Տրանշ 2.


- III. Ճանապարհային հանգույց 3, որը ներառում է հետևյալ ճանապարհահատվածները.
  - Արգավանդի մայրուղի-Շիրակի փողոց (շինարարական աշխատանքներն ընթանում են)

## Նախնական գնահատման հայտ

- Դավթաշեն-Աշտարակ մայրուղի (շինարարական աշխատանքներն ավարտվել են)
- Բաբաջանյան-Աշտարակ մայրուղի (շինարարական աշխատանքներն ընթանում են)

IV. Իսակով - Արշակունյաց պողոտա (սույն փաստաթղթի առարկան)

### Նկար Գ-1. Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի տեղադիրքը




37. Հայեցակարգային (կոնցեպտուալ) նախագիծը տրամադրվել է ՄՆԽ-ին ԵԿՆԾԻԳ-ի կողմից, որպես հիմք՝ նախնական և մանրամասն նախագծի մշակման համար: Հայեցակարգային նախագծի շրջանակում բնապահպանական որևէ ուսումնասիրություն և ազդեցության գնահատում չի իրականացվել:

## Նախնական գնահատման հայտ

38. Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցումը՝ որպես Երևանի, Իսակով-Լենինգրադյան գոյություն ունեցող ճանապարհահատվածի տրամաբանական շարունակություն (տես ՀԱՎԵԼՎԱԾ Դ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ-1 և Դ-2), որը կապելու է Իսակովի և Արշակունյաց պողոտաները: Նշված ճանապարհային հանգույցի կառուցումն շնորհիվ Երևանի կենտրոնը կբեռնաթափվի երթևեկությունից՝ զգալիորեն կրճատելով ուղևորա- և բեռնափոխադրումների ժամանակը և խցանումները:

39. Առաջարկված ճանապարհի հայեցակարգային նախագիծը (տես՝ ս Նկար Գ-2) ԵԿՆ ԾԻԳ-ի և նախագծային թիմի հետ համատեղ ներկայացվել է Պատվիրատուին 2020 թ. ապրիլին, իսկ 2020 թ. մայիսին քննարկվել և հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ պարոն Արթուր Մեսչյանի կողմից:

### Նկար Գ- 2. Հայեցակարգային (կոնցեպտուալ) նախագծի սխեմատիկ պատկերը



## Գ2. Ծրագրի տեղադիրքը

40. Տրանշ 2. Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի ծրագիրը տեղակայված է Երևանի կենտրոնական և հարավ-արևմտյան հատվածում՝ Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջաններում (Երևանի կենտրոնից մոտ 3 կմ դեպի հարավ-արևմուտք) (տես ս Նկար Գ-3-ը):

41. Ծրագրի հիմնական բաղադրիչները պայմանականորեն բաժանված են մի քանի հատվածների՝ տեղանքին բնորոշ պայմաններին և պլանավորման ընթացակարգերի համապատասխանությունն ապահովելու նպատակով:

## Նախնական գնահատման հայտ

- *Արշակունյացի հատվածը* գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, որը պաշտոնապես սահմանակցում է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին, ինչպես նաև Արարատի մարզին: Այն Երևանի հարավ-արևմտյան մասում է: Այս հատվածը կսկսվի Արշակունյաց պողոտայից և, շարունակվելով մոտ 170 մ, կհասնի Հրազդան գետի կամրջին:
- *Հրազդան գետի կամրջի հատվածը* կսկսվի ՊԿ 1+70-ից և կավարտվի ՊԿ 4+22-ում: Կամրջի երկարությունը 252 մ է:
- *Իսակովի հատվածը* գտնվում է Կենտրոն վարչական շրջանում և մասամբ՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, որն ընդհանուր սահմաններ ունի Երևանի Աջափնյակ, Արաբկիր, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ:

Նկար Գ-3. Իսակով – Արշակունյաց ճանապարհային հանգույցի ծրագրի տեղադիրքը



### Գ 3. Աշխատանքների նկարագրությունը

42. ՄՆԽ-ի կողմից մշակված Ծրագրի մանրամասն նախագիծն անցել է պետական փորձաքննություն, որի համար տրվել է փորձաքննության եզրակացություն N77- 2I տրված 5 ապրիլի 2020թ., որի համաձայն որի նախագիծն երաշխավորվում է հաստատման (տես ՀԱՎԵԼՎԱԾ Դ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ-2): Ներկայումս ընթանում է համալիր փորձաքննության ներկայացնելու գործընթացը:

43. Ծրագիրը ներկայացված է մոտավորապես 6.6 կմ երկարությամբ (ներառյալ իջատեղերը) երկկողմանի երթևեկելի մասով, կենտրոնական բաժանիչ գոտիով և մայթերով նոր ծրագծի (մոտ 2.0 կմ) վրա կառուցվող քաղաքային ճանապարհից և Հրազդան գետի վրայով անցնող կամրջի 28 մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններով: Ճանապարհը նախագծվում է որպես ներքաղաքային ճանապարհ/փողոց՝ 60 կմ/ժ առավելագույն արագությամբ:

44. Նախատեսված է, որ ճանապարհահատվածի հիմնական մասը կունենա 6 (3 x 2) երթևեկության գոտիներ, յուրաքանչյուրը՝ 3.30-3.75 մ լայնությամբ և կենտրոնական բաժանիչ գոտի՝ 4.00 մ լայնությամբ: Այնուամենայնիվ, որոշ հատվածներում այն կփոփոխվի, ինչպես ներկայացված է ստորև:

**Աղյուսակ Գ-1. Երթևեկության գոտիները՝ ըստ պիկետաժի**

Պիկետաժը (ՊԿ)	Երթևեկության գոտիներ	
	Ձախ կողմ	Աջ կողմ
0+00 - :1+20	2	2
1+20- :13+00	3	3
13+00- : 15+40	3	2
15+40- :18+63	2	2

45. Գոյություն ունեցող մակարդակի նկատմամբ ճանապարհի բարձրությունը պայմանավորված է նախագծման երկրաչափական ստանդարտներով, հարակից հողերի սահմանափակումներով, գեոտեխնիկական պայմաններով և գոյություն ունեցող ճանապարհի հետ հատումների դիրքով, որոնք ենթակա են փոփոխության: Արդյունքում ավարտված ճանապարհի մակարդակը կարող է հասնել գոյություն ունեցող մակարդակից մինչև 12.6 մ բարձր, թեև միջինում բարձրությունը կլինի մինչև 1 մ:

46. Ընդհանուր առմամբ՝ Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- I. *Իսակովի պողոտայի հանգույց*– գոյություն ունեցող Իսակովի պողոտայի հանգույցը մասնակի կձևաձևի դառնալով ամբողջական երեքնուկի տերև,
- II. *Արշակունյաց պողոտայի հանգույց* – օվալաձև հանգույց՝ Իսակով – Արշակունյաց ճանապարհային հատվածը և Արշակունյաց պողոտան միմյանց կապելու համար և ստորգետնյա անցումի կառուցում Արշակունյաց պողոտայի երթևեկության հոսքերի համար,
- III. *Նորագյուղ թաղամասի հանգույց*– նախատեսված է Էջմիածնի հին խճուղին և Իսակով – Արշակունյաց ճանապարհային հատվածը գրոյական մակարդակում միմյանց կապելու համար. հիմնական ճանապարհի համար կկառուցվի երկաթբետոնե թռիչքային կառուցվածք՝ վրայով անցնելու համար, իսկ Էջմիածնի հին խճուղին Իսակովի պողոտային կմիանա թռիչքային կառուցվածքի տակով:
- IV. Նախագիծը ներառում է նաև 500 մ տրամագծով նոր կոյուղատար, նոր անձրևհորերի կառուցում քանակով 27 հատ և հետիոտնային ուղեանց՝ Արշակունյաց պողոտայում:

47. Շինարարական աշխատանքները տիպիկ են ճանապարհների և կամուրջների կառուցման նախագծերի համար և ընդհանուր առմամբ հետևյալն են.

- V. գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժում
- VI. հանույթի/հողային աշխատանքներ
- VII. լիցքի իրականացում
- VIII. Հրազդան գետի վրայով 252 մ երկարությամբ նոր կամրջի կառուցում
- IX. երեքնուկի տերևի տեսքով հանգույց/ օվալաձև հանգույց/ ուղեանցներ /մոտեցման իջատեղեր
- X. հաղորդուղիների տեղահանում՝ ներառյալ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը
- XI. ասֆալտե ծածկի իրականացում
- XII. ջրահեռացման համակարգի կառուցում
- XIII. արտաքին լուսավորություն
- XIV. ճանապարհային նշանների տեղադրում, գծանշում, պաստառներ և արգելափակոցներ
- XV. կանաչապատում՝ ներառյալ ոռոգման համակարգը

48. Օգտագործվող նյութերը նույնպես բնորոշ են ճանապարհների կառուցման աշխատանքներին.

- լիցքի նյութ՝ կոպիճ և ավազ, հողային և ժայռային հանույթ
- բետոն
- ասֆալտ



## Նախնական գնահատման հայտ

- մետաղական ամրաններ կառուցվածքների համար
- մետաղական կառուցվածքներ և կցամասեր
- ջուր՝ տեխնոլոգիական (տոփանում) և բնապահպանական (փոշու առաջացումը կանխարգելելու համար) նպատակներով
- այլ (խողովակներ, լուսավորություն, պաստառներ և պողպատե արգելափակոցներ, ներկեր, քսանյութեր և այլն)

49. Շինարարական բոլոր նյութերը ձեռք են բերվելու պաշտոնապես գրանցված մատակարար կազմակերպություններից: Իսակովի հատվածի տեղանքում առակա են նաև որոշ քանակությամբ ժայռային և ավազային նյութեր, որոնք տեղադրվել են նախորդ ճանապարհաշինարարների կողմից, և լաբորատոր ստուգումներից հետո դրանք ամենայն հավանականությամբ կօգտագործվեն լիցքի համար:

50. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները կարող են ընդգրկել՝

- շինարարության համար ոչ պիտանի հող և ժայռային նյութ,
- շինարարական թափոններ՝ մետաղ, պլաստիկ, փայտի կտորներ, բետոնե ապամոնտաժված մասեր, մեքենաների անվադողեր և այլն,
- հին ճանապարհային ծածկի հեռացումից առաջացած ասֆալտի թափոններ,
- հեղուկ թափոններ՝ ավելցուկային բետոնաջուր, յուղերի, վառելանյութերի, քսայուղերի մնացորդներ,
- կենցաղային թափոններ, աղբ:

51. Թափոնների կառավարումը կիրականացվի՝ համաձայն Թափոնների կառավարման պլանի: Շինարարության համար ոչ պիտանի նյութերը, այդ թվում՝ ներկայումս Իսակովի հատվածի տեղանքում առկա թափոնները կտեղափոխվեն և կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված թափոնավայրում:

## Դ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

52. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ինչպես նաև ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հիմնադրույթները (2009 թ.), պահանջում են հաշվի առնել ծրագրի իրագործելի այլընտրանքները ծրագրի տեղակայվածության և նախագծի առումով՝ հավանական բնապահպանական ազդեցություններից խուսափելու կամ կանխելու համար:

### Դ1. «Զրոյական» այլընտրանք

53. Կոնցեպտուալ տարբերակներից մեկը «զրոյական» կամ «ոչինչ չանել» այլընտրանքն է, այն է՝ թողնել ներկա իրավիճակն այնպես, ինչպես կա: Այս տարբերակը մերժվել է մի շարք պատճառներով:

54. Երևան քաղաքի հատակագիծը նախագծվել է և քաղաքը կառուցվել է՝ կենտրոնական մասը ճառագայթաձև ճանապարհներով կապելով արվարձանների հետ: Այս դեպքում երթևեկությանը անցում է քաղաքի կենտրոնով, քանի որ ներկայումս չկա քաղաքի կենտրոնը շրջանցող որևէ ամբողջական ճանապարհային հանգույց: Գոյություն ունեցող ճանապարհներում նկատվում է գերծանրաբեռնվածություն, որն իր հերթին նպաստում է աղմուկի, տրանսպորտային միջոցներից արտանետումների և ճանապարհա-տրանսպորտային պատահարների աճին:

55. Ներկայումս Երևանում կան ընդամենը մի քանի ճանապարհային կամուրջներ Հրազդան գետի վրայով, որոնք քաղաքի արևմտյան հատվածը կապում են արևելյան հատվածի հետ: Դրանք են՝ «Հաղթանակ» կամուրջը (կառուցվել է 1945 թ.), «Հրազդան» (Կիևյան) կամուրջը (1956 թ.), Դավթաշենի կամուրջը (2000 թ.), ինչպես նաև Արգավանդի կամուրջը, որը շինարարական աշխատանքների փուլում է՝ ՔԿԶՆԾ Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի ճանապարհային հանգույց 3 - Արգավանդի հանգույցի ծրագրի շրջանակում:

56. Այս մի քանի կամուրջները քաղաքում մշտապես աճող տրանսպորտային միավորների պայմաններում ակնհայտորեն բավարար չեն ապահովելու համար Երևան քաղաքի բնակչության կենսապահանջարկը, մասնավորապես կենսամակարդակի այնպիսի ցուցանիշ, ինչպիսին է 45 րոպեի ընթացքում շուկայի մատչելիության ինդեքսը չի կարող ապահովվել<sup>4</sup>:

57. «Ոչինչ չանելու» տարբերակը կենսունակ չի համարվում, քանի որ ժամանակի ընթացքում վիճակը էլ ավելի է վատթարանալու և երթևեկության խցանումները կշատանան: Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ կենսական անհրաժեշտություն է դառնում նոր ճանապարհային հանգույցի կառուցումը, որը Հրազդան գետի վրայով նոր կամուրջ է ներառում, ինչի շնորհիվ այսօրվա կամուրջների վրա (որոնց մեծ մասը բավականին վաղուց է կառուցվել՝ 65-75 տարի առաջ) երթևեկության ծանրաբեռնվածությունը կնվազի և Երևանի կենտրոնը կբեռնաթափվի տարանցիկ երթևեկությունից):

## Դ2. «Երևաննախագծի» այլընտրանք

58. 2013 թ. Երևանի քաղաքապետարանը միջոցներ ձեռնարկեց՝ ուղղված վերոնշյալ խնդիրների լուծմանը: Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցը նախագծվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից: Այս նախագիծը մերժվել է Պատվիրատուի կողմից հիմնականում տեղական ճանապարհային ցանցի վրա վերջինիս ունեցած անշրջելի ազդեցության պատճառով. չէր նախագծվել Կաշեգործների փողոցի և Բունիաթյան փողոցի (Կաշեգործների փողոցին զուգահեռ) չընդհատվող շարունակությունը: Նաև ապահովված չէր այս երկու տեղական ճանապարհներից մուտքը դեպի Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույց: Հետևաբար, այս տարբերակի դեպքում տեղի բնակչության վիճակը կվատթարանար:

59. Այս այլընտրանքի թերությունն նաև այն էր, որ հենապատերը նախագծված էին խիտ բնակեցված Արշակունյաց հատվածում: Դրանք փակելու էին հարակից բնակելի տների արևի լույսը, ինչը կարող էր տեղի բնակչության դժգոհության պատճառ դառնալ:

60. Համաձայն այս այլընտրանքի՝ լիցքի ծավալները շատ ավելին էին լինելու, քան առաջարկվող այլընտրանքային նախագծի դեպքում (տե՛ս ստորև): Սա նշանակում է՝ որքան շատ քանակով լիցքի նյութ կպահանջվի, այնքան մեծ կլինի բեռը շրջակա միջավայրի վրա:

## Դ3. ՔԿԶՆԾ-ի այլընտրանքը

61. ՄՆԽ-ի կողմից առաջարկված ճանապարհի նախագիծը հիմնված է ԵՔ-ի կողմից տրամադրված հայեցակարգային նախագծի վրա: Գնահատման ծրագրի, պատվածքի

<sup>4</sup> Ուղիների միակցում. տրանսպորտ, աղքատություն և սոցիալական ներառում: Փաստեր Հայաստանից: ՀԲ տրանսպորտի վարչություն, դեկտեմբեր 2017 թ. : ՎՋԵԲ, ՄՋԲ/ Համաշխարհային բանկի խումբ, հասանելի աղբյուրը՝ <http://documents1.worldbank.org/curated/en/766101523858189286/pdf/125193-WP-Armenian-13-4-2018-10-51-57-FinalReportArmenianApril.pdf>

## Նախնական գնահատման հայտ

շերտերի կազմը և հաստությունները նույնն են, ինչպես նախատեսված էր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից մշակված նախագծում:

62. Մյուս կողմից՝ առաջարկված նախագիծը գերծ է վերը նշված թերություններից և ունի մի շարք առավելություններ՝ նախորդների համեմատությամբ, մասնավորապես՝

ա) թույլ է տալիս օժանդակել Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհին՝ առանձնացնելով արևմուտքից դեպի Երևանի հարավային արվարձանները մեկնող տրանսպորտային հոսքը և նպաստել Երևան քաղաքի կենտրոնը տարանցիկ երթևեկությունից բեռնաթափելուն,

բ) բարելավում է երթևեկության շարժը և նվազեցնում քաղաքային ճանապարհների բեռնվածությունը,

գ) չի խաթարվում տեղական ճանապարհային ցանցը. ապահովվում է Կաշեգործների և Բունիայան փողոցների անխափան շարունակականությունը (որը լուծված չէր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 2013 թ. մշակված նախագծում) և պահպանվում է Էջմիածնի հին խճուղու գոյությունն ունեցող ճանապարհը՝ միանալով Նորագյուղ թաղամասի հանգույցին,

դ) խցանումների թեթևացումը և երթևեկության ավելի լավ պայմանները բարելավում են օդի որակը,

ե) հնարավորություն կընձեռի բարելավել տնտեսական գործոնները և բարձրացնել բնակչության կենսամակարդակը. երթևեկությունը կշրջանցի քաղաքի կենտրոնը՝ զգալիորեն նվազեցնելով բեռնա- և ուղևորափոխադրումների վրա ծախսվող ժամանակը,

զ) նոր կոյուղագիծը (500 մմ տրամագծով խողովակաշար) կտեղադրվի ճանապարհի օտարման գոտու երկայնքով՝ հետագա քաղաքաշինության հեռանկարով,

է) թույլ կտա մեղմել շրջակա միջավայրի բեռը՝ լիցքի ծավալները կկրճատվեն կամրջի թռիչքների շնորհիվ, որոնք փոխարինում են նախորդ տարբերակի հոծ լիցքը և մեծ քանակությամբ լիցքի ժայռային նյութի նկատմամբ պահանջարկը: Ծավալային լիցքերի փոխարինումը կամրջի թռիչքներով նվազեցնում է նաև հողի տարածքային ֆիզիկական զբաղեցվածությունը՝ մեղմացնելով ազդեցությունը տարածքի կենդանական և բուսական աշխարհի վրա, այդ թվում՝ հատվող ծառերի քանակը:

ը) Խիտ բնակեցված տարածքում ծավալային հենապատերը փոխարինվում են կամրջի հենարաններով, ինչը թույլ կտա չխոչընդոտել բնակելի տարածքում արևի լույսի ներթափանցումը:

63. Նախագծային ոչ մի այլընտրանք (և՛ «Երևաննախագիծ», և՛ ՔԿԶՆԾ-ի նախագծերը) թույլ չեն տալիս խուսափել Կոմիտասի անվան զբոսայգու տարածք ներխուժելուց: Երկու տարբերակի դեպքում էլ զբաղեցման մասշտաբները գրեթե նույնն են և, ըստ նախնական գնահատման, կազմում է 7312 մ2, ինչը զբոսայգու ընդհանուր տարածքի (39656 մ2) շուրջ 18.4%-ն է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ճանապարհի կողմից զբաղեցվող

տարածքը և զբոսայգուց վերցվող տարածքը համեմատաբար մեծ չէ և հիմնականում ընդգրկում է ոչ կանաչ հատվածները, ինչպես նաև հաշվի առնելով որ ծրագծի տեղափոխումը կառաջացնի զգալի ՀՕՏ խնդիրներ, եղած ֆիզիկական ու ֆինանսական սահմանափակումների պայմաններում ավելի բարենպաստ այլընտրանք՝ տարածական տեղակայման, ընդհանուր ծրագծի, նախագծման և շինարական աշխատանքների մեթոդաբանության առումով չի գտնվել:

## Ե. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### Ե1. Ընդհանուր շրջանակը

64. Ազդեցության գնահատումը և ՇՄԱԳ հաշվետվության պատրաստումը, ներառյալ՝ Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ), սկսվում է Ծրագրային տարածքի ֆիզիկական, կենսաբանական, հնագիտական-մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ տվյալների և տեղեկությունների հավաքագրմամբ և վերլուծությամբ: Ռեսուրսախնայողության տեսանկյունից (ժամանակ և բյուջե) հավաքագրվում են միայն այն տվյալները, որոնք անհրաժեշտ են և օգտակար ԱԳ հուսալի գործընթացի համար:

65. Ելակետային տվյալների և այլ տեղեկությունների հավաքագրման գործընթացը սկսվել է առկա տվյալների ուսումնասիրությունից: Դրանք ձեռք են բերվել հրապարակված և չհրապարակված աղբյուրներից՝ ներառյալ կլիմային, տեղագրությանը, երկրաբանությանն ու հողերին, բնական պաշարներին, բուսական և կենդանական աշխարհին և սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող տվյալները: Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006 թ.) ելակետային տվյալների սկզբնական աղբյուրն է, որը հետագայում համալրվել է այլ տեղեկատվական աղբյուրներով, ինչպես օրինակ՝ Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը (2017)5, նաև մասնագիտական ուսումնասիրություններն ու դաշտային հետազոտությունները՝ ներառյալ բոլոր մակարդակներում շահագրգիռ կողմերից ստացված տեղեկատվությունը, որը թույլ է տալիս հաշվի առնել այն, ինչը տեղական բնակիչները և այլ շահագրգիռ խմբեր, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, կարևորում են ծրագրի շրջակա միջավայրի համար:

66. Հավաքագրվել են այն տվյալները, որոնք բնութագրում են ծրագրի գործողությունների հետևանքով շրջակա միջավայրի ազդեցության ենթարկվող ասպեկտները: Այս նպատակով մշակվել է տվյալների հավաքագրման ծրագիր.

Աղյուսակ Ե-1. Տվյալների հավաքագրման ծրագիր

ԱԶԸ	Բնապահպանական պարամետրերը	Տվյալների աղբյուրը	Փորձագետի ներգրավում	Մոդելավորում
Օդի որակ	Կլիմա	Երևան Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալները <sup>6</sup>	Կիրառելի չէ Տվյալների ուսումնասիրությ	Կիրառելի չէ

<sup>5</sup> <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/72/e7224f93ad7096478f9aaddb96ba61ea0ca693c9.pdf>

<sup>6</sup> «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011» տեղեկագիր (http://www.mud.am/lows/files/26\_10\_11\_h.pdf)

Նախնական գնահատման հայտ

			ուն	
	Փոշի Ծծմբի երկօքսիդ (SO2)  Ազոտի երկօքսիդ (NO2)	ՀՀ ՇՄՆ-ի «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Տվյալների ուսումնասիրություն  Վնասակար արտանետումների մոդելավորման մասնագիտացված փորձագետի ներգրավում	Շինարարության ընթացքում փոշու և զագի արտանետումների տարածման գնահատում և շահագործման փուլի համար կանխատեսումներ
	Աղմուկ	Գործիքային չափագրումներ	Ելակետային գործիքային չափագրումների մասնագետ  Մոդելավորման միջազգային մասնագիտացված փորձագետ	3D ձայնային մոդել՝ ծրագրի աղմուկի ազդեցությունը գնահատելու համար  Երկարաժամկետ մոդելավորում առանց աղմկապաշտպան պատնեշների՝ երթնեկության պայմաններում  Երկարաժամկետ մոդելավորում աղմկապաշտպան պատնեշների առկայությամբ  Աղմկապաշտպան միջոցառումների գնահատումը
	Թրթռումներ	Գործիքային չափագրումներ	Տեղական փորձագետ ելակետային չափագրումների համար  Միջազգային մասնագիտացված փորձագետ մոդելավորման համար	Ազդեցության մոդելը, որը հիմնված է շենքի վրա թրթռման ազդեցության փոխանցման ֆունկցիայի եզրակացության վրա
Հրագրան գետի և նոռգման ջրանցքի ջրի որակը	Կախյալ մասնիկներ (ԿՄ), Կենսաբանակ ան թթվածնի	Նմուշառում Հրագրան գետից և նոռգման ջրանցքից 2 կետում՝ ՄՄԿ 5667- ի համաձայն՝	ՀՀ ՇՄՆ-ի «Հիդրոոդերևութ աբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Կիրառելի չէ

Նախնական գնահատման հայտ

	պահանջարկ (ԿԹՊ), Լուծված թթվածին (ԼԹ) ֆինիական թթվածնի պահանջարկ Յուդի և ճարպի մակարդակները Հաղորդունակություն			
Էկոլոգիական ռեսուրսներ	Բուսական աշխարհ	Կարմիր գրքում գրանցված, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների և դրանց արեալների գրականության ուսումնասիրություն  Դաշտային այցելություններ և տեղանքի այդ թվում Հրազդան գետի ուսումնասիրություններ	մասնագիտացված փորձագետ	Կիրառելի չէ
	Կենդանական աշխարհը	Կարմիր գրքում գրանցված, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների և դրանց արեալների գրականության ուսումնասիրություն  Դաշտային այցելություններ և տեղանքի այդ թվում Հրազդան գետի ուսումնասիրություններ	մասնագիտացված փորձագետների խումբ	Կիրառելի չէ
	Ճանապարհի օտարման գոտում գտնվող և հատման ենթակա ծառերը	Դաշտային այցի միջոցով հաշվել ճանապարհի օտարման գոտում գտնվող և շինարարական աշխատանքների խոչընդոտող ծառերը,	մասնագիտացված փորձագետ	Կիրառելի չէ
Հողերը	Բուսահող	Երկրաբանական հետազոտության հաշվետվություն	մասնագիտացված փորձագետ	Կիրառելի չէ
	Աղտոտված հողեր	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ

Նախնական գնահատման հայտ

Սոցիալական համակարգեր Բնակելի տներ Ձեռնարկատիրական օբյեկտներ	Սոցիալ-տնտեսական տվյալներ	Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006թ.) էլակետային տվյալների սկզբնական աղբյուրն է, որը հետագայում համալրվեց այլ հրապարակված և չհրապարակված տեղեկատվական աղբյուրներով և դաշտային այցելության ուսումնասիրություններով	Նախագծային խորհրդատվական թիմ	Կիրառելի չէ
ՀՕՏ գործընթացում ընդգրկված գույքը		Կադաստրային փաստաթղթեր  Մանրամասն չափագրման հետազոտություն	Նախագծային խորհրդատվական թիմ	Կիրառելի չէ
	Հեռահաղորդակցության մալուխների, ջրի, կոյուղու և գազի խողովակների էլեկտրասայունների և էլեկտրալարերի, ջրահեռացման համակարգերի առկայություն	Հաղորդուղիների ուսումնասիրություն, Խորհրդակցություններ սեփականատերերի/մատակարարների հետ, տեղամասային հանդիպումներ	Նախագծային խորհրդատվական թիմ	Կիրառելի չէ
Նյութական ռեսուրսներ	Լիցքի նյութը ձեռք կբերվի գրանցված քարհանքերից	Նոր քարհանքեր, հողային գրունտի հանույթի վայրեր չեն բացվի	Կիրառելի չէ	Հաշվարկվել է շուրջ 7000-8000 մ <sup>3</sup>
Հնագիտական և մշակութային ժառանգություն	Հնագիտական վայրեր  Մշակութային ռեսուրսներ	Տվյալների ուսումնասիրություն Մշակույթի նախարարության տվյալները Դաշտային այցելություններ	Հնագետ	Կիրառելի չէ

## Ե2. Օդի որակ

### Կլիմա

67. Այս հատվածը ներկայացվում է ՀՀՇՆ (СННП) II-7.01-2011-ի (Շինարարական կլիմատոլոգիա) Երևան Էրեբունի մոնիթորինգի կայանների օդերևութաբանական տվյալների հիման վրա: Համաձայն ՀՀՇՆ (СННП) II-7.01-2011-ի (Շինարարական կլիմատոլոգիա) տվյալների՝ տարածքը բնութագրվում է ցամաքային չոր կլիմայով և գտնվում է ՀՀ չափավոր տաք կլիմայական գոտում: Կլիման հիմնականում բնութագրվում է երկար, շոգ ամառներով և կարճ, չափավոր ցուրտ ձմեռներով: Միջին պարամետրերը հետևյալն են.

### Աղույսակ Ե-2. Կլիմայական տարրերի արժեքները<sup>7</sup>

Կայան	Օդի ջերմաստիճանը °C			Օդի հարաբերական խոնավությունը, %		
	Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն	միջին տարեկան	միջին ամենացուրտ ամսվա	միջին ամենաշոգ ամսվա
Երևան Էրեբունի	11.9	-28	+42	61	67	28
<b>Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը</b>						
Կայանը	Տեղումների քանակը			Ձնածածկույթը		
	միջին ամսական, մայիս ամսվա համար	օրական առավելագույն, մայիս ամսվա համար	միջին տարեկան	Առավելագույն տասնօրյակայի և բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Գրունտի սառչելու առավելագույն խորությունը, սմ
Երևան Էրեբունի	45	42	291	58	47	70
<b>Քամի</b>						
Կայանը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Կրկնելիությունը ըստ գերակա ուղղությունների %	Միջին արագությունը ըստ ուղղությունների, մ/վ	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը	Ուժեղ քամիներով օրերի քանակը
Երևան Էրեբունի	912,1	25	2,9	0,7	1.5	29
		հունվարին	հունվարին			
		հարավ-արևմտյան ուղղություն	հարավ-արևելյան ուղղություն			
		8	4,0	1,9		
ապրիլին	ապրիլին	2,8				
հարավային	հարավ-արևելյան					
28	5,7	2,8				
հուլիսին	հուլիսին					

<sup>7</sup> ՀՀՇՆ (СННП) II-7.01-2011-ի (Շինարարական կլիմատոլոգիա) տեղեկագիր



Նախնական գնահատման հայտ

		հյուսիս-արևելյան	հյուսիս-արևելյան		
		21	2,9	1,0	
		հոկտեմբերին	հոկտեմբերին		
		հարավ-արևմտյան ուղղություն	հյուսիսային և արևմտյան		

**Փոշի, ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդ (NO<sub>2</sub>)**

68. Երևանը երեք կողմից շրջապատված է սարերով, ինչը խոչընդոտում է աղտոտիչների բնական ձևով ցրվելը մթնոլորտում և, հետևաբար, հանգեցնում է օդում բարձր խտացումների: Օդի աղտոտիչների գոյացման հիմնական աղբյուրն ավտոմեքենաների արտանետումներն են, որոնք կուտակվում են ճանապարհացանցի ինտենսիվ շահագործման հետևանքով: Երևան քաղաքի գլխավոր հատակագծում գնահատված է, որ օդի աղտոտիչների շուրջ 95%-ն առաջանում է հասարակական տրանսպորտի շահագործումից:

69. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցը տեղակայված է օդի «չափավոր» աղտոտվածության գոտում:

70. Օդի որակի տվյալների մեկ այլ աղբյուր է, մասնավորապես փոշու համար, ՇՄՆ-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) վերաբերյալ պաշտոնական տվյալները: Տվյալները ստացվում են 2 ստատիկ կայաններից՝ No 18 Կենտրոն և No 2 Շենգավիթ, որոնք տեղակայված են առաջարկվող Ծրագրի տարածքից 500-700 մ հեռավորության վրա, որտեղ իրականացվում են ակտիվ չափումներ (24 ժամ տևողությամբ): Այս կայաններում օդի որակի գնահատումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմերի մասին» որոշման: Ստորև բերված Աղյուսակ Ե-2-ը ներկայացնում է օդի աղտոտվածության կոնցենտրացիաները (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդ և ազոտի երկօքսիդ), որոնք չափվել են 2016 թ.-ից մինչև 2020 թ. երկրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում վերը նշված կայաններում: Աղյուսակը ներկայացնում է նաև օդի աղտոտիչների առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները՝ հիմնվելով բնակավայրերի մթնոլորտում սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) վերաբերյալ ՀՀ չափանիշների վրա:

**Աղյուսակ Ե-3. Փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) կոնցենտրացիաները**

Պարամետր	Կայան	2016թ.	2017թ.	2018թ.	2019 թ.	2020թ 1-ին եռամսյակ	2020թ 2-րդ եռամսյակ	ԸՆԴՀԱ ՆՈՒՐ ՄԻՋԲՆ Ը (2016-2020 թթ)	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (մգ/մ <sup>3</sup> )	
									Սահմանային միանգամյա	Օրական միջին

Նախնական գնահատման հայտ

Փոշի	N18	0.14	0.20	0.17	0.17	0.20	0.1	0.163	0.5	0.15
	N2	0.11	0.13	0.12	0.16	0.11	տվյալն եր չկան	0.126		
Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> )	N18	0.028	0.032	0.03	0.02	0.013	0.009	0.022	0.05	0.05
	N2	0.028	0.03	0.031	0.022	0.009	տվյալն եր չկան	0.024		
Ազոտի երկօքսիդի (NO <sub>2</sub> )	N18	0.024	0.04	0.034	0.02	0.022	0.032	0.029	0.085	0.04
	N2	0.023	0.015	0.019	0.015	0.014	տվյալն եր չկան	0.017		
<p>Աղբյուրը՝ ՇՄՆ-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ<sup>8</sup>: Համաձայն ՀՀ կառավարության 02.02.2006 թ. թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմերի մասին» որոշման:</p>										

71. Գ.Լուսավորիչ – Ազաթանգեղոս փողոցների փոխհատման վայրում տեղակայված No 18 և Շենգավիթ վարչական շրջանում՝ Արշակունյաց պողոտայում տեղակայված No 2 ՇՄՆ-ի օդի որակի մոնիթորինգի կայանների տվյալները հաստատում են, որ օդի միջին որակը մոտ է թույլատրելի կոնցենտրացիաներին և որոշ դեպքերում գերազանցում է դրանք:

- (i) Փոշի. համաձայն միջին տարեկան ցուցանիշների՝ փոշու աղտոտումը (0.163) գերազանցել է միջին օրական (0.15) ՄԹԿ-ն՝ գերազանցումներ գրանցվել են No 18 կայանում՝ 2017 թ. և 2018 թ., և No 2 կայանում՝ 2019 թ.-ին:
- (ii) Ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>). 2016 թ.-ից մինչև 2020 թ. ազոտի երկօքսիդի ցուցանիշները չեն գերազանցել առավելագույն և օրական միջին ՄԹԿ-ն, չնայած առանձին գերազանցումներ գրանցվել են No 2 կայանում՝ 2017 թ., իսկ No 18 կայանում՝ 2020 թ.-ի առաջին եռամսյակում:
- (iii) Ազոտի երկօքսիդ (NO<sub>2</sub>). 2016 թ.-ից մինչև 2020 թ. ընկած ժամանակահատվածում ազոտի երկօքսիդի ընդհանուր տարեկան միջինը (0.017 և 0.029) չի գերազանցել ՄԹԿ-ն, չնայած առանձին գերազանցումներ գրանցվել են No18 կայանում՝ 2017 թ., 2018 թ. և 2019 թ.:

72. Բացի տրանսպորտային արտանետումների աղտոտումից, խոշոր անտառահատումները, որոնք տեղի են ունեցել տարածաշրջանում, քաղաքի սահմաններին հարակից վայրերում, ամառային չոր ամիսների ընթացքում առաջացնում են փոշու զգալի քանակություն: Տրանսպորտային արտանետումների և անտառահատումների համատեղ ազդեցությունները բացատրում են Աղյուսակ Ե-2-ի արդյունքները, որտեղ փոշու կոնցենտրացիաների տարեկան միջինները 2016 - 2020 թթ. ընթացքում հետևողականորեն գերազանցում են միջին օրական ՄԹԿ-ն:

<sup>8</sup> <http://armmonitoring.am>

### Ե3. Աղմուկ

73. Ներկայումս Երևանում աղմուկի գերիշխող աղբյուրը (մոտավորապես 90%) համարվում է գործող քաղաքային տրանսպորտը: Հայաստանում աղմուկի վերաբերյալ կիրառելի ստանդարտ սահմանաչափերը ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Ե-4-ում:

74. Նախագծման խորհրդատուն վարձել է ակուստիկ ինժեներ միջազգային մասնագետի, որի կողմից 2021 թ.-ի հունվարի 18-ից մինչև հունվարի 19 իրականացվել է ակուստիկ հետազոտություն՝ ծրագրային տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային (եղակետային) տվյալները հավաքագրելու և ճանապարհի ակուստիկ ազդեցությունը մոդելավորելու նպատակով:

75. Հետազոտության ընթացքում աղմուկը չափվել է ծրագրի երկայնքով 3 կետերում (ընտրված կետերի տեղադիրքը տե՛ս Նկար Ե-2): Մենտորը տեղադրվել է զգայուն ընկալիչ շենքից դուրս: Չափագրումների տևողությունը եղել է կես ժամից ոչ պակաս:

76. Ակուստիկ հետազոտության արդյունքները ներկայացված են հետևյալ Աղյուսակ Ե-4-ում, որոնք հետագայում օգտագործվել են ծրագրային տարածքում ճանապարհի ակուստիկ ազդեցությունը մոդելավորելու նպատակով:

**Աղյուսակ Ե-4. Աղմուկի եղակետային չափագրումների արդյունքներ**

Չափագրման կետը	Չափագրման պահը	Չափագրման արդյունքները
NM1	ցերեկային	54.6
	գիշերային	46.6
NM 2	ցերեկային	72.6
	գիշերային	65.2
NM 3	ցերեկային	50.5
	գիշերային	45.8

**Նկար Ե-1. Աղմուկի եղակետային չափագրումների համար ընտրված կետերի տեղադիրքը**



77. Արդյունքները համեմատվել են Աղյուսակ ԵՄՖԿ և տեղական ստանդարտների հետ. ելակետային իրավիճակում բնակելի հատվածում (կետեր NM1 և NM 3) աղմուկը չի գերազանցում սահմանված ստանդարտներին: Սակայն Արշակունյաց պողոտային մոտ գտնվող NM 2 կետում գերազանցում է արձանագրվել:

**Աղյուսակ Ե -5. Աղմուկի սահմանային թույլատրելի արժեքները**

№	Հաստատություններ և տարածքներ	ՀՀ օրենսդրական ստանդարտները		ՄՖԿ ստանդարտները (ցերեկ/ գիշեր)
		ՇՄԱ (համարժեք է ձայնի մակարդակին), դԲԱ 9	ՇՄԱ (ձայնի առավելագույն մակարդակը), դԲԱ	
1	Աշխատատեղ	80	-	-
2	Խանութներ, առևտրի սրահներ, օդանավակայանների և երկաթուղային կայարանների սպասարաններ, հանրային ծառայությունների մատուցման կետեր	70	75	70
3	Բնակելի շենքերի, կլինիկաների, ամբուլատորիաների,	68/ 58	70	55/ 45

<sup>9</sup> Աղյուսակ Ե-3-ում ՍԱՇ-ը (համարժեք է ձայնի մակարդակին) միայն ցերեկային ժամերի համար է, քանի որ շինարարական աշխատանքները չեն ընթանում գիշերային ժամերին:

	<p>հանգստյան տների, ծերերի և հաշմանդամների խնամքի տների, գրադարանների, մանկապարտեզների, դպրոցների և այլ կրթական հաստատությունների հարակից տարածքներ</p>			
--	---	--	--	--

#### Ե4. Թրթռումներ

78. Նախագծման խորհրդատուն վարձել է թրթռումների ինժեներ միջազգային մասնագետի՝ ծրագրի տարածքի թրթռումների մակարդակի ֆոնային (ելակետային) տվյալները հավաքագրելու և ճանապարհի թրթռումների ազդեցությունը մոդելավորելու նպատակով: Չափագրումներն իրականացվել են 2021 թ-ի հունվարի 14-ից 19-ը:

79. Ճանապարհային երթևեկության հետևանքով գետնի ցնցումների համար պատասխանատու հիմնական մեխանիզմը դինամիկ ուժերն են, որոնք կապված են ճանապարհի անհարթությունների հետ, ինչպիսիք են ուռուցիկությունները, փոստրակները և այլն, որոնցով անցնում են մեքենաները: Ազդեցությունը կգնահատվի ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլի համար՝ հիմնվելով հետևյալի վրա

- աղբյուրի և ընկալիչի միջև եղած հեռավորությունը,
- շինարարության տեսակը,
- գրունտի վիճակը:

80. Չափագրումներն իրականացվել են Նկար Ե-2 պատկերված 6 կետերում:

81. Ելակետային իրավիճակի չափագրումների արդյունքներն, ինչպես նաև մոդելավորման արդյունքներն ամփոփված և ներկայացված են «Թրթռումների հետազոտություն: Իսակով- Արշակունյաց ճանապարհի կառուցում» հաշվետվության մեջ:

82. Ելակետային չափագրումների և գրականության տվյալների, ինչպես նաև շինարարական տեխնիկայի և սարքավորումների հիման վրա հաշվարկվում է փոխանցման ֆունկցիան, որոշվում է շենքի վրա թրթռումների ազդեցությունը և առաջարկություններ են արվում ամենամեծ ազդեցությունն ունեցող փուլերի համար՝ աշխատանքների ընթացքում թրթռումներն ու անհանգստությունը նվազեցնելու նպատակով:

83. Թրթռումների ազդեցությանը ենթարկվող շենքերի որոշված շրջանակի հիման վրա Կապալառուն պարտավոր է իրականացնել նախաշինարարական ելակետային հետազոտություն ընդգրկելով այն շինությունները որոնք կարող են ազդեցության ենթարկվել շինարարական աշխատանքների ժամանակ: Այս պահանջը ներառված է ՇՄԱԳ/ԲԿՊ-ում:

**Նկար Ե-2. Թրթռումների թեստային չափագրումների համար ընտրված կետերի տեղադիրքը**



**Թրթռումների ազդեցությունը առողջության վրա**

84. Թրթռումների առողջության ստանդարտներին Կապալառուի համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում նախատեսվում է թրթռումների արագացման մակարդակի գործիքային չափագրումների պահանջը ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածի համար: Այս միջոցառումները պետք է իրականացվեն Կապալառուի կողմից: Կապալառուն կիրականացնի իր սեփական չափագրումները շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 21 օր առաջ: Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, նաև ԱՄ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային օրենսդրական նորմերի հետ.

- GOCT 31319-2006 (EH14253:2003) Մեխանիկական թրթռումներ. Ընդհանուր թրթռումների չափագրումներ և մարդու առողջության վրա ազդեցության գնահատում. Աշխատավայրերում չափագրումների իրականացման վերաբերյալ պահանջներ
- GOCT 12.1.012-90 Աշխատանքային անվտանգության ստանդարտների համակարգ, ընդհանուր պահանջներ
- GOCT 12.1.012-2004 Թրթռումների անվտանգություն. Ընդհանուր պահանջներ. Սանիտարական նորմ №2-III-11.3 «Թրթռումը աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում»

85. Թրթռումները կդասակարգվեն հետևյալս՝

- Տրանսպորտից առաջացող թրթռումներ (աստիճան 1)
- Տրանսպորտային-տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռումներ

## Նախնական գնահատման հայտ

(աստիճան 2)

- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռումներ (աստիճան 3, տեսակ Ա)
- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռումներ (աստիճան 3, տեսակ Բ)
- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռումներ (աստիճան 3, տեսակ Գ)

86. Չափագրումները կիրականացվեն 3 ընտրված կետերում (վայրերը տե՛ս Նկար Ե-2-ում)՝ յուրաքանչյուրում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, և կորոշվի միջին արժեքը: Չափիչ սարքը տեղադրվելու է Մոնիտորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (շենքից դուրս կամ ներս)՝ դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:

87. Գործիքային չափագրումներ կատարելու նպատակով ընտրված ենթակապալառու ընկերությանը ներկայացվում են հետևյալ պահանջները.

- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների ստանդարտացման վկայագրեր,
- ✓ կազմակերպությանը նախքան ընտրվելը ներկայացնելու է չափագրումների մեթոդաբանություն,
- ✓ օգտագործվելու է բազային տվյալների հետ համեմատելի՝ արագացման (մ/վ2), արագության (մմ/վ), տեղաշարժի (մմ) և ճշգրտության (նիշերի) նույն տեխնիկական բնութագրերով սարքավորում:

## Ե5. Մակերևութային և ստորգետնյա ջրեր

88. Ծրագրի տարածքում մակերևութային ջրային մարմիններն են Հրազդան գետը և Ստորին Հրազդանի ոռոգման ջրանցքը: Հրազդան գետը հիմնականում սնվում է ձնհալի ջրերով և վերին հոսանքի ազատ հոսքը կարգավորվում է Երևանյան լճի միջոցով՝ մոտ 1.0 կմ դեպի արևմուտք: Հատվելով Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի հետ (Արշակունյացի հատված)՝ Հրազդան գետը հոսում է կիրճով հարավ-արևմտյան ուղղությամբ:

89. Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի առաջարկվող ծրագրի համար ՇՄԱԳ շրջանակում իրականացվել է հետազոտություն՝ ջրի որակի ֆոնային վիճակն արձանագրելու համար:

90. Հրազդան գետի և ոռոգման ջրանցքի ջրի որակի ելակետային տվյալները հավաքագրվել են Նախագծի խորհրդատուի կողմից և ջրի ֆիզիկաքիմիական վերլուծությունը կատարվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2021 թ. հունվարին (հաշվետվությունը կներկայացվի ՇՄԱԳ-ի հիմնական փուլում): Նմուշառումը կատարվել է 2 կետում՝ մեկը գետից, մյուսը՝ ոռոգման ջրանցքից՝ ֆոնային վիճակը որոշելու համար: Յուրաքանչյուր ջրային մարմնից մեկ նմուշառման կետը համարվել է բավարար, քանի որ կամրջի սկզբի և վերջի կետերի միջև դեպի նշված ջրային օբյեկտները ներհոսքի աղբյուրներ չկան:

91. Հրազդան գետից նմուշառումների արդյունքները վերլուծության են ենթարկվել և համեմատվել են ՀՀ կառավարության թիվ 75-Ն «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» (27.01.2011 թ.) որոշմամբ ընդունված ստանդարտների հետ: Ոռոգման ջրանցքից վերցված նմուշառման արդյունքները ՇՄԱԳ-ում ներկայացվում են որպես ելակետային տվյալներ և տրամադրվում են մրցույթի հաղթող կապալառուին՝ հետագա մոնիթորինգի գործընթացքում համեմատության համար:

92. Արդյունքները ցույց են տալիս, որ Հրազդան գետի ջրի որակը Երևանի հատվածում և ստորին հոսանքում, և հատկապես ոռոգման ջրանցքում, հիմնականում շատ ցածր է: Արդյունքները ցույց են տալիս, որ Հրազդան գետում ՔԹՊ-ն (COD) և ծանր մետաղներից շատերը շարունակաբար գերազանցում են թույլատրելի սահմանները (ՄԹԿ): Պատճառներից մեկն այն է, որ Ծրագրից մոտ 100 մ վերև չմաքրված կեղտաջրերը կոյուղատար խողովակով թափվում են անմիջապես գետը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ծրագրի համար ելակետային տվյալները ընդունվելու են որպես սահմանային շեմ՝ ջրի որակի հետագա մոնիտորինգի համար:

93. Շինարարության հետ կապված ազդեցությունը որոշելու համար Կապալառուն պարտավորվելու է իրականացնել կանոնավոր նմուշառում և չափագրումներ ընդհանուր առմամբ 4 կետում՝ 2-ը Հրազդան գետից և 2-ը ոռոգման ջրանցքից՝ կամրջի աշխատանքների իրականացման վայրից 50 մ հոսանքն ի վեր և 50 մ հոսանքն ի վար:

94. Ստորգետնյա ջրերի խորությունը և քիմիական կազմը որոշվել են ինժեներա-երկրաբանական հետազոտության շրջանակներում: Տարածքը պայմանականորեն բաժանվել է երկու հատվածի՝

- *Հատված 1.* Իսակովի պողոտայի հատված – հարակից է Մոնթե Մելքոնյան փողոցին և Իսակովի ուղեանցին՝ մինչև կամուրջը,
- *Հատված 2.* Արշակունյաց պողոտայի հատված – Հրազդան գետի վրայով անցնող կամրջային հատվածը և Արշակունյաց պողոտայի հետ կապող նոր հանգույցը:

95. Ընդհանուր առմամբ՝ հորատվել է մինչև 15 մ խորությամբ 10 հորատանցք: Ըստ ինժեներա-երկրաբանական հետազոտության ծրագրի տարածքի ստորգետնյա ջրերը հայտնաբերվել են 3 ջրհորներում՝ Մոնթե Մելքոնյան-Իսակով կողմում (հորատանցքեր No. 1, 2, 3) և 2 հորատանցք՝ Արշակունյաց պողոտայի կողմում (հորատանցքեր N 8 և N 9) (տե՛ս Նկար Ե-3):


96. Ըստ հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների՝ ստորգետնյա ջրերը կապված են նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի և բերվածքային (նստվածքային) գրունտների շերտախմբերի հետ, պատկանում են լավատակի, միջլավային և ծակոտկենսա-դատարկությունների ոչ ճնշումային ջրերի տարատեսակներին:

- Մոնթե Մելքոնյան և Իսակովի պողոտա տրանսպորտային հանգույցի հատվածում ստորգետնյա ջրերը բացահայտվել են 8.9-9.5 մ խորությունների վրա, որոնք կայունացել են 8.5-10.0 մ խորություններում: Որպես ջրատար շերտ ծառայում է անդեզիտա-բազալտների վերին թույլ հաղմնահարված, մեծաբեկորային անջատումներով հատվածը: Հաշվի առնելով, որ կիսաժայռային և ժայռային տեղանքներում փորվածքները չեն հասնի մինչև ջրատար հորիզոնների մակարդակը, այս հատվածում ստորերկրյա ջրերի վրա ազդեցությունը գնահատվում է որպես աննշան:
- Արշակունյաց պողոտային հարակից կամրջի տեղամասում ստորգետնյա ջրերը բացահայտվել են միայն թիվ 8 և 9 հորատանցքերում՝ 2.5-4.5 մ խորությունների վրա, որոնք կայունացել են 2.7-4.5 մ խորություններում: Նշված տարածքում գետի ձախ լանջը կտրտված է լիցքերով, մակերևույթը հիմնականում հարթեցված է հողային լիցքերի կուտակումներով: Նշված ջրերի համար որպես ջրատար շերտ ծառայում է չորրորդական հասակի բերվածքային առաջացումների շերտախումբը, մասնակիորեն նաև լիցքային գրունտների հաստվածքը:

Նկար Ե-3. Հատված 1-ում (Մոնթե Մելքոնյան - Իսակով) և Հատված 2-ում (Արշակունյաց) հորատանցքերի վայրերը՝ ջրատար հորիզոններով



# Նախնական գնահատման հայտ



97. Նշված տեղամասում՝ Արշակունյաց պողոտայի հարակից տեղամասում ստորգետնյա ջրերի համար սնուցման աղբյուր է հանդիսանում մթնոլորտային տեղումները, կիրճի ձախափնյա անկանոն և խիտ կառուցապատված լանջի հատվածում առկա հողատարածքների ոռոգման ջրերը, տների կոյուղաջրերը, ինչպես նաև Բունիայան փողոցի արևելյան մասով անցնող ջրանցքի վնասված մասերից արտահոսող ջրերը: Համաձայն հորատումների տվյալների՝ ստորգետնյա ջրերն ունեն հոսքի արևմտյան ուղղություն: Տեղամասի տարբեր հատվածներում դիտվում են նաև ճահճացած տեղամասեր՝ դրանց բնորոշ բուսականությամբ և հոտով: Ճահճային տարածքներ

դիտարկվել են դարավանդված մասերում՝ հիմնականում ստորին տափարակի արևելյան մասում (հենապատի ստորին հատվածի կողքին): Գետի ձախ ափի մեջտեղում կա բաց ջրատար, որի պատերը հիմնականում վնասված են: Նույն ջրատարը ծառայում է որպես կոյուղի՝ լանջին խիտ կառուցված տների համար: Խողովակներից արտահոսքը, տեղումները, ձնհալքը, ջրահեռացման համակարգի բացակայությունը մեծապես նպաստում են ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացմանը: Ազդեցությունն այստեղ ավելի հավանական է, և աղտոտումը նվազագույնի հասցնելու մեղմացման միջոցառումները նախատեսված են Մակերևութային և ստորգետնյա ջրերի պաշտպանության պլանում:

98. Վերը նշված հորատանցքերից նմուշառումը և դրանց վերլուծությունն իրականացվում են ինժեներա-երկրաբանական հետազոտության շրջանակներում՝ այս ջրերի քիմիական աղտոտումը որոշելու համար: Նպատակը շինանյութի նկատմամբ ազդեցիվությունը պարզելն է: Համաձայն 8 հորատանցքերից վերցված նմուշի լաբորատոր ուսումնասիրության արդյունքների՝ տեղամասի գրունտային ջրերը ըստ սուլֆատա-քլորիդային պարունակության, ըստ ջրածնային ցուցիչի (рН) և ըստ ազդեցիվ ածխաթթվի (CO<sub>2</sub>) բետոնե կոնստրուկցիաների նկատմամբ ազդեցիվ չեն:

99. Հաշվի առնելով ճանապարհների և կամուրջների շինարարական աշխատանքների բնույթը՝ ստորերկրյա ջրերի վրա հավանական ազդեցությունը նշանակալի չէ, և ծախսերի արդյունավետության տեսանկյունից ստորերկրյա ջրերի որակի ցանկացած կանոնավոր մոնիտորինգ նպատակահարմար չէ:

## Ե6. Տեղագրություն, գրունտներ, երկրաբանություն, սեյսմոլոգիա

100. Նախնական նախագծի մշակման շրջանակում ՄՆԽ-ի կողմից իրականացվել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն: Գեոմորֆոլոգիական տեսակետից Ծրագրի տարածքը մասնակիորեն ընդգրկում է Քասախ-Եղվարդի հրաբխային սարավանդի հարավ-արևելյան եզրամասը և տարածվում է Հրազդան գետի աջափնյա և ձախափնյա՝ գետի կիրճին հարակից հարթ հովիտների վրա: Մակերեսը հիմնականում հարթ է՝ աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք (Բսակովի պողոտայի կողմից)՝ դեպի գետի հունը: Գետի կիրճի լանջերը դարավանդված են:

101. Տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները 15.0 մ խորության վրա.

- Շերտ 1. լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-7.0 մետր:
- Շերտ 2. հողա-բուսական ծածկույթ, կավավազային կազմի, խճի, մանրախճի, հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ մինչև 10%, տարածումը սահմանափակ, հզորությունը՝ 0.2-0.3 մետր:
- Շերտ 3. կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.4-1.6 մետր:
- Շերտ 4. ճալաքարա-կոպճային գրունտ, գլաքարերով հրաբխային ապարներից, կոպտահղկված, ավազային, կավավազային լցանյութով մինչև 30%, տարահատիկ ավազների և կավային գրունտների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով,

գրունտը, միջին խտության է, լցանյութը՝ ջրհագեցած, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 16.0 մետր:

- Շերտ 5. խճա-մեծաբեկորային գրունտ, հրաբխային ապարներից, կավավազավազային, մասամբ խարամա-ավազային լցանյութով մինչև 30%, տեղ-տեղ, կավավազի բներով և ոսպնյակներով, տեղ-տեղ հողմնահարված խճի աստիճանի, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-3.0 մետր:
- Շերտ -6. բազալտ, անդեզիտա-բազալտ մեծաբեկորային, մոխրագույն, երբեմն խայտաբղետ երանգներով, ծակոտկեն և ճեղքավորված, միջբեկորային խարամա-ավազային լցանյութով մինչև 20%, միջին ամրության, տարածումը համատարած է, միջին հզորությունը՝ 10.0-14.0 մետր:
- Շերտ 7. բազալտ, անդեզիտա-բազալտ, մոխրագույն, մասամբ կապտավուն և դարչնագույն երանգով, թույլ ճեղքավորված, ծակոտկեն, հազվադեպ խոռոչային, զանգվածային, ամուր, արմատական տեղադրմամբ տարածումը սահմանափակ է, բացահայտված հզորությունը՝ 7.5 մետր:

102. Ինժեներա-երկրաբանական հետազոտությունը ցույց տվեց, որ այնպիսի վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական գործընթացներ և երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, փլուզումը և այլն, ծրագրի տարածքում առկա չեն: Մյուս կողմից՝ երկրաբանական հետազոտության հաշվետվության մեջ նշվում է, որ կավավազային (շերտ 3) գրունտները, մասամբ մեծաբեկորային գրունտների (շերտ 5) լցանյութը, կարող են ցուցաբերել ենթաոդոդամաշման (субфозия) առանձնահատկություններ: Երկրաբանն առաջարկում է կազմակերպել և կառավարել ջրահավաք և ջրահեռացման համակարգերը՝ բոլոր տեսակի մակերեսային ջրերի համար՝ դրանց մուտքը վերը նշված գրունտների մեջ կանխելու համար: Առաջարկը հաշվի է առնվել և նախագծվել է համապատասխան ջրահեռացման համակարգը:

103. Սեյսմա-տեկտոնական տեսակետից տարածքը տեղադրված է վաղ-ալպիական ծալքավորման տարածաշրջանի Երևանի միջլեռնային վերադրված ճկվածքի սահմաններում, Հրազդան գետի կիրճի աջակողմյան հարթ տափարակի վրա: Այն համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմակտիվ տարածաշրջաններից մեկը: Համաձայն ՀՀՇՆ II – 6.02.2006-ի՝ հետազոտվող տեղամասը մտնում է սեյսմիկ 3-րդ գոտու մեջ՝  $a=0.4g$ :

104. Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի հյուսիսային և հարավային վերջավորությունները խիստ փոփոխվել են քաղաքային զարգացման արդյունքում՝ ՊԿ ԿՄ 0+00-ից 1+65-ը և 17+00-ից 18+60-ը, ուստի կառուցապատված տարածքը շուրջ 0.35 կմ է: Այնուհետև ճանապարհի շուրջ 1,2 կմ հատվածն անցնում է չխաթարված տարածքով, որը գտնվում է ծովի մակարդակից 913,0-ից 951,0 մետր բարձրության վրա, կիսաչոր լանդշաֆտային գոտում՝ ծածկված տարածքին բնորոշ բուսականությամբ: Հիմնականում տարածքը ներկայացված է շագանակագույն բուսահողով՝ հումուսի որոշակի պարունակությամբ: Բուսահողի շերտի հզորությունը 0.2- 0.4 մ է, և հնարավոր բուսահողի քանակը գնահատվում է մոտ 11100 մ<sup>3</sup>:

105. Կառուցվող ճանապարհի ծրագիծը հիմնականում անցնելու է պետական և համայնքային, ինչպես նաև որոշակի հատվածում մասնավոր սեփականության հողերով, որոնց նպատակային և գործառնական նշանակությունը հետևյալն է՝

- ✓ Բնակավայրերի
  - բնակելի կառուցապատման
  - ընդհանուր օգտագործման
  - խառը կառուցապատման

## Նախնական գնահատման հայտ

- հասարակական կառուցապատման
- ✓ Գյուղատնտեսական
  - պտղատու այգիներ
- ✓ Արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության
  - արդյունաբերական օբյեկտների
- ✓ Անտառային
  - անտառային

106. Ճանապարհի ծրագծի հարակից տարածքներում առկա են հողի աղտոտման հնարավոր աղբյուրներ.

- կուտակված թափոններ (հիմնականում շինարարական թափոններ, օրինակ՝ ապամոնտաժված շինությունների մնացորդներ՝ քար, մետաղ, պլաստիկ և այլն) Իսակովի պողոտայի կողմից,
- Ծրագծի տեղանքում փոքր այգիներ և առաջին հերթին Երեխաների խնամքի բժշկական կենտրոնին պատկանող այգիներ, որտեղ կարող են օգտագործված լինել թունաքիմիկատներ:

107. Թեև շինարարական աշխատանքների փուլում վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քայուղերի և այլ հեղուկ նյութերի թափոններով հողի աղտոտման որոշակի վտանգ կա, այնուամենայնիվ ազդեցության մասշտաբը և մակարդակը գնահատվում է ոչ բարձր, քանի որ ծրագրի ազդեցության տարածքում աղտոտող նյութեր արտանետող օբյեկտներ չեն շահագործվում: Այնուամենայնիվ, հողի հետագա աղտոտումը կանխելու համար կանոնավոր մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ը, պարբ. 8, Բնապահպանական կառավարման պլան):

## Ե7. Կենսաբազմազանություն

108. Բույսերի և կենդանիների, այդ թվում՝ հազվագյուտ և անհետացող տեսակների և դրանց բնական միջավայրի, պոպուլյացիաների օգտագործումը, վերարտադրությունը, պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը կարգավորվում են «Բուսական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 23.11.1999 թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 03.04.2000 թ.), Հայաստանի Կարմիր գրքով, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքով և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակով, որտեղ նշված են այն բույսերն ու կենդանիները, որոնք գլոբալ ոչնչացման ավելի մեծ ռիսկի առջև են կանգնած և, հետևաբար, առանձնացված են որպես խիստ վտանգված կամ խոցելի տեսակներ:

109. Ծրագրի ուսումնասիրության միջանցքը գտնվում է անապատի տարրերով կիսաանապատային լանդշաֆտային գոտում՝ համալրված Երևանի ողջ տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի տեսակներով: Ինչպես արդեն նշվեց, Ծրագրի տարածքի շուրջ 0,35 կմ հատվածը քաղաքային կառուցապատման ենթարկված տարածք է, իսկ ճանապարհի մոտ 1.2 կմ հատվածն անցնում է նախկինում գյուղատնտեսական նպատակով օգտագործված, իսկ ներկայումս լքված մոլախոտերով և խոտով ծածկված տարածքով, որը գտնվում է անապատային տարրեր ունեցող կիսաանապատային լանդշաֆտային գոտում: Հրազդան գետի ավազներձ տարածքում բուսականությունը փոխվում է և բաղկացած է թփերից և մանր ծառերից (շուրջ 0,3 կմ): Նույնիսկ կառուցապատված տարածքներում բուսականությունը վերականգնել է իր բնապատմական վիճակը ռոտզման պակասի, բուսականության խնամքի դադարեցման

## Նախնական գնահատման հայտ

պատճառով կամ ուղղակի ազատ տարածքներում: Բոլոր տարածքները հետազոտվել են «Կենդանական և բուսական աշխարհի հետազոտության» շրջանակում:

110. Կենսաբազմազանության փորձագիտական հետազոտության իրականացման, ինչպես նաև շինարարության գործընթացին խոչընդոտող ծառերի տեսակներն ու քանակը որոշելու համար պայմանագիր է կնքվել մասնագիտացված «Բիո Գամա» ՍՊԸ- ի հետ: Բուսական և կենդանական աշխարհի կարևոր տեսակների հավանական առկայության վերաբերյալ (ամբողջական հաշվետվությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1-ում) կենսաբանական ելակետային պայմանները նկարագրելու համար կատարվել է տվյալների և գրականության ուսումնասիրություն և մի քանի դաշտային այցելություններ՝ Ծրագրի տարածքում Կարմիր ցուցակում ընդգրկված, վտանգված և/ կամ էնդեմիկ տեսակների առկայությունը որոշելու համար:

111. Կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- ✓ գոյություն ունեցող գրականության և այլ հասանելի աղբյուրների ուսումնասիրություն,
- ✓ դաշտային տեղամասային այցելություններ,
- ✓ տվյալների վերլուծություն և ֆոնային կենսաբանական վիճակի նկարագրություն՝ բաժանելով 2 հիմնական մասի՝ կիսաանապատային հարթավայրի և Հրազդան գետի ափամերձ հատվածի,
- ✓ Կարմիր գրքում գրանցված և/կամ էնդեմիկ/վտանգված և հատուկ պաշտպանական միջոցների կարիք ունեցող տեսակների ցանկի ներկայացում
- ✓ Ծրագրի շրջանակում հատման ենթակա ծառերի և թփերի տեսակների և քանակի որոշում,
- ✓ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում ներառվող պաշտպանական միջոցների վերաբերյալ առաջարկներ:

## ԲՈՒՅՍԵՐԻ (ՖԼՈՐԱ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

112. Ուսումնասիրվող տարածքների դաշտային աշխատանքների ընթացքում ստեղծվել են հերբարիումային հավաքներ: Համակարգչային Excel ծրագրով ստեղծվել է տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, ուսումնասիրվող տարածքում դրանց տարածվածությունը, կենսաձևերը, տնտեսական և այլ նշանակություն ունեցող՝ սննդային, համեմունքային, դեղատու, մեղրատու, կերային, դեկորատիվ, տեխնիկական տեսակները: Տվյալների վերլուծության նպատակով կիրառվել են Ա. Ի. Տոլմաչովի (1941 թ., 1970 թ.) և Լ. Ի. Մալիշևի (1975 թ., 1987 թ.) ֆլորայի քանակական վերլուծությունների մեթոդները: Բուսատեսակների գիտական անվանումները պարզաբանվել են Ն. Չերեպանովի մեթոդական ձեռնարկով (Չերեպանով, 1995 թ.):

113. Ճանապարհի, կամրջի և համապատասխան կառուցվածքների համար առաջարկվող տարածքում իրականացված բուսաբանական հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ ուսումնասիրված տարածքը ներկայացված է հիմնականում կիսաանապատային բուսականությամբ, որոնք պատկանում են Երևանի ֆլորիստիկ շրջանին, որը գտնվում է Հին Միջերկրածովյան ֆլորիստիկ ենթաթագավորության Իրանա-Թուրանական գավառի Արմենա-Իրանական ենթազավառում (Թախտաջյան, 1978 թ.):

114. Ուսումնասիրվող տարածքի մեծ մասը կրել է փոփոխություններ քաղաքային զարգացման արդյունքում՝ կառուցվել են բազմահարկ շենքեր և բնակարաններ հարակից հողակտորներում, ստեղծվել են քաղաքային այգիներ, մշակվել են հողեր: Սակայն ոռոգման պակասի և բուսականության խնամքի դադարեցման պատճառով

բուսականությունը վերականգնվել է: Հիմնականում Իսակովի հատվածում, ինչպես նաև Կոմիտասի անվան զբոսայգում կրկին կարելի է հանդիպել հետևյալ կիսաանապատային չոր տեսակների՝ շնախոտ սուր (*Cynanchum acutum*), կապար փշոտ (*Capparis spinose*), ուղտափուշ սովորական (*Alhagi pseudalragi*), իշակաթնուկ Սեզիերի (*Euphorbia seguieriana*), խիժաճարճատուկ կնյունանման (*Chondrilla juncea*), սուվեղ մանրատերև (*Suaeda microphylla*), տատաշ փովող (*Tribulus terrestris*), զուգատերև սովորական (*Zygophyllum fabago*) և այլն:

115. Տարածված են նաև ինվազիվ ու էքսպանսիվ տեսակների մոլախոտեր (արվանտակ մատնածև (*Cynodon dactylon*), հավակատար սովորական (*Amaranthus retroflexus*), թալ թուրքմենական (*Atriplex turcomanica*), թելուկ սպիտակ (*Chenopodium album*) և այլն)՝ դեգրադացնելով էկոհամակարգերի շուրջ 20-30%-ը: Մոլախոտային կամ երկրորդական բուսականության կազմում երբեմն հանդիպում են նաև վայրած մշակաբույսեր, օրինակ՝ լոլիկ (*Solanum lycopersicum*) և ձմերուկ (*Citrullus lanatus*):

116. Ի տարբերություն երկրորդային բուսականության, Հրազդանի հունի գետամերձ անտառներում մասամբ պահպանվել են բնական ծառուտները: Գետահովտային անտառներում մեծ թիվ են կազմում սոսի արևելյան (*Platanus orientalis*), ուռենի բարձր (*Salix excelsa*), ուռենի բեկուն (*Salix fragilis*), բարդի սև (*Populus nigra*), հացենի սովորական (*Fraxinus excelsior*) և այլ ծառատեսակները: Սովորական ծառատեսակները, ինչպիսիք են՝ սպիտակ թթենին (*Morus alba*), սովորական ընկուզենին (*Juglans regia*), թզենին (*Ficus carica*) և այլն զբաղեցնում են մեծ տարածք՝ ձևավորելով երկրորդային անտառները:

117. Ֆլորայի կազմում գրանցվել են բարձրակարգ անոթավոր բույսերի 122 տեսակ, որոնց մեծ մասը պատկանում է բազմամյա խոտաբույսերին (40 տեսակ), այնուհետև հաջորդում են ծառերը (36 տեսակ), միամյա և միամյա-երկամյա խոտաբույսերը (30 տեսակ), իսկ մնացածը թփերն ու լիանաներն են: Ծրագրի տարածքին բնորոշ բույսերի տեսակները բարդածաղկավորների (14 տեսակ), վարդազգիների (12 տեսակ), հացազգիների (10 տեսակ), թելուկազգիների (7 տեսակ), ուռենազգիների (7 տեսակ), Լոբազգիների (7 տեսակ), ձիթենազգիների (6 տեսակ), փիփերթազգիների (5 տեսակ) ընտանիքներից են: Դրանց մեջ գրանցված ծառատեսակները և թփերը հետևյալն են՝ երկնածառ բարձրավուն, ճապկի հարավի, ուռենի բարձր, թթենի սպիակ, թեղի մերկ, հուդայածառ, ուռենի բեկուն, թույա արևելյան, մակլոր նարնջագույն, սոսի արևելյան, ծիրանենի սովորական, հացենի սովորական, հացենի փենսիլվանյան, կեռասենի անտառային, բալենի սովորական, ընկուզենի սովորական, խաղող մշակովի, եղրևանի սովորական, թեղի մերկ, ուռենի, ակացիա, սոսի, սալորենի, եվրոպական թեղի, թխկի արծաթափայլ, կիպրոս վայրի, բարդի կանադական, բարդի, բաղրջուկ սովորական, լացող ուռենի, արևելյան կարմիր մայրի:

118. Արշակունյացի հատվածում ընդհանուր առմամբ գրանցվել է 120 ծառ, այդ թվում՝ 63 ծառ Կոմիտասի անվան զբոսայգում: Իսակով-Նորագյուղ հատվածում գրանցվել է 40 ծառ, իսկ Հրազդանի կիրճում՝ 255: Ծառերի չափսերը խիստ տարբեր են՝ 3-4 սմ-ից (երիտասարդ ակացիաներ) մինչև 58-67 սմ (թեղի և սոսի): Առավել ներկայացված ծառատեսակը բարձրավուն երկնածառն (*Ailanthus altissima*) է (180 ծառ), որը համարվում է Հայաստանի ֆլորայի մոլախոտային ծառատեսակներից: Արձանագրված ծառերի և թփերի քանակները տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե-ի և ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1-ի Աղյուսակ 1-ում:

119. Ըստ հետազոտության արդյունքների՝ Ծրագրի տարածքում կարմիրգրքային տեսակներից աճում է սոսի արևելյանը (*Platanus orientalis* L.), որը Կարմիր գրքում նշված է որպես «վտանգված տեսակ»: Արշակունյաց փողոցի եզրամասում կտրվելու են *Platanus orientalis* տեսակի 9 ծառ, իսկ Հրազդան գետի ափամերձ տարածքում՝ 10 ծառ: ՀՀ բույսերի Կարմիր գրքում նշված այլ հազվագյուտ կամ էնդեմիկ տեսակներ, որոնք ունեն ազգային պահպանման նշանակություն, տեղանքում չեն հայտնաբերվել: Տարածքում

հայտնաբերվել են մի շարք սննդային, դեղատու, համեմունքային, կերային և այլ օգտակար բույսեր, սակայն թե՛ տեսակների քանակով, թե՛ կենսազանգվածով դրանք բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

120. Ծառերի քանակը որոշվել է նախնական գնահատմամբ, սակայն դրանց թիվը կարող է կրճատվել շինարարական աշխատանքների ընթացքում, հնարավոր է որ դրանցից շատերը չհատվեն և պահպանվեն: Դա կախված է կամրջի հենարաններից կամ պատվանդաններից և դրանց շուրջը կատարվող աշխատանքներից: Այսպիսով, բուսականության մաքրման աշխատանքները սկսելուց առաջ հատվող ծառերի ու թփերի քանակը կվերահաշվարկվի կապալառուի կողմից և Ծառերի կառավարման պլանը համապատասխանաբար կթարմացվի:

#### ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ (ՖԱՈՒՆԱՅԻ) ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

121. Կենդանական աշխարհի (Ֆաունայի) հետազոտությունն իրականացվել է 2020 թ. սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին՝ դաշտային այցերի եղանակով (սեպտեմբերի 23, 24, 26 և 27-ին) միջոցով: Հետազոտվել են 2 հիմնական տարածքներ՝ կիսաանապատային հարթավայրը և Հրազդան գետի ափամերձ տարածքը: Կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդներ (Голуб и др., 2012), որոնց թվում՝ հավաք միջատաբանական ցանցով, հնձում խոտերի և թփերի վրայով, ճյուղերի թոթափում, հավաք քարերի տակից, ձեռքով հավաք, կենդանի ծառերի հին կոճղերի և քայքայման տարբեր փուլերում մահացած կոճղերի ստուգումներ և այլն: Նյութերը հավաքվել են ճանապարհի ծրագծի, ջրային մարմինների ափերի, տափաստանային դաշտերի հողերի և այլ տարածքներից: Ստուգվել են նաև միջատներով պոտենցիալ վարակված ծառերի և խոտերի որոշ չորացած հատվածներ (ճյուղեր, ցողուններ, արմատներ): Քանի որ այցերն իրականացվել են համեմատաբար ուշ ժամանակաշրջանում և որոշ տեսակների հասուն առանձնյակներն այլևս չէին հանդիպում, հավաքվել են դրանց նույնականացման մնացուկները:

122. Հերպետոբիոտային բզեզների (հողի մակերեսին բնակվող) կազմը ավելի ճշգրիտ որոշելու, ինչպես նաև համադրության նպատակով միջատների բների հետագա մոնիտորինգի համար օգտագործվել են թվային տվյալներ (Byzova et al., 1987): Այս թակարդներն իրենցից ներկայացնում են միանգամյա օգտագործման պլաստիկ բաժակներ (200/250 մլ), որոնք կիսով չափ լցված են կաշուն հեղուկով (գարեջրի, քացախի և աղի խառնուրդ):

123. Հավաքված փորձանմուշները որոշվել են՝ օգտագործելով համապատասխան կարգաբանական խմբերի վերաբերյալ առկա գրականությունը և նույնականացման չափորոշիչները (Тер-Минасян, 1947; Яблоков-Хнзорян, 1967, 1976; Акрамовский, 1976; Данилевский, Мирошников, 1985; Марджанян, 1986; Аракелян, 1994; Tuzov (ed), 1997, 2000; Абдурахманов, Набоженко, 2011.), ինչպես նաև կիրառվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ համեմատության եղանակը:

#### Ցամաքային անողնաշար կենդանիներ

124. Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված տարածքի կենսավայրերը (բիոտոպերը) կրում են ռուդերալ բնույթ՝ գտնվելով մարդածին խիստ ճնշման ներքո: Ուստի ցամաքային անողնաշար կենդանիների ֆաունան ունի մնացորդային բնույթ և կարող է բնութագրվել որպես հիմնականում կիսաանապատային՝ ընդգրկելով նաև որոշ գերխոնավ բիոտոպերի

## Նախնական գնահատման հայտ

տարրեր: Տարածք են ներթափանցում նաև եզակի տեսակներ՝ մոտակայքում գտնվող այգիներից: Անողնաշարավոր կենդանիների երկու տեսակի ներկայացուցիչներ՝ հողվածոտանիներ (*Arthropoda*), ներառյալ՝ 11 ընտանիքներին պատկանող 30 տեսակի բզեզներ (*Coleoptera*), 3 ընտանիքներին պատկանող 6 տեսակի թիթեռներ (*Lepidoptera*) և փափկամարմինների տիպից (*Mollusca*)՝ 1 ընտանիքին պատկանող 2 տեսակ: Այս բոլոր տեսակները լայն տարածում ունեցող տեսակներ են:

### Ողնաշարավոր կենդանիներ

125. Ողնաշարավոր կենդանիների հետազոտման մեթոդներն ընտրվել են՝ էլենվոլ թիրախային տեսակների համար դրանց նպատակահարմարությունից, արդյունավետությունից և ավարտին հասցնելու համար պահանջվող ժամանակից: Կիրառվել են տարբեր մեթոդներ՝ հետևելով ստանդարտ մեթոդաբանությանը (Формозов, 1951, 1976; Новиков, 1953; Приедниекс, 1990, Хейеридр, 2003):

### Երկկենցաղներ, սողուններ

126. Երկկենցաղների և սողունների հետազոտությունների համար օգտագործվել է ստանդարտ մեթոդաբանություն: Հետազոտությունները կատարվել են 6 օրվա ընթացքում: Սողունները դիտարկվել են ն՛ գերեկային, ն՛ երեկոյան ժամերին: Սողունների և երկկենցաղների հաշվարկն իրականացվել է երթուղային դիտարկումների միջոցով՝ համաձայն ընդունված մեթոդների (Формозов, 1951, 1976; Новиков, 1953; Friedniex, 1990; Heiger, 2003 և այլն): Երթուղային դիտարկումները կատարվել են, երբ սողուններն արևոտ ժամանակ տաքանում են: Կենդանիներն անմիջականորեն հանդիպել են ուսումնասիրվող տարածքում, ինչպես նաև դրանց առկայությունը որոշվել է՝ էլենվոլ դրանց հետքերից, բներից, թաքստոցներից և կենսագործունեության այլ արգասիքներից: Ստացված տվյալները համեմատվել են այլ հետազոտությունների և առկա գրականության տվյալների հետ: Երթուղու ամբողջ ընթացքը գրանցվել է GPS տեղորոշման սարքի օգնությամբ, այդ թվում՝ կենդանիների հանդիպելու վայրը, նրանց բները և մշտական թաքստոցները: Հնարավորության դեպքում կենդանին լուսանկարվել է:

127. Հետազոտությունների ընթացքում դիտարկվել է երկկենցաղների երկու տեսակ՝ կանաչ դոդոշը (*Bufoles variabilis*) և լճագորտը (*Pelophylax ridibundus*): Այս տեսակները լայնորեն տարածված են հանրապետության գրեթե ողջ տարածքում, չեն խուսափում նաև մարդածին կենսացենոզներից, ինչի շնորհիվ նրանց քանակությունը կայուն է անգամ Երևան քաղաքում:

128. Ուսումնասիրությունների ընթացքում սողուններից դիտարկվել են մողեսների երեք տեսակ՝ կովկասյան ագաման (*Paralaudakia caucasia*), շերտավոր մողեսը (*Lacerta strigata*) և դեղնափորիկը (*Pseudopus apodus*) և օձերի երկու տեսակ՝ ջրային լորտու, կապարագույն սահնօձ:

129. Ուսումնասիրված գրականության (Ասլանյան և ուրիշներ, 2003 թ.) մեջ նշվում են երկկենցաղների և սողունների մի շարք այլ տեսակներ ևս, ինչպես օրինակ՝ ծառագորտ (*Hyla savignyi*), կասպիական կրիա (*Mauremys caspica*), Ռադդեի ժայռային մողես (*Darevskia raddei nairensis*), կույր օձ (*Typhlops vermicularis*), հայկական էյրենիս, վզնոցակիր էյրենիս, կարմրափոր սահնօձ (*Dolichophis schmidti*), կատվաօձ (*Telescopus fallax*) և գյուրգա (*Macrovipera lebetina*): Այնուամենայնիվ, այս տեսակների առկայությունը տարածքում այնքան էլ հավանական չէ քաղաքաշինական/կառուցապատման խիստ փոփոխությունների և թափառող շների և կատուների առկայության պատճառով (հատկապես Իսակովի հատվածում), որոնք սնվում են դրանցով: Մյուս կողմից՝ չպետք է բացառել դրանց առկայությունը:



130. Հետազոտությունն իրականացրած փորձագետի եզրակացությունը հետևյալն է.
- ✓ երկկենցաղների վերոնշյալ տեսակները բնորոշվում են հանրապետության տարածքում կայուն թվաքանակով և դրանցից ոչ մեկը ներառված չէ ՀՀ Կարմիր գրքում,
  - ✓ երկկենցաղների 3 տեսակ ընդգրկված են ԲՊՄՄ (IUCN) Կարմիր ցուցակում՝ «նվազ մտահոգություն հարուցող» կարգավիճակով,
  - ✓ սողունների 13 տեսակներից 8-ն ընդգրկված են ԲՊՄՄ (IUCN) Կարմիր ցուցակում՝ «նվազ մտահոգություն հարուցող» կարգավիճակով,
  - ✓ Տեսակներից մեկը՝ կատվաօձը (*Telescopus fallax*), ընդգրկված է ՀՀ Կարմիր գրքում, թեև այս տեսակը դիտարկումների ընթացքում չի գրանցվել: Կատվաօձի վերաբերյալ տվյալները վերագրվում են 1998-1999 թթ., երբ հետազոտվող տարածքի հարակից այգիներից մեկում բռնվել է մեկ անհատ և ներկայումս այս տեսակի առկայության վերաբերյալ տվյալներ չկան:
  - ✓ Դիտարկված տարածքն ամբողջությամբ զբաղեցված է խիստ ուրբանիզացված քաղաքային լանդշաֆտներով և լքված շինություններով, հետևաբար տարածքում իրականացվող աշխատանքները չեն կարող բացասական ազդեցություն ունենալ տեսակի արեալի վրա:
131. Ի լրումն առաջարկված նախագծի՝ կենդանական աշխարհի վրա ունեցած ազդեցության գնահատմանը՝ կարևորվում է նաև հնարավոր թունավոր և վտանգավոր կենդանական աշխարհը, որը կարող է վնաս պատճառել շինարարական աշխատողներին: Մասնավորապես՝ գյուրգան թունավոր է և կարող է որոշակի վտանգ ներկայացնել անձնակազմի համար, թեև հետազոտության ընթացքում այն չի նկատվել, սակայն դրա առկայությունը չի բացառվում: Աշխատանքային տարածքում այս տեսակի հնարավոր առկայության պատճառով անհրաժեշտություն է պահպանել անվտանգության որոշ կանոններ, որոնք նկարագրված են Գլուխ Ը-ի, պարբերություն 2-ի Աշխատանքի անվտանգության և առողջության պլանում:

### Թռչուններ

132. Թռչունների հետազոտությունն իրականացվել է 2020 թ. սեպտեմբերի 28-ից 30-ը՝ կիրառելով հետևյալ մոտեցումը. ակնադիտական գննությամբ փնտրվել է յուրաքանչյուր տեսակի նախընտրած բնակավայրը (հեռադիտակի օգտագործմամբ) և կատարվել է ձայնային ազդանշանների որոշում՝ դրանց առկայությունը որոշելու համար: Դիտարկումները կատարվել են օրական երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան: Դիտարկման տարածքը որոշվում է՝ օգտագործելով բարձր շարժունակության օբյեկտների դիտարկման ստանդարտ տեխնիկան. այն ընդգրկում է շինարարական աշխատանքների իրականացման ողջ տարածքը և դրան հարակից աջ և ձախ կողմերի բուֆերային գոտիները (յուրաքանչյուրը՝ 100 մ) (ուսումնասիրված տարածքի ճշգրիտ տեղանքի նկարագրությունը և ամբողջական զեկույցը ներկայացված է հաշվետվության մեջ):
133. Կիրառվել են մոնիտորինգի ստանդարտ մեթոդները (Vinokurov, 1963; Formozov, 1951, 1976; Friednieks, 1990): Դաշտային աշխատանքների ընթացքում գրանցվել են թռչունների առանձին տեսակների (21 տեսակ) ուղղակի հանդիպումները կամ դրանք որոշվել են հատուկ ձայնային ազդանշաններով (3 տեսակ):
134. Ըստ համապատասխան գրականության՝ ուսումնասիրվող տարածքը բնութագրվում է 9 կարգի և 20 ընտանիքի պատկանող 31 թռչնատեսակների առկայությամբ: Թեև հետազոտությունների ընթացքում 7 տեսակ չեն հանդիպել, դրանք շատ բնորոշ են պուրակ-քաղաքային գոտուն, ինչպես նաև լեռնատափաստանային լանդշաֆտին և պուրակային տարածքներին: Այստեղ գերակշռող քաղաքային տեսակների

## Նախնական գնահատման հայտ

թռչունները և Կոմիտասի անվան զբոսայգու տարածքում հանդիպող տեսակներն են՝ տնային ճնճուկը, կաչաղակը, մեծ երաշտահավը և մոխրագույն ագռավը: Իսակովի կողմում՝ գիհու տնկարկներով և պուրակներով տարածքում թռչնաֆաունան ավելի հարուստ է. վերը նշված տեսակներին ավելանում են արջնագռավը, թխակապույտ աղավնին, տափաստանային հողմավար բազեն, տափաստանային ճուռակը, սպիտակ խաղտոնիկը, սովորական կարմրատուտը, կապտափող սոխակը, մեծ երաշտահավը, սովորական քարաթռչնակը, աշնանային և գարուն–ամառ սեզոնին հավանաբար կան դաշտային և տափաստանային արտույտներ, առափնյա և ժայռային ծիծեռնակներ, սև մանգաղաթև, հոպհոպ և ոսկեգույն մեղվակեր):

135. Հրազդան գետի աջ ափին՝ ավելի մոտ ավիամերձ թփուտների և ծառաշատ հատվածներում, բացի կաչաղակից, մոխրագույն ագռավից, մեծ երաշտահավից և սպիտակ խաղտոնիկից, կան սիրիական փայտփոր, կիսասպիտակավիզ ճանճորս, սև կեռնեխ, մոխրագույն շահրիկ, ծնկլտան գեղգեղիկ, կովկասյան գեղգեղիկ, գարնանային գեղգեղիկ, ինչպես նաև ջրի հետ անմիջականորեն առնչվող տեսակներ, մոխրագույն տառեղ և հայկական որոր:

136. Հետազոտության արդյունքում պարզվեց հետևյալը.

- ✓ Վերը թվարկված տեսակներից միայն 3-ն են գրանցված ՀՀ Կարմիր գրքում՝ տափաստանային հողմավար բազե, հայկական որոր և կիսասպիտակավիզ ճանճորս: Այնուամենայնիվ, բոլոր տեսակները կարելի է համարել սինանտրոպային և բավականին հաջողությամբ հարմարեցված քաղաքային միջավայրին:
- ✓ Ճանապարհի կառուցումը բացասաբար չի ազդի այդ տեսակների վիճակի և քանակի վրա:
- ✓ Վերոհիշյալ երեք տեսակներին պահպանելու համար հատուկ պահպանման միջոցառումների անհրաժեշտություն չկա:
- ✓ Շրջակա լանդշաֆտին վնաս չի հասցվի:

## Կաթնասուններ

137. Կաթնասունների դաշտային հետազոտությունն իրականացվել է երթուղու մեթոդի կիրառմամբ: Ճանապարհի ծրագիծն ընտրվել է որպես հետազոտվող երթուղի: Մանր կաթնասունները, մասնավորապես՝ կրծողները և միջատակերները բռնվել են ձեռքով կամ կենդանորսների միջոցով՝ ճանապարհի ծրագծի և հարակից տարածքներում: Դիտարկվել են յուրաքանչյուր տեսակի համար հարմար կամ նախընտրելի բնակավայրերը, կենդանիները հաշվվել և բաց են թողնվել: Երթուղիների վրա բոլոր կենդանիների դիտարկումն ու գրանցումը կատարվել է քայլելով կամ մեքենայով:

138. Գրանցվել են նաև կաթնասունների բների, ոտնահետքերի և կենսագործունեության արգասիքների հետքերը: Հավաքագրված տվյալները գրանցվել են տվյալների բազայում: Հնարավորության դեպքում կենդանիները լուսանկարվել են: Չղջիկների հայտնաբերման նպատակով կիրառվել է ձայնային (ակուստիկ) հայտնաբերման մեթոդը: Միաժամանակ կիրառվել են ուլտրաձայնային դետեկտոր Pettersson D240x, Batlogger C, Echo Meter Touch 2 Pro ձայնագրող սարքերը՝ չղջիկների արձակած ուլտրաձայնները որոշելու համար: Ձայնագրությունների վերլուծությունը կատարվել է Batexplorer և Kaliedoscope համակարգչային ծրագրերի միջոցով: Ձայնագրող սարքերի օգնությամբ ընդհանուր առմամբ ձայնագրվել է 32158 ձայն: Խոշոր կաթնասունների հետազոտությունների ժամանակ ուսումնասիրվել են կենդանիների կենսագործունեության հետքերը (կղանքը, ոտնահետքերի առկայությունը և լքված բները):

139. Կենդանիների կենսագործունեության հետքերը պայմանականորեն բաժանվել են խմբերի՝

1. սնուցման հետ կապված հետքեր,
2. կենդանիների մասունքներ,
3. բները,
4. ապաստարաններ:

140. Հայաստանում տարածված կաթնասունների 95 տեսակից ուսումնասիրվող տարածքում կարելի է հանդիպել 19 տեսակին: Դրանք դասակարգված են 5 խմբում՝

1. ոզնիներ - Erinaceomorpha - 1 տեսակ
2. միջատակերներ - Insectivora - 1 տեսակ
3. ձեռքաթևավորներ - Chiroptera - 7 տեսակ
4. կրծողներ - Rodentia - 7 տեսակ
5. գիշատիչներ - Carnivora - 2 տեսակ

141. Կոմիտասի այգու մերձակայքում կատարված դաշտային հետազոտության ընթացքում նկատվել է պարսկական սկյուռ, Հրազդան գետի աջափնյա տարածքում՝ 4 աղվես (*Vulpes vulpes*), իսկ 2-ը՝ Բսակովի պողոտային հարակից տարածքում: Հնարավոր է՝ աղվեսների քանակը ավելի շատ լինի՝ հաշվի առնելով կրծողների և այլ մանր կենդանիների մեծ քանակությունը, որոնք հիմնականում տարածված են այստեղ աղբի առկայության պատճառով:

142. Մանր կենդանիներ նույնպես դիտարկվել են, մասնավորապես՝ սպիտակակուրծք ոզնին (*Erinaceus concolor*) գրանցվել է այգիների մոտակայքում, իսկ աղբանոցների մոտ նկատվել է գորշ առնետ (*Rattus norvegicus*) մոտ: Որոշ կենդանիներ հայտնվել էին թակարդում, ինչպես օրինակ՝ արևելաեվրոպական դաշտամուկը (*Microtus levis*) և դեղնափոր տափաստանամուկը (*Apodemus witherbyi*):

143. Կովկասյան գորշատամուկը (*Sorex satunini*), երկնագույն սպիտակատամիկը (*Crocidura leucodon*), մեծ պայտաքիթը (*Rhinolophus ferrumequinum*), լեռնային ականջեղը (*Plecotus macrobularis*), սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythi*) և մի շարք կրծողներ հայտնաբերվել են այլ ծրագրերի շրջանակում նշված տարածքում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում:

144. Առաջարկվող կամրջի վայրից մոտ 50-100 մ հեռավորության վրա կան փոքր քարանձավներ: Արձանագրված հնչյունների վերլուծությունը ցույց տվեց, որ այդ քարանձավներում կան կարևոր նշանակության չղջիկների տեսակներ: Դրանց թվում են՝ միջերկրածովային փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), որոնք բնորոշ են ուսումնասիրվող տարածքին, ինչպես նաև փոքրաթիվ *Daubenton*-ի չղջիկները (*Myotis daubentoni*), բեղավոր չղջիկները (*Myotis mystacinus*), տափաստանային չղջիկները (*Myotis aurascns*): Կիրճի փոքրիկ քարանձավները տարածքի չղջիկների ժամանակավոր հանգստավայրերն են: Մնվում են հիմնականում Երևանյան լճի մերձակա տարածքում, հանգստանում կիրճի քարայրներում և ճեղքերում:

## Ձկներ

145. Իխտոլոգիական (ձկների) հետազոտության համար կիրառվել է ստանդարտ մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի գետերի, այդ թվում՝ Հրազդան գետի համակարգի վերաբերյալ հրապարակված առկա տեղեկատվության դիտարկման և դաշտային հետազոտության արդյունքների համադրման միջոցով: Ձկների պոպուլյացիաների նմուշառում կատարվել է 60 սմ տրամագիծ և 0.5 մմ ճեղքեր ունեցող ձեռքի ձկնորսական ցանցով և 80 սմ տրամագիծ

ունեցող վերհան ցանցով: Որսված առանձնյակների տեսակային պատկանելությունը որոշվել է՝ ըստ Հայաստանի ձկների տեսակների որոշչի (Пипоян, 2012):

146. Հրազդան գետի համակարգի տվյալների ուսումնասիրությունը և անցյալում՝ նախորդ ծրագրերի շրջանակում իրականացված դաշտային հետազոտությունների հիման վրա ջրային ֆաունայի պատկերը հետևյալն է. Հրազդան գետի համակարգը ներկայացված է շուջ 27 տեսակի ձկներով, որոնցից 9-ը հանդիպել է ներկայումս կատարված հետազոտությունների և նախորդ հետազոտությունների արդյունքում առաջարկվող ծրագրի մերձակա տարածքներում.

- 1) կողակ *Capoeta capoeta* (Güldenstädt, 1773),
- 2) կուրի բեղաձուկ *Barbus cyri* De Filippi, 1865,
- 3) արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii* (De Filippi, 1863),
- 4) ամուրյան նրբաձուկ *Pseudorasbora parva* (Temminck et Schlegel, 1846),
- 5) արծաթափայլ կարաս *Carassius gibelio* (Bloch, 1782),
- 6) աեյսելի լերկաձուկ *Oxynoemacheilus veyselorum* Cicek (Eagderi & Sungur, 2018):
- 7) կովկասյան թեփուղ *Squalius orientalis* (Nordmann, 1840),
- 8) կարմրախայտը *Salmo trutta* (L., 1758) and
- 9) ծիածանախայտը *Oncorhynchus mykiss* (Walbaum, 1792)

147. Վերը նշված բոլոր ձկնատեսակները Հրազդան գետի տեղաբնակ ձկնաշխարհի ներկայացուցիչներ են՝ բացի Ամուրյան նրբաձկից և արծաթափայլ կարասից, որոնք Հայաստանի ֆաունայի համար ինվազիվ ձկնատեսակներ են: Վերոնշյալից առաջին 6 ձկնատեսակները որսվել են ներկա հետազոտության ընթացքում, վերջին երեքը հայտնի են նախորդ ուսումնասիրություններից.

148. Ձկների հետազոտությունը հանգեցրեց հետևյալ հիմնական եզրակացություններին.

- ✓ Հրազդան գետի ուսումնասիրվող տարածքում հանդիպող ձկնատեսակներից որևէ մեկը գրանցված չէ ինչպես ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, այնպես էլ միջազգային որևէ ցուցակում որպես հազվագյուտ կամ անհետացող ձկնատեսակ:
- ✓ Առևտրային ձկնորսություն գոյություն չունի, թեև Հրազդան գետի համակարգում տարածված է ձկնորսությունը, և որսված ձուկը հաճախ օգտագործվում է ուտելու նպատակով:
- ✓ Գետի հոսանքի և/կամ բնական հունի փոփոխումը բացասականորեն կարող են անդրադառնալ կողակի և արծաթափայլ կարասի բազմացման նպատակով կատարվող միգրացիաների վրա, իսկ մյուս ձկնատեսակները, որոնք չեն կատարում զգալի միգրացիաներ իրենց բնակության վայրից, էականորեն չեն տուժի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում:

149. Փորձագետների կողմից կատարվել են առաջարկություններ (տե՛ս Գլուխ Զ. Ֆլորա և ֆաունա (Գետը և ցամաքային անողնաշարավոր կենդանիները և Գլուխ Ը, պարբերություն 6-ը՝ Ֆլորայի և ֆաունայի պահպանությունը և բուսականության մաքրման պլանը), որոնք հաշվի են առնվել ԲԿՊ-ն պատրաստելիս (կներկայացվի որպես հավելված կցված ԲԿՊ-ի սխեմայում): Բացի այդ, պետք է ընդգծել, որ Ծրագրի նախագիծը հաշվի չի առնում և չի հանդեցնի էկոլոգիական ջրի հոսքի և գետի հունի փոփոխության:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ և ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ


150. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ծրագրի ազդեցության տարացքում ՀՀ կառավարության 14.08.2008 թ.-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ գրանցված բնության հուշարձաններ առկա չեն:

## Նախնական գնահատման հայտ

Հրազդանի կիրճի ձախափնյա մասում Սբ. Մարգիս եկեղեցու և մանկական ե/գ տանող թունելի ճակատամուտքի մոտ գտնվող առավել հավանական «Անանուն» սյունաձև բազալտներ 2 գրանցված բնության հուշարձանները գտնվում են շիրանարական աշխատանքների հրապարակից և տրանսպորտային ուղիներից առնվազն 2,5- 3 կմ հեռավորության վրա:

### Ե8. Սոցիալ- տնտեսական պայմանները

Նկար Ե-4. Ճանապարհի ծրագծի հատակագիծը և ազդակիր վարչական շրջանների սահմանները



151. Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցը կկառուցվի Երևան քաղաքի վարչական տարածքում, որը Հայաստանի Հանրապետության ամենամեծ վարչական, տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է և տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային տարանցիկ հանգույցը: Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում՝ Հրազդան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 900-1200 մ բարձրության վրա և սահմանակից է ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանի տարածքը 233 քառ. կմ է, բնակչությունը՝ 1087,9 հազար մարդ, որը կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 35% -ը:

152. Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ: Երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կապիտալի տեսակարար կշիռը կազմում է 42,1%. Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 42.1%-ը, շինարարության՝ 53.9%-ը, մանրածախ առևտրի՝ 82.6%-ը, ծառայությունների՝ 85.5%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի՝ 77.6%-ը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 33.2%-

## Նախնական գնահատման հայտ

ը: Հաշվի առնելով Երևան քաղաքի վարչական, տնտեսական, ինչպես նաև գիտական և մշակութային ներուժը՝ քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների զարգացման և ենթակառուցվածքների բարելավման և զարգացման ծրագրերի իրականացման համար թիրախ են հանդիսանում այս ոլորտները: Այս գործընթացում կարևորվում է միջազգային համագործակցության ընդլայնումը, համայնք-մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցությունը:

153. Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների, և առաջարկվող ծրագրային ճանապարհի ծրագիծն անցնում է դրանցից երեքով՝ Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ (տես Նկ Ե-4):


### **Կենտրոն վարչական շրջան**

154. Ճանապարհի ծրագծի հիմնական մասը (մոտ 1.2 կմ) անցնում է Կենտրոն վարչական շրջանով (Նկար E-410 և E-5): Կենտրոն վարչական շրջանը ընդգրկում է քաղաքի կենտրոնական մասը, առևտրական կենտրոնները և զբաղեցնում է 1335 հա տարածք:

155. 2020 թ. մարդահամարի տվյալներով վարչական շրջանի բնակչությունը կազմում է 125,700 մարդ: Կենտրոն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Ծրագրի ազդեցության ենթարկվող այլ վարչական շրջանների հետ՝ արևմուտքից՝ Մալաթիա-Սեբաստիայի, իսկ հարավից՝ Շենգավիթի հետ: Հրազդան գետն անցնում է վարչական շրջանի արևմտյան հատվածով:

156. Վարչական շրջանը ոչ պաշտոնապես բաժանված է ավելի փոքր թաղամասերի՝ Այգեստան, Կոնդ, Նորագյուղ, Փոքր Կենտրոն, Նոր Կիլիկիա, Կոզեռն և Այգեստան: Նորագյուղը, որի տարածքով է անցնելու նոր կառուցվող ճանապարհը, հին Երևանի 7 թաղամասերի շարքում է:

### **Նկար Ե-5. Ծրագրի տեղադիրքը Կենտրոն վարչական շրջանում (նշված է կարմիրով)**



### **Շենգավիթ վարչական շրջան**


<sup>10</sup> Նարնջագույն և կապույտ գծերի միջև տարածքը:

## Նախնական գնահատման հայտ

157. Ճանապարհի մեկ այլ զգալի հատված (մոտ 0.7 կմ) անցնում է Շենգավիթ վարչական շրջանով (տես Նկ. Ե-4 և Ե-6):

158. Վարչական շրջանը գտնվում է Երևանի հարավում և զբաղեցնում է 4090 հա տարածք՝ 141.700 բնակչությամբ:

### Նկար Ե-6. Ծրագրի տեղադիրքը Շենգավիթ վարչական շրջանում (նշված է կապույտով)




159. Շենգավիթը Երևանի ամենախոշոր արդյունաբերական վարչական շրջանն է: Խոշոր գործարանները և արտադրական ձեռնարկությունները կառուցվել են խորհրդային տարիներին, սակայն Հայաստանի անկախացումից հետո ծանր արդյունաբերության գործարանների մեծ մասը լքվեց, այդ թվում նաև Երևանի կաշվի գործարանը, որի տարածքի վրա մասնակի ազդեցություն կունենա ճանապարհի կառուցումը: Շենգավիթ վարչական շրջանի տարածքում Արշակունյաց պողոտայում տեղակայված են բազմաթիվ առևտրի խանութներ, պատկերասրահներ և առևտրային գրասենյակներ, այդ թվում՝ «Սինոփսիս Արմենիա»-ի գլխամասը և Երևան Մոլը՝ Հայաստանի ամենամեծ առևտրի կենտրոններից մեկը: Երևանի հանրակրթական դպրոցների գրեթե 15%-ը գտնվում է Շենգավիթում: Վարչական շրջանն ունի 29 հանրակրթական դպրոց, 2 մասնավոր դպրոց, ինչպես նաև 1 արհեստագործական ուսումնարան, որոնցից միայն Փանոս Թերլեմեզյանի անվան Երևանի գեղարվեստի պետական քոլեջն է գտնվում առաջարկվող ճանապարհի ծրագծին մոտ և գնահատվում է որպես զգայուն արժեքավոր ընկալիչ:

### ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան***

160. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը արևելքից սահմանակից է Կենտրոն վարչական շրջանին, իսկ հարավից՝ Շենգավիթ վարչական շրջանին: Վարչական շրջանը զբաղեցնում է 2516 հա տարածք՝ 140.000 բնակչությամբ: Այստեղ է գտնվում Սեբաստիայի մետաքսի գործարանը և «ՌՍՕ ՄԱՐՍ» մետաղի գործարանը: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի արվարձանում՝ դեպի հարավ-արևմուտք:

161. Ճանապարհի միայն մի փոքր հատվածն է (մոտ 761մ) գտնվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում (տես Նկ. Ե-4 և Ե-7):

**Նկար Ե-7-ում Ծրագրի տեղադիրքը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում (նշված է մանուշակագույնով)**



162. Ծրագրի ազդեցության տարածքում սոցիալական համակարգերի առկայության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը հավաքագրվել է տեղամասային այցելությունների ընթացքում: Դրանք բոլոր այն ազդակիրներն են, որոնք ճանապարհի կառուցման և շահագործման ընթացքում կարող են կրել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Գ):

163. Ծրագրի սոցիալական համակարգերը ներկայացված են այնպիսի արժեքավոր զգայուն ազդակիրներով, ինչպիսիք են՝

- ✓ տեղի բնակչությունը ներառյալ խոցելի խմբերը՝ հատկապես Արշակունյացի կողմում գտնվող Կաշեգործների և Բունիաթյան փողոցների խիտ բնակեցված տարածքում և Իսակովի կողմից Նորագյուղի տարածքում,
- ✓ պետական սեփականությունը՝ Կոմիտասի անվան զբոսայգին, դպրոցները, մշակութային կենտրոնները, բժշկական կենտրոնները և ընդհանուր օգտագործման ճանապարհները,
- ✓ համայնքային և մասնավոր սեփականությունը, ինչպիսիք են՝ բնակելի տները, ձեռնարկատիրական օբյեկտները, մշակվող այգիները և գյուղատնտեսական նշանակության հողերը,
- ✓ հաղորդուղիները, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցության ուղիները, ջրատար, կոյուղատար և գազատար խողովակաշարերը, էլեկտրականության սյուները և գծերը, ջրահեռացման համակարգերը:

164. Վերոնշյալ սոցիալական համակարգերի վրա հնարավոր ազդեցության տեսակը և համապատասխան մեղմացնող միջոցառումները ներկայացված են Գլուխ Զ-ում: Նախքան Ծրագրի մեկնարկը ՄՆԽ-ի կողմից պետք է կատարվի Մանրամասն չափագրման հետազոտություն և մշակվի ՀՕՏՕ, որը պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից: ՀՕՏՕ ընթացակարգի շրջանակներում օտարվող գույքի վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացվում են առանձին հաշվետվությունում:



## 2. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

165. Այս բաժինը բացահայտում է ծրագրի հնարավոր դրական և բացասական, ուղղակի և անուղղակի ազդեցությունների շրջանակը ֆիզիկական, կենսաբանական, սոցիալ-տնտեսական (ներառյալ՝ աշխատանքի անվտանգության և առողջության, համայնքների առողջության և անվտանգության, խոցելի խմբերի և գենդերային խնդիրների) և կենսամակարդակի վրա ազդեցությունները ծրագրի ազդեցության տարածքում շրջակա միջավայրի և ֆիզիկական մշակութային ռեսուրսների միջոցով և ըստ անհրաժեշտության ուսումնասիրում է գոբալ և համապարփակ ազդեցությունները: Այս ազդեցությունները հնարավորին չափով գնահատվում և մանրամասնվում են քանակական առումով: Բացահայտվում են նաև կանխատեսումների հետ կապված անորոշությունները և նշվում են թեմաներ, որոնք լրացուցիչ ուշադրություն չեն պահանջում:

166. Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները և մեղմացնող միջոցառումները ներկայացված են իրենց ֆիզիկական, առանձնահատուկ, ժամանակավոր և տեխնիկական ասպեկտներով.

- Ծրագրի դրական արդյունքներն ու օգուտները
- Բացասական ազդեցությունները
  - ծրագրի գործողությունների բացահայտումը՝ որպես ազդեցության աղբյուր,
  - արժեքավոր բնապահպանական ընկալիչների բացահայտում և գնահատում,
  - նշանակության գնահատում,
  - առանձնահատուկ ազդեցությունների՝ աղմուկի և թրթուման, մակերեսային ջրերի որակի, շինարարության ընթացքում փոշու և գազի տարածման քանակական գնահատումը (օրինակ՝ մոդելավորումը),
  - համապարփակ բնապահպանական ազդեցությունները,
  - մեղմացնող միջոցառումների հիերարխիան,
  - մնացորդային նշանակալի հետևանքները և փոխհատուցումը:

### 21. Դրական արդյունքները

#### Նախագծին առնչվող դրական արդյունքները

167. Ծրագրի նպատակը Իսակովի և Արշակունյաց պողոտաների միջև 60 կմ/ժ առավելագույն արագությամբ ճանապարհային հանգույցի կառուցումն է, որը լինելու է Իսակով-Լենինգրադյան ճանապարհի շարունակությունը և Երևանի ճանապարհային ցանցի մաս է կազմելու: Նշված ճանապարհային հանգույցի կառուցման շնորհիվ քաղաքի կենտրոնը կբեռնաթափվի երթևեկությունից, էապես կկրճատվեն բեռնա- և ուղևորափոխադրումների ժամանակը և ճանապարհների խցանումները:

168. Նոր ճանապարհի ծրագիծը կնախագծվի և կկառուցվի այնպիսի ստանդարտներով, որոնք թույլ կտան ունենալ բարելավված ճանապարհային գծանշումով, ազդանշանային համակարգով, անվտանգությամբ, ջրահեռացման համակարգով, ջրթող խողովակներով և կողնակներով ճանապարհ: Այսպիսի բարձր ստանդարտները թույլ կտան բարելավել ճանապարհա- րանսպորտային անվտանգությունը վարորդի համար.

### Էկոլոգիական օգուտները

169. Ծրագրի կառուցվածքային տարրերը կնախագծվեն՝ հաշվի առնելով տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության բարձր ռիսկայնությունը: Ջրահեռացումը կներառվի ճանապարհի նախագծում՝ ջրի հոսքերը վերահսկելու, հողերի ողողաքայքայումը և տեղանքում հեղեղումները նվազագույնի հասցնելու համար:

170. Ծրագիրը տեղակայված է չոր և կիսաչոր տարածքում (Իսակովի կողմից մոտ 1.2 կմ), ուստի նախագիծը ներառում է կանաչապատում ճանապարհի բաժանիչ գոտում և կողնակների երկայնքով (ծառերի տնկում, ճիմապատում), ինչը կբարելավի օդի որակը ճանապարհի օտարման գոտում և մերձակա տարածքներում: Ակնկալվում է, որ տեղանքում օդի որակը կբարելավվի նաև երթևեկության խցանումների նվազման պատճառով:

171. Կանաչապատման օգուտները ներառում են նաև էկոլոգիական արժեքի բարձրացումը, ջրային հոսքերի բարելավված ներթափանցումը հողի մեջ, հողի կառուցվածքի կայունացումը, տեղանքի գեղագիտական գրավչության բարելավումը և աղմուկի որոշակի նվազումը (մասնավորապես աղմուկի հետազոտության և մոդելավորման միջոցով որոշված ճանապարհահատվածների համար):

### Սոցիալ-տնտեսական օգուտները

172. Ճանապարհի շինարարության ավարտից հետո Երևանի մյուս ճանապարհների հետ բարելավված կապը կնպաստի տարածաշրջանային տնտեսական աճին, քանի որ իր ներդրումը կունենա Երևանի հյուսիսը հարավի հետ կապող ցանցի գործում: Ակնկալվում է, որ նոր ճանապարհը դրական դեր կխաղա Երևանի և երկրի տնտեսական աճի խթանման գործում:

173. Կանխատեսվում են որոշ սոցիալ-տնտեսական ազդեցություններ. շինարարական աշխատանքների ընթացքում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծումը տեղական համայնքների համար կարող է ապահովել լրացուցիչ եկամուտ: Ուստի, սոցիալական խնդիրները, որոնք պայմանավորված են ոչ տեղացի աշխատողներով, կհասցվեն նվազագույնի:

174. Նշված ճանապարհային հանգույցի կառուցման շնորհիվ քաղաքի կենտրոնը կբեռնաթափվի երթևեկությունից, էապես կկրճատվեն բեռնա- և ուղևորափոխադրումների վրա ծախսվող ժամանակը և փողոցների խցանումները: Ծրագրերի քանակական օգուտներն ու առավելություններն են՝ (i) փոխադրամիջոցների շահագործման արժեքների խնայողություններ, (ii) խնայողություններ ուղևորության ժամանակի առումով առկա ճանապարհային ցանցի հետ համեմատած փոխադրամիջոցների միջին արագության աճի շնորհիվ՝ և (iii) պատահարների նվազում: Բնապահպանական ծախսերի կրճատման և առկա ճանապարհացանցի գերբեռնվածության նվազման արդյունքում ի հայտ եկող հնարավոր լրացուցիչ դրական ազդեցություններն առկա ճանապարհային ցանցում դեռևս քանակապես որոշված չեն, բայց դրական արդյունքներ սպասվում են:

175. Ծրագիրը հաշվի կառնի Երևան քաղաքի զարգացման հեռանկարները: Ճանապարհի օտարման գոտու երկայնքով տեղադրվելու է կոյուղատար՝ ապագա ընդլայնված քաղաքին ծառայելու համար:

### Ձ2. Բացասական ազդեցություններ

176. Աշխատանքային տեղամասի ներսում և դրանից դուրս կարող են տեղի ունենալ բնական և սոցիալական միջավայրի վրա ազդեցություններ, ինչպես ծրագրի շինարարական աշխատանքների, այնպես էլ հետագայում կառուցված ճանապարհի

## Նախնական գնահատման հայտ

շահագործման ընթացքում: Աշխատանքային տեղամասի ներսում առաջացող ազդեցությունները՝ Ծրագրի՝ ճանապարհի օտարման գոտում տարվող աշխատանքների արդյունք են, իսկ տեղամասից դուրս պատճառվող ազդեցությունները՝ շինհրապարակից դուրս իրականացվող գործողությունների, ինչպիսիք են՝ շինանյութեր տեղափոխող տրանսպորտի երթևեկությունը, ճամբարների տեղակայումը, ժայռանյութի ջարդիչի և այլ սարքավորումների առկայությունը և այլն, որոնք, այնուամենայնիվ, ուղղակիորեն կապված են ծրագրի հետ:

177. Հնարավոր բնապահպանական ազդեցություններից և ռիսկերից խուսափելու նպատակով ծրագրի ազդեցությունների շրջանակի որոշումը սկսվել է դեռևս վաղ նախագծման փուլում: Ազդեցության գնահատումն ի կատար է ածվել նախագծող թիմի հետ սերտ համագործակցությամբ, ովքեր ժամանակին տեղեկացվել են բացահայտված ազդեցությունների մասին և հնարավորություն են ունեցել դրանք հաշվի առնելու: Մասնավորապես, նոր ճանապարհի համար առաջ են քաշվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ անձրևաջրերի և մակերեսային բոլոր ջրահոսքերի հավաքումը և մշակումը նախքան դրանց գրունտի մեջ ներթափանցելը և գետ թափվելը, ինչպես նաև գրունտի և հիդրոերկրաբանական պայմանների բարելավելավմանն ուղղված միջոցառումները: (տե՛ս Գլուխ Ը, Մակերևութային և գրունտային ջրերի պահպանման պլան բաժնում):

### Նկար Զ-1. Էսքիզային նախագծի, այդ թվում՝ բնապահպանական և սոցիալական ասպեկտների քննարկում



### Ծրագրի գործողությունները և ազդեցությունները

178. Ծրագրի՝ սույն հաշվետվության Գլուխ Գ-ում ներկայացված գործողությունները կարող են էապես ազդել շրջակա միջավայրի վրա: Նախատեսվող շինարարական աշխատանքները կունենան բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա որոնք տիպիկ են փոքր և միջին չափի ճանապարհների կառուցման համար: Մյուս կողմից, ակնկալվում է, որ շինարարական աշխատանքների բացասական ազդեցությունը լինելու է ժամանակավոր, այսինքն՝ սահմանափակվելու է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածով և հիմնականում սահմանափակվելու է շինհրապարակներով:

**Արժեքավոր զգայուն ազդակիրներ**

179. Ծրագրի վերոհիշյալ գործողությունները կարող են ազդել հասարակության և օրենքի կողմից արժևորվող բնական միջավայրի բաղադրիչների և սոցիալական համակարգերի վրա: Ծրագրի ազդեցության տարածքը պայմանավորված է ճանապարհի ծրագծով՝ ինչի հիման վրա հնարավոր է որոշել, թե շրջակա միջավայրի որ տարրերն են ներառվելու որպես ԱԶԱ:

180. Ծրագրի արժեքավոր զգայուն ազդակիրների շրջանակը որոշվել է և այնուհետև հնարավոր ռիսկերը ամփոփվել են շահագրգիռ կողմերի՝ ի դեմս Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների, ինչպես նաև Ծրագրի ազդակիր անձանց ՀԿ-ների և այլ լայն հանրության հետ քննարկումների և հաղորդակցման միջոցով, ինչի արդյունքում հավանական ռիսկերը և դրանց նշանակությունը սահմանվել, որոշվել և ամբողջացվել են: Ծրագրի նախագծի մշակման և ՇՄԱԳ գործընթացի ընթացքում ելակետային տվյալների հավաքագրման շնորհիվ հնարավոր բացասական ազդեցությունների շրջանակը էլ ավելի ճշգրտվեց:

**Ազդեցությունների խստությունը**

181. Արժեքավոր զգայուն ազդակիրների (ԱԶԱ) վրա ծրագրի գործողությունների արդյունքում առաջացող ազդեցությունների խստությունը վերլուծության է ենթարկվել, որը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում: Ազդեցության խստության սահմանման նպատակով հաշվի են առնված ասպեկտները և կիրառված գնահատման համակարգը ներկայացված է ստորև.

**Աղյուսակ Զ-1. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման չափորոշիչներ**

Զափանիչներ	Դասակարգում/ Գնահատական			
	1	2	3	4
Ազդեցության մակարդակը (փոփոխության նկատմամբ զգայունություն)	Աննշան	Ցածր	Միջին	Բարձր
Ազդեցության նշանակությունը	Տեղային	Մարզային	Ազգային	Միջազգային
Ազդեցության տևողությունը	Անցողիկ	Կարճաժամկետ	Միջին տևողության	Երկարաժամկետ (մշտական)
Հաճախականությունը	Մեկանգամյա	Հազվադեպ	Հաճախակի	Շարունակական
Ազդեցության հավանականությունը	Շատ քիչ հավանական	Հնարավոր	Հավանական	Հաստատ
Ազդեցության շրջելիությունը	Լիովին շրջելի	Հիմնականում շրջելի	Մասամբ շրջելի	Անշրջելի

**Ազդեցության տեսակը**

182. Ազդեցությունների խստությունը կախված է նաև վերջինիս տեսակից: Ծրագրի գործողությունները կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ Արժեքավոր զգայուն ազդակիրի վրա, ինչն առաջարկվող ծրագրի համար ամփոփ ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ի ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-3-ում:

Նախնական գնահատման հայտ

*Ազդեցության նշանակությունը*

183. Ազդեցությունների խստության վերլուծությունից հետևում է, որ կենսաֆիզիկական միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունները հիմնականում կլինեն ժամանակավոր և հիմնականում տեղի կունենան միայն շինարարության ընթացքում: Ազդեցության նշանակությունը ներկայացված է առանց մեղմացնող միջոցառումների և դրանց իրականացման պայմաններում, որն ամփոփ ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ի ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-4-ում:

184. Ազդեցություններից խուսափելու և մեղմացնող միջոցառումների պլանավորման, չմեղմացվող մնացորդային բացասական ազդեցությունների որոշման, ինչպես նաև դրանց ընդլայնման հնարավորությունների ուսումնասիրության համար «ազդեցության նշանակությունը առանց մեղմացնող միջոցառման» ավելի մեծ կարևորություն ունի, ինչն ամփոփ ներկայացված է ստորև՝ Աղյուսակ Զ-2-ում:

**Աղյուսակ Զ-2. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նշանակության գնահատում<sup>11</sup>**

ԱԶԱ⇒ Խստություն↓	Միջազգային/ Չափազանց մեծ	Ազգային/ Բարձր	Մարզային/ Միջին	Տեղական/Ցածր
Բարձր	-	-	Սոցիալական համակարգեր (առաջին հերթին տեղի բնակչությունը)	Աղմուկ և թրթռումներ
Միջին	-	Մշակութային ժառանգություն (Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատ)	Մակերեսային ջրային մարմիններ  Լանդշաֆտ և Էսթետիկա  Երթևեկություն և տրանսպորտ	Օդի որակ
Ցածր	-	Հնագիտություն և պատմական ժառանգություն (Պանթեոն և քանդակ «Կաշեգործ»)	Բուսական և կենդանական աշխարհ  Նյութական ռեսուրսներ  Հաղորդուղիներ  Գրունտներ, այդ թվում՝ բուսահող  Հիդրոերկրաբանություն	-

185. Ծրագրի ազդեցության տարածքում ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական, հնագիտական և մշակութային միջավայրի վրա Ծրագրի ամբողջական՝ և՛ դրական, և՛ բացասական ասպեկտները բացահայտելուց հետո որոշվել է, որ ազդեցությունները

11

Բարձր (Բ)	Միջին (Մ)	Ցածր (Ց)	Ոչ նշանակալի (ՈՆ)
-----------	-----------	----------	-------------------

Նախնական գնահատման հայտ

կառավարելի են և կարող են նվազագույնի հասցվել և նույնիսկ վերացվել մեղմացնող միջոցառումների՝ ժամանակին և պատշաճ իրականացման միջոցով, հետևաբար, առաջարկվում են համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ հիմք ընդունելով դրանց առաջացումը և նշանակությունը Ծրագրի ամբողջ ընթացքում՝ սկսած մանրամասն նախագծից, նախաշինարարության փուլից մինչև շինարարություն, շահագործում և տեխնիկական սպասարկում: Մեղմացնող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ը, որը ՇՄԱԳ հաշվետվությանը կցվելու է որպես Բնապահպանական կառավարման պլան և Հավելված):

Ազդեցությունների ժամանակային ընդգրկումը

186. ՇՄԱԳ ընթացքում ուսումնասիրվել են Ծրագրի ազդեցությունները և իրականացվել է մեղմացնող միջոցառումների և դրանց մոնիտորինգի պլանավորումը ԲԿՊ-ում ըստ Ծրագրի զարգացման փուլերի՝

- Նախագծման փուլ,
- Նախաշինարարական փուլ – նախապատրաստական աշխատանքներ,
- Շինարարության փուլ,
- Հետշինարարական փուլ,
- Շահագործման փուլ - այդ թվում՝ տեխնիկական սպասարկում:

Աղյուսակ Զ-3. Ազդեցությունների ժամանակային ընդգրկումը

ԱԶԱ	Ազդեցություն	Նախագծման փուլ	Նախաշինարարական փուլ – նախապատրաստական աշխատանքներ	Շինարարության փուլ	Հետշինարարական փուլ	Շահագործման փուլ – այդ թվում՝ տեխնիկական սպասարկում
Մթնոլորտային օդի որակ	Հողային աշխատանքների պատճառով առաջացած փոշի, գործող մեքենաների և տեխնիկայի գազային արտանետումներ		X	X  Հիմնականում հողային աշխատանքների ընթացքում առաջացած փոշի, գործող մեքենաների և տեխնիկայի գազային արտանետումներ	X	X  Ճանապարհային երթևեկության փոշի և գազի արտանետումներ: օդի որակի վրա ազդեցության ոչ էական ավելացում ընդունելի սահմաններում
Աղմուկ	առաջանում է գործող մեքենաների և տեխնիկայի, ինչպես նաև երթևեկության ավելացման հետևանքով			X	X	X

Նախնական գնահատման հայտ

Թրթռումներ	առաջանում է գործող մեքենաների և տեխնիկայի, ինչպես նաև երթևեկության ավելացման հետևանքով			X հիմնականում	Ոչ հավանական	X
Մակերեսային ջրային մարմիններ՝ Հրազդան գետ Ոռոգման ջրանցք	ջրառ, ջրի աղտոտում և նստվածքագոյացում հունին մոտ տարվող հողային աշխատանքների, ինչպես նաև անձրևաջրերի արտահոսքի, կեղտաջրերի արտանետման, շինարարական արտանետումների՝ բետոնաջրերի, հեղուկ և պինդ թափոնների, և այլնի պատճառով		X	X հիմնականում	X	X
Ստորգետնյա ջրի որակ	ոչ պատշաճ կերպով պահեստավորված նյութերի, վերալիքի ցքավորման կամ գործող ծանր տեխնիկայի կողմից այլ պատճառներով վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխհաղորդակի, մեքենայի յուղ), քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ		X	X	X	Ոչ հավանական
Բուսական և կենդանական աշխարհ (ջրային և ցամաքային)	□ հանույթի, տոփանման և բնահողի տեղափոխման պատճառով բնական միջավայրի խաթարում կամ ոչնչացում, □ բուսականության, նորմալ սննդային շղթայի ոչնչացման պատճառով ցեղատեսակների կորուստ, □ պատճառվող անհանգստության հետևանքով ցեղատեսակների միգրացիա, □ ճանապարհաշինարարության, ցանկապատման և այլնի պատճառով բնական միջավայրի խաթարում կամ մասնատում, □ շինարարական աղմուկի, երթևեկության, շինարար անձնակազմի		Ոչ հավանական	X	X	Ոչ հավանական

Նախնական գնահատման հայտ

	ինտենսիվ ներկայությամբ պատճառվող անհանգստություն:					
Գրունտներ և բուսահող	<input type="checkbox"/> հողայն և լիցքի աշխատանքների արդյունքում հողի հանույթ և բուսահողի հեռացում, <input type="checkbox"/> գրունտի քայքայում և նստվածքագոյացում, <input type="checkbox"/> արտահոսքերի պատճառով գրունտի աղտոտում,		X	X	X	Ոչ հավանական
Նյութերի աղբյուրներ (հանքեր/ հանույթի համար նախատեսված վայրեր)	<input type="checkbox"/> լիցքի համար նախատեսված նյութի ստացում շրջապատող միջավայրից, օրինակ մոտակա գյուղատնտեսական հողերից կամ հնագիտական վայրերից		Ոչ հավանական	X	Ոչ հավանական	Ոչ հավանական
Սոցիալական համակարգեր (տե՛ս ծրագծի թերթիկը ՀԱՎԵԼՎԱ ԾԳ)	<input type="checkbox"/> բնակչությանը և բիզնես օբյեկտներին պատճառվող անհանգստություն և/կամ տհաճություն,		X	X	X	X
Հաղորդուղիներ	հողային աշխատանքների ընթացքում վնասելու վտանգ		Ոչ հավանական	X	Ոչ հավանական	Ոչ հավանական
Երթևեկություն և տրանսպորտ	<input type="checkbox"/> գոյություն ունեցող ճանապարհների և հետիոտնային անցումների փակում, բեռնատար և այլ մեքենաների տեղաշարժի պատճառով տեղի ճանապարհային երթևեկության ինտենսիվացում, <input type="checkbox"/> վտանգված հանրային անվտանգություն		X	X	X	Ոչ հավանական
Լանդշաֆտ և էսթետիկա	հողային աշխատանքների, նյութերի և թափոնների կուտակումների, ծառերի և այլ բուսականության հեռացման, ժամանակավոր օժանդակ կառույցների ստեղծման պատճառով առաջացած լանդշաֆտի		X	X	X	Ոչ հավանական



Նախնական գնահատման հայտ

	ձևափոխում					
Հնագիտություն և մշակութային ժառանգություն	<p>□ հնագիտության տեսանկյունից զգայուն տարածքից զրուների և հանույթ</p> <p>□ «Կաշեգործ» քանադակի վնասում</p> <p>□ Կոմիտասի անվան զբոսայգու պատերի, մետաղական ցանկապատի և սյուների վնասում և կորուստ</p>		X	X	Ոչ հավանական	Ոչ հավանական

Արժեքավոր զգայուն ազդակիրներ (ԱԶԱ)

Առաջարկվող Նախագծի արժեքավոր զգայուն ազդակիրներն են՝

*Օդի որակ (այդ թվում՝ աղմուկ և թրթռումներ)*

187. Օդի վրա ազդեցությունն առավել հավանական է՝ շինարարության փուլում՝ հողային աշխատանքների պատճառով առաջացած փոշու և գործող մեքենաների ու տեխնիկայի պատճառով առաջացած գազի արտանետումների տեսքով: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումներն առաջանալու են հանույթի, բեռնման աշխատանքների, ծածկի իրականացման, գծանշումների և սարքավորումների շահագործման հետևանքով: Շինարարական տեխնիկան նույնպես աղմուկի և թրթռումների առաջացման հիմնական աղբյուր է:

188. Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվելու է օդի որակի մոդելավորում՝ օգտագործելով հատուկ ծրագիր<sup>12</sup>:

189. Շինարարության ընթացքում օդի որակի պարամետրերին համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) արտանետումների պարբերական գործիքային չափագրումների պահանջ է նախատեսված ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածում: Շինարարական աշխատանքների մեկնարկից առնվազն 21 օր առաջ Կապալառուից պահանջվելու է իրականացնել չափագրումներ ելակետային տվյալների հավաքագրման նպատակով:

190. Այնուհետև Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու փոշու՝ 2.5 PM և 10 PM մասնիկների գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, նաև ԱՄ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային օրենսդրական կարգավորումների և ՄՖԿ (IFC) ստանդարտների հետ՝ ըստ PM2.5-ի և PM10-ի հետևյալ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների:

✓ <sup>12</sup> Շրջակա միջավայրի Նախարարի հրաման N64-L «Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի համակարգչային ծրագրերը սահմանելու մասին» (18.02.2020թ.)

**Աղյուսակ Զ-4. PM2.5 և PM10-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները**

№	Նյութի անվանումը	ՄԹԿ (մգ/մ <sup>3</sup> )		ՄՖԿ ստանդարտ (մգ/մ <sup>3</sup> )
	Փոշու մասնիկները	Առավելագույնը	Օրական միջինը	Փոշու մասնիկները
1	PM2.5	0.15	0.035	0.025
2	PM10	0.3	0.06	0.05

191. Փոշու չափագրումներն իրականացվելու են 3 ընտրված կետերում (վայրը տե՛ս Նկար Զ-2-ում), աշխատանքային ժամերի ընթացքում, յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, որի հիման վրա որոշվելու է միջին ցուցանիշը: Կետերը ընտրվելու են խիտ բնակեցված տարածքներում՝ մոտ գտնվող զգայուն ընկալիչների սկզբունքի հիման վրա: Չափիչ սարքը տեղադրվելու է մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (շենքից դուրս)՝ վերջրներիս վրա ազդեցությունը որոշելու համար:

192. Ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) չափագրումները կիրականացվեն կապալառուի կողմից երկու անգամ՝ առաջին անգամ նախքան շինարարական աշխատանքները սկսելը (21 օր առաջ), երկրորդ անգամ՝ մինչև թերությունների վերացման ժամանակահատվածի ավարտը: Շինարարության ընթացքում լրացուցիչ միջանկյալ չափագրումներ կիրականացվեն տեղի բնակիչների կողմից գրանցված բողոքների դեպքում:

193. Կանոնավոր չափագրումների համար օգտագործվող սարքավորումը չի կարող ներկայացվել ՇՄԱԳ հաշվետվության այս փուլում, սակայն գործիքային չափագրումների համար ենթակապալառու ընկերությանը ներկայացվող հետևյալ պահանջները սահմանվում են ՇՄԱԳ/ԲԿՊ- ում՝

- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների ստանդարտացման վկայագրեր,
- ✓ կազմակերպությունը նախքան ընտրվելը կներկայացնի չափագրումների մեթոդաբանությունը,
- ✓ կկիրառվի սարքավորում, որի չափագրումների արդյունքները հնարավոր կլինի համեմատել ելակետային տվյալների հետ:

**Նկար Զ-2. Մթնոլորտային օդի որակի չափագրումների կետերի գտնվելու վայրը**



194. Շինարարական աշխատանքների ընթացքում արտանետումների ցրման արդյունքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը գնահատելու համար իրականացվելու է արտանետումների և կանխատեսվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկները: Հաշվարկները կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ ընդունելի համակարգչային ծրագրի միջոցով: Հաշվարկների արդյունքում կորոշվեն ստորև նշված տվյալները, ինչպես նաև կորոշվի աղտոտվածության առավելագույն մակարդակը և կհամեմատվի թույլատրելի նորմերի հետ.

- ✓ անվանական հաշվարկային կետի կոորդինատները,
- ✓ վնասակար նյութերի կոնցենտրացիան,
- ✓ ջահի առանցքի ուղղությունը. քամու այն արագությունը (մ/վ), որի դեպքում հաշվարկային կետում գետնամերձ կոնցենտրացիաները հասնում են առավելագույն արժեքի:

195. Հետշինարարական փուլում փոշու, ածխաթթու գազի, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի մակարդակի ավելացումը նույնպես հնարավոր է: Այնուամենայնիվ, այս ազդեցությունը մեծ կարևորություն չունի: Այսօրինակ ազդեցության կարևորությունը որոշվելու է շահագործման փուլի համար ՇՄԱԳ շրջանակներում օդի որակի մոդելավորման միջոցով և մեղմացվելու է կանաչապատման միջոցառումների իրականացմամբ ու աղմկապաշտպան պատնեշների կառուցմամբ:

#### *Աղմուկ*

196. Ամբողջ ծրագրի, այնուհետև շահագործման ընթացքում Ծրագրի իրականացման վայրում և անմիջապես հարակից տարածքում անպայման տեղի է ունենալու աղմուկի և թրթռումների մակարդակի շարունակական բարձրացում: Ազդեցության խստությունը գնահատվում է 21 (Բարձր), սակայն աղմուկի և թրթռումների ազդեցությունը՝ ըստ Աղյուսակ Զ-2-ի (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Զ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Զ-4 և Զ-5) գնահատվում է «ՑԱՕԲ», քանի որ այս ազդեցության տեղային բնույթը սահմանափակվում է ազդեցության հարաբերականորեն փոքր գոտիով:

197. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղային ազդեցությունը գնահատվել է «Բարձր» 2021 թ. նախագծման փուլում միջազգային մասնագետի ներգրավմամբ հունվարի 1- 19 իրականացվել են աղմուկի և թրթռումների հատուկ ուսումնասիրություններ, որոնց նպատակն է եղել գրանցել ելատեային վիճակը և մոդելավորել ճանապարհի շահագործման ազդեցությունը:

198. Ծրագրի կողմից առաջացրած ակուստիկ ազդեցությունները որոշելու մեթոդաբանությունը հետևյալն է.

- ակուստիկ ելակետային տվյալների չափագրումներ (տես Գլուխ Ե),
- 3D ակուստիկ մոդելավորում չափագրումների ընթացքում գրանցված երթևեկության ինտենսիվության պայմաններում՝ ակուստիկ հաշվարկների ճշգրտությունը ստուգաչափելու համար,
- առկա իրավիճակի մոդելավորում՝ օգտագործելով երթևեկության ինտենսիվության վերջին տվյալները,
- իրավիճակի մոդելավորում երթևեկության երկարաժամկետ կտրվածքով՝ առանց աղմկապաշտպան պատնեշների,
- իրավիճակի մոդելավորում երթևեկության երկարաժամկետ կտրվածքով՝ աղմկապաշտպան պատնեշների առկայության պայմաններում,
- աղմկապաշտպան միջոցառումների գնահատում և անհրաժեշտության դեպքում մեղմացնող միջոցառումներ առաջարկ, ինչպես օրինակ՝ աղմկապաշտպան պատնեշները:

199. Աղմկուկի մոդելավորման արդյունքները ամփոփված են ակուստիկ հաշվետվության մեջ, որտեղ աղուսյակների տեսքով ներկայացված են 2030 թվականին սպասվող մակարդակները մի քանի տարբերակների դեպքում`

- ✓ առանց ծրագրի իրականացման
- ✓ Ծրագրի իրականացումը առանց աղմկապաշտպան միջոցառման
- ✓ Ծրագրի իրականացումը աղմկապաշտպան պատնեշների դեպքում

200. Այսպիսով, ընդունված ՄՖԿ շեմի պայմաններում Արշակունյաց պողոտային մոտ գտնվող բնակելի տների համար, որտեղ ելակետային չափագրումների արդյունքները գերակշռում էին ընդունված նորմերին, 2030 թվականի դրությամբ աղմուկի մակարդակը 2021 թվականի համեմատությամբ չպետք է գերազանցի 3 dB(A). Մոդելավորման արդյունքներով, այդպիսի գերազանցում է սպասվում, ինչը նշանակում է, որ աղմկապաշտպան պատնեշների կառուցման անհրաժեշտություն է առաջանում: Ակուստիկ պատնեշների տեղադիրքը նույնպես առաջարկված է հետազոտության հաշվետվության մեջ, ինչը հաշվի է առնված նախագծերում:

201. Կառուցվող ճանապարհի առավել հանդարտ հատվածներում հաշվարկված է, որ աղմուկի մակարդակը երբեք չի գերազանցելու ՀՀ ստանդարտներին, ինչն ենթադրում է, որ որևէ աղմկապաշտպան կառույցի կարիք չկա:

202. Աղմուկի հիգիենայի ստանդարտներին շինարարական գործողությունների համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում նախատեսված է ցերեկային ժամի աղմուկի միջին մակարդակի գործիքային չափագրումների վերաբերյալ պահանջը` ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածի համար: Կապալառուի իրականացնելու է իր սեփական չափագրումները շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 21 օր առաջ: Նա պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, ինչպես նաև ԱՄ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ` համեմատելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից թիվ 138 առ 06.03.2002 թ. հրամանով ընդունված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» № 2-III-11.3 սանիտարական նորմում սահմանված նորմերի և ՄՖԿ (IFC) ստանդարտների հետ:

203. Այն դեպքերում, երբ ելակետային տվյալը կլինի ավելի բարձր, քան ստանդարտը, կկիրառվի ելակետային մակարդակ +3 դԲ ՄՖԿ (IFC) շեմը: Չափագրումները կատարվելու են ելակետային չափագրումների համար ընտրված նույն 3 կետերում (կետերի տեղադիրքը տե՛ս Նկար Ե-2) յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, որի հիման վրա կորոշվի միջին ցուցանիշը: Կետերը պետք է ընտրվեն խիտ բնակեցված տարածքներում` «զգայուն ընկալիչներին մոտ» սկզբունքի հիման վրա: Չափիչ սարքը տեղադրվելու է մոնիտորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (շենքից դուրս)` դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:

204. Կապալառուի կողմից կանոնավոր չափագրումների համար օգտագործվող սարքավորումը չի կարող ներկայացվել ՇՄԱԳ հաշվետվության այս փուլում, սակայն գործիքային չափագրումների համար ենթակապալառու ընկերությանը ներկայացվելու են հետևյալ պահանջները`

- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների ստանդարտացման վկայագրեր,
- ✓ կազմակերպությունը նախքան ընտրվելը կներկայացնի չափագրումների մեթոդաբանությունը,
- ✓ կկիրառվի սարքավորում, որի չափագրումների արդյունքները հնարավոր կլինի համեմատել ելակետային տվյալների հետ:

*Թրթռումներ*

205. Ծրագրի շրջանակում կտարբերակվի թրթռումների 2 տիպի ազդեցություններ՝
- ազդեցությունը շինությունների և գույքի վրա,
  - ազդեցությունը տեղի՝ ազդակիր բնակչության առողջության վրա:

**Թրթռումների ազդեցությունը շինությունների և գույքի վրա**

206. Թրթռումների մակարդակի ուժգնությունը չափագրվել է ծրագծի երկայնքով 6 կետերում ծրագրի մոտակայքում գտնվող բնակելի տան մոտ: Առնվազն մեկ սենսոր տեղադրվել է շենքից դուրս, իսկ մյուսը՝ ներսում: Չափումների տևողությունը եղել է կես ժամից ոչ պակաս:

207. Կատարված չափագրումների տվյալների հիման վրա մոդելավորման միջոցով որոշվել են դրանց հնարավոր մեծությունները որոնք կարող են ստացվել շինարարական աշխատանքների ընթացքում: Ստացված մեծությունները համամետրվել են ստանդարտների/ շեմերի հետ և գնահատվել են հասցվելիք վնասները:

208. Մոդելավորման նպատակն է եղել
- ✓ շինարարական աշխատանքների ազդեցության տակ գտնվող տների և շինությունների շրջանակի որոշումը,
  - ✓ որոշել հանգեցնելու է արդյոք ստանդարտ մեքենա- սարքավորումների կիրառումը շենքերի և շինությունների ճաքերի առաջացմանը;
  - ✓ շինարարական կազմակերպությունից պահանջել իրականացնել մոնիթորինգ և առաջարկել շինարարական մեթոդների այնպիսի պահանջներ, որոնք կսահմանափակեն ճաքերի առաջացումը

209. ՄՖԿ ուղեցույցներով (Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության վերաբերյալ ուղեցույցներ) ուղենիշային արժեքներ նախատեսված չեն: Հաշվի են առնվել բրիտանական երկու գործող ստանդարտներ՝ ԲՍ 7385. Մաս 2 (ԲՍՀ, 1993) և ԲՍ 5228. Մաս 4 (ԲՍՀ, 1992), որոնք տալիս են թրթռումներից շենքի վնասման շեմային սահմանները: Երկու ստանդարտներն էլ սահմանում են վնասի հետևյալ դասակարգումը.

- կոսմետիկ –մազային ճաքերի առաջացում և մեծացում պատի սվաղի կամ պաստառի մակերեսի վրա,
- աննշան – խոշոր ճաքերի առաջացում, կամ թուլացած և թափված ծեփեր, կամ աղյուսների ու բլոկների արանքում ճաքերի առաջացում,
- խոշոր – վնաս է հասցվում շինության կոնստրուկտիվ տարրերին:

210. Երկու ստանդարտները նաև ուղեցույց են թրթռումների սահմանների վերաբերյալ՝ ՄԱԱ-ի առավելագույն երեք օրթոգոնալ բաղադրիչների տեսանկյունից, այսինքն՝ թրթռումների մակարդակները, որոնցից բարձր լինելու դեպքում կարող են վնասվել շենք/շինությունները: Երկու բրիտանական ստանդարտներն էլ քննարկվել են նախորդ ՔԿԶՆԾ ծրագրերում և նախապատվությունը տրվել է ԲՍ 5228, Մաս 4 (ԲՍՀ, 1992) -ին, որն առաջարկվել է նաև սույն ծրագրի համար: Դրանք ամփոփված են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ Զ-5. Անցողիկ և շարունակական թրթռումների շեմային արժեքները՝ ըստ շինության տեսակի**

Շինության տեսակը	Անցողիկ թրթռումների շեմային արժեքները			Շարունակական թրթռումների շեմային արժեքները		
	<10 Հգ	10-50 Հգ	> 50 Հգ	<10 Հգ	10-50 Հգ	> 50 Հգ
Բնակելի, լավ վիճակում	5	10	20	2,5	5	10
Բնակելի, նշանակալի						

Նախնական գնահատման հայտ


կառուցվածքային թերություններով	2,5	5	10	1,25	2,5	5
Արտադրական/առևտրային (թեթև և ճկուն կառույցներ)	10	20	40	5	10	20
Արտադրական/առևտրային (ծանր և ամուր կառույցներ)	15	30	60	7,5	15	30


211. Թրթռումների մոդելավորման արդյունքների հիման վրա արվել են հետևյալ եզրահանգումները (տես նաև Նկ.)

- ✓ Շինարարական տեղամասի եզրից 0-ից մինչև 15 մ հեռավորության վրա գտնվող տների համար հնարավոր է մարդկանց մոտ զգալի անհարմարության զգացողություն և պատերին փոքր ճաքերի առաջացման ռիսկը;
- ✓ 15- ից մինչև 30 մ հեռավորության համար՝ անհարմարության որոշակի զգացողություն և փոքր ճաքերի առաջացման հնարավոր ռիսկեր;
- ✓ 30 մ-ից հեռու գտնվող տների համար՝ անհարմարության զգացողության ցածր հավանականություն

212. Եզրահանգումների հիման վրա առաջարկվել են միջոցառումներ, որոնք ընդգրկվել են ԲԿՊ համապատասխան բաժիններում:

Նկար Զ-3 Թրթռումների շրջանակի սլաակեր





կառուցվող ճանապարհի ծրագիծը

0-ից մինչև 15 մ հեռավորության վրա գտնվող տների շրջանակ

15-ից մինչև 30 մ հեռավորության վրա գտնվող տների շրջանակ

*Մակերեսային ջրային մարմիններ (Հրազդան գետ և ոռոգման ջրանցք)*

213. Ծրագրի ազդեցության գոտին ձգվում է մինչև բնական ջրային մարմին՝ Հրազդան գետը, և արհեստական ջրային մարմին՝ ոռոգման ջրանցքը: Ջրային մարմինները կարող են ազդեցության ենթարկվել և՛ ջրառի, և՛ ջրի աղտոտման, և՛ նստվածքագոյացման տեսքով: Ազդեցությունը հավանական է գլխավորապես շինարարության փուլում: Հնարավոր է գետի ափին մոտ տարվող հողային աշխատանքների պատճառով առաջացած նստվածքագոյացում, ինչպես նաև անձրևաջրերի հոսքի, կեղտաջրերի, բետոնաջրերի, հեղուկ և պինդ թափոնների արտանետման և այլնի պատճառով աղտոտում: Գետի հունի փոփոխում կամ ջրի հոսքի նվազեցում նախատեսված չէ:



Հնարավոր է ոռոգման ջրանցքի հունի ժամանակավոր փակում կամ փոփոխում: Առկա ջրային ռեսուրսները հավանական աղտոտումից և նստվածքագոյացումից զերծ պահելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսվում են հատուկ միջոցառումներ, այդ թվում՝ աղտոտման ելակետային տվյալների սահմանման նպատակով նմուշառման և վերլուծության իրականացում: Նախատեսվում է նաև ոռոգման սեզոնին ջրային մարմինների վրա ազդեցությունից խուսափելու և այն նվազեցնելու նպատակով միջոցառումների իրականացում:

214. Կառուցված կամրջից անձրևաջրերի հոսքը և՛ շինարարության, և՛ շահագործման փուլերում կարող է գետի ջրի աղտոտման աղբյուր հանդիսանալ: Ջրահավաք և ջրահեռացման համակարգ կնախատեսվի շինհրապարակի տարածքում: Հաշվի առնելով ճանապարհին մեքենաների գնահատված քանակը՝ Խորհրդատուն կնախատեսի յուղի զատիչներով անձրևաջրերի մշակման համակարգեր՝ նպատակ ունենալով կանխել ջրային ռեսուրսների աղտոտումը նավթամթերքով և պինդ կախույթներով:

*Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրի որակ)*

215. Հնարավոր է վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ՝ ոչ պատշաճ կերպով պահեստավորված նյութերի, վերալիցքավորման կամ գործող ծանր տեխնիկայից հասցված այլ պատճառներով: Սա կաղտոտի գրունտը և կարող է ներթափանցել ստորգետնյա ջրեր, ի վերջո, շինհրապարակից դուրս՝ արտահոսքի միջոցով հասնելով մակերեսային ջրեր: ԲԿՊ-ով նախատեսվում են մեղմացնող միջոցառումներ, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ տեղում տեխնիկական սպասարկում տրամադրելուց և վերալիցքավորումից խուսափելու համար ձեռնարկվող միջոցներ՝ վառելանյութի պահեստավորման և տեխնիկական սպասարկման համար տրամադրելով սահմանափակ տարածքներ այնտեղ, որտեղ հնարավոր չէ խուսափել տեղում տեխնիկական սպասարկում տրամադրելուց, ցանկացած արտահոսքի մաքրում, իսկ մեծ քանակությամբ արտահոսքի դեպքում՝ այդ մասին ՇՄՆ-ը զեկուցում:

*Բուսական և կենդանական աշխարհ (ջրային և ցամաքային)*

216. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության սահմանման համար, բույսերի և կենդանիների, այդ թվում՝ հազվագյուտ և անհետացող տեսակների և դրանց բնական միջավայրի, պոպուլյացիաների օգտագործումը, վերարտադրությունը, պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը կարգավորվում են «Բուսական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 23.11.1999 թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 03.04.2000 թ.), Հայաստանի Կարմիր գրքով, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքով և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակով, որտեղ նշված են այն բույսերն ու կենդանիները, որոնք գլոբալ ոչնչացման ավելի մեծ ռիսկի առջև են կանգնած և, հետևաբար, առանձնացված են որպես խիստ վտանգված կամ խոցելի տեսակներ:

217. Բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունն իրականացվել է 2020 թվականի հոկտեմբերին «Բիո Գամա» ՍՊԸ-ի փորձագետների կողմից (ուսումնասիրության վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը կկցվի ՇՄԱԳ հինական փուլում): Ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ Ծրագրում ներառված նոր հողերը մեծ տարածք չեն զբաղեցնում և չեն գտնվում լուրջ էկոլոգիական վտանգ ներկայացնող տարածքում:

218. Ուսումնասիրության արդյունքները, որոնք հետաքրքրական են ազդեցության սահմանման տեսանկյունից, ամփոփ ներկայացված են ստորև՝

- ✓ Ծրագրի իրականացման տարածքում չկան հազվագյուտ էկոհամակարգեր:
- ✓ Հիշյալ տարածքում չկան Հայաստանի էնդեմիկ բույսեր:
- ✓ Հայտնաբերվել է Սոսի արևելյան [*Platanus orientalis*], որը գրանցված է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (2010)՝ «Վտանգված» անվան տակ:

219. Տարածքում ուտելի, բուժիչ և այլ օգտակար բույսերը, համեմունքները, անասնակերը և՛ թվաքանակով, և՛ կենսազանգվածով բավական քիչ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

220. Ծրագրի իրականացման տարածքում հայտնաբերվել է Կարմիր գրքում «Վտանգված» անվան տակ գրանցված Սոսի արևելյան տեսակը: Այս ծառերը հանդիպում են և՛ Հրազդան գետի կիրճի անտառներում, և՛ Կոմիտասի անվան քաղաքային զբոսայգու տարածքում: Հատվելու են շինարարության ընթացքը խոչընդոտող Սոսի արևելյան տեսակի 19 ծառ (ծառերի տեղադիրքը հատակագծի վրա տես ՀԱՎԵԼՎԱԾ Զ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-2): Այնուամենայնիվ, փորձագիտական եզրակացության համաձայն՝ սա չի հանգեցնի դրանց ոչնչացմանը: Հակակշռող և մեղմացնող միջոցառումներ են առաջարկվել Գլուխ Ը-ի Բուսական և կենդանական աշխարհի պաշտպանության և բուսականության մաքրման պլան բաժնում, որը ներկայացված է ԲԿՊ-ում (Գլուխ Ը և ՀԱՎԵԼՎԱԾ Ը):

221. Հետազոտված տարածքի ծառերի, թփերի և այլ բուսականության մեծ մասը կարող է պահպանվել, հատկապես Հրազդան գետի կիրճի կամրջի տակ գտնվողները: Այնուամենայնիվ, անմիջապես ճանապարհի օտարման գոտում գտնվող ծառերի և թփերի մյուս մասը կտրվելու և հեռացվելու է: Ընդհանուր 415 ծառ և 67 թուփ ենթակա է հեռացման: Շինարարությանը խոչընդոտող կտրված ծառերի և թփերի ցանկը, ըստ տեսակների և բների տրամագծերի, ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Ե-ի, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1-ի Բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվության մեջ: Հակակշռող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ում (տե՛ս գլուխ Ը, Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան): Վերջինս օգտագործվելու է կապալառուի կողմից Ծառերի կառավարման պլանի մշակման համար:

222. Կենդանական աշխարհի հետազոտության համաձայն՝ ցամաքային անողնաշարավորների մեջ չեն հայտնաբերվել Հայաստանի Կարմիր գրքում (2010) և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցանկում ներառված, ինչպես նաև պահպանության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող սակավաթիվ տեսակներ, ինչպիսիք են՝ Հայաստանի, Անդրկովկասի, Կովկասի էկոհամակարգի էնդեմիկ տեսակներ, որոնք կարող են հատուկ պահպանության կարիք ունենալ: Սույն բնական միջավայրն արդեն մեծապես փոփոխության է ենթարկվել, ուստի ճանապարհի և կամրջի շինարարությունը էական ոչնչացման չի հանգեցնի:

223. Այնուամենայնիվ, հետազոտման ենթարկված տարածքում կա մեծ քանակությամբ թափոն և աղբ, ուստի այն արդեն մեծապես աղտոտված է կենցաղային և շինարարական աղբով: Ճանապարհի շինարարության ընթացքում այս տարածքի հետագա անվերահսկելի աղտոտումը կարող է հանգեցնել տեղի էկոհամակարգը ոչնչացնող ազդեցությունների ավելացման: Այսպիսով, տարածքի հետագա աղտոտման առավելագույն վերահսկումը, անհիմն ծառահատումներից և բուսականության մաքրումից խուսափելը, ինչպես նաև Հրազդան գետի ափին մոտ բնական միջավայրի առավելագույն պահպանումը խիստ ցանկալի է: Այս առաջարկությունները հաշվի են առնվել մեղմացնող միջոցառումների պլանավորման ընթացքում:

224. Չնայած այն հանգամանքի, որ բնական միջավայրը գրեթե ամենուրեք փոփոխության է ենթարկվել, երկկենցաղների և սողունների մասին ֆոնային տվյալները բավական կայուն են:

225. Թեև Ծրագրի իրականացման տարածքում հայտնաբերված թռչունների 31 տեսակներից 3-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում՝ տափաստանային հողմավոր բազե, կիսասպիտակավիզ ճանճորս և հայկական որոռ, այնուամենայնիվ, բոլոր տեսակները կարող են համարվել սինանթրոպիկ և բավականին հեշտությամբ շրջակա քաղաքային միջավայրին հարմարվող:

226. Հանդիպած, գրականությունից և տեղամասի նախկին ուսումնասիրություններից հայտնի գրեթե բոլոր հետազոտված կաթնասունները բնորոշ են տարածաշրջանին: Նրանց թիվը և բնական միջավայրը վտանգված չէ: Ի լրումն, կրծողներից և միջատակերներից շատերը սինանթրոպիկ են, հեշտությամբ բազմանում են շրջակա միջավայր նետված թափոնների և աղբի մեջ: Հետազոտված կաթնասունների մեջ չկան ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Միայն հարավային դաշտամկան մեկ տեսակ համարվում է «Հազվագյուտ»:

227. Եզրակացվել է, որ խիստ վտանգված բույսերի կամ կենդանիների վրա բացասական ազդեցություններ չկան, չկան խիստ կարևոր բնական միջավայրեր, որտեղ շինարարական աշխատանքներ չպետք է իրականացվեն:

228. Ծրագրի համար իրականացված կենսաբազմազանության բոլոր հետազոտությունների եզրակացություններն անհապաղ գրանցվել են ծրագրի ընդգրկման տարածքը սահմանող հաշվետվության մեջ: Հիմք ընդունելով կենսաբազմազանության հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ճանապարհի և կամրջի շինարարությունը էականորեն չի ձևափոխի և չի հանգեցնի խիստ կարևոր էկոհամակարգերի ոչնչացմանը, վտանգված կամ հազվագյուտ տեսակների անհետացմանը: Բայց և այնպես, ծրագրի իրականացման ընթացքում կենսաբազմազանությունը, այնուամենայնիվ, կարող է կրել որոշակի բացասական ազդեցություններ՝

- բնահողի հանույթի, տոփանման և տեղափոխման աշխատանքների հետևանքով բնական միջավայրին պատճառված որոշակի անհանգստություն կամ մասնատում,
- բուսականության, նորմալ սննդային շղթայի ոչնչացման պատճառով ծառերի և թփերի, ինչպես նաև կենդանիների կորուստ,
- պատճառված անհանգստության, օրինակ՝ աղմուկի մակարդակի ավելացման հետևանքով տեսակների միգրացիա,
- շինարարական աղմուկի, երթևեկության կամ մարդկանց ինտենսիվ ներկայության արդյունքում պատճառված անհանգստություն:

229. Կենսաբազմազանության վերաբերյալ հաշվետվությունը (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1) առաջարկություններ է տրամադրում այն մասին, թե ինչպես խուսափել մտահոգության տեղիք տվող տարածքներից, ինչպես նվազագույնի հասցնել մտահոգության տեղիք տվող բուսական և կենդանական աշխարհին պատճառվող անհագստությունը: Հաշվետվությունն իր մեջ ներառում է հրահանգներ, որոնք կարող են օգտագործվել շինարարների կողմից, մասնավորապես՝ այն տարածքների և առանձնահատկությունների մասին, որոնցից պետք է խուսափել, ինչպես նաև որոշ միջոցառումներ աշխատանքային տեղամասից դուրս գտնվող տարածքների մասով:

230. Շինարարության ընթացքում Կապալառուն կներգրավի կենսաբազմազանության գծով մասնագետի՝ մտահոգության տեղիք տվող տարածքների և բնական միջավայրերի մասին խորհրդատվություն ստանալու նպատակով: Եթե շինարարական աշխատանքների տարածքին մոտ հայտնաբերվում են պահպանության տեսանկյունից մտահոգության տեղիք տվող տեսակներ կամ նրանց վերջին գտնվելու վայրի մասին նշաններ և, եթե

շինարարությունը կարող է իրենց կյանքի էական շրջափուլում անհանգստություն պատճառել, ապա խորհրդատուն մշակում և շինարարներին է ներկայացնում ուղեցույցներ այն մասին, թե երբ է թույլատրվում և արգելվում շինարարություն կատարել և շինարարական գործողությունների ու մտահոգիչ տարածքների միջև անհրաժեշտ նվազագույն հեռավորության մասին:

231. Բուսական և կենդանական աշխարհի տեսակների պահպանության մասին բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել և ներառվել ԲԿՊ Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանի 6-րդ պարբերությունում: Կենսաբազմազանության պահպանության նպատակով ԲԿՊ-ում պլանավորվել են հնարավոր ազդեցությունները ընդունելի մակարդակների հասցնելուն ուղղված մշտական և հատուկ մեղմացնող միջոցառումներ:

#### *Բնության հուշարձաններ*

232. Ինչպես արդեն նշվել է Գլուխ Ե-ում ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ծրագրի ազդեցության տարացքում ՀՀ կառավարության 14.08.2008 թ.-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ գրանցված բնության հուշարձաններ առկա չեն: Հրազդանի կիրճի ձախափնյա մասում Մբ. Սարգիս եկեղեցու և մանկական ե/գ տանող թունելի ճակատամուտքի մոտ գտնվող առավել հավանական «Անանուն» սյունաձև բազալտներ 2,5- 3 կմ հեռավորության վրա գտնվող 2 գրանցված բնության հուշարձանների վրա ազդեցությունը հավանական չէ: Այնուամենայնիվ նշված բնության հուշարձանների մասին տեղեկատվությունը բնապահպանական դասընթացների ընթացքում կներկայացվի շինարարական անձնակազմին, ինչպես նաև ԲԿՊ աղույսակում կնախատեսվեն համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են չթույլատրված վայրերից շինարարական գրունտ և լցանյութ վերցնելու և շինարարական աղբի ու թափոնների տեղադրման բացառումը:

#### *Գրունտներ և բուսահող*

233. Ծրագիրը նախատեսում է մեծ ծավալով հողային աշխատանքների իրականացում. քարքարոտ վերին հողաշերտի մաքրում, բուսաշերտի առանձնացում, հողային հանույթ և տեղափոխում: Քաղաքաշինության կողմից դեռևս չփոփոխվող նոր հողատարածքների ներառումը Ծրագրային տարածքում առաջ է բերում բուսահողի՝ գրունտի վերին, հումուսով հարուստ շերտի հանման և պահեստավորման հարցը՝ վերջինիս պահպանության նպատակով: Ցանկաված հողային աշխատանք սկսելուց առաջ հողի վերին բերրի շերտը հանվելու է և պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող նորմերին համապատասխան:

234. Հնարավոր բուսահողի ծավալը գնահատվում է 11100մ<sup>3</sup>, որը պահպանվելու է հետագայում իրականացվելիք կանաչապատման աշխատանքներում օգտագործելու համար: Առաջացած բուսահողը ժամանակավորապես կուտակվելու և պահվելու է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. սեպտեմբերի 8-ի N1396-Ն և 2017 թ.-ի նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշումների պահանջների: Ժամանակավոր կուտակումն իրականացվելու է ծրագրի օտարման գոտում կամ տեղական իշխանությունների/ մասնավոր սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում, բացառելով բուսահողի որևէ կորուստները:

235. Կանաչապատման տարածքների համար պահանջվելու է ընդհանուր առմամբ 54.91 մ<sup>3</sup> բուսահող, ինչը նշված է նաև Կանաչապատման ամփոփագրում (Ամփոփագիր 7), որից նախատեսված է 24.08 մ<sup>3</sup> ճիմապատում, իսկ մնացած 30.83 մ<sup>3</sup> բուսահողաշերտ է

լինելու: Բուսահողաշերտի պահանջվող քանակը կբավարարվի ծրագրի աշխատանքների ընթացքում առաջացած և պահպանված հողի բերրի շերտով:

236. Մնացած 24.08 մ<sup>3</sup> կլրացվի ճիմնապատման միջոցով կանաչապատման գործունեությամբ մասնագիտացած կազմակերպության հետ պայմանագրային հիմունքներով: Ճիմը գնվելու է մրցութային սկզբունքով ընտրված մասնագիտացած մատակարարից այդ պահին գործող շուկայական գնով (ենթադրաբար 7250 ՀՀ դրամ/ մ<sup>3</sup>):

237. Ճիմը մատակարարվելու է օրական սպառման քանակով, որը պահեստավորում չի պահանջում, իսկ հնարավոր ավելցուկները նույնպես պահվելու է կառուցվող ճանապարհի օտարման գոտու սահմաններում: Բուսահողի ավելացված քանակները հանձնվելու են Երևանի քաղաքապետարանին:

238. Պլանավորվում է իրականացնել ընդհանուր 115281.94մ<sup>3</sup> հանույթ, որը զգալի է և ճանապարհի շինարարության ընթացքում կարող է հանգեցնել որոշակի էրոզիայի և նստվածքազոյացման հետ կապված խնդիրների: Կապալառուն Ինժեների հաստատմանն է ներկայացնում տարատեսակ հողային աշխատանքների համար շինարարության մանրամասն մեթոդաբանություն, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուղղահայաց պլանավորմանը՝ տրամադրելով անվտանգության և ջրահեռացման համապատասխան լուծումներ:

239. Շինարարության փուլում հողի՝ վառելանյութով, յուղով (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), քսանյութերով և այլ հեղուկ նյութերով ու թափոններով աղտոտման վտանգ կա: Այնուամենայնիվ, ազդեցության չափը և խստությունը բարձր չի լինի՝ հաշվի առնելով նաև այն, որ ծրագրի իրականացման տարածքում չկան օդն աղտոտող սարքավորումներ: ԲԿՊ-ում ներառված ճանապարհաշինարարական ծրագրերին հատուկ մշտական մեղացնող միջոցառումները համարվում են բավարար, որոնցում հատուկ ուշադրություն է դարձվել վառելանյութի, յուղի, քսանյութերի և այլ հեղուկ նյութերի ու թափոնների տեղափոխմանը, պահեստավորմանը և տիրապետմանը, ինչպես նաև աղտոտված գրունտի անվտանգ տիրապետման ուղղված մեղմացնող միջոցառումներին:

*Նյութերի ստացման աղբյուրներ (հանքեր/ բացահանքեր/ ջրային ռեսուրսներ)*

240. Նախագծի համար անհրաժեշտ է 44678.07մ<sup>3</sup> խիճ և 13365.39մ<sup>3</sup> կոպճավազային խառնուրդ: Լիցքի համար անհրաժեշտ քարերը, կոպիճը, ավազը և այլ նյութեր (լիցքի աշխատանքների ընդհանուր ծավալը գնահատվում է 125781.73մ<sup>3</sup>), ինչպես նաև ասֆալտը և բետոնը գնվելու են գրանցված հանքերից և գործարաններից: Բացի դրանից, ծրագրի իրականացման տարածքում այժմ կա մեծ քանակությամբ քարանյութ, որը հավանաբար բերվել է նախկինում իրականացված ճանապարհաշինարարական աշխատանքների համար: Այս նյութը նույնպես կարող է ծառայել ծրագրի իրականացմանը:

241. Լիցքի համար շրջակա միջավայրից, օրինակ՝ մոտակա գյուղատնտեսական և/կամ հնագիտական վայրերից նյութի որևէ տեսակի հանույթ չի նախատեսվում, բայց և այնպես, նմանատիպ գործողությունների ռիսկը գնահատվել է, և այդ նպատակով պլանավորվելու են մեղմացնող միջոցառումներ ԾՄԱԳ/ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ը, Հնագիտական և մշակութային ժառանգության/Ֆիզիկական և մշակութային ռեսուրսների պլան):

242. Ծրագրի իրականացման ընթացքում պահանջվող ջուրը բերվելու է Վեդլիա ջուր՝ ընկերության հետ պայմանագրի հիման վրա: Հրազդան գետից որևէ ջրառ չի իրականացվելու: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ շինարար կազմակերպությունը կդիմի համապատասխան մարմիններին և ձեռք կբերի ջրօգտագործման թույլտվություն:

*Սոցիալական համակարգեր*

243. Սոցիալական համակարգերի վրա ազդեցությունը համարվում է ծրագրի ամենազգայուն բաղադրիչը: Դրանք ներառում են շինարարական աշխատանքների, իսկ հետագայում կառուցված ճանապարհի շահագործման արդյունքում՝ համայնքին, տեղի բնակիչներին, դպրոցներին, առողջապահական/բժշկական և մշակութային կենտրոններին, ձեռնարկություններին և այլ ազդակիրներին պատճառված բացասական անհանգստություն և/կամ տհաճություն: Ազդակիրների սեփականությանը պատճառված մշտական ազդեցությանն անդրադարձ է կատարվել ՀՕՏՕ-ում:

244. Մարդկանց կենսակերպի վրա թողնված այլ ազդեցությունները լինելու են ժամանակավոր և շրջելի: Ճանապարհի օտարման գոտում կամ անմիջապես դրան հարակից տարածքում հայտնաբերված և ծրագծի թերթիկում ներկայացված զգայուն արժեքավոր ազդակիրները տեղ են գտել ՀԱՎԵԼՎԱՄ Դ-ում: Տեղի բնակչությանը և այլոց պատճառվող բացասական ազդեցություններից խուսափելուն, կանխելուն և/կամ դրանք մեղմելուն ուղղված միջոցառումները՝ և՛ ճանապարհի շինարարության, և՛ դրա ավարտից հետո, պատասխանատու մարմինների հստակ մատնանշմամբ, ներկայացված են ԲԿՊ-ում:

*Հաղորդուղիների վրա ազդեցություն*

245. Նախագծման փուլում իրականացվել է հաղորդուղիների հետազոտություն և դրանց տեղափոխման նախագծում, ինչը այսօրինակ ազդեցության հավանականությունը փոքրացնում է: Սակայն, ճանապարհաշինարարական այլ ծրագրերից ձեռք բերված նախկին փորձը ցույց է տալիս, որ հաղորդուղիների տեղափոխման արդյունավետ նախագծման համար հասանելի տվյալները քիչ են և ոչ ստույգ: Այսպիսով, այնուամենայնիվ առկա է վնաս պատճառելու աննշան վտանգ: Մրցույթի հաղթող կապալառուից պահանջվում է հետևել կենցաղային օբյեկտների տեղափոխման ենթապլանով նախատեսված մեղմացնող միջոցառումներին:

246. Ծրագրի քաղաքային հատվածում տեղակայված կենցաղային օբյեկտներին պատճառված վնասի հետևանքով առաջացած ազդեցությունը կարող է տարածվել ծրագրի իրականացման տարածքից դուրս: Օրինակ՝ ջրատար և/կամ կոյուղու խողովակներին հասցված վնասը կխաթարի շրջակայքում ապրող բնակչությանը մատուցվող համապատասխան ծառայությունների իրականացումը: Աշխատանքների արդյունքում առաջացած ցանկացած ազդեցություն ամբողջությամբ վերացվելու է կապալառուի հաշվին՝ վնասված շինությունների տեղափոխմամբ, նորոգմամբ կամ փոխարինմամբ:

*Երթևեկություն և տրանսպորտ*

247. Շինարարությունը միջամտելու է քաղաքային երթևեկությանը՝ և՛ գոյություն ունեցող ճանապարհների ու հետիոտնային անցումների զբաղեցման, և՛ բեռնատարների ու այլ մեքենաների դեպի շինհրապարակ և այնտեղից դուրս երթևեկության պատճառով: Հասարակական տրանսպորտի և հետիոտների անվտանգությունը կվտանգվի, մուտքերը դեպի բնակելի տներ, ձեռնարկություններ և դպրոցներ կարող են փակվել և դժվարանցանելի դառնալ:

248. Շինարարության ընթացքում հանրության անվտանգության ապահովման, խցանումների և քաղաքի երթևեկությանը պատճառվող այլ անհանգստությունների նվազեցման ուղղված ամենօրյա մեղմացնող միջոցառումները նկարագրված են ԲԿՊ-ում, նախ և առաջ՝ Երթևեկության կառավարման պլանում:

*Լանդշաֆտների գեղագիտական գրավչություն*

249. Լանդշաֆտի և շրջակա միջավայրի նախաշինարարական գեղագիտական տեսքը մեծապես փոփոխվելու է ճանապարհաշինարարական աշխատանքների պատճառով: Սակայն այս ազդեցությունը լինելու է ժամանակավոր և տևելու է մինչև ծրագրի ավարտը: Շինարարության փուլում ազդեցության մեղմացումն ապահովվելու է Թափոնների և նյութերի կառավարման և Շրջակա միջավայրի պահպանության, իսկ ճանապարհի օտարման գոտուց դուրս գտնվող տարածքների օգտագործման դեպքերում նաև Աշխատանքային տեղամասի կառավարման պլանով: Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ Կանաչապատման նախագծի, ԵԿ և Տեղամասի վերականգնման պլանի համաձայն կիրականացվի տեղամասի գեղագիտական տեսքի վերականգնում՝ որպես ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մաս:

*Հնագիտական և մշակութային ժառանգություն/Ֆիզիկական և մշակութային ռեսուրսներ*

250. Հնագետի խորհրդատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հնագիտական վայրերը գտնվում են Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման ծրագրի իրականացվելիք շինարարական աշխատանքների գոտուց հեռու և չեն կարող ենթարկվել շինարարական աշխատանքների ուղղակի ազդեցությանը (Հնագետի հաշվետվությունը տես ՀԱՎԵԼՎԱԾ Ե ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-6):

251. Մյուս կողմից, Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է հնագիտական հետաքրքրություն ներկայացնող նախկին Սարդարի այգիների տարածքում, որն արդեն մեծապես փոփոխության է ենթարկվել Երևան քաղաքի քաղաքաշինության հետևանքով, բացի այդ Հրազդան գետի կիրճում՝ ծրագրի իրականացման տարածքից մոտ 60-80 մ հեռավորության վրա են գտնվում, այսպես կոչված, Նորագյուղի քարանձավները (տես՝ Նկար Զ-1): Քանի որ աշխատանքային տեղամասից դուրս գտնվող տարածքին պատճառվող ազդեցության վտանգ կա, ՇՄՆՈԻ շրջանակներում իրականացվել է ծրագրի ազդեցության գոտու հնագիտական հետազոտություն, իսկ ԲԿՊ-ի Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանով նախատեսվում են մեղմացնող միջոցառումների իրականացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով հնագիտական տեսանկյունից զգայուն տարածքների ցանկացած ազդեցություններից պահպանությանը, ինչպես նաև հնագիտական գտածոների հայտնաբերման մասին ՀՀ օրենսդրական պահանջների բավարարմանը:

**Նկար Զ-4. Հնագիտության տեսանկյունից զգայուն տարածքի տեղադիրքը**



252. Շինարարական աշխատանքների հետևանքով հասցվող հնարավոր վնասից խուսափելուն ուղղված հատուկ միջոցառումները նախատեսված են ԲԿՊ-ում:

253. Ճանապարհի նոր ծրագիծը պահանջում է Կոմիտասի անվան զբոսայգու՝ անմիջապես օտարման գոտում գտնվող պատերի, մետաղական ցանկապատերի և սյուների մի մասի ապամոնտաժում, որոնց տեղադիրքը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Զ ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-2-ում: Սրանք արժեքավոր են գնահատվում ԵՔ-ի և հանրության կողմից (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է): Խնամքով ապամոնտաժման, դրանց պահպանության և ԵՔ-ին հանձնման մասով հատուկ միջոցառումներ են նախատեսվում ԲԿՊ/Մշակութային ժառանգության կառավարման պլանի ենթապլանում:

### Զ 3. Համապարփակ ազդեցության գնահատում

254. Առաջնորդվելով ԱԶԲ անվտանգության քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրական պահանջներով<sup>13</sup>, Ծրագրի առաջացրած հավանական ազդեցությունները դիտարկելուց և առանձին-առանձին վերլուծելուց հետո իրականացվում է բնապահպանական համալիր ազդեցության գնահատում և համապատասխան մեղմացնող միջոցառումների պլանավորում՝ հաշվի առնելով Ծրագրի ազդեցությունների հնարավոր կուտակումը: Ուսումնասիրվում են և՛ միջօրագրային, և՛ ներօրագրային ազդեցությունները:

255. Միջօրագրային ազդեցությունների շրջանակները սահմանված և ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ի ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Զ-3-ում և Զ-4-ում: ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-3-ից պարզ է դառնում, որ բազմաթիվ գործողությունների պատճառով կարող են ազդեցություն կրել նույն ԱԶԸ-ները՝ այսպիսով ենթարկվելով կուտակային ազդեցությունների: Ազդեցությունների մեծ մասը կարճաժամկետ է, հանդիպելու է հիմնականում շինարարության ընթացքում և էականորեն մեղմացվելու ԲԿՊ-ում և ՇԲԿՊ-ում

<sup>13</sup> ԱԶԲ Ա.ԲՀ (2009), Հավ. 1. պարբ. 6, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, Հոդված 18, 5:



## Նախնական գնահատման հայտ

պլանավորված միջոցառումների իրականացման շնորհիվ (տե՛ս նաև ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ի Մխենա Զ-5)

256. Համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ուսումնասիրությունները, ինչպես նաև ԵՔ մարմինների հետ հաղորդակցությունը ցույց տվեցին, որ ծրագրի ազդեցության տարածքում միաժամանակ չի նախատեսվում իրականացնել այլ ծրագրեր/գործողություններ, որոնք կարող են հանգեցնել բացասական բնապահպանական ազդեցությունների աճին:

257. Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ ներծրագրային ազդեցությունների շրջանակը և դրանց խստությունը կարող է ընդլայնվել ամբողջ ՇՄԱԳ-ի ընթացքում՝ հիմք ընդունելով հետագա հետազոտությունները, տեղական ինքնակառավարման մարմինների, Ճանապարհային ուստիկանության և Երևանի քաղաքապետարանի հետ խորհրդակցությունները, ինչպես նաև ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի հետ հետագա հանրային քննարկումները: Ազդեցության գնահատման գործընթացի և այնուհետև առաջարկվող ծրագրի շինարարության ընթացքում ի հայտ եկած ցանկացած այլ ծրագիր, որն իրականացվելու է առաջադրվող ծրագրի հետ միաժամանակ և նույն ազդեցության գոտում կուսումնասիրվի և Շինարարության բնապահպանական կառավարման պլանը համապատասխանաբար կվերանայվի: Թարմացված ՇԲԿՊ-ում կգնահատվեն նման ազդեցությունների մեծության և խստության մակարդակները կնախատեսվեն մեղմացնող լրացուցիչ միջոցառումներ, ինչպես նաև հնարավորության դեպքում ծրագրերի միջև կապ կհաստատվի՝ նպատակ ունենալով նվազեցնել այդ ծրագրերի համատեղ կուտակային ազդեցությունները:

## Է. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

258. Ծրագրի բոլոր փուլերում՝ նախագծման փուլից շինարարություն և շահագործում, բոլոր շահագրգիռ կողմերի, ազդակիր անձանց, ՀԿ-ների և այլ շահագրգիռ անձանց բովանդակալից և արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱԶՀ-ի (2009) համաձայն՝ իրականացվել են հանրային լուսմներ և հաղորդակցություններ: Հանրային լուսմների և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) մշակվել է ՇՄԱԳ/ԲԿՊ-ի շրջանակներում՝ որպես Բնապահպանական կառավարման պլանի բաղկացուցիչ մաս (տե՛ս Գլուխ Ը): ՀԼՀՊ-ը ներառում է հետևյալը՝

- I. Ծրագրի մասին վերաբերյալ տեղեկատվության հրապարակում՝ հասարակության իրազեկվածության բարձրացման նպատակով:
- II. Հանրային լուսմների կազմակերպում՝ նախագծի և ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մշակման փուլերում հանրության և ազդակիր անձանց մասնակցությունն ապահովելու նպատակով: Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը Կապալառուն իր հերթին իրականացնելու է նախաշինարարական հանրային հանդիպում, այնուհետև, հարկ եղած դեպքում, ընթացիկ հանրային հանդիպումներ (օր.՝ նախագծի փոփոխության և/կամ որևէ այլ էական չնախատեսված ազդեցության դեպքում): Անհրաժեշտության դեպքում հետագա հանրային լուսմներ կկազմակերպվեն Կապալառուի կողմից Ինժեների և ԵԿՆԾԻԳ-ի աջակցությամբ ու մասնակցությամբ:
- III. Բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդակիր անձանց և շահագրգիռ կողմերի հետ մշտական հաղորդակցություն ապահովելու և բողոքներին ու առաջարկություններին արագ արձագանքելու նպատակով:

### Է1. Տեղեկատվության հրապարակում

259. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը սկսվել է դեռևս նախագծման փուլում: Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ մանրամասն նախագիծը և վերջնական ՇՄԱԳ-ը և ԲԿՊ-ն, հասանելի կլինեն հանրությանը, համապատասխան մարմիններին և շահագրգիռ կողմերին: Ծրագրի մասին տեղեկատվությունը հրապարակվել է՝

- a. Երևանի քաղաքապետարանի, Կենտրոն, Շենգավիթ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների և այլ պետական մարմինների հետ խորհրդակցությունների ընթացքում (տե՛ս հաշվետվությունը ՀԱՎԵԼՎԱԾ Է- , ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1),
- b. հանրային լուսմների միջոցով (հանդիպման արձանագրությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3),
- c. հետևյալ փաստաթղթերը կհրապարակվեն ԱԶԲ-ի, ԵԶ-ի և ԵՔԾԻԳ-ի կայքէջերում և անհրաժեշտության դեպքում պարբերաբար կթարմացվեն,
  - i. ԱԶԲ-ի (անգլերեն տարբերակ) և ԵՔԾԻԳ-ի կայքէջերում (անգլերեն և հայերեն տարբերակներ) հրապարակվող ՇՄԱԳ հաշվետվություն (այդ թվում՝ ԲԿՊ):
  - ii. Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակներ (ԲԳՈՒՇ):
  - iii. Պատվիրատուի կողմից պատրաստված ծրագրի առաջընթացի և ԲԿՊ-ի իրականացման մասին կիսամյակային հաշվետվություններ:

260. Ներածական և հետագա հանդիպումների ու հանրային քննարկումների իրականացման շրջանակները սահմանելու նպատակով որոշվում է ծրագրի առանցքային շահագրգիռ կողմերի շրջանակը, որը կարող է նշվել և ընդլայնվել ազդեցության գնահատման գործընթացի ընթացքում և ՇՄՆ-ն կողմից ըստ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ թիվ 1325-Ն որոշման (19.11.2014):

- Էկոնոմիկայի նախարարություն,
- Ֆինանսների նախարարություն և Կենտրոնական բանկ,
- Շրջակա միջավայրի նախարարություն և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- Երևանի քաղաքապետարան,
- Ասիական զարգացման բանկ,
- Կենտրոն վարչական շրջան, ազդակիր անձինք,
- Շենգավիթ վարչական շրջան, ազդակիր անձինք,
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան,
- Հասարակական կազմակերպություններ:

## Է2. Քննարկումներ և մասնակցություն

261. Կենտրոն, Շենգավիթ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ղեկավարների տեղակալների հետ իրականացվել են մի շարք ներածական հանդիպումներ: Բոլոր 3 շրջանների ղեկավարներին իրենց վարչական շրջանների տարածքում Ծրագիրն իրականացնելու մտադրության մասին տեղեկացնող պաշտոնական գրություններ են ուղարկվել՝ ծրագրի համառոտ նկարագրությամբ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2): Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմերի պատասխանատուների և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Համլետ Գրիգորյանի հետ համատեղ ժողովը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 29-ին, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Արմեն Ազիզյանի հետ՝ հոկտեմբերի 30-ին, և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Դավիթ Թումանյանի հետ՝ նոյեմբերի 3-ին:

262. Ներածական հանդիպումների ընթացքում Ծրագրի նախաձեռնողները ներկայացրեցին նախագիծը և այլ տեխնոլոգիական ու ինժեներական մանրամասներ, բացի այդ, ազդեցության ենթակա շրջանների ներկայացուցիչները տեղեկացվեցին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի և մեղմացնող միջոցառումների մասին: Ծրագրի նախաձեռնողները տեղեկացրեցին, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության համաձայն, նախաձեռնվում է հանրային քննարկման միջոցառումը, և հայցեցին ազդակիր շրջանների ղեկավարների օժանդակությունը այդ միջոցառումների կազմակերպման գործում՝ ապահովելով հանրության մասնակցությունը և արդյունավետ ու բովանդակալից հանրային քննարկումների իրականացումը (ներածական հանդիպումների մասին ամբողջական հաշվետվությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է-ում, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1-ում):

263. Հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մասին ԱԶԲ-ի ԱԲՀ-ի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ 1325-Ն որոշման (19.11.2014) պահանջները բավարարելու նպատակով իրականացվելու են մի շարք հանրային քննարկումներ/լսումներ 4 փուլով ազդեցության ենթակա վարչական շրջաններում՝ 2-ը

Կենտրոն, 2-ը Շենգավիթ վարչական շրջաններում: Բոլոր հանրային քննարկումները/լուսումները կազմակերպվելու են ՄՆԽ-ի կողմից ԵԲԾԻԳ-ի անունից՝ որպես Ծրագրի նախաձեռնող: Պետական իրավասու մարմինը ապահովելու է իր ներկայացուցիչների մասնակցությունը քննարկումներին:

264. **Առաջին փուլ.** Հանրային քննարկումը կազմակերպվել և տեղի է ունեցել 2020 թվականի նոյեմբերի 18-ին: Քննարկումը վարում էր Շենգավիթ վարչական շրջանի ներկայացուցիչը: Որպես քննարկման անցկացման վայր՝ ընտրվել էր Շենգավիթը, քանի որ ազդեցության ենթակա այս շրջանը առավել խիտ է բնակեցված, հետևաբար, առավել զգայուն է ծրագրի ազդեցությունների նկատմամբ: Քննարկմանը հրավիրվել են ազդեցության ենթակա բոլոր 3 վարչական շրջանների ներկայացուցիչները, ինչպես նաև ազդեցության ենթակա բնակիչների ներկայացուցիչները, ՀԿ-ները և ԱԶԲ-ը:

265. Հանրային քննարկման իրականացման նպատակն էր՝ տեղեկացնել շահագրգիռ կողմերին և հանրությանը ծրագրի իրականացման մտադրության և ընդհանուր գաղափարի մասին, հնարավորություն տալ տեղյակ լինելու ծրագրի մասին, հնարավորինս շուտ բարձրացնելու իրենց հուզող հարցերը, ինչպես նաև տեղեկանալու մեղմացնող միջոցառումների և մոնիթորինգի պլանի մասին: Միջոցառման ամբողջական հաշվետվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-ում:

266. Յուրաքանչյուր հանրային քննարկում/լուսմից առաջ ՄՆԽ-ն ապահովում է համապատասխան տեղեկատվության ժամանակին հրապարակումը, և հասանելիությունը ազդեցության ենթակա բոլոր մարդկանց, այդ թվում հաշմանդամների, կարիքավորների և այլ խոցելի խմբերի համար:

267. Ծանուցումը և նախագծային փաստաթղթերը, այդ թվում՝ ազդեցությունների գնահատման մասին հաշվետվությունը, հանրային քննարկումներից առաջ՝ առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակվում է իրավասու մարմնի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Երևան համայնքի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև թղթային պատճենները ներկայացվելու են հիշյալ մարմիններին:

268. Հանրային քննարկման իրականացման մասին հրապարակող ծանուցումը 2020 թվականի նոյեմբերի 4-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև հայտարարությունները փակցվել են ազդեցության ենթակա բոլոր 3 շրջաններում՝ հանրային տեսանելի վայրերում: Երևան Օրհուս Կենտրոն ցանցի միջոցով հրավերներն ու ծրագրի մասին տեղեկատվությունն ուղարկվել է հասարակական կազմակերպություններին:

269. Հանրային քննարկման մասին հայտարարությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը մասնակիցների կողմից բարձրացված հարցերի և մտահոգությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների ու տրված լուծումների մասին ամբողջական տեղեկատվության հետ միասին պատշաճ կերպով փաստաթղթավորվել և կցվել է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3: Հանրային քննարկման արձանագրությունը տեսագրության հետ միասին նույնպես ներկայացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

270. Հանրային քննարկումները/լուսումները տեղի են ունեցել համավարակի տարածման պայմաններում, որի ընթացքում պահպանվել է COVID-19 համավարակին համապատասխան ձևաչափը՝ ՀՀ Պարետի գործող որոշումների համաձայն (տե՛ս նաև Գլուխ Ը՝ Աշխատանքային անվտանգության և առողջության պլան): Հետագա քննարկումների անցկացման համար ընդունելի է նաև մեկ այլ տարբերակ, ինչպես օրինակ՝ անհատական կամ փոքր խմբերով բացօթյա քննարկումներ շահագրգիռ կողմերի

ներկայացուցիչների և ԱԵԱ-երի միջև: Այս միջոցառումները նույնպես պատշաճ կերպով փաստաթղթավորվելու են:

271. Եթե ծրագրի մեկնարկը որևէ պատճառով երկար ժամանակով հետաձգվի, ապա լրացուցիչ հանրային քննարկում կիրականացվի ազդակիր շրջաններից յուրաքանչյուրում՝ տվյալ ժամանակահատվածին համապատասխան ձևաչափի պահպանմամբ:

272. **Երկրորդ փուլ.** Ազդեցության ենթակա շրջաններից յուրաքանչյուրում իրականացվելիք հանրային լսումը ղեկավարվելու է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և կազմակերպվելու է, ենթադրաբար, նաև 2022թ. ձմռան ամիսներին: Ճանապարհի նախնական նախագիծը և ակնկալվող ազդեցությունները ներկայացվելու են մասնակիցներին, նրանց դիտողություններն ու առաջարկությունները արձանագրվելու են և ամփոփվելու՝ նախքան ՇՄ փորձաքննության ընթացակարգի հիմնական փուլի համար դիմելը:

273. **Շրջորդ փուլ.** Կրկին հյուրընկալող համայնքի ղեկավարի կողմից ղեկավարվող հանրային քննարկումը կազմակերպվելու է համապատասխան մարմնի կողմից Ազդեցությունների գնահատման ՊՇ-ն ստանալուց և մանրամասն նախագծի պատրաստ լինելուց հետո: Վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներկայացվելու է հանրությանը և դիտողությունները փաստաթղթավորվելու են:

274. **Չորրորդ փուլ.** Համայնքներից յուրաքանչյուրում կրկին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ղեկավարվող հանրային լսումը կազմակերպվելու է նախքան ՇՄ փորձաքննության ընթացակարգի հիմնական փուլի համար դիմելը՝ վերջնական նախագիծը հանրությանը ներկայացնելու, բարձրացված հարցերի լուծումների մասին տեղեկացնելու, վերջիններիս մերժելու վերաբերյալ հիմնավորումը տրամադրելու համար:

### Է3. Բողոքների լուծման մեխանիզմ

275. Առաջնորդվելով ԱԶԲ ուղեցուցների և քաղաքականությունների խնդիրների լուծման գործառնությունով՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ)՝ ծրագրի իրականացման ընթացքում ազդակիր անձանց հետ շարունակական կապն ապահովելու նպատակով:

276. Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է, որպեսզի Ծրագիրն իրականացնող կողմերը հնարավորություն ունենան լուծել բարձրացված հարցերը ստորև ներկայացված հիմնական սկզբունքների հիման վրա՝

- լուծել ազդակիր անձանց հուզող հարցերը և բողոքները արագ, ժամանակին և արդյունավետ կերպով;
- ապահովել ընթացակարգի և գործընթացի պարզ և թափանցիկ լինելը,
- ապահովել ազդակիր անձանց բոլոր սեզմենտների համար ԲԼՄ-ի անվճար և արագ հասանելիություն:

277. Ներկայացված բողոքների լուծման գործընթացում հավանականորեն ներառված կողմերն են՝ ԱԵԱ-ները, Կապալառուն, Ինժեները, ԵՔՕԻԳ-ը, ԻՄ-ը, դատարանը և/կամ ԱԶԲ-ն: Բողոքների լուծման մեխանիզմը մանրամասնորեն ներկայացվում է հանրությանը: Առաջին հանրային լսման ընթացքում ազդակիր անձինք տեղեկացվեցին բողոքների մեխանիզմի մասին: Նույն կարվի է նաև հետագա հանրային լսումների ընթացքում: Բացի դրանից, ԲԼՄ-ի առկայության և առաջարկությունների ու բողոքների ներկայացման

## Նախնական գնահատման հայտ

համար ազդակիր անձանց կողմից ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը նույնպես հասանելի է ԵԿՆԾԻԳ-ի կայքէջում:

278. ՇՄԱԳ/ԲԿՊ-ի կազմում մշակվել է ծրագրի ազդակիր անձանց և այլ շահագրգիռ խմբերի հետ մշտական և շարունակական կապի մասին հատուկ ենթապլանը: Բացի այդ, մրցույթը հաղթող կապալառուն պարտավորվելու է տեղադրել Ծրագրի տեղեկատվական ցուցանակ և շինհրապարակներում հատուկ պաստառներ ԲԼՄ-ի առկայության մասին համապատասխան տեղեկատվությամբ:

279. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են ստորև բերված գրաֆիկական պատկեր Է-1-ում: Ստորև ներկայացված են բնապահպանական և այլ խնդիրների մասին բողոքների ներկայացման հաջորդական քայլերը:

## Նախաշինարարական փուլ

280. **Քայլ 1.** Ծրագրի ազդակիր անձը իր առաջարկությունները/մտահոգությունները/բողոքները, նախ և առաջ ներկայացնում է ԵՔԾԻԳ-ին: ԵՔԾԻԳ-ը ստանում և լուծում/արձագանքում է բողոքին: Եթե ԱԱ-ին չի բավարարում պատասխանը, կամ ԾԻԳ-ի պատասխանատու աշխատակազմին հարկավոր են լրացուցիչ լծակներ ազդակիր անձի բողոքը լուծելու համար, ապա կարող է ստեղծվել Բողոքների քննման խումբ (ԲՔԽ)՝ ապահովելու համար գործի օրինական, համապարփակ, արդար և թափանցիկ քննարկումը: ԲՔԽ-ի կազմը լինելու է անաչառ և ընդգրկվելու է անկախ դիտորդի՝ ապահովելու համար բողոքի ուսումնասիրման գործընթացի անկողմնակալությունը և թափանցիկությունը: Առաջարկվում է ԲՔԽ-ի հետևյալ կազմը՝

- ա) ԾԻԳ-ի ներկայացուցիչ - նախագահ,
- բ) անվտանգության ապահովման թիմի ներկայացուցիչ (ԾԻԳ) - մեկ անդամ,
- գ) հարկ եղած դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ - մեկ անդամ,
- դ) հարկ եղած դեպքում որակավորված տեխնիկական փորձագետ - մեկ անդամ,
- ե) հարկ եղած դեպքում Ինժեների/Կապալառուի ներկայացուցիչ - մեկ անդամ,
- զ) ԱԱ ներկայացուցիչ - մեկ անդամ,
- է) անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ) - մեկ դիտորդ:

281. **Քայլ 2.** Եթե ԱԱ-ին չի բավարարում ԾԻԳ-ի որոշումն անգամ բողոքը ԲՔԽ-ի կողմից ուսումնասիրվելու դեպքում, ապա վերջինս կարող է բողոքը ներկայացնել Երևանի քաղաքապետարան: Գործի գրանցման, վերանայման և լուծման համար ԵՔ-ը առաջնորդվում է հանրային կառավարման մասին ՀՀ օրենքով:

## Շինարարության փուլ

282. **Քայլ 1.** Ծրագրի ազդակիր անձն իր առաջարկությունները/հուզող հարցերը/բողոքները կարող է ներկայացնել նախ և առաջ Կապալառուի՝ բողոքների լուծմամբ զբաղվող աշխատակիցներին (աշխույժ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանության մասնագետ), այսինքն՝ փորձ է արվելու տեղական մակարդակով բողոքները լուծել ժամանակին և արագ: Կապալառուի կողմից հաստատված մեխանիզմը Ծրագրի ԲՔԽ-ի անքակտելի մաս է կազմում:

ա) Կապալառուն ցուցապաստառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով ապահովում է կոնտակտային տվյալների հասանելիությունը (շինհրապարակի գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը,

## Նախնական գնահատման հայտ

պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, փոստային և պաշտոնական էլ. փոստի հասցեները և այլն):

բ) ԱԱ-ն կարող է մոտենալ Կապալառուի ներկայացուցչին աշխատանքային տեղամասում և/կամ առաջարկությունը/բողոքը գրանցել Կապալառուի կողմից ճանապարհի օտարման գոտում կամ դրան մոտ գտնվող դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում: Բողոքի գրանցման ձևանմուշը, դիմումի բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է Կապալառուի ԲԿՊ-ում և համաձայնեցվում Ինժեների հետ:


գ). Կապալառուն անմիջապես դիտարկում է բողոքը և համապատասխան մեղմացնող միջոցներ ձեռնարկում ողջամիտ ժամկետում խնդիրը լուծելու համար և 15 օրվա ընթացքում գրավոր պատասխանում է ԱԱ-ին՝ գրության պատճենն ուղարկելով Ինժեներին և ԾԻԳ-ին: Ներկայացված բողոքների/առաջարկությունների մասին տվյալները կապալառուի կողմից ներառվում են ամսական հաշվետվության մեջ, որն ամեն ամիս թարմացվում է արտացոլելով բողոքի կարգավիճակը:

283. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում իր բողոքի առնչությամբ Կապալառուի տրամադրած լուծումը, ապա գոյություն ունեն խնդրի լուծման նաև այլ հնարավորություններ: Հաջորդիվ ԱԵԱ-ն կարող է դիմել Ինժեներին Կապալառուից պատասխան ստանալուց/չստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում բողոքը ներկայացնելով: Հետագա առաջարկությունները/բողոքները դասակարգվում են ըստ բնապահպանական և սոցիալական/տարաբնակեցման կետերի: Սոցիալական/տարաբնակեցման անվտանգության հետ կապված խնդիրները լուծվում են Ինժեների և ԵԿՆԾԻԳ-ի ՀՕՏՕ մասնագետների կողմից: Ինժեները բողոքին պատասխանում է 15 օրվա ընթացքում:

284. **Քայլ 3.** Եթե Ինժեները չի բավարարում բողոքը, ապա ԱԱ-ն կարող է դիմել ԵԿՆԾԻԳ, ԵՔ, ԻՄ և ԱԶԲ ՀՆ: Շինարարության փուլում ԾԻԳ-ի մակարդակով բողոքի լուծումն ընթանում է նույն հաջորդականությամբ, ինչ նախաշինարարական փուլում: Կապալառուն ցուցապաստառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով տրամադրում է բոլոր կոնտակտային տվյալները: Վերջինս այս փուլում ծառայում է որպես մեկնարկային կետ, տրամադրում է անհրաժեշտ բացատրություններ և հիշյալ մարմիններին դիմելիս աջակցություն ցուցաբերում՝ հարկ եղած դեպքում նաև ԱԵԱ-ի հետ անհատական շփման միջոցով:

285. Ի վերջո, ԱԱ-ը կարող է պահանջել դատարանի ուշադրությունը և միջամտությունը: Այնուամենայնիվ, կգործադրվեն բոլոր ջանքերը Կապալառուի, Ինժեների և ԵՔԾԻԳ-ի մակարդակով խնդիրները լուծելու համար: Անհնարինության դեպքում փորձ կարվի խնդիրները լուծել ԵՔ մակարդակով՝ նպատակ ունենալով որքան հնարավոր է խուսափել/նվազագույնի հասցնել դատավեճը: Եթե ԱԵԱ-ը չի բավարարվում՝ սպառելով ԲԼՄ-ով նախատեսված բոլոր հնարավորությունները, ապա վերջինս կարող է դիմել ԱԶԲ: Անկախ արդյունքներից և տրված լուծումներից՝ բոլոր բողոքները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն և հասանելի կլինեն ուսումնասիրման/դիտարկման, մոնիտորինգի և գնահատման նպատակով:

Նկար Է-1. Բողոքների լուծման մեխանիզմի քայլերի գրաֆիկական պատկեր



Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

286. ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության վերաբերյալ պահանջներին<sup>14</sup> և շրջակա միջավայրի պահպանության մասին Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին, նորմերին և ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով մշակվել է Բնապահպանական կառավարման պլան: Այն նկարագրում է բնապահպանական և սոցիալական պաշտպանության մասով ծրագրային բոլոր պարտավորությունները: ԲԿՊ-ն իր մեջ ներառում է Ծրագրի իրականացման ընթացքում ծագած ցանկացած անցանկալի ազդեցությունից խուսափելուն, իսկ անհնարինության դեպքում՝ բնապահպանական պլանավորման և կառավարման միջոցով բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն, մեղմացնելուն և/կամ հավասարակշռելուն, ինչպես նաև դրական ազդեցությունները ընդլայնելուն ուղղված միջոցառումները:

<sup>14</sup> ԱԶԲ ԱՔՀ (2009) էջ 16, սկզբունք թիվ 4:



## Նախնական գնահատման հայտ

287. Բնապահպանական կառավարման պլանը մշակվում է որպես աշխատանքային գործիք Կապալառուի և Ինժեների համար, որպեսզի ԲԿՊ-ի օգտագործողների համար հստակ լինի, թե ինչ է հարկավոր ներառել իրենց աշխատանքային մեթոդների և գործողությունների մեջ շինարարական աշխատանքների հետ կապված բնապահպանական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու համար: Ի լրումն, այն ծառայում է որպես ուղեցույց Երևանի քաղաքապետարանի և այլ համապատասխան մարմինների, այդ թվում՝ շահագործման և հետագա տեխնիկական սպասարկման ընթացքում ԲԼՏՄ-ի համար:

288. ՇՄԱԳ-ի անբաժանելի մաս կազմող ԲԿՊ-ն ներառվելու է մրցութային և պայմանագրային փաստաթղթերում և համարվելու է Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս:

289. Բնապահպանական կառավարման պլանը հիմք է ծառայում հետևյալի համար՝

- (i) Ծրագրի հնարավոր ազդեցությունների կառավարում և դրանց կանխում կամ մեղմացում,
- (ii) Նախքան նախաշինարարության և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը՝ Կապալառուի կողմից կազմվող ՇԲԿՊ, և
- (iii) Բնապահպանական օրենսդրության, ստանդարտների և նորմերի հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով մոնիտորինգի ծրագրի իրականացում:

290. Բնապահպանական կառավարման պլանը բաղկացած է երկու հիմնական մասից՝ տեքստային և աղյուսակային : Տեքստային մասը ներառում է՝

- Ներածություն, ԲԿՊ-ի նպատակները և կառուցվածքը,
- ԲԿՊ-ն և մոնիտորինգն իրականացնելիս ունեցած դերը, պատասխանատվությունները և կազմակերպչական կարգավորումները ամփոփ ներկայացնող գործիքակազմ,
- Ծրագրի բնապահպանական կառավարման կարողությունները և բյուջեն ընդլայնելու մասին վերապատրաստման և կողմնորոշման ծրագիր,
- Արձանագրման և հաշվետվությունների կազմման մասին պահանջներ,
- Չնախատեսված ազդեցությունների և նախագծային փոփոխությունների կառավարում,
- Ծրագրի իրականացման փուլի և Բողոքների լուծման մեխանիզմի համար շահագրգիռ կողմերի ներգրավման պլան,
- Ազդեցությունների ամփոփում (Պարտականությունների գրանցամատյան): Սա հնարավորություն կտա կապալառուներին և խորհրդատուներին հասկանալ հնարավոր ազդեցությունները և ռիսկերը՝ առանց ամբողջ ՇՄԱԳ հաշվետվությունն ուսումնասիրելու:
- Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ), որն ընդգրկում է ՇԲԿՊ-ի մշակման պահանջը և ուղեցույցը:

291. Աղյուսակային մասը մշակվել և կցվել է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Ը: Այն իր հերթին բաղկացած է 2 մասից՝

- Բնապահպանական մեղմացող միջոցառումների աղյուսակ
- Մոնիթորինգի աղյուսակ

## Ը1. Մեղմացնող միջոցառումներ

292. ԲԿՊ-ի «Մեղմացնող միջոցառումներ» բաժինն ամփոփում է սույն հաշվետվության՝ Գլուխ Զ-ում բերված կանխատեսվող բոլոր ազդեցությունները և յուրաքանչյուր բացահայտված ազդեցության ու ռիսկի համար առաջարկում համապատասխան կանխարգելիչ կամ մեղմացնող միջոցառումներ: Այս բաժինը մշակվել է աղյուսակի տեսքով և ներառում է հետևյալը՝

- Ծրագրի գործողություններ,
- Դրանց հնարավոր բնապահպանական ազդեցությունները,
- Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ ամբողջ Ծրագրի ընթացքում՝ մանրամասն նախագծման փուլից նախաշինարարական, շինարարական, շահագործման և տեխնիկական սպասարկման փուլեր, այդ թվում՝ կարողությունների զարգացում և վերապատրաստումների անցկացում,
- Աշխատանքների իրականացման և իրագեկման, դրանց հետ կապված ինստիտուցիոնալ և կազմակերպական կառուցվածքի համար պատասխանատու մարմիններ,
- Առաջարկվող մեղմացնող միջոցառման ինդիկատիվ (կանխատեսվող) ծախսերի գնահատում:

293. Այս բաժինը ներկայացնում է ընդհանուր սկզբունքներ և մեղմացնող միջոցառումներ, որոնք ընդգրկված են հետևյալ ենթապլաններում՝

### I. Շինարարության փուլ

1. Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման և դասընթացների ծրագիր,
2. Աշխատանքային անվտանգության և առողջության պլան,
3. Հանրության հետ հանդիպումների և կապի պլան,
4. Մշակութային ժառանգության կառավարման պլան,
5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան,
6. Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան,
7. Հաղորդողիների պահպանության և տեղափոխման պլան,
8. Շրջակա միջավայրի պահպանության պլան,
9. Շինարարական ճամբարների տեղակայման պլան,
10. Տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)
11. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան,
12. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան,
13. Թափոնների և նյութերի կառավարման պլան,
14. Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան:

### II. Հետշինարարական փուլ

15. Թերությունների վերացման ժամանակահատված
16. Շահագործում և տեխնիկական սպասարկում

Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման և դասընթացների պլան

294. Ծրագրի ցիկլերի ընթացքում մշակվելու և իրականացվելու է բնապահպանական և անվտանգության վերապատրաստման ծրագիր: Վերապատրաստման ծրագիրն իր մեջ ներառում է՝

I. Շինարարական աշխատանքների մեկնարկից հետո 1 շաբաթվա ընթացքում Կապալառուին է ներկայացվում ԱԶԲ-ի անվտանգության և ազգային օրենսդրական պահանջների մասին ԵՔ-ի, ԵԿՆ ՕԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանական, առողջապահական և անվտանգության գծով անձնակազմի հետ Ինժեների կողմից իրականացվելիք վերապատրաստման դասընթացների պլանը՝ հետևյալ թեմաներով՝

- ա. Շրջակա միջավայրի կառավարում
- բ. Առողջության և անվտանգության կառավարում
- գ. Սոցիալական երաշխիքներ

II. Բնապահպանության, առողջության և անվտանգության թեմայով Կապալառուի՝ բնապահպանության, առողջության և անվտանգության գծով մասնագետների կողմից ՇԲԿՊ-ում մշակված Անվտանգության կողմնորոշման պլանի համաձայն, Կապալառուների և ենթակապալառուի ամբողջ անձնակազմի համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներ: Ինժեներական անձնակազմից և աշխատակիցներից պահանջվում է աշխատանքային տեղամասում իրենց առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում մասնակցել կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթացին և նոր ընդունված աշխատակիցների համար պարբերաբար անցկացվող վերապատրաստումներին:

295. Կապալառուի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները ներառում են՝

ա. Աշխատանքային տեղամասում առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում, այնուհետև նոր ընդունված աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների աշխատակիցների համար պարբերաբար Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության թեմայով իրականացվող ներածական դասընթաց՝

- ✓ շրջակա միջավայրի և անվտանգության վերաբերյալ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում սահմանված ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն աշխատանքային տեղամասում և ճամբարներում,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված հատուկ ծրագիր՝ շինաշխատողներին համավարակային իրավիճակներում, մասնավորապես COVID-19-ի դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,
- ✓ անօրինական թրաֆիքինգ. աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով

չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ աշխատանքից ազատում,

- ✓ Մասնագիտական առողջության և անվտանգության պլանում, բուսական և կենդանական աշխարհի պահպանության պլանում թվարկված այլ թեմաներ և այլն:

բ. Տարին առնվազն երկու անգամ բոլոր աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների համար վերոհիշյալ թեմաներով իրականացվող Բնապահպանական/առողջության և անվտանգության կողմնորոշման վերապատրաստման դասընթաց:

գ. Աշխատանքային տեղամասում աշխատողների տարբեր թիրախային խմբերի հետ (բարձրությունների վրա աշխատողների, հողային աշխատանք իրականացնող, էլեկտրական գործիքներով աշխատող մասնագետների, վարորդների և այլոց մասին) պարբերաբար իրականացվող Բնապահպանության/առողջության և անվտանգության թեմայով վերապատրաստումներ նախքան նոր տիպի աշխատանք սկսելը:

դ. Վերահսկող ինժեների պահանջով միջանկյալ լրացուցիչ վերապատրաստումներ:

### Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման պլան

296. Սույն ենթապլանի նպատակն է Գլխավոր Կապալառուին (ԳԿ) ու ենթակապալառուներին (ԵԿ-ներ) ապահովել ԱԶԲ-ի և ՀՀ օրենսդրության բոլոր պահանջների մասին փաստաթղթերով՝ Ծրագրի իրականացման ընթացքում մասնագիտական անվտանգությունը և առողջությունը պահպանելու նպատակով: Սույն ենթապլանն ընդգրկում է շինհրապարակում գտնվելու իրավասություն ունեցող բոլոր անձանց առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովման մասին պահանջները, այդ թվում՝ համապատասխան կողմնորոշման ծրագիրը: Բացի այդ, այն պատասխանատվություն է դնում Գլխավոր Կապալառուի վրա՝ մշակելու և Ինժեների հաստատմանը ներկայացնելու աշխատանքային անվտանգության պլանը յուրաքանչյուր աշխատանքի համար, որը ներառում է բոլոր աշխատանքների անվտանգ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող տվյալ աշխատանքին հատուկ անվտանգության միջոցառումները:

297. Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից:

#### I. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳԻՐ

298. Կապալառուն կազմակերպում և դասընթացներ է իրականացնում հետևյալ թեմաներով՝

- ✓ անվտանգության մասին ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն շինհրապարակում և ճամբարներում,
- ✓ տվյալ աշխատանքի, այդ թվում՝ բարձրությունների վրա, էլեկտրական գործիքներով, հորատանցքերում և այլուր իրականացվող աշխատանքների վերաբերյալ կանոններ և նորմեր,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին հատուկ իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին COVID-19-ի ռիսկերի,

դրանց կանխարգելման և վերահսկման՝ Կապալառուի Մասնագիտական անվտանգության պլանի ներակա և անքակտելի մաս կազմող միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,

- ✓ անօրինական թրաֆիքինգ աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ և այդ թվում աշխատանքից ազատում,
- ✓ մշակութային ժառանգություն. հնագետը իրազեկում է ամբողջ աշխատակազմին արժեքավոր մշակութային ընկալիչների առկայության, պաշտպանիչ միջոցառումների իրականացման և հնագիտական գտածոների հայտնաբերման ընթացակարգերի մասին: Հարկ եղած և ԵՔՕԻԳ-ի կողմից ուղղորդվելու դեպքում Կապալառուն ապահովում է գտածոների հայտնաբերման ընթացակարգի պատշաճ իրականացումը, վարձում է հնագետ կամ ընկերություն՝ շահագրգիռ կառավարական մարմինների հետ համագործակցությամբ համապատասխան հնագիտական պեղումներ իրականացնելու համար,
- ✓ Վերահսկողության Ինժեների կողմից պահանջվող այլ հատուկ թեմաներ:

## II. Անձնական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ)

299. Կապալառուն իր աշխատակիցներին է տրամադրում և ապահովում է, որ իր և ենթակապալառուի աշխատակիցները կրեն և օգտագործեն ***սեզոնին համապատասխան աշխատանքային համազգեստ և աշխատանքին հատուկ ԱՊՄ-ներ***: Աշխատանքային համազգեստը ներառում է լուսանդրադարձնող ժիլետներ, բաճկոններ, տաբատներ կամ բանվորական արտահագուստ, կոշիկներ, սաղավարտներ և ձեռնոցներ: Համազգեստի վրա պետք է լինի ընկերության տարբերանշանը:

300. Տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված՝ ԱՊՄ-ները կարող են ներառել հատուկ ակնոցներ, պաշտպանիչ ականջակալներ, դիմակներ կամ ռեսպիրատորներ, դիմապաշտպան վահաններ, գոտիներ, պարաններ, աշխատանքին հատուկ բանվորական, օրինակ՝ եռակցողների համար նախատեսված արտահագուստ, և այլն:

301. Կապալառուն ապահովում է, որ իր և ենթակապալառուի ամբողջ անձնակազմը, այդ թվում՝ բանվորները, ինժեներները, աշխույժները, մենեջերները և շինհրապարակի այցելուները, հարկ եղած դեպքում կրեն համազգեստ և ԱՊՄ-ներ: Կապալառուն խթանիչ միջոցառումների իրականացման և տույժերի կիրառման համապատասխան մեխանիզմ է ներկայացնում ՇԲԿՊ-ում՝ ԱՊՄ-ների օգտագործումը պարտադիր դարձնելու համար:

## III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

302. Աշխատանքները սկսելուց առաջ տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված (բարձրություններ, խոր խրամուղիներ և հորեր, ընկելու վտանգ, կռունկ և այլ տեխնիկա և այլն)՝ Կապալառուն տրամադրում է անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործիքները և լրացուցիչ սարքավորումները (հետևի բռնածողով փայտամածեր, աստիճանավանդակներ, կամուրջների մուտքեր, էլեկտրական պաշտպանիչ վահաններ, հրակայուն սարքեր):

303. Կապալառուն ապահովում է իր և ենթակապալառուի աշխատակիցների համար ցանկացած վտանգավոր իրավիճակների (առանց պաշտպանիչ միջոցների խրամուղիներ և հորեր, անուշադրության մատնված էլեկտրական գործիքներ, ծանր տեխնիկայի չկանոնակարգված շահագործում և այլն) բացառումը աշխատանքային տեղամասից:

IV. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

304. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները աշխատատեղերում իր և ենթակապալառուի աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը ապահովելու նպատակով:

305. Կապալառուն ապահովում է իր աշխատակիցների աշխատանքի և հանգստի համար բոլոր պահանջվող սանիտարահիգիենիկ պայմանները, առաջնորդվելով «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ Առողջապահության նախարարի թիվ N 15-Ն հրամանով (2012 թ.) հաստատված պահանջներով:

306. Կապալառուն վարձում է բժշկական աշխատող, ով պատասխանատու է Կապալառուի ՇԲԿ-ի ԱԱԱՊ-ի անխաղտելի մաս կազմող ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ին և Առողջապահական ծրագրին համապատասխանության ապահովման համար: Կապալառուն համագործակցում և համաձայնություն է ձեռք բերում մասնագիտացված բժշկական հաստատության հետ՝ պատահարների/միջադեպերի դեպքում անհրաժեշտ բժշկական աջակցություն ստանալու համար: ՎԻ-ի կողմից հաստատված Կապալառուի բուժաշխատողը մշակում է դասընթացների ծրագիր և վերապատրաստումներ իրականացնում կապալառուի և ենթակապալառուի աշխատակիցների համար՝ ինչպես նշված է Առողջության և անվտանգության կողմնորոշման պլանում: Բուժաշխատողը պարբերաբար ստուգում է աշխատակիցների առողջական վիճակը, ստուգումների արդյունքում ստացված տվյալները հասանելի պահում դաշտային գրասենյակում և ամսական հիմունքներով հաշվետվություն ներկայացնում:

307. Կապալառուն ճանապարհահատվածների բոլոր աշխատանքային տեղամասերը ապահովում է առաջին օգնության համար նախատեսված բոլոր միջոցներով և գործիքներով: Դրանք են՝ հեշտ հասանելի, ամբողջական առաջին բուժօգնության պայուսակ, տեսանելի վայրերում փակցված ցուցապաստառներ պատասխանատու անձանց հասանելիության և կոնտակտային տվյալների մասին տեղեկատվությամբ: Թունավոր տեսակներին տարբերելու և առաջին բուժօգնություն ցույց տալու համար Կապալառուն պետք է հրավիրի մասնագետի, ով կիրահանի աշխատակիցներին: Խորհուրդ է տրվում աշխատանքային տեղամասում ունենալ Հայաստանի թունավոր օձերի մասին տեղեկատուն, որտեղ մանրամասն նկարագրված են թունավոր օձատեսակները, օձի խայթոցի դեպքում ձեռնարկվելիք համապատասխան գործողությունները:

308. Կապալառուն մշակում է COVID-19 համավարկի կանխարգելմանն ուղղված առողջության և անվտանգության ապահովման պլան և ձեռք բերում ՎԻ-ի հավանությունը, ինչպես նաև տրամադրում ազգային նորմերով, միջազգային ուղեցույցներով, առողջության և անվտանգության պլանով նախատեսված բոլոր կանխարգելիչ միջոցները, գործիքները և սարքերը: Պլանը ունենալու է հետևյալ կառուցվածքը

Ա. Ներածություն

Բ. Մենեջերների և վերահսկողների պարտականությունները

ա. Գործատուի պարտականությունները

բ. Աշխատողների պարտականությունները

Գ. Աշխատանքային տեղամասի պաշտպանիչ միջոցառումներ

գ. Անվտանգության ընդհանուր քաղաքականություն և կանոններ

դ. Աշխատանքային տեղամասի այցելուներ

Դ. Աշխատանքային տեղամասի մաքրում և ախտահանում

## Նախնական գնահատման հայտ

Ե. Աշխատանքային տեղամասին սպառնացող վտանգներ

ե. Աշխատակցի մոտ COVID-19-ի ախտանիշների առկայություն

զ. Աշխատակցի մոտ COVID-19-ով վարակվածության հաստատում

Է. Աշխատակցի հետ սերտ կապ ունեցող COVID-19-ով վարակված անձի առկայություն

Զ. Գաղտնիություն

Ը. COVID-19 համավարակի կանխարգելում և աշխատանքային պրակտիկայի կարգավորում

Ր. Աշխատողների պարտականությունները

Պ. Ընդհանուր աշխատանքային տեղամասեր/գրասենյակային հրահանգներ

309. Կապալառուն իր աշխատակիցներից յուրաքանչյուրին պարբերաբար տրամադրում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ/սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) կանխարգելման, բուժման և առողջապահական այլ համապատասխան միջոցներ՝ ՄԻԱՎ/ՍՃՓՎ-ներով վարակվելու ռիսկը և դրանց նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով: Այս աշխատանքներն ընդգրկվում են կողմնորոշման դասընթացի մեջ և ուղեկցվում են կառավարական մարմինների, միջազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) և այլոց կողմից, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոնի և ԱԶԲ-ի պայմանավորվող խորհրդատուների կողմից աշխատանքային տեղամասին հարող տարածքներում համապատասխան նախաձեռնությունների իրականացմամբ: Կապալառուն միանգամայն անվճար իր աշխատակիցներին տրամադրում է անհրաժեշտ թվով բարձրորակ պահպանակներ, քսանյութեր, ուղեցույցներ, պարբերաբար իրականացնում է ՍՃՓՎ/ՄԻԱՎ թեստեր և, հարկ եղած դեպքում, ՍՃՓՎ և ՁԻԱՀ բուժում:

## V. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

310. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները տեղի բնակիչների, ազդակիրների, ձեռնարկությունների, դրանց աշխատակիցների, հետիոտների և այլոց անտվտանգությունը, առողջությունը և բարեկեցությունը ապահովելու համար:

311. Կապալառուն իրականացնում է ճանապարհի օտարման գոտու տեսանելի նշագծում և ձեռնարկում բոլոր միջոցները՝ աշխատանքային գոտին սահմանազատելու և ոչ իրավասու անձանց մուտքը սահմանափակելու համար: Հարկ եղած դեպքում նշանակվում են պահակներ, տեղադրվում են ցանկապատեր, արգելապատնեշներ և արգելափակոցներ: ՎԻ-ի կողմից ներկայացված հատվածներում Կապալառուն տեղադրում է ամուր ցանկապատ (1.5-2մ բարձրությամբ պլաստիկ ցանց կամ բետոնե բլոկներ):

312. Կապալառուն պատշաճ և տեսանելի կերպով տեղեկացնում է հանրությանը ընթացող շինարարական աշխատանքներից բխող վտանգի, շինհրապարակում գործող տեխնիկայի և/կամ սարքավորումների առկայության մասին՝ նախազգուշացնող նշաններ և մուտքն արգելող ցուցապաստառներ տեղադրելով: Հայտարարությունների թավատառ տեքստը լինելու է հայերեն:

## VI. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

313. Վերահսկողության խորհրդատուի (Ինժեներ) Բնապահպանական/առողջության և անվտանգության գծով մասնագետը պատասխանատու է Ծրագրի աշխատանքների՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ի Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման վերահսկողության և մոնիտորինգի, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին ԵԲԾԻԳ-ին իրազեկման համար:

314. Կապալառուն Մասնագիտական առողջության և անվտանգության հարցերի կարգավորման պատասխանատվությունը դնում է իր Բնապահպանական/Անվտանգության գծով մասնագետի վրա, ով պատասխանատու է լինելու կապալառուի և ենթակապալառուի բոլոր աշխատակիցների համար՝ վերոհիշյալ թեմաներով կողմնորոշման վերապատրաստման ծրագրի իրականացման, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին, այդ թվում՝ բոլոր պատահարների/միջադեպերի, բացթողումների մասին ՀԱՎԵԼՎԱՄ Ի-ում ներկայացված ձևաչափով ՎԽ-ին անհապաղ իրազեկելու համար:

315. Կապալառուն շինհրապարակի բոլոր տեղամասերում տարվող շինարարական աշխատանքների համար նշանակում է ՄԱԱ գծով պատասխանատու անձի: Այս անձը պատասխանատվություն է կրում ՇՄԱԳ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ում բնապահպանական, առողջության և անվտանգության մասով ներկայացված պահանջների՝ իր տեղամասում պահպանման, ինչպես նաև աշխատակիցների համար նոր աշխատանք սկսելուց առաջ և նոր ընդունված աշխատակիցների համար՝ պարբերաբար աշխատանքի վերաբերյալ ներածական վերապատրաստումների անցկացման համար: Կապալառուի շինհրապարակում ՄԱԱ հարցերով պատասխանատուն արտակարգ իրավիճակներում իրականացնում է անվտանգության միջոցառումներ և անհապաղ տեղեկացնում ԲԱԱ մասնագետին պատահարների/միջադեպերի, այդ թվում՝ բացթողումների մասին, և ղեկավարում է շտկող միջոցառումների կատարումը, նախագրուշական քայլերի ձեռնարկումը՝ նպատակ ունենալով կանխել հետագայում դրանց կրկնությունը:

316. Կապալառուն պատասխանատու է իր ենթակապալառուների կողմից Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման համար:

#### Հանրության հետ հանդիպումների և կապի պլան

317. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթերով հիմնավորել բոլոր այն միջոցառումները, որոնք ՀԿ-ն, ԵԿ-ները պետք է ձեռնարկեն ԱԶԲ ԱՔՀ 2009-ի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ծրագրի մասին տեղեկատվության հրապարակման և շահագրգիռ կողմերի, ծրագրի ազդակիր անձանց, ՀԿ-ների, այլ հետաքրքրված կողմերի հետ ծրագրի վերաբերյալ մշտական հաղորդակցություն ապահովելու համար: Հանրային լսումների և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) կապ է ստեղծում Պատվիրատուի, Վերահսկողության խորհրդատուի և Կապալառուի (ինչպես նաև Ենթակապալառուների) ու ազդակիր անձանց միջև (տեղի բնակիչներ, ճանապարհից օգտվողներ և այլք)՝ նախօրոք և շինարարական աշխատանքների, ինչպես նաև հնարավոր ազդեցությունների ընթացքում քննարկումների անցկացման և խորհրդատվությունների տրամադրման հաղորդակցային կամուրջ ստեղծելով: Սույն ենթապլանի նպատակն է ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից ներգրավվածությունը և ծրագրի, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և դրանց հետ կապված գործողությունների ժամանակացույցի, աշխատատեղերի, ծրագրից բխող օգուտների մասին տեղեկատվության ժամանակին տարածման միջոցով բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը: Սույն պլանը մշակվել է շահագրգիռ կողմերի, ծրագրի իրականացման վայր հանդիսացող համայնքի, ծրագրի ազդակիր անձանց և հանրության հետ որպես ամբողջություն մշտական հաղորդակցությունը պահպանելու նպատակով:

318. Սույն ենթապլանը պարունակում է ընդհանուր պահանջներ այն մասին, թե ինչպես բավարարել բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղի բնակչության բողոքները և շահերը՝ արդյունավետ ԲԼՄ-ի հաստատման պատասխանատվությունը



դնելով Հիմնական Կապալառուի վրա: ՀՀՀՊ-ի կառուցվածքը մանրամասն ներկայացված է Գլուխ Է-ում:

319. Ելնելով վերոգրյալից՝ ՀՀՀՊ-ը ներառում է՝

- 1) Նախաշինարարական և հետագայում շարունակական քննարկումներ՝ հանրությանը ծրագրի ներկայացման, վերջիններիս հետ հաղորդակցության ապահովման, ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և քննարկումների անցկացման, ինչպես նաև հանրությանը Բողոքների լուծման մեխանիզմին և դրա հետ կապված ընթացակարգերին ծանոթացնելու համար:
- 2) Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) կազմվում է Կապալառուի կողմից և թույլ է տալիս ազդեցության ենթակա անձանց ծրագրի վերաբերյալ հարցեր բարձրացնել:
- 3) Տեղեկատվության հրապարակում:

1) ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

320. Նախաշինարարական հանրային քննարկումն անցկացվում է մրցույթի հաղթող կապալառուի կողմից մոբիլիզացման փուլում՝ տեղամասային հասանելիություն և Պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքները մեկնարկելու թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 10 օր առաջ:

321. Կապալառուն կազմակերպում է նախաշինարարական խորհրդատվական հանդիպումներ ազդակիր համայնքների ղեկավարների հետ և ներկայացնում իրազեկվածության բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները: Սահմանվում են իրենց տարածքում իրականացվելիք շինարարական աշխատանքների պոտենցիալ զգայուն ընկալիչները և Կապալառուի կողմից ներկայացվում քննարկման մասնակիցներին: Առավել բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով պետք է իրականացվի հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ՝ ներգրավելով ՀԿ-երին: Սա իր մեջ կարող է ներառել հանրությանը հասցեագրված հայտարարություններ տարբեր մեդիա հարթակներում: Խորհրդատվական քննարկման նպատակն է ժամանակին նախագուշացնել համայնքին հավանական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան հարմարվել ծրագրի ազդեցություններին և նախապատրաստվեն ազդեցություններին կանխարգելելու, այլ ոչ թե՛ հակազդելու: Նախագուշացումն ուղեկցվելու է աշխատանքների մասին նշանների, ցուցատախտակների, ցանկապատերի և արգելապատնեշների տեղադրմամբ ու ճանապարհի գծանշմամբ՝ շինարարական աշխատանքների մեկնարկից և դրանից հետո:

322. Կապալառուն հանրային տեսանելի վայրերում փակցնում է նախաշինարարական հանդիպման ամսաթիվը, վայրը և նպատակը, բրոշյուրներ բաժանում ազդակիր անձանց: Դրանք իրենց մեջ պարունակում են կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և կապ հաստատելու համար:

323. Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն, շրջակա միջավայրի պահպանության, առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացման ծրագիրը նույնպես վիզուալ շնորհանդեսների միջոցով (շնորհանդես, գրաֆիկական նկարներ և քարտեզներ) է համայնքին ներկայացվում: Նախաշինարարական քննարկումները տեղի են ունենում ծրագիրը, շինարարական աշխատանքների ծրագիրը, ակնկալվող բնապահպանական, սոցիալական ազդեցությունները և ճանապարհի հասանելիության վրա ազդող ճանապարհային անվտանգության նախագծման առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ փոշու, աղմուկի բարձր մակարդակը, ճանապարհի ժամանակավոր փակումը և երթևեկության

շեղումները ներկայացնելու ու քննարկելու, ինչպես նաև Բողոքների լուծման մեխանիզմը ներկայացնելու համար:

324. Կապալառուն լուծում է բարձրացված հարցերը կամ փոխանցում Վերահսկողության խորհրդատուին, եթե ԱԵԱ-ի ներկայացրած դիտողությունները/հարցերը իր պարտավորությունների սահմանից դուրս են գտնվում: Կապալառուն առաջընթացի վերաբերյալ առաջին ամսական հաշվետվության մեջ զեկուցում է խնդրի կարգավիճակի մասին (լուծված/չլուծված): Կապալառուն հաստատում է հետադարձ կապի մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի, արժեքավոր զգայուն ընկալիչների, ծրագրի ազդակիրներ ու շահագրգիռ անձանց ներգրավվածության թափանցիկության համար: Հանդիպման մասնակիցների և արված դիտողությունների վերաբերյալ մանրամասները գրանցվում են Կապալառուի կողմից և ներառվում ՇԲԿՊ-ի մեջ:

## 2) ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

325. Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է ազդակիր անձանց հետ հաղորդակցվելու, ծրագրի կատարման մասին նրանց մտահոգությունները, բողոքները, գանգատները և առաջարկություններ ստանալու, դրանց լուծումը հեշտացնելու նպատակով: Սույն մեխանիզմի գործունեությունն ապահովվելու է Ծրագրի ընթացքում: Տեղական համայնքների, շահագրգիռ կողմերի և հանրության հետ շարունակական հաղորդակցությունը պահպանվելու է ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ի (առավել մարամասն տե՛ս Գլուխ Գ) համաձայն՝ Կապալառուի կողմից հաստատված ԲԼՄ-ի միջոցով: Շարունակական հաղորդակցությունը նշանակում է, որ ազդակիր բնակչությունը ցուցանակների և պաստառների միջոցով ժամանակին տեղեկացվելու է ցանկացած անհարմարության մասին, ինչպիսիք են՝ երթևեկության հասանելիության և վիճակի, ջրի, հոսանքի մատակարարման խանգարումներ և այլն:

326. ԲԼՄ-ի նպատակն է աջակցել ազդեցության ենթակա անձանց բողոք ներկայացնելիս և նկարագրել ժամանակին և արդյունավետ կերպով բողոքները լուծելու համար մշակված մեխանիզմը: Հավանական ներգրավված կողմերն են՝ ԱԵԱ-ները և այլ շահագրգիռ կողմերը, Կապալառուն, Վերահսկողության խորհրդատուն, ԵԲԾԻԳ-ը, ԵԲ-ն և դատարանը: Հանրությունը տեղյակ է պահվում ԲԼՄ-ի մասին նախաշինարարական հանրային քննարկման ընթացքում: Ի լրումն, ԲԼՄ-ի գոյությունը փաստող և ԱԵԱ-ների կողմից առաջարկություններ կամ բողոք ներկայացնելու համար ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը հրապարակված է ԵԲԾԻԳ-ի կայքէջում, ինչպես նաև շինհրապարակներում՝ Կապալառուի կողմից տեղադրված Ծրագրի մասին տեղեկատվական ցուցանակի վրա:

327. ԲԼՄ-ն ներառում է՝

- (i) Շինարարական հրապարակի մուտքի նոտ կտեղադրվեն համապատասխան տեղեկատվություն պարունակող պաստառներ կամ տեղեկատվական վահանակներ: Տեղեկատվությունն իր մեջ ներառում է դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլ. փոստի հասցեները և այլն:
- (ii) Ազդակիր անձանց համար դաշտային գրասենյակում կամ ցանկացած այլ հասանելի վայրում պահվող բողոքների գրանցամատյան: Հանրային բողոքների և առաջարկությունների ներկայացման համար դիմումի ձևաթուղթը կցվելու է ՇՄՆՈՒ հաշվետվությանը:
- (iii) Կապալառուի շինհրապարակում գտնվող ներկայացուցիչը (աշխույժ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանական հարցերով

## Նախնական գնահատման հայտ

պատասխանատու անձ) պատասխանատու է ազդակիր անձանց կողմից ներկայացված բողոքների/առաջարկությունների բավարարման և Կապալառուի կողմից դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում բողոքը/առաջարկությունը գրանցելու թույլտվություն տալու համար: Կապալառուի ներկայացուցիչը բողոքի/առաջարկության վրա գրանցում է նախնական տվյալները (ԱԵԱ-ի անունը, բողոքի/առաջարկության ներկայացման ամսաթիվը, խնդրի էությունը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):

328. Կապալառուն գրանցամատյանում գրանցում է բոլոր բողոքները (բանավոր և գրավոր), ինչպես նաև լուծման էությունը և եղանակը, կիրառված մեղմացնող միջոցառումները: Եթե խնդիրը գտնվում է Կապալառուի իրավասությունից դուրս, ապա այն փոխանցվում է Ինժեներին: Եթե Ինժեները չի կարողանում լուծել բողոքը, ապա այն փոխանցվում է ԵԲՕԻԳ-ին:

329. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են Գլուխ Է-ում:

- Պահել բողոքների գրանցամատյան (բողոքը ներկայացնող անձի անունը, խնդրի նկարագրությունը, բողոքի ներկայացման ամսաթիվը, պատասխան լուծման ամսաթիվը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):
- Համոզվել, որ գործում է բողոքների և առաջարկությունների անհապաղ Ինժեներին ներկայացման մեխանիզմը:

## Մշակութային ժառանգության կառավարման պլան

330. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների՝ Գլուխ Զ-ում բերված մշակութային ժառանգություն համարվող արժեքավոր ազդակիր ընկալիչների նկատմամբ մոտեցումը: Ծրագրի զբաղեցրած տարածքում գտնվող արժեքների պահպանության և խնամքով տեղափոխման, ինչպես նաև ճանապարհի ծրագծի հարակից տարածքում գտնվող մշակութային և հնագիտական արժեքների վրա ցանկացած ազդեցության կանխման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ում (տես Հավելված Ը, Աղյուսակ 1, պ. 4) Պլանը մշակվել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (11.11.1998) և «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 438 որոշման համաձայն (20.04.2002):

## Մակերեսային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան

331. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների՝ Հրազդան գետի էկոհամակարգի և ոռոգման ջրանցքի նկատմամբ մոտեցումները՝ ջրի հոսքի և որակի վրա ազդեցությունները նվազեցնելու, ինչպես նաև պահպանելու այն տարածքները, որոնք կարող են պարունակել ջրային կենդանական աշխարհի և առափնյա բուսական աշխարհի կարմիրգրքային կամ վտանգված տեսակներ: Սույն ենթապլանով նախատեսված միջոցառումները սերտ փոխկապակցված են Բուսական և կենդանական աշխարհի և բուսականության մաքրման պլանին:

332. Մի շարք արգելող, կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում ԲԿՊ-ում: Արգելող խումբն իր մեջ ներառում է որոշակի գործողություններ կանխող

## Նախնական գնահատման հայտ

միջոցառումներ՝ չնայած այդ գործողությունների նախագծում ներառված չլինելուն: Այսպիսով, Կապալառուի համար այն ծառայում է որպես հիշեցում այդ գործողությունների արգելված լինելու մասին: Մասնավորապես՝

- ✓ Հրազդան գետից և ոռոգման ջրանցքից ջրառ չի նախատեսվում, անհրաժեշտության դեպքում Կապալառուն ՇՄՆ-ից ձեռք կբերի համապատասխան թույլտվությունը:
- ✓ Արգելվում է Հրազդան գետի ջրի հունի փոփոխմանը հանգեցնող ցանկացած գործողություն:
- ✓ Արգելվում է ջրային կենդանական աշխարհի ազատ տեղաշարժը խոչընդոտող ցանկացած կառույցի (ժամանակավոր կամ մշտական) իրականացումը:
- ✓ Արգելվում է ոռոգման ջրանցքի ջրի հոսքի ցանկացած խանգարում, եթե դրա շուրջ պայմանավորվածություն ձեռք չի բերվել համապատասխան մարմնի հետ:

333. Մեղմացնող խումբն իր մեջ ներառում է այնպիսի միջոցառումներ, որոնք պարտադիր են շինարարական աշխատանքների դեպքում, մասնավորապես՝

- ✓ կազմել Հրազդան գետին մոտ սակավաջուր սեզոնին իրականացվելիք շինարարական աշխատանքների ժամանակացույցը (մայիսի սկզբից մինչև սեպտեմբերի վերջ):
- ✓ Կազմել ոչ ոռոգման սեզոնին ոռոգման ջրանցքին կից իրականացվելիք շինարարական աշխատանքների ժամանակացույցը:
- ✓ Անհրաժեշտության դեպքում ոռոգման ջրի հոսքը խանգարելուց առաջ դիմել համապատասխան մարմիններին թույլտվություն ձեռք բերել:
- ✓ Ոռոգման ջրանցքի ջրի հոսքի ժամանակավոր շեղման հետ կապված աշխատանքերը (հարկ եղած դեպքում) կազմակերպել այնպես, որ ջրի հոսքի խանգարումները լինեն կարճատև և տեղի չունենան չհիմնավորված ուշացումներ:

334. Կապալառուն հնարավորինս կանխում է արտահոսքը բոլոր շինհրապարակներից, այդ թվում՝ շինարարական ճամբարներից, նյութերի պահեստներից, քարջարդ և բետոնի գործարաններից (եթե կան այդպիսիք), աղբանոցներից և այլ վայրերից՝ դեպի մակերեսային ջրային մարմիններ: Դեպի Հրազդան գետ աղտոտող նյութերի արտահոսքից խուսափելու համար՝ կամրջի ջրահեռացման ելքերում տեղադրում է յուղի զատիչներ: Այս միջոցառումը նախատեսված է շահագործման փուլում Հրազդան գետը աղտոտված հեղեղաջրերից զերծ պահելու համար:

335. Երկրաբանական հետազոտությունների արդյունքում առաջարկվել են մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են նախագծում: Դրանք են՝

- ✓ Շեպերի միջև գոյություն ունեցող հաղորդողիների նորոգում կամ փոխարինում:
- ✓ Մակերեսային ջրերի (մթնոլորտային տեղումներ, ձնհալ, ոռոգման ջուր) շարունակական հեռացման, ջրի ներթափանցումը գրունտ և Հրազդան գետ կանխելու նպատակով շեպերի միջև ջրահեռացման համակարգի կառուցում, ինչպես նաև նոր ճանապարհի կառուցման համար գրունտի հիդրոերկրաբանական պայմանների բարելավում:

336. Հրազդան գետը և ոռոգման ջրանցքը շինարարական աղբի, մնացորդների, նստվածքազոյացման և ջրի որակի վրա ազդող այլ աղտոտող նյութերի միջոցով աղտոտվելուց զերծ պահելու համար նախատեսվում է նստվածքների և աղտոտման կառավարմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում: Այս միջոցառումները մանրամասն ներկայացված են ԲԿՊ ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ի Աղուսյակ 1, պ. 5-ում:

**Բուսական և կենդանական աշխարհի և բուսականության մաքրման պլան**

337. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների նվազեցման, Ծրագրի կարմիրգրքյան և վտանգված տեսակներ ընդգրկող տարածքների պահպանության նկատմամբ: Պլանը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության և բուսական (23.11.2009) ու կենդանական (03.05.2000) աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև բուսականության մաքրման համար քիմիական նյութերի օգտագործման մասին օրենսդրական նորմերի համաձայն:

338. Թեև ծրագրի իրականացման տածաքում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մակարդակը գնահատվում է թույլ, այնուամենայնիվ, տեղայնացված և փոքրամասշտաբ բացասական բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում: Որդեգրված սկզբունքն է՝ առավելագույնս խուսափել տարածքի հետագա աղտոտումից, սահմանափակել Հրազդան գետի հունին մոտ գտնվող տարածքի ծառահատումները և պահպանել վայրի բնությունը:

339. Ճանապարհաշինարարական աշխատանքների արդյունքում կենդանական աշխարհի պաշտպանությանն ուղղված միջոցառումները նպատակ ունեն կանխելու աշխատողների գիտելիքների և բնության նկատմամբ հոգածության բացակայության պատճառով շինարարության ընթացքում կենդանիների բնական միջավայրի որևէ չհիմնավորված ոչնչացում, ձվադրման վայրերի, կենդանիների փոսերի և հորերի, կենդանիների ոչնչացում: Կապալառուն պատասխանատու է ՇՄԱԳ անբաժան մաս կազմող ԲԿՊ-ի աղուսակում ներկայացված մեղմացնող միջոցառումների իրականացման համար:

340. Ծառերի և թփերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով Կապալառուն իր սեփական հետազոտությունն է իրականացնում հաստատելու համար սույն հաշվետվությանը կցված (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1) Կենսաբազմազանության հետազոտման հաշվետվության մեջ ներկայացված տվյալները, ճանապարհի ծրագրի տարածքում գտնվող և շինարարության ընթացքը խոչընդոտող բոլոր ծառերը և թփերը, որպեսզի խուսափի անհիմն ծառահատումներից: Բացի դրանից, շինարարական հրապարակին մոտ գտնվող ծառերը և թփերը, որոնք կարող են վնասվել իրականացվող աշխատանքների պատճառով, պետք է որոշվեն՝ դրանց պահպանությունն ապահովելու համար: Մոբիլիզացման փուլում Կապալառուն մշակում և ՎԻ-ի հաստատմանն է ներկայացնում ՇԲԿՊ-ի Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանի մաս կազմող Ծառերի կառավարման պլանը՝ համաձայն ստարև բերվածի՝

Ա. Ներածություն (փաստաթղթի նպատակը):

Բ. Թույլտվություններ և հաստատումներ:

Գ. Ազդեցության գնահատում՝

ա. Շինարարության ընթացքը խոչընդոտող, կտրման և կոտրման ենթակա ծառերի (թփերի) հաստատում՝ ըստ տեսակների և վարչական շրջանների:

բ. Աշխատանքային տարածքին մոտ գտնվող, պահպանության կարիք ունեցող ծառերի (թփերի) նույնականացում:

Դ. Մեղմացնող միջոցառումներ՝

գ. Ըստ կանաչապատման նախագծի և վարչական շրջանների հետ ձեռք բերված համաձայնության՝ իրականացվելիք ծառատունկի (վերատնկման) վայր և ժամանակացույց:

դ. Ծառահատման ընթացակարգ և փայտանյութի թափոնների կառավարում:

## Նախնական գնահատման հայտ

ե. Աշխատանքների պատճառով հավանական վնասման ենթակա ծառերի պահպանում:

զ. Նոր տնկված ծառերի (թփերի) պահպանում:

է. Թույլտվություններ/համաձայնագրեր, քարտեզներ, աղյուսակներ, նկարներ և այլն պարունակող հավելվածներ:

341. Կապալառուն թարմացնում է Ծառերի կառավարման պլանը, ծանուցում ՎԻ-ին և նախքան ծառերի ու թփերի հատման գործընթացը սկսելը հավանություն ստանում: Մաքրման ենթակա կամ այլ կերպ խաթարվող տարածքները պետք է նվազագույնի հասցվեն և նշվեն:

342. Կապալառուն իրականացնում է բուսականության մաքրման աշխատանքները՝ խստագույնս հետևելով «Մաքրում և արմատահանում» կոչվող Տեխնիկական մասնագրի բաժնին և «Ծառեր և թփեր» կոչվող մեկ այլ բաժնին: Բուսականության մաքրման նպատակով թունաքիմիկատներ չեն օգտագործվելու: Անհրաժեշտության դեպքում օգտագործվելու են միայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկը հաստատելու մասին» 2005 թվականի մարտի 17-ի թիվ 293 որոշման մեջ չգրանցված թունաքիմիկատներ և բացառելու է ԿՕԱ-ներ պարունակող քիմիական նյութերի օգտագործումը:

343. Կապալառուն հատված ծառերի/թփերի փոխարեն պետք է տնկի նորերը: Ծառերը տնկվելու են 1:6 հարաբերակցությամբ ընդհանուր սկզբունքով (6 ծառ/թուփ մեկ հատված ծառի/թփի դիմաց): Հատուկ կանոններ են գործում Բուսաբանական հետազոտության արդյունքում հայտնաբերված կարմիրգրքյան և վտանգված տեսակների, հատկապես՝ Արևելյան սոսու [*Platanus orientalis*] դեպքում, այն է՝ կտրված ծառերը պետք է փոխարինվեն նորերով՝ 1:12 հարաբերակցությամբ, ինչպես նաև Երկնածառի (180) [*Ailanthus altissima*] և Թխկի հացենիատերևի (10) [*Acer negundo*] դեպքում, որոնք համարվում են մոլախոտ և վերատնկման կարիք չունեն: Կտրված մոլախոտային ծառատեսակների փոխարեն ԵՔ-ի կողմից առաջարկված ծառատեսակներ են տնկվելու 1:1 հարաբերակցությամբ:

344. Ծառերը/թփերը տնկվելու են ԵՔ-ի կողմից հաստատված կանաչապատման պլանով նախատեսված և համապատասխան վարչական շրջանների հետ համաձայնեցված վայրերում՝ ըստ Ծառերի կառավարման պլանի:

345. Աշխատանքների խախտման արդյունքում ժամանակավորապես օգտագործված հողատարածքները վերականգնելուն ուղղված միջոցառումները իրականացվելու են տվյալ տարածաշրջանին բնորոշ բույսերի միջոցով: Բույսերի բնական միջավայրի/աճման գոտու ապօրինի տեղափոխումը և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցումը, ինչպես նաև անծանոթ տեսակների ներմուծումը խստորեն արգելվում է: Կապալառուն պետք է ներկայացնի օգտագործված տարածքների բուսականության վերականգնման մասին մեթոդաբանություն:

346. Շինարարական աշխատանքների և ճանապարհի հետագա շահագործման ընթացքում ծրագրի իրականացման տարածքում հայտնաբերված կենդանիների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ են առաջարկվել կենդանական աշխարհի պահպանության գծով մասնագետների կողմից Կենսաբազմազանության հետազոտության մեջ, որոնք հաշվի են առնվել նախագծում: Մասնավորապես, փոքր կաթնասունների համար ճամփեզրին՝ յուրաքանչյուր 1-2 կմ-ի վրա 50 սմ տրամագծով խողովակների տեղադրմամբ, կստեղծվի ճանապարհ:

347. Չղջիկների հայ մասնագետի կողմից վերջերս իրականացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հրազդան գետի կիրճում շատ են փոքր քարայրները և ճեղքերը, որոնք հյուրընկալում են այնպիսի չղջիկների, ինչպիսիք են՝ Դաուրենտոնիի

գիշերաչղջիկը [Myotis daubentoni], բեղավոր գիշերաչղջիկը [Myotis mystacinus], ոսկեգույն գիշերաչղջիկը [Myotis aurascens], որոնց արձակած ձայները ձայնագրվել են դաշտային այցելությունների ընթացքում: Դրանք հիմնականում սնվում են Երևանյան լճին մոտ գտնվող կիրճում, և այս փոքր քարայրները ժամանակավոր հանգստավայր են նրանց համար: Մասնագետի կարծիքով ճանապարհաշինարարությունը ազդեցություն չի ունենա չղջիկների այս տեսակների վրա, բայց և այնպես, նախատեսվում են մեղմացնող և պաշտպանական միջոցառումներ, որոնք ներկայացված են ԲԿՊ-ի Սխեմայում:

348. Այն տարածքները, որտեղ թունավոր օձերի առկայությունն առավել հավանական է, հատկապես պետք է կարևորվեն ՇԲԿՊ-ում և երկարաճիթ կոշիկների օգտագործումն այս տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում պետք է լինի ԱՊՍ պարտադիր պահանջ: Աշխատողները և այլք պետք է վերապատրաստում անցնեն, որպեսզի լինեն առավել ուշադիր, կարողանան ճանաչել թունավոր ցեղատեսակները և ճիշտ գործել օձերի հանդիպելիս՝ դրանց հետ առերեսվելուց խուսափելով (տե՛ս նաև վերևում Մասնագիտական առողջության և անվտանգության պլան):

349. Հաշվի առնելով այն, որ գետի ստորին և առափնյա հունների ցանկացած ձևափոխումը և ջրի անխափան հոսքի խանգարումները կարող են հանգեցնել արժեքավոր ձկնատեսակների, ինչպես օրինակ՝ կովկասյան կողակի և Կուրի բեղաձկան բազմացման վայրերի ոչնչացմանը, Կապալառուն պետք է հետևի հիմնական սկզբունքներից մեկին, այն է՝ պետք է խուսափի ցանկացած նմանատիպ գործողություններից և պետք է ապահովի կամրջի շինարարության ընթացքում ջրի ազատ և անխափան հոսքը:

350. Ֆլորայի և ֆաունայի պահպանության պլանի իրականացումը ստուգելու նպատակով իրականացվելու է Կենսաբազմազանության մոնիթորինգ, որի նպատակով Կապալառուն վարձելու է համապատասխան մասնագետներ՝ մեկ բուսաբան և մեկ կենդանաբան: Մասնագետների կողմից իրականացվելու է նախաշինարարական ելակետային վիճակի մոնիթորինգ, որի ընթացքում անհրաժեշտություն առաջանալու պարագայում աշխատանքների անմիջական գոտում հայտնաբերված կենդանիները կտեղափոխվեն իրենց համար անվտանգ միջավայր: Այնուհետև պարբերաբար՝ ամսեկան ստուգայցեր, որոնց արդյունքներն ամփոփվելու և ներկայացվելու են Կապալառուի ամսեկան բնապահպանական հաշվետվության մեջ:

#### Հաղորդողիների պաշտպանության և տեղափոխման պլան

351. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի մոտեցումը՝ հաղորդողիների՝ էկոլոգիապես անվտանգ տեղափոխման/տեղադրման ուղղությամբ՝ ըստ հաղորդողիների նախագծի՝ պահպանելու հայտնաբերված այն հաղորդողիները, որոնք ենթակա չեն տեղափոխման, և իրականացնելու շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված ցանկացած հաղորդողու պահպանումը կամ տեղափոխումը:

352. Հաղորդողիների նախագիծը վավերացվելու է սեփականատիրոջ կողմից: Հաղորդողիների պահպանման և տեղափոխման պլանը իրականացվում է «Տեխնիկական մասնագրերի հաղորդողների տեղափոխում» հատուկ անունը կրող բաժնի պահանջների համաձայն:

353. Հաղորդողիների տեղափոխման գործընթացի պատշաճ իրականացման համար մշակված մեղմացնող միջոցառումները փոխկապակցված են Հանրային լսումների և հաղորդակցության պլանին և ներկայացվելու են ԲԿՊ Աղյուսակում:

**Շրջակա միջավայրի պահպանության պլան**

354. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ների, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը շինարարական աշխատանքների հետևանքով հողը, օդը և ջրային մարմինները էրոզիայից, նստվածքազոյացումից, փոշու և այլ արտանետումներից, ինչպես նաև աղմուկից և թրթռումներից գերծ պահելու նպատակով իրականացվելիք միջոցառումների ուղղությամբ: Պլանն իր մեջ ներառում է ցանկացած ազդեցության վտանգը նվազեցնելուն ուղղված մեղմացնող միջոցառումներ՝ դրանք հասցնելով ընդունելի մակարդակի օգտագործված բոլոր տարածքներում՝ շինհրապարակներում, ճամբարներում, շինարարական նյութերի տեղափոխման համար նախատեսված ճանապարհներին, հանքերում, բացահանքերում, լցակայաններում և այլ վայրերում: Մասնավորապես, դիտարկվել են հետևյալ ասպեկտները՝

- i. Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկում
- ii. Օդի աղտոտման և փոշու վերահսկում
- iii. Ջրի որակի և նստվածքների վերահսկում
- iv. Աղմուկի և թրթռման վերահսկում:

*Հողի էրոզիայի և նստվածքի վերահսկում*

355. Սույն ենթապլանն իր մեջ ներառում է գրունտի և բուսահողի կառավարման հետ կապված հարցերը: Շրջակա միջավայրի պահպանության մասին տեխնիկական մասնագրեր և Բուսահողի մասին հատուկ բաժին է մշակվում նախագծում, բացի դրանից, կիրառելի են նաև բուսահողի պահպանման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

356. Հողագրունտի էրոզիայի և նստվածքի վերահսկման պլանն իր մեջ ներառում է վտանգի ենթակա տարածքները նվազագույնի հասցնելու, գրունտի էրոզիայից և նստվածքների արտահոսքից խուսափելու նպատակով տեղամասային աշխատանքների պատշաճ կազմակերպմանն ուղղված միջոցառումները: Կապալառուն էրոզիայի վերահսկումն իրականացնելու է ըստ Տեխնիկական մասնագրերի (էրոզիայի վերահսկում), ինչպես նաև իրականացնելու է բուսահողի հեռացում և պահեստավորում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Տեխնիկական մասնագրերի (Բուսահող) ամաձայն:

*Օդի աղտոտում և փոշու վերահսկում*

357. Մշակվել են կառավարման միջոցառումներ՝ շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող փոշու և գազի արտանետումները նվազեցնելու համար՝ այսպիսով վերահսկելով օդի աղտոտվածությունը և տեղի բնակչության վրա հնարավոր առողջական ու անբարենպաստ ազդեցությունները: Կապալառուն օդի որակի վերահսկողությունն իրականացնելու է աշխատանքների ճշգրիտ ժամանակացույցի և կազմակերպման միջոցով: Հիմնական սկզբունքը երկրի մակերևույթի ազդեցության ենթարկման տևողության նվազեցումն է, հանույթի նյութի և շինանյութի մնացորդների ճիշտ ժամանակին հեռացումը:

358. Օդի որակի վերահսկողության մեկ այլ սկզբունք է էլեկտրաէներգիայի կամ մարտկոցի էներգիայի կիրառումը որտեղ հնարավոր է (կամ պրակտիկ) աշխատել ձեռքի գործիքներով, ոչ թե դիզելով, և խուսափել դիզելային շարժիչով կամ բենզինով աշխատող գեներատորները կիրառելուց:

359. Կարևոր սկզբունքներից մեկը նաև այն է, որ կապալառուն խուսափելու է կիրառել կամ օգտագործել գազի մեծաքանակ արտանետումներ բաց թողնող հնացած մեքենաներ



## Նախնական գնահատման հայտ

կամ սարքավորումներ, ինչպես նաև իրականացնելու է տեխնիկական վիճակի կանոնավոր ստուգումներ և ժամանակին նորոգումներ:

### *Ջրի որակի և նստվածքի վերահսկում*

360. Ջրի որակի և նստվածքի վերահսկման միջոցառումները նախագծված են Մակերեսային և գրունտային ջրերի պահպանման պլանում (տե՛ս վերևում)՝ պահպանելու Հրազդան գետը, ոռոգման ջրանցքը և այլ բնական ու մարդածին ջրային մարմիններ շինարարական թափոնների, մնացորդների, նստվածքների և այլ աղտոտող նյութերի աղտոտումից, որոնք կարող են ազդել ջրի որակի վրա:

### *Աղմուկի և թրթռումների մեղմացում*

361. Աղմուկի և թրթռումների վերահսկման նպատակն է՝ դրանց մակարդակի բարձրացման հնարավոր ազդեցությունները նվազեցնելն և կառավարելը, ինչպիսիք են աղմուկի պատճառած անհանգստությունը, լսողության խանգարումները, որը կարող է ազդել և՛ շինարարների, և՛ հարակից տարածքում բնակվողների վրա:

362. Աղմուկի և թրթռումների վերահսկման միջոցառումները խմբավորված են 2 բաժիններում՝

- Ծրագրի շինարարության փուլում ժամանակավորապես բարձրացած աղմուկի և թրթռումների մեղմացում,
- Կառուցված ճանապարհի շահագործման ընթացքում մշտապես առկա աղմուկի և թրթռումների մեղմացում այն հատվածներում, որոնք հաստատված են ձայնային (ակուստիկ) մոդելավորմամբ:

363. Միջոցառումների առաջին խումբը ներառվում է ՇՄԱԳ/ ԲԿՊ-ում և վերահսկվելու է ակնադիտական և գործիքային չափագրումների միջոցով: Կապալառուն պահպանելու է աղմուկի և թրթռումների հետ կապված Հայաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերը (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրաման, քաղաքաշինություն) և ծրագրի համար ընդունված սահմանային արժեքները (տե՛ս Գլուխ Ե, Ե 3):

364. Կապալառուն կանոնավոր կերպով իրականացնելու է աղմուկի և թրթռումների գործիքային չափագրումներ և համեմատելու է ելակետային տվյալների և ՀՀ օրենսդրական նորմերի հետ: Գերազանցումների դեպքում շինարարական գործողության մեթոդը փոփոխվելու է որպիսի դրանց մակարդակները պահվեն առավելագույն թույլատրելի սահմաններում: Կապալառուն ապահովելու է, որպիսի թրթռումների մակարդակները զգայուն ընկալիչների մոտ գտնվող (ոչ ամուր շենքեր և կառույցներ, դպրոցներ) աշխատանքների ժամանակ գտնվեն մշտական հսկողության տակ. աշխղեկերը և բանվորները տեղեկացված լինեն գործիքային չափագրումների արդյունքների և յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ շինարարական մեթոդի մասին:

365. Շենքերի և շինությունների վրա թրթռումների ազդեցությունը կառավարվելու է հետևյալ կերպ.

- Գույքագրական հետազոտություններ
- ✓ Նախագծման փուլում ծրագրի նախաձեռնողի կողմից իրականացված հետազոտության և մոդելավորման հիման վրա, նախաշինարարական փուլում Կապալառու կազմակերպությունը ներգրավելու է մասնագիտացված սեյսմիկ ինժեների և իրականացնելու է նախանշված շրջանակում տների և շինությունների սեյսմակայունության ներկա վիճակի գույքագրական հետազոտություն, որի համար ներկայացնելու է հետազոտության և գրանցման մեթոդաբանությունը;

## Նախնական գնահատման հայտ

- ✓ իրականացնելու է շրջանակով նախանշված ազդակիր տների և շինությունների սեյսմակայունության նախաշինարարական վիճակի գրանցում, որը հաշվետվության տեսքով ներկայացնելու է Պատվիրատուին;
- ✓ կանոնավոր կերպով իրականացնելու է ընթացիկ պարբերական ստուգումներ;
- ✓ շինարարական աշխատանքների ավարտին իրականացնելու է վերջնական իրավիճակի հետազոտություն: Կախված վերջնական արդյունքներից իրականացվելու է հասցված վնասի փոխհատուցում:
- Թրթռումների շեմի սահմանում շենքի/ շինության հիմքի վրա`
  - ✓ մինչև 10մ հեռավորության վրա գտնվող տների համար` 3 մմ/վրկ [20 Hz -50 Hz]
  - ✓ մինչև 10մ հեռավորության վրա գտնվող տների համար` 5 մմ/վրկ [20 Hz -50 Hz]
- Փորձնական չափագրումներ
  - ✓ Աշխատանքները ամբողջ ծավալով սկսելուց առաջ իրականացնել փորձնական չափագրումներ համոզվելու համար, որ նախանշված շենք չի գերազանցվում;
  - ✓ Մեքենա- սարքավորումների աշխատանքի ընթացքում իրականացնել ընթացիկ չափագրումներ:
- Շինարարական մեթոդի ադապտացիա
  - ✓ Մեքենա- սարքավորումների աշխատանքային ռեժիմի փոփոխություն, մասնավորապես Կապալառուին առաջարկվելու է կիրառել առավել թեթև/ ցածր հզորության տոպանիչներ հնարավորինս մեծ արագության տակ, ցածր հաճախականության և ցածր ՝Ա՝ պարամետրով;
  - ✓ Անհրաժեշտությամբ դեպքում մեքենա- սարքավորումների կիրառումից հրաժարում և ձեռքի աշխատանքի կիրառում;

366. Մի շարք միջոցառումներ են առաջարկված պայթեցման աշխատանքների ընթացքում թրթռումների մակարդակի հսկողության համար, ինչպիսիք են յուրաքանչյուր տեղամասի համար կապալառուի կողմից հատուկ Թրթռումների կառավարման պլանի մշակում, փորձնական պայթեցումների իրականացում մինչև թրթռումների շեմի մակարդակի սահմաններում գտնվելու պայթեցման մեթոդի ընտրությունը, պայթեցումների ընթացում թրթռումների գործիքային չափագրումների պարտադիր իրականացում, նախնական հանդիպումներ բնակչության հետ և զգուշացումներ և այլ:

367. Ազդակիր մարդկանց, բնակչության ինքնազգացողության և առողջության վրա ազդեցությունների մեղմացման համար նախատեսված միջոցառումները մշակվել են հաշվի առնելով միջազգային նմանատիպ փորձը, այն է`

- ✓ Թրթռումներ առաջացնող աշխատանքները սկսելուց առաջ հնարավոր ազդակիրների հետ հանդիպումներ և բացատրական աշխատանքներ
- ✓ Գործիքային չափագրումներ և արդյունքների համեմատություն ՀՀ նորմերի և ծրագրի շեմերի հետ;
- ✓ Ազդեցություն առաջացնող աշխատանքների ճիշտ ժամանակացույցի իրականացում և տևողության հնարավորինս կրճատում:

368. Կառուցված ճանապարհի շահագործման ընթացքում հնարավոր մշտապես բարձր աղմուկը մեղմացնելու համար կառուցվելու են աղմկապաշտպան պատնեշներ, որոնց տեղադիրքը որոշվում է աղմուկի մոդելավորման հետազոտության հիման վրա (Գլուխ Ե, Ե 3):

Շինարարական ճամբարների տեղակայման պլան

369. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական ճամբարների կառավարման միջոցառումների իրականացման ընթացքում՝ հաշվի առնելով, որ տարածքում ճանապարհի օտարման գոտու մի հատվածը մասամբ անցնում է խիտ բնակեցված տեղանքով: Ճամբարների տեղակայման և օգտագործման հետ կապված խնդիրները մի կողմից վերաբերում են ճամբարների՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությանը, մյուս կողմից՝ շրջակա միջավայրը պաշտպանելու անհրաժեշտությանը՝ հարակից բնակավայրերում անհանգստություններից խուսափելու և աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու համար:

370. ԳԿ-ի համար ընդհանուր պահանջներ են սահմանվում ինչպես Տեխնիկական մասնագրերի 101.24 Մոբիլիզացիա բաժնում, այնպես էլ ՇՄԱԳ/ ԲԿՊ-ում, որոնք վերաբերվում են գլխավոր գրասենյակի և շինարարական ճամբարների պլանավորմանը և տեղակայմանը, մեքենաների կայանմանը, նյութերի և սարքավորումների պահեստավորմանը և աշխատանքային անձնակազմի համար սննդի և հանգստի համար սանիտարական հարմարությունների կազմակերպմանը: Միջոցառումները ներառված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մեջ և իրականացվելու են Կապալառուի կողմից՝ տեղի բնակչությանը պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու, բնակչության և տեղի/կենտրոնական իշխանությունների հետ ընդհարումից խուսափելու, ինչպես նաև հողի և գրունտային ջրի աղտոտումը նվազագույնի հասցնելու համար:

371. Շինարարական կազմակերպման տեխնոլոգիական սխեման ներկայացնելու է կապալառու կազմակերպությունը նախագծողի կողմից առաջադրած շինարարական կազմակերպման հիմնական սկզբունքների և պահանջների հիման վրա, որոնք տեղ են գտել Տեխնիկական մասնագրերի 101.24 Մոբիլիզացիա բաժնում, ինչպես նաև ԲԿՊ-ի Շինարարական ճամբարների տեղակայման պլանում:

372. Կապալառուի և ենթակապալառուների գրասենյակների, անձնակազմի կացարանային պայմանների ապահովման, սարքավորումների և մեքենաների պահեստավորման, կայանատեղերի և մեքենաների մաքրման արտադրամասի, նյութերի և առաջացած թափոնների ժամանակավոր պահեստավորման տարածքների համար օբյեկտների տեղակայման հիմնական չափորոշիչները/սկզբունքը ծրագրի շրջանակներում դրանց գտնվելու վայրի և ճանապարհի օտարման գոտու պահանջն է: Ճանապարհի օտարման գոտուց դուրս ցանկացած տարածքի օգտագործումը բացառվում է:

373. Ճանապարհի ծրագծից դուրս շինարարական ճամբարների տեղակայումը, որը կարող է անհրաժեշտ լինել Ծրագրի իրականացման ընթացքում և կիրառվել կա՛մ Կապալառուի, կա՛մ որևէ այլ ենթակապալառուի կողմից, ընտրվելու է Կապալառուի կողմից՝ միայն ՎԻ-ի հետ խորհրդակցելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո: Կապալառուն պետք է նախապես գրավոր թույլտվություն ստանա հողամասի սեփականատիրոջ կողմից՝ ցանկացած օբյեկտի տեղակայման համար: Ճամբարի տեղանքի ընտրությունը, Կապալառուի գրասենյակների համար օբյեկտների տեղակայումը, սարքավորումների պահեստավորման և մեքենաների կայանատեղին, հատկապես եթե գտնվում է ճանապարհի օտարման գոտուց դուրս և մոտ է բնակելի և ձեռնարակատիրական գործունեությունների տարածքներին, իրականացվելու է՝ նվազագույնի հասցնելու հողի տոփանումը և աղտոտումը, ինչպես նաև մոտակա տարածքների բնակիչներին պատճառվող անհանգստությունը:

374. Դաշտային ճամբարները ստեղծվելու են՝ Կապալառուի մոբիլիզացման պլանի և Կապալառուի ՇԲԿՊ-ում ներկայացված տեղակայման սխեմայի համաձայն:

**ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ**

375. Ջրամատակարարումն իրականացվելու է Տեխնիկական մասնագրերի 101.24.2 Ջուր բաժնի պահանջների հիման վրա: Խմելու ջրի դեպքում՝ միանալու է ջրամատակարարման գործող խողովակաշարին համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով կամ մատակարարելու է շշալցված տարբերակով: Խմելու ջուրը հասանելի կլինի բոլոր այն վայրերում, որտեղ շինարարական աշխատանքներ են ընթանում: Կապալառուն ապահովելու է բավարար քանակությամբ շշալցված ջուր (օրական ամենաքիչը երկու լիտր շշալցված ջուր՝ մեկ անձի հաշվով) ամբողջ աշխատակազմի համար՝ ինչպես դեկավար անձնակազմի, այնպես էլ աշխատակիցների համար:

**ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ**

376. Շինարարական ճամբարի տեղանքը ապահովված է լինելու էլեկտրաէներգիայով՝ համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրով կամ կոմպակտ գեներատորների տեղադրման միջոցով: Էլեկտրաէներգիան անհրաժեշտ է լինելու ինչպես ճանապարհային անվտանգության ապահովման համար շինարարական աշխատանքների, այնպես էլ անվտանգության նկատառումներից ելնելով գիշերային ժամերին շինարարության տարածքում և ճամբարում լուսավորության ապահովման համար: Կապալառուն հոգալու է, որպեսզի բավարար լուսավորություն լինի բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքները ընթացքի մեջ են և վերջինիս աշխատակազմի համար ապահովված են անվտանգ աշխատանքային պայմաններ:

**ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

377. Կապալառուն ծրագրի տարածքում տեղակայված ճամբարը կահավորում է ժամանակավոր սանիտարական հարմարություններով իր բոլոր աշխատակիցների համար: Սանիտարական հարմարությունները (գուգարան և լվացվելու, ճաշելու, սրճելու, հանգստանալու, ձմռանը տաքանալու հարմարություններ) ապահովվելու են հաշվի առնելով Առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Մասնավորապես, դրանք լինելու են բավարար վիճակի և քանակի, պատշաճ կերպով պահպանվելու են շինարարական աշխատանքների ողջ ընթացքում, և առավելագույնս հեռու կլինեն հասարակության տեսադաշտից: Կապալառուն ապահովելու է նման սանիտարական հարմարությունների հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար: Ժամանակավոր տեղակայված հարմարությունները ճիշտ ժամանակին կհեռացվեն շինարարական աշխատանքների ավարտից հետո:

**ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

378. Կապալառուն կազմակերպելու է ճամբարի տարածքում նյութերի ժամանակավոր պահեստավորումը և մեքենաների կայանման ու վերանորոգման արհեստանոցների տարածքները: Կապալառուն ապահովելու է այս օբյեկտների անվտանգությունը և մաքրությունը, որոնք տեղակայված են լինելու այնպես, որպեսզի որևէ կերպ չխանգարեն երթևեկությանը և ճանապարհից օգտվողներին, բնակիչներին և հետիոտնային անցուղուն:

379. Նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքները պատշաճ կերպով պահպանվելու են. նյութերը, որոնք կանոնավոր կերպով կուտակված են և ծածկված՝ չհամակարգված նյութերի դեպքում, պարկերն ու տարաները պիտակավորված են՝ նշելով նյութի անունը և վնասակարությունը՝ վտանգավոր/ոչ վտանգավոր:

380. Ճամբարի տարածքում լինելու են մեքենաների լվացման օբյեկտներ և կեղտաջրերի հեռացման համակարգեր. առաջացած կեղտաջրերը ուղղվելու են տեղի ջրահեռացման համակարգ:

381. Կայանման և վերալիցքավորման տարածքները լինելու են անջրաթափանց մակերեսի վրա: Կապալառուն պետք է խուսափի տեղակայել կայանման վայրերը առանց ծածկույթի հողի վրա, կամ այն վայրերում, որոնք ծածկված են խոտով և այլ բուսականությամբ:

### Տեղամասի կառավարման պլան (հանքեր և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)

382. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը հանքերի, բացահանքերի, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարանների, շինանյութերի և սարքավորումների տեղափոխման համար նախատեսված ճանապարհի վրա շինարարական գործունեության հետևանքները կառավարելու միջոցառումների իրականացման գործում:

383. Ծրագրով չի նախատեսվում բացել նոր հանքեր և/ կամ հանույթի համար նախատեսված վայրեր: Նախատեսված չէ նաև հիմնել բետոնի կամ ասֆալտի գործարան: Ենթադրվում է, որ մրցույթի հաղթող կապալառուն նյութը գնելու է արդեն իսկ գոյություն ունեցող հանքից և/ կամ ասֆալտի գործարաններից գնման պայմանագրի հիման վրա: Հետևաբար, Կապալառուից պահանջվում է Խորհրդատուին տրամադրել շինանյութի գնման պայմանագրերի պատճենները:

384. Նաև չի նախատեսվում բացել թափոնների հեռացման երկարաժամկետ գործածության համար նախատեսված կուտակավայրեր: Բոլոր թափոնները կտեղափոխվեն գոյություն ունեցող աղբակույտեր՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագիրը: Համապատասխան թույլտվությունը Կապալառուն կտրամադրի ՎԽ-ին:

385. Եթե Կապալառուն այնուամենայնիվ բացի նոր հանքեր և/ կամ հանույթի համար նախատեսված վայրեր, կուտակավայրեր կամ հիմնի բետոնի կամ ասֆալտի գործարաններ, վերջինիցս կպահանջվի պատրաստել և հաստատման ներկայացնել տեղամասի կառավարման պլան յուրաքանչյուր տարածքի համար, որը կօգտագործվի ճանապարհի օտարման գոտուց դուրս ժամանակավորապես օգտագործված յուրաքանչյուր տարածքի համար: Տեղամասի կառավարման պլանի բովանդակության համառոտ նկարագիրը տրված է Հավելված Ժ-ում:

386. Այն դեպքում, եթե նոր հանքերի, բետոնի և ասֆալտի գործարանների անհրաժեշտություն առաջանա, Կապալառուն պետք է տրամադրի համապատասխան համաձայնագիրը/ լիցենզիան՝ տրամադրված համապատասխան մարմինների կողմից և ստանա Բնապահպանության նախարարության բնապահպանական փորձաքննության հաստատումը հանքի և բացահանքի, լցակույտի շահագործման, ինչպես նաև թույլտվությունը բետոնի և ասֆալտի գործարաններից գազի արտանետումների համար:

### Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան

387. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների, ինչպես նաև նրանց աշխատակիցների մոտեցումը՝ շինարարական աշխատանքների ընթացքում հանրային երթևեկությունը կառավարելու և շինարարական մեքենաները շինհրապարակ մուտք գործելու համար միջոցառումների իրականացման գործում: Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլանը կազմվելու է Կապալառուի կողմից՝

որպես ՇԲԿՊ-ի մաս, և համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի և Ճանապարհային ոստիկանության հետ մոբիլիզացման ժամանակահատվածում: Այն պարբերաբար թարմացվելու է ըստ անհրաժեշտության: Պլանավորման հիմնական սկզբունքը լինելու է խուսափել երթևեկության խցանումներից և հանրային երթևեկության ու հետիոտների համար ապահովել անվտանգ տեղաշարժի պայմաններ: Հատուկ ուշադրություն է դարձվելու ծրագրի առավել մարդաշատ և ինտեսիվ երթևեկություն ունեցող հատվածներին, ինչպիսիք են Արշակունյաց և Իսակով պողոտաները: ԵԿՊ-ում նախատեսվելու են այլընտրանքային ճանապարհային լուծումներ հետիոտն ու ավտոմեքենաների երթևեկությունն անխափան և անվտանգ կազմակերպելու համար:

388. ԵԿՊ-ն ներառելու է նաև Տրանսպորտային միջոցների կառավարման կանոններ՝ տեղամասի ներսում և տեղամասից դուրս, ինչպիսիք են՝ կայանման կազմակերպումը, վերանորոգումը, տեխնիկական գնությունը և վիճակի պարբերաբար ստուգումը, վերալիցքավորումը և այլն:

389. Կապալառուն պարտավորվում է անցկացնել Նախաշինարարական ճանապարհային և գույքի վիճակի ուսումնասիրություն՝ ճանապարհների և դրանց եզրին գտնվող ազդեցության ենթակա գույքի վիճակը փաստաթղթավորելու համար, և փոխհատուցելու ու վերականգնելու պատճառով վնասը:

#### Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան

390. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը քիմիական նյութերի փոխադրման, տիրապետման, օգտագործման, պահեստավորման և վերացման ժամանակ, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել վտանգավոր նյութերի արտահոսքի կամ պատահական հոսակորուստների ժամանակ, և կամ այլ հավանական միջադեպերի կամ պատահարների դեպքում, որոնք կարող են առաջանալ շինարարական աշխատանքների ընթացքում: Կապալառուն պարտավորվում է ՇԲԿՊ-ի շրջանակներում տրամադրել Արտակարգ իրավիճակների արձագանքման իր պլանը, որը պատրաստված կլինի ՇՄԱԳ/ԲԿՊ-ում սահմանված պահանջների հիման վրա: Այսպես հնարավոր կլինի ցանկացած ազդեցության ռիսկ նվազեցնել մինչև ընդունելի մակարդակի:

391. Կապալառուն Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխան վերահսկելու է բոլոր վտանգավոր հումքերը, նյութերը և թափոնները, և ՎԽ-ին տրամադրելու է բոլոր համապատասխան թույլտվությունները և լիցենզիաները:

392. Կապալառուն նշանակելու է Արտակարգ իրավիճակների արձագանքման խումբ՝ որպես անվտանգության թիմի արձագանքման մի մաս, որը ցանկացած պահի պատրաստ կլինի արտակարգ իրավիճակների համար և որը պարբերաբար կվերապատրաստի անձնակազմին: Այս թիմի կոնտակտային տվյալները կցվելու են Արտակարգ իրավիճակների արձագանքման պաստառներին տեսանելի վայրերում:

393. Կապալառուն իր մոբիլիզացման պլանի շրջանակներում ՎԽ-ին տրամադրելու է այն նյութերի ցանկը, որոնք վտանգավոր տարրեր են պարունակում, օրինակ՝ դիզել, օգտագործված յուղ, ներկեր, մոլախոտասպան և այլն:

394. Կապալառուն ՎԽ-ին տեղեկացնելու է ցանկացած վթարի/ պատահարի մասին (աշխատակցի վնասվածք կամ մահ, տրանսպորտային կամ այլ պատահար, որը տեղի է ունեցել շինարարության տարածքում, հրդեհ, պայթյուն, նավթի մեծածավալ արտահոսք, բիտումի արտահոսք և այլն), ինչպես նաև շինարարության տարածքում և/ կամ մոտակայքում տեղի ունեցած վրիպումների մասին: Կապալառուն անհապաղ տեղեկացնելու է ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, բայց դրան պետք է հաջորդի գրավոր զեկույցը դեպքից կամ պատահարից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Գործը քննվելու է Կապալառուի ԱևԱ պատասխանատուի կողմից, որի

## Նախնական գնահատման հայտ

արդյունքում սահմանվելու են պատճառները: Կապալառուն զեկուցելու է ՎԽ-ին՝ լրացնելով պատահարի/միջադեպի մասին հաշվետվության ձևաթուղթը, որը ներկայացված է Հավելված Ի-ում:

395. Կապալառուն հետևելու է COVID-19-ի կանխարգելմանն ուղղված գործողությունների պլանին և ՎԽ-ին տեղեկացնելու է անձնակազմի յուրաքանչյուր վարակված դեպքի մասին: Կապալառուին իրավունք է վերապահվում տեղեկացնել մյուս աշխատակիցներին, որ իրենց գործընկերոջ մոտ ախտորոշվել է COVID-19, եթե մյուս աշխատակիցների վարակման վտանգ կա, այսպիսով աշխատակիցները կարող են միջոցառումներ ձեռնարկել սեփական առողջության մասին հոգ տանելու համար: Սյուս կողմից պահպանվելու է հիվանդության ողջամիտ գաղտնիությունը: COVID-19-ի արտակարգ իրավիճակների այլ միջոցառումները ներկայացվելու են ԲԿՊ սխեմայով, որը կցվելու է որպես ՇՄԱԳ հաշվետվության հավելված:

### Թափոնների և նյութերի կառավարման պլան

396. Այս պլանի նպատակն է միջոցառումների իրականացման ժամանակ փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական նյութերի պահեստավորման, ինչպես նաև շինարարության ընթացքում առաջացած թափոնների և նյութերի ոչպիտանի մնացորդների հեռացման համար, նաև ենթադրաբար շինարարության ընթացքում աղտոտված հողի կառավարման համար:

397. Սույն պլանի թափոնների կառավարման հիմնական սկզբունքը հիմնված է թափոնների կառավարման մոտեցումների ներքոնշյալ առաջնահերթության վրա (ամենաբարձրից մինչև ցածր)

- (i) Հնարավորության դեպքում խուսափել թափոնների գոյացումից,
- (ii) Նվազեցնել թափոնների գոյացումը, ներառյալ՝ հողի աղտոտումը,
- (iii) Որքան հնարավոր է վերաօգտագործել թափոնները,
- (iv) Որքան հնարավոր է վերամշակել թափոնները, և
- (v) Մնացած թափոնները և տեղահանված աղտոտված հողը հեռացնել և տեղադրել էկոլոգիապես հարմար եղանակով՝ համապատասխան մարմինների կողմից տրամադրված և թույլատրված վայրերում:

398. Նյութերի կառավարման հիմնական սկզբունքն այն է, որ Կապալառուն պատշաճ կերպով կազմակերպի ամբողջ շինանյութի մատակարարումը և պահեստավորումը: Շինանյութը մատակարարվելու է ամենօրյա սպառման քանակներով՝ շինարարության տարածքում երկար ժամանակ մնալուց, շինհրապարակներում տարածվելուց և աղբի, փոշու և ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու համար:

399. Այն նյութը, որը չի մատակարարվում ամենօրյա սպառման քանակով, պահվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքում, որը նշված կլինի Կապալառուի մոբիլիզացման պլանում և ՇԲԿՊ-ում. վերջինս հազեցած է լինելու անհրաժեշտ հարմարություններով պահպանելու համար անվտանգության և աղտոտման վերահսկման կանոնները՝ փակ կոնտեյներներ, ծածկ ունեցող պահեստներ, մնացորդների հավաքման տարաներ և այլն:

400. Նախագծող կազմակերպությունը դիմել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին շինարարական աղբի տեղադրման համար: Կապալառուն իր հերթին դիմելու է համապատասխան մարմիններին՝ ստանալու բոլոր անհրաժեշտ օրենսդրական թույլտվությունները և լիցենզիաները թափոնների, այդ թվում՝ ասֆալտի թափոնների դասակարգման, փոխադրման, վերամշակման, հեռացման և տեղադրման համար: Շինարարական թափոնների և նյութերի ցանկացած տեղափոխում շինարարության

տարածք և տարածքից դուրս իրականացվելու է ճանապարհային ոստիկանության և ՎԻ-ի կողմից հաստատված ԵԿՊ-ի համաձայն:

401. Թափոնների, նյութերի մնացորդների և աղտոտված հողի կառավարումը վերոնշյալ սկզբունքների համաձայն՝ պատշաճ հավաքագրման, տարանջատման, ժամանակավոր պահեստավորման, հեռացման և կրթական/վերապատրաստման մեթոդների միջոցով, կապահովի թափոնների առաջացման և աղտոտված հողի կառավարման հետ կապված ռիսկի ցածր մակարդակը: Լուծիչների և ցնդող նյութերի մշակումը իրականացվելու է ՇՄՆ-ի, Հայաստանի օրենսդրության և միջազգային լավագույն փորձով սահմանված ընթացակարգերի համաձայն:

402. Թափոնների կառավարման ընդհանուր սկզբունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները, ներառյալ՝ թափոնների քանակների գրանցման պահանջները, ժամանակավոր կուտակման վայրերի ընտրության, հեռացման և վերջնական տեղադրման պահանջները նշված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ում: Մասնավորապես շինարարական կազմակերպությունից պահանջվելու է.

- ✓ վարել թափոնների քանակների գրանցամատյան ըստ թափոնների տեսակների, որը հասանելի կլինի ստուգայցերի համար, և ամսեկան հաշվետվության մեջ ներկայացնել այդ մատյանից համապատասխան քաղվածքը;
- ✓ Շինարարական հրապարակում նախապես հատկացնել առաջացող թափոնների և շին աղբի ժամանակավոր կուտակման տեղամասեր, անհրաժեշտության դեպքում նաև պահեստարաններ և ամբեղջ զանգվածը կուտակել բացառապես այդ նախանշված վայրերում, բացառելով աղբի կուտակումը շինհրապարակից դուրս գտնվող չթույլատրված հատվածներում;
- ✓ Մոբիլիզացիոն շրջանում համապատասխան իրավասու մարմնից ձեռք բերել թափոնների և աղբի տեղադրման թույլտվություն և պարբերաբար շինաղբը հեռացնել և տեղադրել բացառապես հատկացված թափոնավայրում:

403. Կապալառուից պահանջվում է իր ՇԲԿՊ-ում ներկայացնել թափոնների կառավարման, այդ թվում դրանց ժամանակավոր կուտակման կոնկրետ տեղամասերի և թափոնների նվազեցման առավել մանրամասն ծրագիր: Կապալառուի՝ թափոնների կառավարման պլանը հաստատելիս Ինժեների ուշադրության կենտրոնում հատկապես պետք է լինեն բետոնաջրերի հավաքման եղանակները և նավթի/վառելիքի/քսանյութերի մնացորդները՝ հետագայում կրկին օգտագործելու համար:

404. Կապալառուն մանրամասն ներկայացնելու է իր մոտեցումը բոլոր տեսակի նյութերի և թափոնների կառավարման վերաբերյալ, որոնք առաջացել են շինարարական աշխատանքների ընթացքում: Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած թափոնները բաժանվում են երկու խմբի՝

- i. Անվտանգ թափոններ
  - ա. Թափոններ, որոնք առաջացել են շենքերի, շինությունների և ճանապարհային հին կահավորման և շինարարության հետ կապված այլ թափոնների քանդման աշխատանքների ընթացքում,
  - բ. Հողային աշխատանքների արդյունքում հանույթից ստացված ոչ պիտանի հողային զանգված, օրինակ՝ հող, ավազ, ապարներ և քարեր,
  - գ. Շինարարության հետ կապված կոշտ թափոններ մետաղի, փայտի, պլաստմասե մասերի, դատարկ պարկերի, տարաների (և այլն) և կենցաղային աղբի տեսքով:
- ii. Վտանգավոր թափոններ



## Նախնական գնահատման հայտ

դ. Ասֆալտի թափոն, որն առաջացել է հին ծածկույթի քանդման աշխատանքների հետևանքով,

ե. Վտանգավոր հեղուկ նյութեր և դրանց թափոնները:

Մեղմացնող առաջարկվող միջոցառումները նշվելու են ԲԿՊ աղյուսակում:

### ԱՆՎՏԱՆԳ ԹԱՓՈՆՆԵՐ

405. Այն թափոնները, որոնք առաջանում են հին ճանապարհի կահավորանքի քանդման ժամանակ և շինարարության հետ կապված այլ թափոնները ներառում են շինհրապարակից հանվող ամբողջ նյութերը, ինչպիսիք են ապամոնտաժված կառույցները, բետոնե բլոկները, քանդված ճանապարհային հին կահավորանքը, շինարարության ոչ վտանգավոր մետաղական, պլաստմասե, փայտե մասերը և այլն: Բոլոր ոչ վտանգավոր թափոնները դասակարգվելու են ըստ դրանց հետագայում օգտագործման պիտանելիության և ոչ պիտանելիության սկզբունքի: Համապատասխան նյութերը փոխանցվելու են սեփականատիրոջը: Վերջիններս կփոխադրվեն և կպահվեն Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի կողմից նշված վայրերում: Ոչ պիտանի նյութերը հեռացվելու են տեղամասից և տեղափոխվելու են նախապես հաստատված աղբավայրեր, որոնք համաձայնեցված են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Նախագծող կազմակերպությունը դիմել է շինարարական աղբի տեղադրման վայրի համար (տես ՀԱՎԵԼՎԱԾ Դ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ-3): Կապալառուն իր հերթին դիմելու է Երևանի քաղաքապետարանին՝ թափոնների հեռացման վայրերի համար և գրավոր թույլտվություն է տրամադրելու ՎԽ-ին:

406. Պինդ թափոններ: Վերջինս կարող է ներառել մետաղի և փայտանյութի, բետոնի, թղթի, պլաստմասայի, սովարաթղթի, թիթեղամանի և շշերի, արտադրամասի թափոնների և օրգանական սննդի թափոններ (աղբ): Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքային տարածքի և շինհրապարակների հարակից տարածքի մաքրության համար: Հարակից տարածքներում թափոններ չեն լինելու: Կոնտեյներներից դուրս գտնվող ցանկացած թափոն հավաքվելու է Կապալառուի/ենթակապալառուի կողմից: Ամբողջ աղբը Կապալառուի կողմից տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակված աղբավայր՝ վարչական շրջանի հետ կնքված պայմանագրի կամ թույլտվության հիման վրա:

### ՀԵՂՈՒԿ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐ

407. Վտանգավոր հեղուկ նյութերը և դրանց թափոնները այրվող և/ կամ կենսակերպի համար վտանգավոր նյութերն են: Վտանգավոր նյութերը և դրանց թափոնները ներառում են ստորև նշվածներից որևէ մեկը և պահեստավորման, մշակման և վերացման հատուկ ընթացակարգեր են պահանջում՝

- ✓ վառելանյութ, ներառյալ՝ բենզինը և դիզելը
- ✓ օգտագործված յուղ
- ✓ ցանկացած թափոնային բենզին, դիզել և բիտում
- ✓ ցեմենտաջուր (բետոնի լվացման կառավարման լավագույն փորձը, երբ բետոնատար մեքենայի բաքը լվացվում է բետոնի վերամշակման գործարաններում կամ հատկացված վայրերում, ընտրվում է որպես կիրառելի այլընտրանք:)

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

408. Վտանգավոր նյութերն ու թափոնները ներառում են այնպիսիք, որոնք կարող են առաջանալ շինարարական աշխատանքների ժամանակ, օրինակ՝ ճանապարհի հին ասֆալտե ծածկի հեռացումը և մշակումը, որը Հայաստանի օրենսդրությամբ դասակարգվում է որպես 4-րդ կարգի վտանգավոր նյութ: Քանդված ասֆալտը մանրացվելու է և կրկին օգտագործվելու է օժանդակ ճանապարհների հարթեցման և նորոգման համար: Ավելորդ և ոչ պիտանի մասը կհեռացվի և կտեղափոխվի հաստատված տարածք: Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխանելու համար Կապալառուն պետք է լիցենզիա ստանա վտանգավոր թափոնների մշակման համար կամ պայմանագիր կնքի մասնագիտացված լիցենզավորված ընկերության հետ: Կապալառուն պետք է Շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցումներ կատարի՝ վտանգավոր թափոնների հեռացման համար (անհրաժեշտության դեպքում), և այդ մասին տեղեկացնի ՎԽ-ին:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄ

409. Կապալառուն օգտագործելու է առաջացած թափոնների այն մասը, ինչպիսիք են գրունտի հանույթը, ապարները և քարերը, քանդված ասֆալտը, բետոնի մասերը, օգտագործված յուղը և բետոնե թափոնները, եթե դա հնարավոր է: Վերջինս իր ՇԲԿՊ-ի շրջանակներում ներկայացնելու է թափոնների նվազեցման իր ծրագիրը: Այսպիսով, Կապալառուն կնվազեցնի թափոնների քանակությունը և կհամապատասխանի աղտոտվածության վերահսկման պահանջներին:

Տեղամասի վերակառուցման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

410. Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել ՀԿ-ի, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը՝ տեղամասի մաքրման և վերականգնման աշխատանքների իրականացման համար, ներառյալ՝ վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման միջոցառումները՝ որպես շինարարական աշխատանքների մի մաս: Ընթացակարգի նպատակն է շինարարական աշխատանքների ավարտից հետո ապահովել տեղամասի երկարաժամկետ կայունությունը: Նաև աշխատանքի ավարտին բոլոր խաթարված տարածքները բերվելու են մաքուր և հաստատուն վիճակի: Այս պլանը կիրառվում է՝

- (i) բոլոր այն տեղանքներում, որտեղ ընթանում են շինարարական աշխատանքներ և
- (ii) բոլոր այն տարածքներում, որտեղ Կապալառուն օբյեկտներ է ստեղծել (շարժական տնակներ, պահեստային տարածքներ, կայանատեղիներ և այլն):

411. Ծրագրի ավարտից հետո, ինչպես նաև շինհրապարակի յուրաքանչյուր տեղամասում աշխատանքներն ավարտի պահին, վերջինս պետք է մաքրվի բոլոր շինարարական տեխնիկայից, նյութերից և մնացորդներից, որպեսզի տեղանքը հնարավորինս վերականգնի նախնական վիճակը:

Կանաչապատումն իրականացվելու է կանաչապատման նախագծին համապատասխան, որը մշակվել է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2018 թ.-ի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջները և արժանացել է Երևանի քաղաքապետարանի հավանությանը

## Նախնական գնահատման հայտ

(ԵՔ-ի «Կանաչապատում և Շրջակա միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ-ի գրությունը տես ՀԱՎԵԼՎԱԾ Լ):

412. Բուսականության վերականգնման աշխատանքների պահանջները ներկայացված են կանաչապատման նախագծում, ինչպես նաև համաձայնեցվելու են ՎԻ-ի հետ: Մա ներառելու է՝

- Բարեկարգմանն ենթակա հատվածների բուսահողով ծածկույթ և ճիմապատում;
- Ծառերի և թփերի տնկում՝ համաձայն ԵՔ-ի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի և Ծառերի կառավարման պլանի,
- Ոռոգման համակարգի ստեղծում;

413. Ծառերի կառավարման պլանի իրականացումը, այդ թվում բարեկարգվող տարածքի ճիմապատման աշխատանքները և ծառերի ու այլ բույսերի աճը վերահսկելու համար կապալառու կազմակերպությունը վարձելու է կանաչապատման գծով մասնագիտացված ենթակապալառու:

414. Կապալառուն իրականացնելու է տեղամասի վերականգնման միջոցառումներ և ավարտին է հասցնելու առաջադրանքների ցուցակը, որը պատրաստվել է ՎԻ-ի կողմից՝ վերջնական ստորագրման համար:

### Թերությունների վերացման ժամանակահատված

415. Թերությունների վերացման ժամանակահատվածում Կապալառուն պատասխանատու է լինելու Բնապահպանական երաշխիքների՝ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի և Հայաստանի օրենսդրությանը համապատասխանության ապահովման համար այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում Կապալառուն տեղամասում իրականացնում է թերությունների շտկման աշխատանքներ: ԲԿՊ-ի այս բաժինը ներառում է շինարարության փուլի Մաս I-ով սահմանված մեղմացնող միջոցառումներին հետևելու ընդհանուր պահանջը, կարող են նշված լինել միայն որոշ միջոցառումներ, ինչպիսիք են գործիքային մոնիտորինգի չափումների հաճախականությունը: Կապալառուի պարտավորությունները թերությունների վերացման ժամանակահատվածի համաձայն լրացվում են այդ ժամանակահատվածի համար հատուկ պահանջներով և մանրամասն ներկայացվում են ԲԿՊ սխեմայում:

### Շահագործում և տեխնիկական սպասարկում

416. Թերությունների վերացման ժամանակահատվածին հաջորդող ժամանակի համար՝ շահագործում և սպասարկում, Հայաստանի օրենսդրության պահանջներին բնապահպանական համապատասխանության ապահովումը փոխանցվում է Երևանի քաղաքապետարանին: Բնապահպանական երաշխիքների և համապատասխանության վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ՇՄՆՈԻ/ԲԿՊ-ի այս բաժնում:

## Ը 2. Մոնիթորինգ

417. ԲԿՊ-ի շրջանակներում իրականացվող մոնիտորինգը ներկայացնելու է ծրագրի մոնիտորինգի համակարգը՝ ստուգելու ծրագրի գործունեության համապատասխանությունը Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ-ի ստանդարտներին և կանոնակարգերին:

418. «Մոնիթորինգ» բաժնում ներկայացված պահանջները վերաբերում են՝

## Նախնական գնահատման հայտ

- շրջակա միջավայրի մոնիտորինգ օդի որակի, ջրի որակի և աղմուկի և թրթռման գործիքային չափումների միջոցով (գործիքային մոնիտորինգ), և
- շրջակա միջավայրի մոնիտորինգ ստուգելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը մեղմացնող միջոցառումներին, որոնք սահմանված են ԲԿՊ-ում կանոնավոր այցելությունների միջոցով (ակնադիտական մոնիտորինգ):

419. Մոնիթորինգն իրականացվելու է ինչպես շինարարական աշխատանքների փուլում, այնպես էլ հետշինարարական փուլում՝ թերությունների վերացման ժամանակաշրջանում:

420. ԲԿՊ-ի այս բաժինը ներկայացվում է նաև աղյուսակային ձևաչափով, և պարունակում է հետևյալ տվյալները՝

- Մոնիթորինգի են ենթարկվելու ծրագրի աշխատանքները՝ հողային աշխատանքներ, լիցք, ասֆալտապատում, կամրջի կառուցում և այլն,
- Մոնիթորինգի են ենթարկվելու պարամետրերը՝ արժեքավոր բնապահպանական ընկալիչները (հող, ջուր, օդի որակ և այլն),
- Մոնիտորինգի է ենթարկվելու վայրը (շինհրապարակ, ճամբարի տարածք, լցակույտ և այլն),
- Գործիքներ և մեթոդներ (համապատասխան փաստաթղթերի վերանայում, ակնադիտական ստուգումներ տեղամասում, գործիքային չափումներ և այլն),
- Բնապահպանական առանձնահատկությունների ցուցիչ (վերաբերում է ԲԿՊ մեղմացումներ Բաժին I-ում սահմանված մեղմացնող միջոցառումների կատարմանը),
- Պատասխանատու մարմիններ (բաժանված է բոլոր կողմերի միջև – Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ, Ինժեներ, Կապալառու, Երևանի քաղաքապետարան),
- Մոնիթորինգի հաճախականություն (վերաբերում է հանձնարարականներին, որոնք հիմնված են ծախսարդյունավետության սկզբունքի վրա):

421. Շրջակա միջավայրի որակի գործիքային մոնիթորինգը իրականացվելու է փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի հիման վրա, որը ներառում է՝

- Օդի որակի, ջրի որակի և աղմուկի և թրթռումների ելակետային տվյալների հավաքագրում: Սա իրականացվել է Ինժեների կողմից սույն ՇՄՆՌ-ի մշակման ընթացքում, և նաև պետք է իրականացվի/հաստատվի Կապալառուի կողմից՝ աշխատանքների մեկնարկից 21 օր առաջ: Ելակետային տվյալների հետազոտության ծախսերը ներառվելու են Կապալառուի բյուջեում:
- Նույն պարամետրերի տվյալների կանոնավոր հավաքագրում (առնվազն ամիսը երկու անգամ)՝ ելակետային տվյալների և նախագծի համար ընդունված օրենսդրական ստանդարտների, ՄՖԿ ստանդարտների և սահմանային մեծությունների հետ համեմատելու համար:

422. Փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիթորինգի պլանը Կապալառուի կողմից մշակված և Ինժեների հետ համաձայնեցված Շրջակա միջավայրի տեղամասային բնապահպանական կառավարման պլանի բաղկացուցիչ մասն է, որտեղ հստակ նշված է չափման կետերի գտնվելու վայրը և համեմատական վերլուծության համար յուրաքանչյուր չափման կետի համար անհրաժեշտ շեմերը (տես Գլուխ Ե):

423. Կապալառու կազմակերպության կողմից իրականացվելու է նաև Կենսաբազմազանության մոնիթորինգ Ֆլորայի և ֆաունայի պահպանության պլանի

իրականացումը ստուգելու նպատակով: Կապալառուն վարձելու է համապատասխան մասնագետներ՝ մեկ բուսաբան և մեկ կենդանաբան: Մասնագետների կողմից իրականացվելու է նախաշինարարական ելակետային վիճակի մոնիթորինգ, որի ընթացքում անհրաժեշտություն առաջանալու պարագայում աշխատանքների անմիջական գոտում հայտնաբերված կենդանիները կտեղափոխվեն իրենց համար անվտանգ միջավայր: Այնուհետև պարբերաբար՝ ամսեկան ստուգայցեր, որոնց արդյունքներն ամփոփվելու և ներկայացվելու են Կապալառուի ամսեկան բնապահպանական հաշվետվության մեջ:

424. Շրջակա միջավայրի ակնադիտական մոնիթորինգը իրականացվելու է տեղամասային այցելությունների միջոցով՝ ծրագրի բացասական ազդեցությունների կանխարգելման և վերահսկման մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը որոշելու նպատակով, որպեսզի հնարավորինս շուտ սահմանվի համապատասխան ուղիչ գործողությունների անհրաժեշտությունը: Կապալառուի կողմից զբաղեցված և հաստատված բոլոր տեղամասերը մոնիտորինգի են ենթարկվելու՝ աշխատանքային գոտի, շինարարական ճամբարներ, պահեստներ, կայանատեղիներ, բուսահողի պահպանման տեղամասեր, թափոնների հեռացման վայրեր, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարաններ:

425. Ստուգայցերն իրականացվելու են ՇՄԱԳ/ԲԿՊ-ում պլանավորված պաշտոնական ժամանակացույցի համաձայն, այն է Կապալառուի համար՝ օրական, ՎԽ-ի (Ինժեներ) համար՝ շաբաթական, Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի համար՝ ամսեկան:

426. Ստուգայցերի մոնիթորինգի արդյունքների մասին Կապալառուն հայտնելու է Շտկոդ միջոցառումներ հաշվետվությունների միջոցով, Ինժեները՝ Մեղմացնող գործողությունների համապատասխանության և մոնիտորինգի ստուգայցերի վերաբերյալ ցուցակների լրացման միջոցով (ձևաչափը տրամադրվելու է):

### Ը 3. Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)

427. Հաշվի առնելով, որ Կապալառուն իր պայմանագրով առաջադրված պայմանների համաձայն պետք է հստակեցնի իր շինարարական պրակտիկան, աշխատանքային մեթոդները, ժամանակացույցը և տեղամասի հասանելիությունը՝ փոփոխված և ձևափոխված պայմանները լավագույնս արտացոլելու համար, վերջինիցս պահանջվում է լրացնել և թարմացնել ԲԿՊ-ն տեղանքին և գործունեությանը բնորոշ ավելի մանրամասն մեղմացնող միջոցառումներով և պատրաստել տեղամասային բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ) աշխատանքների մեկնարկի ամսաթվից 28 օր առաջ:

428. ՇԲԿՊ-ը ներառելու է Գլուխ Ը-ում թվարկված աշխատանքների և ենթապլանների նկարագիրը, որը կդիտարկվի նաև որպես Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս: ՇԲԿՊ-ի ընդհանուր նկարագիրը բերված է ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ում:

429. ՇԲԿՊ-ը ներառելու է հետևյալը՝

- 1) Ծրագրի իրականացման ամբողջ տարածքը պայմանականորեն բաժանել Գլուխ Գ-ում նշված երեք հատվածների.

ա. Արշակունյացի հատված, որը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում՝ սկսած Արշակունյաց պողոտայից և ձգվում է մոտ 170մ՝ հասնելով Հրազդան գետի կամրջին:

բ. Հրազդան գետի կամրջի հատվածը սկսվում է ՊԿ 1 + 70-ից ՊԿ կմ 4 + 22, ուստի կամրջի երկարությունը 252 մ է:

գ. Իսակովի հատված, որը գտնվում է Կենտրոն և մասամբ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում՝ սկսվելով ՊԿ 4+22-ից:

- 2) Առանձնացնում է յուրաքանչյուր հատվածի համար տեղանքին բնորոշ ազդեցությունները ու ռիսկերը,
- 3) Նկարագրում է յուրաքանչյուր մեղմացնող միջոցառումը տեխնիկական մանրամասներով, ներառյալ՝ ազդեցության տեսակը, որին վերաբերում է, և պայմանները, որոնց դեպքում պահանջվում է,
- 4) Ծրագրի համար պահանջվող մեղմացնող ցանկացած այլ ենթապլանի համար պարտավորություններ է տրամադրում,
- 5) Մեղմացնող միջոցառումների իրականացման համար սահմանում է դերեր և պարտականություններ:

### Ը.4 Իրականացման միջոցառումներ

430. Իրականացում. ՇՄՆՈԻ/ԲԿՊ-ի իրականացման ժամանակացույցը և պատասխանատու մարմինները ներկայացված են Հավելված Բ-ում:

### Ը5. Հաշվետվության ներկայացում

431. Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության մասին պարբերաբար զեկուցվում է ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում՝ Կապալառու, Ինժեներ, Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ, Երևանի քաղաքապետարան և ԱԶԲ:

432. Շրջակա միջավայրի վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները Կապալառուի կողմից ներկայացվելու են Ինժեներին՝

(i) *Շտկող միջոցառումների շարքական հաշվետվություն (ՇՄՀ)*. Շտկող միջոցառումները և դրանց կարգավիճակը փաստաթղթավորվելու է Ինժեների կողմից

մշակված և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի կողմից հաստատված ձևանմուշում: Շտկող միջոցառումների շաբաթական հաշվետվությունը ներառելու է բնապահպանական գործունեության ցուցանիշը և մեղմացնող միջոցառումների արդյունավետության գնահատումը:

(ii) *Բնապահպանական պարտավորությունների կատարման ամսական հաշվետվություն:* Բնապահպանական ամփոփ հաշվետվությունը ներկայացվելու է որպես Կապալառուի ամսական առաջընթացի զեկույցի մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական և բացատրեն շեղումների, անհամապատասխանության և առաջացած խնդիրների մասին:

433. Հաշվետվությունները համապարփակ կերպով ներկայացնելու են ԲԿՊ-ի և ՇԲԿՊ-ի մեղմացնող միջոցառումների իրականացման բոլոր համապատասխան ասպեկտների (օրինակ՝ մեղմացնող միջոցառումների տեսակը, նպատակը, առարկան, տեղանքը/գտնվելու վայրը, ընդգրկված նյութերն ու գործողությունները, այլ մանրամասներ) համապատասխանությունը՝ բնապահպանական ցանկացած կանոնակարգերին և պահանջներին, ինչպիսիք են՝ վերապատրաստում/կողմնորոշում, թույլտվություններ, լիցենզիա և այլն, որոնք ձեռնարկվել են հաշվետվությամբ սահմանված ժամանակահատվածում: Հաշվետվությունների ամփոփ նկարագիրը ներառում է հետևյալ չափորոշիչները և համաձայնեցված է Ինժեների և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի հետ.

- 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
- 2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
  - 1) Ծրագրի աշխատանքները հաշվետվության ընթացիկ ժամանակաշրջանի համար
  - 2) Բնապահպանական երաշխիքների անձնակազմի հաշվետու ժամանակաշրջան
  - 3) Ծրագրի նախագծից ցանկացած փոփոխության նկարագրություն
- 3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
  - 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված վերապատրաստումներ,
  - 2) Հաշվետու ամսվա ընթացքում ստացված հաստատումներ/թույլտվություններ,
  - 3) Նյութական ռեսուրսների օգտագործում,
  - 4) Թափոնների կառավարում,
  - 5) Բուսահողի կառավարում,
  - 6) Ճամբարների և պահեստների կառավարում,
  - 7) Անկանխատեսելի բնապահպանական ազդեցություններ կամ ռիսկեր,
  - 8) Առողջություն և անվտանգություն
- 4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
  - 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագիր,
  - 2) Տեղամասային այցեր և նշանակալի բացահայտումներ,
  - 3) Անհամապատասխանության վերաբերյալ ծանուցումներ և շտկող միջոցառումներ:
- 5 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ
  - 1) Հանրային հաղորդակցություն և հանդիպումներ,
  - 2) Բողոքներ և/կամ առաջարկություններ
- 6 ՇԲԿՊ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

7 ՀԱԶՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծրագրի հաշվետու ժամանակաշրջանում արված լուսանկարներ

434. Պատահարների (անձնակազմում գրանցված մահ և/կամ վնասվածքներ, հրդեհ, պայթյուն, նավթի արտահոսք և բիտումի արտահոսք և այլն) դեպքում Կապալառուն պետք է անհապաղ տեղեկացնի Ինժեներին: Սկզբնական ծանուցումը կարող է լինել բանավոր, որին հաջորդելու է պատահարի կամ միջադեպի մասին գրավոր զեկույցը դեպքից կամ պատահարից հետո՝ 24 ժամվա ընթացքում:

435. Ինժեները որպես ամսական հաշվետվության մաս Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ին է ներկայացնում Բնապահպանական երաշխիքների ամսական հաշվետվությունը, ինչպես նաև փուլային հաշվետվություններ:

436. Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ը ԱԶԲ-ին ներկայացնելու է բնապահպանական երաշխիքների կիսամյակային հաշվետվություն: Վերջինս տեղադրվելու է ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԱՐԱԳ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԱԲԳ) ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻՎ

Ցուցումներ.

(i) Ծրագրի թիմը ստուգաթերթիկը լրացնում է ծրագրի բնապահպանական դասակարգումը հիմնավորելու համար: Այն կցվելու է բնապահպանական դասակարգման ձևաթղթին և ներկայացվելու է Բնապահպանության և անվտանգության բաժին (ՇԱՄՊ)՝ տնօրենի կողմից հավանություն և Նորմատիվ վերահսկման բաժնի պետի կողմից հաստատում ստանալու համար:

(ii) Սույն ստուգաթերթիկը կենտրոնացած է բնապահպանական խնդիրների և մտահոգությունների վրա: Համոզվելու համար, որ սոցիալական առանձնահատկությունները պատշաճ կերպով հաշվի են առնվել, տե՛ս ԱԶԲ-ի (ա) հարկադիր տարաբնակեցման և բնիկ ժողովուրդների ստուգաթերթիկը, (բ) աղքատության նվազեցման ձեռնարկը, (գ) խորհրդատվության և մասնակցության աշխատողների ուղեցույցը և (դ) գենդերային ստուգաթերթերը:

(iii) Պատասխանի՛ր հարցերին՝ համարելով, որ «չեն կիրառվելու մեղմացնող միջոցառումներ»: Նպատակն է որոշել հնարավոր ազդեցությունները: Ակնկալվող ցանկացած մեղմացնող միջոցառում քննարկելիս՝ օտագործի՛ր «մեկնաբանություններ» բաժինը:

Հայաստան / Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր  
Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցում

Հատված/Բաժին՝ Ճանապարհներ և մայրուղիներ

Կատարող / ամսաթիվ՝ Էդիտա Վարդգեսյան/ 2020 թվականի հուլիսի 15, օգոստոսի 8 և օգոստոսի 12



Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<b>Ա. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐ</b> Արդյո՞ք ծրագրի տարածքը...			
<ul style="list-style-type: none"> <li>Խիտ բնակեցված է</li> </ul>	X մասամբ		<p>Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի սահմաններում: Ծրագրի տարածքի որոշ մասերում կան բազմաթիվ բնակելի տներ, մի շարք բազմաբնակարան շենքեր և Հրազդան գետն ու Արշակունյաց պողոտան իրար կապող ճանապարհից մոտ 4.7-8.0մ հեռավորության վրա առևտրային ձեռնարկություններ: Ծրագրի մնացած տարածքում ծրագիծը գտնվում է կանաչապատ գոտում:</p> <p>Խիտ բնակեցված տարածքում աշխատելու համար ԲԿՊ-ում պետք է նախատեսվեն ազդեցությունը մեղմացնող հատուկ միջոցառումներ:</p>
<ul style="list-style-type: none"> <li>Հարուստ է զարգացման ծրագրերով</li> </ul>		X	Ծրագրի ազդեցության գոտում, ամենայն հավանականությամբ, այլ՝ միաժամանակ իրականացվող ծրագրեր/գործողություններ չեն նախատեսվում:
<ul style="list-style-type: none"> <li>Տեղակայված է բնապահպանական տեսանկյունից զգայուն հետևյալ տարածքներին կից կամ ներսում</li> </ul>			
<ul style="list-style-type: none"> <li>Մշակութային ժառանգություն համարվող տարածքեր</li> </ul>	X		<p>Ճանապարհի ծրագծի երկայնքով չկան պետության կողմից գրանցված մշակութային ժառանգություն համարվող տարածքներ:</p> <p>Պետության կողմից գրանցված մշակութային ժառանգություն համարվող Պանթեոնը գտնվում է օտարման գոտուց մոտ 80մ հեռավորության վրա:</p> <p>Կաշվի գործարանի բակում է գտնվում պետության կողմից գրանցված քանդակ «Կաշեգործ»-ը (հեղինակ՝ Ս. Բաղդասարյան):</p> <p>Հնագիտական տեսանկյունից զգայուն տարածքը (Նորագյուղի անձավներ) գտնվում է ծրագրի իրականացման տարածքից մոտ 80մ հեռավորության վրա:</p> <p>Բոլոր վերոհիշյալ տարածքները նոր ճանապարհի կառուցման հետևանքով ազդեցություն չեն կրի: Վտանգի հավանականությունն աննշան է:</p> <p>Այնուամենայնիվ, վերոհիշյալ տարածքները կսահմանվեն որպես «արժեքավոր զգայուն ընկալիչներ» և կպաշտպանվեն ԲԿՊ-ով նախատեսված հատուկ միջոցներով: Շինարարության հետ կապված երթևեկության համար հասանելիությունը կվերահսկվի:</p>
<ul style="list-style-type: none"> <li>Պահպանվող տարածք</li> </ul>		X	Նոր ծրագծի պատճառով բնության և/կամ մշակույթի պահպանվող տարածքներ ներխուժում չի ակնկալվում:
<ul style="list-style-type: none"> <li>Ճահճուտ</li> </ul>		X	Ռամսարի կոնվենցիայում գրանցված

Նախնական գնահատման հայտ

			տարածքներ չկան:
• Մանգրենի		X	Հայաստանում կիրառելի չէ:
• Գետաբերան		X	Ազդեցության հանգեցնող ծրագրային ոչ մի գործողություն:
• Պահպանվող տարածքի բուֆերային գոտի		X	Բնության և/կամ մշակույթի պահպանվող տարածքի՝ պետության կողմից գրանցված բուֆերային գոտի առկա չէ:  Մյուս կողմից, ճանապարհի ծրագիծը ներխուժելու է պետության կողմից մշակութային արժեքների ցանկում գրանցված Պանթեոնին կից գտնվող Կոմիտասի անվան զբոսայգու տարածք, քանդվելու է ցանկապատը: Խնամքով ապամոնտաժման և ապամոնտաժված մասերի պահպանման ուղղությամբ պետք է ձեռնարկվեն հատուկ միջոցառումներ: Պատը պետք է վերականգնվի ինչպես պահանջում է ԵԲ-ը:
• Կենսաբազմազանության պահպանության համար նախատեսված հատուկ տարածք		X	Բնության հատուկ պահպանվող տարածք առկա չէ:  Կենսաբազմազանության առումով զգայունությունը որոշվելու է բուսական և կենդանական աշխարհի գծով մասնագետի հետազոտության շրջանակներում: Նախնական հետազոտության արդյունքում բարձրարժեք էկոլոգիա չի հայտնաբերվել:
• Խորշ		X	Ծրագրի համար չի ակնկալվում:
<b>Բ. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
Արդյոք ք ծրագիրը կհանգեցնի...			
▪ Կոյուղու և պինդ թափոնների մաքրման համակարգերի և այլ քաղաքային ծառայությունների կայունության վրա ազդեցության:		X	Հնարավոր է բուսահողի հանույթ և այլ շինարարական աղբի առաջացում, հաղորդողիների , այդ թվում՝ հեղեղաջրերի և կեղտաջրերի մաքրման համակարգերի տեղափոխում, սակայն սա ազդեցություն չի թողնի վերջիններիս կայունության վրա, քանի որ  <ul style="list-style-type: none"> <li>✓ ակնկալվում են թափոնների ոչ մեծ ծավալներ,</li> <li>✓ շինարարության ընթացքում առաջացած ամբողջ թափոնը պետք է լցվի ԵԲ-ի կողմից մատնանշված աղբահորերում կամ, տեխնիկական հնարավորության դեպքում, կրկին օգտագործվի</li> <li>✓ կսկսվի աղբի նվազեցման ծրագիր</li> <li>✓ պետք է նվազեցվեն գոյություն ունեցող ջրահեռացման համակարգերին միացումները</li> </ul>
▪ քաղաքային բնակչության կտրուկ աճի, առևտրային և ձեռնարկատիրական գործունեության, թափոնների ավելացման պատճառով շրջակա միջավայրի պայմանների այնպիսի վատթարացում, որ և՛ մարդածին, և՛		X	Հնարավոր է ճանապարհաշինարարական աշխատանքներին հատուկ շրջակա միջավայրի պայմանների որոշակի ձևափոխում, սակայն, հաշվի առնելով ծրագրի սահմանափակ գոտին և աշխատանքների բնույթը, դրանք չեն հանգեցնի մարդածին և բնական

Նախնական գնահատման հայտ

<p>բնական համակարգերը գերծանրաբեռնվում են, իսկ դրանց կառավարման կարողությունները սպառվում</p>			<p>համակարգերի գերծանրաբեռնվածության ու այս համակարգերը կառավարելու կարողությունների սպառման: Հարկ եղած դեպքում կստեղծվեն պահուստային համակարգեր:</p>
<p>▪ հողի քայքայման և էկոհամակարգերի վատթարացման (օրինակ՝ ճահճուտների և վայրի հողերի, առափնյա գոտիների, ջրաբաժանքների և անտառների կորուստ)</p>	<p>X</p>		<p>Հավանական վտանգները կառավարելի են:</p> <p>Ճանապարհի մեծ մասն անցնում է քաղաքաշինության հետևանքով արդեն իսկ ձևափոխության ենթարկված տարածքով:</p> <p>Լիցքերի և կտրվածքների հետևանքով կլինեն լանդշաֆտի միայն որոշ փոփոխություններ: Հրագրան գետի հունին և կիրճի էկոհամակարգերին պատճառով ազդեցությունը կառավարվելու է ըստ ԲԿՊ-ի: Հատված ծառերի և թփերի փոխարեն տնկվելու են նորերը:</p>
<p>▪ տեղահանման կամ մարդկանց ոչ կամավոր տարաբնակեցման</p>	<p>X</p>		<p>Ազդեցության են ենթարկվելու և՛ հողատարածքները, և՛ շինությունները: Նախքան ծրագիրը սկսելը պետք է մշակվի և իրականացվի ՀՕՏԾ:</p>
<p>▪ աղբատների, կանանց, երեխաների, տեղաբնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցությունների</p>		<p>X</p>	<p>Բնակչության խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցության վտանգ չկա:</p> <p>Տեղի բնակչությանը հասցված ցանկացած վնաս կփոխհատուցվի անկախ խոցելիության մակարդակից:</p> <p>Այնուամենայնիվ, կորոշվեն խոցելի խմբերը, և կապալառուն պատասխանատվություն կկրի նրանց կարիքների՝ հնարավորին չափ բավարարելու համար:</p>
<p>▪ մշակութային գույքի վնասման, մշակութային ժառանգության կորստի և զբոսաշրջային եկամուտների նվազման</p>	<p>X</p>		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Մշակութային ժառանգություն ներկայացնող Պանթեոնի մուտքերից մեկը և Կոմիտասի անվան պետական զբոսայգու սպասարկումը կարող է ժամանակավորապես սահմանափակվել: Հանրության անվտանգությունը պետք է ապահովվի ԲԿՊ-ով նախատեսված միջոցառումների իրականացմամբ:</p> <p>Այս երկու մշակութային օբյեկտները չեն տուժի ճանապարհի ծրագրի պատճառով: Այնուամենայնիվ, դրանք կհամարվեն արժեքավոր զգայուն ընկալիչներ և կպաշտպանվեն ԲԿՊ-ով նախատեսված հատուկ միջոցառումների իրականացմամբ:</p>
<p>▪ ապօրինի բնակիչների և ցածր եկամուտ ունեցող խմբերի կողմից ցածրավայրերի, ողողադաշտերի և գառիվեր սարալանջերի օկուպացիայի, աղտոտիչ արդյունաբերությունների</p>		<p>X</p>	<p>Ծրագրի տարածքում չի ակնկալվում:</p>

Նախնական գնահատման հայտ

<p>պատճառով վերջիններիս ավելացող առողջապահական վտանգների և ռիսկերի ենթարկման</p>			
<p>▪ ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրների (օրինակ՝ հասանելի ջրամատակարարման ռեսուրսների սպառում/վատթարացում, մակերեսային և ստորգետնյա ջրերի որակի վատթարացում և ջրընդունիչների աղտոտում)</p>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Չի ակնկալվում մակերեսային ջրային մարմինների որևէ մշտական փոփոխություն:</p> <p>Հրագրան գետի հունը չի փոխվի և հիդրոլոգիան լուրջ ազդեցության չի ենթարկվի:</p> <p>Հնարավոր է ոռոգման ջրանցքի հունը ժամանակավոր ազդեցության ենթարկվի: Մեղմացնող միջոցառումները կկարգավորեն ազդեցությունը:</p>
<p>▪ քաղաքային արտանետումների պատճառով օդի աղտոտման</p>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Ճանապարհաշինարարական աշխատանքներին հատուկ քարջարդման, կտրման և լիցքի աշխատանքների, ասֆալտի մշակումից առաջացած քիմիական նյութերի պատճառով հասցվող ամենօրյա ժամանակավոր ազդեցություն: Ազդեցությունը վերահսկելու նպատակով ԲԿՊ-ում նախատեսվում են կանոնավոր մեղմացնող միջոցառումներ:</p> <p>Երթևեկության գերբեռնվածության նվազման արդյունքում Երևանի այլ վայրերում տարածաշրջանային օդի որակի բարելավում է ակնկալվում:</p> <p>Տեղի օդի աղտոտման վտանգը կմեղմացվի ճանապարհի օտարման գոտու կանաչապատման միջոցով:</p>
<p>▪ ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգների պատճառով մասնագիտական առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերի և խոցելիության</p>	X		<p>Մասնագիտական առողջությանը և անվտանգությանը պատճառող հավանական ռիսկերը կառավարելի են:</p> <p>ԲԿՊ-ում նախատեսվելու են առողջության և անվտանգության մեղմացնող միջոցառումներ:</p>
<p>▪ անձրևային սեզոնին իրականացվող հանույթի պատճառով ճանապարհի փակման կամ ժամանակավոր հեղեղման</p>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Տեղական ճանապարհային ցանցին հասցվող անշրջելի ազդեցություն չի ակնկալվում:</p> <p>Ժամանակավոր ազդեցությունները կկարգավորվեն Երթևեկության կառավարման պլանով նախատեսված ճանապարհային անվտանգության ապահովմանն ուղղված կանոնավոր մեղմացնող միջոցառումների իրականացմամբ:</p>

Նախնական գնահատման հայտ

			Կամրջի թռիչքային կառուցվածքի, պատերի, ստորգետնյա անցումների և խրամուղիների համար իրականացված հանույթի հեղեղում կարող է տեղի ունենալ աշխատանքների ընթացքում, սակայն մրցույթի հաղթող կապալառուն պատասխանատու է լինելու շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասի սպասարկման համար:
▪ շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի և փոշու առաջացման	X		Շինարարական աշխատանքներին բնորոշ ամենօրյա, ժամանակավոր, կառավարելի ազդեցություն:  Ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվելու են հատուկ մեղմացնող միջոցառումներ:
▪ շինարարական նյութի տեղափոխման և թափոնների պատճառով երթևեկության խանգարումների	X		Հավանական ազդեցությունները կառավարելի են:  Ժամանակավոր ազդեցության մեղմացման նպատակով Երթևեկության կառավարման պլանում կնախատեսվեն ճանապարհի անվտանգության ապահովմանն ուղղված մեղմացնող միջոցառումներ:
▪ շինարարության հետևանքով տիղմի ժամանակավոր արտահոսքի	X		Հավանական ազդեցությունները կառավարելի են:  Ճանապարհաշինարարական աշխատանքներին բնորոշ ժամանակավոր ազդեցությունները, այդ թվում՝ նստվածքազոյացման բարձր ռիսկը կկարգավորվի ԲԿՊ-ով նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումների միջոցով:
▪ մոտակա, տնային տնտեսությունների, արտադրության պատճառով առաջացած աղտոտման, ջերմային կարգափոխման և ծխագոյացման հետևանքով հանրության առողջությանը սպառնացող վտանգների	X		Հավանական ազդեցությունները կառավարելի են:  Ճանապարհաշինարարական աշխատանքներին բնորոշ ամենօրյա ժամանակավոր ազդեցություն: Կանոնավոր մեղմացնող միջոցները կկարգավորեն հավանական աղտոտումը:  Ցանկացած ջերմային կարգափոխում և/կամ ծխագոյացում հավանական չէ:  Նոր կամրջի թռիչքային կառուցվածքները կարող են մասամբ փակել կամ նվազեցնել մոտակա բնակելի տներ հասնող արևի լույսը: Կիրականացվի հաշվարկ և վերլուծություն, ՇՄՆՈՒ հաշվետվության մեջ կսահմանվի ազդեցության մակարդակը:
▪ ջրի սպառման և/կամ որակի վատթարացման	X		Հավանական ազդեցությունները կառավարելի են:  Ճանապարհաշինարարական

Նախնական գնահատման հայտ

			<p>աշխատանքներին բնորոշ ամենօրյա ժամանակավոր ազդեցություն: ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցները կկառավարեն աղտոտումը:</p> <p>Ճանապարհը շահագործող մեքենաների յուղի, քսանյութերի և վառելանյութի արտահոսքի պատճառով ջրի աղտոտման վտանգը կկառավարվի հատուկ մշակված մեղմացնող միջոցառումների, օրինակ՝ կամրջի ջրահեռացման համակարգի վրա տեղադրված յուղի գատիչի միջոցով:</p>
<ul style="list-style-type: none"> <li>գրունտային ջրերի գերածախսի պատճառով գրունտի նստեցման, գրունտային ջրի ցածր մակարդակի և աղակալման</li> </ul>		X	<p>Երկրաբանական առանձնահատկությունների պատճառով ծրագրի իրականացման տարածքում ռիսկի հավանականությունն աննշան է:</p>
<ul style="list-style-type: none"> <li>ոչ պատշաճ աղբահեռացման պատճառով մակերեսային և գրունտային ջրերի աղտոտման</li> </ul>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Ճանապարհաշինարարական աշխատանքներին բնորոշ ամենօրյա, ժամանակավոր ազդեցություն, որը կառավարելի է ԲԿՊ-ով, ինչպես նաև Թափոնների և նյութերի կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումների կանոնավոր իրականացման միջոցով:</p>
<ul style="list-style-type: none"> <li>գրավչության կորստին, ձկնաբուծարանների և ջրային ռեսուրսների սպառմանը և առողջապահական խնդիրներին հանգեցնող կեղտաջրերի ջրընդունիչների աղտոտման</li> </ul>		X	<p>Ծրագրի ազդեցության գոտում չկան կեղտաջրերի ջրընդունիչներ:</p> <p>Ձկնաբուծական ռեսուրսների կորստի առումով Հրազդան գետի վրա ազդեցության վտանգի հավանականությունն աննշան է:</p>
<ul style="list-style-type: none"> <li>ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում բնակչության զգալի ներհոսք, սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների վրա բեռի ավելացմանը (ինչպես օրինակ՝ ջրամատակարարում և կոյուղու համակարգ) հանգեցնող բնակչության զգալի ներհոսքի</li> </ul>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Սահմանափակ շինարարական աշխատանքների պատճառով ծրագրի իրականացման ընթացքում բնակչության զգալի հոսք չի կանխատեսվում:</p> <p>Շահագործման ընթացքում բնակչության աճ հնարավոր է: Տարածքում քաղաքաշինության հետագա զարգացման ակնկալիքով ճանապարհի օտարման գոտում կտեղադրվի նոր կոյուղագիծ:</p>
<ul style="list-style-type: none"> <li>այլ մարզերից կամ երկրներից աշխատողներ վարձելու դեպքում սոցիալական ընդհարումների</li> </ul>		X	<p>Ռիսկի հավանականությունն աննշան է:</p> <p>Կապալառուն պատասխանատու է (մրույթային փաստաթղթերի համաձայն) տեղի աշխատուժին նախապատվություն տալու, ինչպես նաև լրիվ դրույքով սոցիալական աշխատող վարձելու համար, որպեսզի վերջինս լուծի առաջացած բախումները, եթե կան այդպիսիք:</p>
<ul style="list-style-type: none"> <li>շինարարության և շահագործման ընթացքում նյութերի, ինչպես</li> </ul>	X		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p>

Նախնական գնահատման հայտ

<p>օրինակ՝ պայթուցիկների, վառելանյութի կամ այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման և/կամ ոչնչացման հետևանքով համայնքին սպառնացող առողջապահական վտանգների</p>			<p>Ճանապարհաշինարարական աշխատանքներին բնորոշ ամենօրյա ժամանակավոր ազդեցությունը կառավարելի է ԲԿՊ-ով, ինչպես նաև վտանգավոր նյութերի կառավարման մասին Թափոնների և նյութերի կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցներով:</p>
<p>▪ ծրագրի իրականացման, շահագործման և դադարեցման ընթացքում և՛ պատահականորեն հասցված, և՛ բնական վտանգների պատճառով համայնքի անվտանգությանը սպառնացող վտանգներ, հատկապես այն վայրերում, որտեղ ծրագրի կոնստրուկտիվ տարրերը կամ բաղադրիչները հասանելի են ազդակիր համայնքի անդամներին կամ այնտեղ, որտեղ անվտանգությունը կարող է համայնքի կարող է վնաս պատճառել</p>	<p>X</p>		<p>Հավանական ազդեցությունները կառավարելի են:</p> <p>Շինարարության ընթացքում տեղի ազդակիր բնակիչների հասանելիությունը կոնստրուկցիոն տարրերին և աշխատանքային տեղամասին պետք է սահմանափակվի ԲԿՊ-ով նախատեսված անվտանգության միջոցառումների իրականացմամբ:</p> <p>Ակնկալվում է, որ ճանապարհի մակերեսի բարելավված ծրագիծը, ազդանշանները և կառավարման համակարգերը կնվազեցնեն ճանապարհի շահագործման ընթացքում պատահարների ռիսկը:</p>

**Կլիմայական ռիսկերի նախնական գնահատման ստուգաթերթիկ**

**Երկիր/Ծրագրի անվանումը՝** Հայաստան / Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր  
 Իսսկով - Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում

**Բաժին՝ քաղաքաշինություն**  
**Ենթաբաժին՝**  
**Բաժին/Վարչություն՝ ԿԱԱՎ**

Նախնական գնահատման հարցեր		Գնահատակ ան	Մեկնաբանություններ <sup>15</sup>
<p><b>Ծրագրի գտնվելու վայրը և նախագիծը</b></p>	<p>Արդյո՞ք ծրագրի գտնվելու վայրը և/կամ ծրագիծը (կամ նրա բաղադրիչները) կարող են ազդեցության կրել կլիմայական պայմանների, այդ թվում՝ սուր եղանակային դրսևորումների, օրինակ՝ հեղեղների, երաշտի, փոթորկի, սողանքների պատճառով:</p>	<p>0</p>	<p>Ստանդարտների համաձայն որոշակի պարբերաշրջանի համար նախագծվելու է ճանապարհի, ուղեանցի/փոխհատման և կամրջի հեղեղաջրերի ջրահեռացման համակարգը:</p> <p>Հրազդան գետի հոսքը չի ազդի կամրջի հիդրավլիկ դիմադրողականության վրա:</p> <p>Սուր եղանակային դրսևորումները, ինչպիսիք են՝ հեղեղները, երաշտը, փոթորիկները, սողանքները հավանական չեն ծրագրի տարածքում:</p>

<sup>15</sup> Հնարավորության դեպքում տվյալներ տրամադրել ծրագրի բաղադրիչների՝ կլիմայական պայմանների նկատմամբ զգայունության մասին: Օրինակ՝ այն մասին, թե ինչպես են դիտարկվել կլիմայական պարամետրերը ենթակառուցվածքների բաղադրիչների նախագծային ստանդարտներում, ինչպես կարող են առանցքային կլիմայական պարամետրերը և ծովի մակարդակը ազդել ծրագրի տեղադրիչ/ծրագծի, շինարարական նյութի ընտրության և/կամ ժամանակացույցի կազմման, ծրագրի արդյունքների կատարման և/կամ սպասարկման արժեքի/ժամանակացույցի կազմման վրա:

Նախնական գնահատման հայտ

	Արդյո՞ք ծրագրի նախագծում (օրինակ՝ կամուրջների համար իրականացվող մաքրում) պետք է դիտարկվեն որևիցե հիդրոօդերևութաբանական պարամետրեր (օրինակ՝ ծովի մակարդակ, գետի առավելագույն հոսք, ջրի հուսալի մակարդակ, քամու առավելագույն արագություն և այլն)	1	Կամրջի և ջրթող խողովակների հիդրավիկ ուսումնասիրումը կլիմայական սահմանափակումներ կսահմանի՝ հիմք ընդունելով պատմականորեն գրանցված տվյալները: Հրագրան գետի հոսքը և առավելագույն վարարումը չի ազդի կամրջի հիդրավիկ կարողությունների վրա:
<b>Նյութեր և սպասարկում</b>	Արդյո՞ք եղանակը, ներկա և հետագա հավանական կլիմայական պայմանները (օրինակ՝ խոնավության գերակշիռ մակարդակը, շոգ՝ ամառային և ցուրտ՝ ձմեռային օրերի միջև ջերմաստիճանային հակադրությունը, քամին և խոնավությունը), հիդրոօդերևութաբանական պարամետրերը կարող են ազդել ծրագրի ներդրումների արդյունքների հետ համեմատական հարթության վրա դիտարկելիս, կատարվելիք ընտրության վրա (օրինակ՝ շինարարական նյութ):	0	Փոխհատման/ուղեանցի և կամրջի կառուցման համար անհրաժեշտ շինարարական նյութը պետք է համապատասխանի այն ստանդարտներին, որոնք ընդգրկում են եղանակին առնչվող պարամետրեր:
	Արդյո՞ք եղանակը, ներկա և հետագա հավանական եղանակային պայմանները և դրանց հետ կապված սուր եղանակային դրսևորումները ազդեցություն կունենան տեխնիկական սպասարկման (ժամանակացույցի կազմում և արժեք) կամ ծրագրի արդյունքների վրա:	0	Տեխնիկական սպասարկման կանոնավոր միջոցառումները հաշվի են առնում ներկա և հետագա հավանական եղանակային և կլիմայական պայմանները:  Չեն ակնկալվում սուր եղանակային դրսևորումներ:
<b>Ծրագրի արդյունքների կատարում</b>	Արդյո՞ք եղանակային/կլիմայական պայմանները և դրանց հետ կապված սուր եղանակային դրսևորումները կազդեն ծրագրի արդյունքների կատարման վրա (օրինակ՝ փոշու տարեկան արտադրություն) (օրինակ՝ հիդրոէներգիա արտադրող սարքավորումներ) իրենց նախագծային կյանքի ընթացքում:	0	Չեն ակնկալվում: Եղանակային/կլիմայական պայմանները դիտարկվել են նախագծում ճանապարհի և կառուցվածքների շահագործման ամբողջ ընթացքի համար:  Սուր դրսևորումներ չեն կանխատեսվում:

Պատասխանների տարբերակները և համապատասխան միավորները ներկայացված են ստորև՝

Պատասխան	Միավոր
Ոչ հավանական	0
Հավանական	1
Շատ հավանական	2

Պատասխաններին տրված 0 միավորը համարվում է ցածր ռիսկեր պարունակող ծրագիր: 1-4 միավորի դեպքում, երբ պատասխաններից և ոչ մեկին չի տրվել 2 միավոր, ծրագիրը համարվում է միջին ռիսկեր պարունակող: Ընդհանուր 5 կամ ավելի բարձր միավորը (որը ներառում է բոլոր պատասխաններին տրված 1 միավոր) կամ պատասխաններից որևէ մեկին 2 միավոր դասակարգվում է որպես բարձր ռիսկեր պարունակող ծրագիր:

Նախնական գնահատման արդյունքները (Ցածր, միջին, բարձր): \_\_\_\_\_ Միջին \_\_\_\_\_

Այլ մեկնաբանություններ՝ \_\_\_\_\_

Կատարող՝ \_\_\_\_\_ ՄՆԽ \_\_\_\_\_





**ՀԱՎԵԼՎԱԾ Բ: Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակի աղյուսակ**

Առաջադրանքներ/կատարում	Կապալառու	Վերահսկողության խորհրդատու (Ինժեներ)	ԵԿՆ ԾԻԳ	ԵՔ/ այլ պետական մարմիններ	ԱԶԲ
Կարողությունների ստեղծում  Ա. Բնապահպանական և սոցիալական անվտանգության երաշխիքների անձնակազմի նշանակում	Բնապահպանության, առողջության և անվտանգության գծով ազգային մասնագետ (լրիվ դրույք) Ազգային սոցիալական հարցերով մասնագետ (լրիվ դրույք) Յուրաքանչյուր տեղամասի բնապահպանության, ԱևԱ գծով պատասխանատու (լրիվ դրույք)	Միջազգային և ազգային բնապահպանության, աշխատանքային առողջության և անվտանգության գծով մասնագետ (մասնակի զբաղվածությամբ) Սոցիալական հարցերի ազգային մասնագետ (մասնակի զբաղվածությամբ)	Ազգային բնապահպանական հարցերով պատասխանատու  Ազգային տարաբնակեցման հարցերով մասնագետ (լրիվ դրույք)	ԵԿՆ ԾԻԳ-ին փոխանցված	Բնապահպանական հարցերով միջազգային խորհրդատու Բնապահպանական հարցերով ազգային խորհրդատու
Կարողությունների ստեղծում  Բ. Վերապատրաստման և կողմնորոշման դասընթացներ	Անվտանգության կողմնորոշման պլանի համաձայն՝ բնապահպանական, առողջապահական և անվտանգության թեմաներով վերապատրաստումներ է իրականացնում (Գլուխ--- Հավելված---)	ԱԶԲ անվտանգության և ազգային օրենսդրական պահանջների մասին վերապատրաստման դասընթացներ	Մասնակցում է վերապատրաստումներին	Մասնակցում է վերապատրաստումներին	Մասնակցում է վերապատրաստումներին
Հանրային քննարկումներ և հաղորդակցություն	ԱԱ-րի և այլ շահագրգիռ կողմերի հետ նախաշինարարական փուլում հանդիպումներ (տե՛ս ---) ԲԼՄ-ի հաստատում	Հանրային լսումներ և քննարկումներ ՇՄԱԳ շրջանակներում ՀՀ օրենսդրական և ԱԶԲ ԱՔՀ-ի (2009) համաձայն՝	Մասնակցություն հանրային քննարկումներին և Կապալառուի նախաշինարարական	Հանրային քննարկումներին մասնակցություն	Հանրային քննարկումներին մասնակցություն Կայքէջում ՇՄՆՈԻ և կիսամյակային հաշվետվություններ

Նախնական գնահատման հայտ

			հանդիպումներին Կայքէջում ՇՄԱԳ և կիսամյակային հաշվետվություններ ի հրապարակում		ի հրապարակում
Լրացուցիչ հետազոտություններ	Նախաշինարարական փուլում կառույցների վրա թրթռումների ազդեցության ելակետային տվյալների հավաքագրման համալիր հետազոտություն և հաշվետվություն Նախաշինարարական փուլում ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն և հաշվետվություն Շինարարության ընթացքը խոչընդոտող ծառերի և թփերի հետազոտություն	Ստուգում է և հաստատում է Կապալառուի հաշվետվությունը՝ թրթռումների ելակետային հետազոտության մասին  Ստուգում է և հաստատում է Կապալառուի՝ ճանապարհի և գույքի վիճակի հետազոտության մասին հաշվետվությունը	Քննարկում և հաստատում	Կ/Չ	Քննարկում և հաստատում
Տեղամասային բնապահպանական կառավարման այլան	Կազմում և թարմացում	Ստուգում և հաստատում	Քննարկում և հաստատում	Չ/Կ	Քննարկում և հաստատում
ՇՄԱԳ/ԲԿՊ/ՇԲԿՊ- ի համաձայն մեղմացնող միջոցառումներ	Գլուխ Ը-ում ներկայացված մեղմացնող միջոցառումների ամենօրյա իրականացում Մեղմացնող միջոցառումների իրականացման ամենօրյա ինքնավերահսկում	Կապալառուի կողմից կատարման վերահսկում	Ստուգում	Ըստ անհրաժեշտության ստուգում	Առաքելության այցելությունների միջոցով աուդիտ
Տեղամասային այցելություններ	օրական	շաբաթական	ամսական	ըստ անհրաժեշտության	ըստ ԱԶԲ ժամանակացույցի

Նախնական գնահատման հայտ

<p>Շրջակա միջավայրի գործիքային մոնիտորինգ</p>	<p>Շինարարական աշխատանքները սկսելուց 21 օր առաջ օդի որակի, փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>), ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>), ջրի որակի, աղմուկի և թրթռումների մասին էլակետային տվյալների հավաքագրում:                  Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի մշակում:                  Ամիսը երկու անգամ փոշու, ջրի որակի, աղմուկի և թրթռումների ընթացիկ գործիքային չափագրումների իրականացում և զեկուցում:                  Տարեկան երկու անգամ ԹՎԺ-ի ընթացքում փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>), ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>), ջրի որակի, աղմուկի և թրթռման գործիքային չափագրումներ:</p>	<p>ՇՄԱԳ շրջանակներում օդի որակի, փոշու, (SO<sub>2</sub>), ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>), ջրի որակի, աղմուկի և թրթռումների մասին էլակետային տվյալների հավաքագրում:                  Կապալառուի՝ փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի ստուգում և պաշտոնական հաստատում:                   Ընթացիկ գործիքային չափագրումների վերահսկողություն և հաշվետվությունների ստուգում</p>	<p>Կապալառուի՝ փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի քննարկում և հաստատում:                  Մոնիտորինգի տվյալների հավաքագրում և գրանցում:</p>	<p>Չ/Կ</p>	<p>Կապալառուի՝ փոշու, ջրի, աղմուկի և թրթռման գործիքային մոնիտորինգի պլանի քննարկում և հաստատում:</p>
<p>Աշխատանքների կատարման մեթոդաբանություն</p>	<p>Աշխատանքների կատարման մեթոդաբանությունների, այդ թվում՝ բնապահպանության, աշխատանքային առողջության և ավտանգության/սոցիալական ազդեցության գնահատում և մեղմացնող ծրագրի մշակում</p>	<p>Կապալառուի կողմից ներկայացված մեթոդաբանությունների ստուգում և հաստատում</p>	<p>Քննարկում և հաստատում</p>	<p>Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում</p>	<p>Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում</p>
<p>Ճանապարհի օտարման գոտուց դուրս գտնվող տարածքի</p>	<p>Վերահսկողության խորհրդատուին (Ինժեներին) նման մտադրության մասին իրազեկում Տեղանքի կառավարման պլանի</p>	<p>Տեղամասային այցելություն՝ Կապալառուի կողմից մտադրվող</p>	<p>Քննարկում և հաստատում</p>	<p>Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում</p>	<p>Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում</p>

Նախնական գնահատման հայտ

գրադեցում	մշակում ՏԿՊ-ի համաձայն՝ ընթացակարգերի իրականացում	տարածքների բնապահպանական տեսանկյունից գնահատման համար ՏԿՊ-ի ստուգում և հաստատում			
ԲԼՄ	Գլուխ Գ-ում և Հավելվածում նկարագրված ընթացակարգերի համաձայն՝ ԲԼՄ-ի հաստատում Ամսական հաշվետվության մեջ ԲԼՄ-ի և բողոքների կարգավիճակի մասին հաշվետվություն:	ԲԼՄ-ի գրանցամատյանի, հետագա խնդիրների և ԱԱ-րի հետ քննարկումների վերահսկում Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող հարցերի՝ ԵԿՆ ԾԻԳ-ին փոխանցում	Կապալառուի կողմից տրված լուծումների կարգավիճակի վերահսկում: Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող խնդիրների լուծում կամ ԵԶ-ին փոխանցում	Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող խնդիրների լուծում	Տրված լուծումների վերահսկում
Հաշվետվողական ություն	Շաբաթական Ուղղիչ Գործողությունների Հաշվետվություն (ՈԻԳՀ) ՎԽ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունների/ մասնակի համապատասխանությունների և ուղղիչ միջոցառումներ ձեռնակելու պահանջների հիման վրա:  Ինժեների կողմից պահանջված ձևաչափով Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվություն (ԱՄՀ)՝ որպես ԱԱՀ մաս:	Կապալառուի՝ ՈւԳՀ շաբաթական և Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվությունների ստուգում և հաստատում  Կապալառուի՝ պատահարների/միջադ եպերի մասին հաշվետվության ստուգում  Ամսական	ԱԶԲ-ին ներկայացվելիք կիսամյակային հաշվետվություն ԵԿՆ ԾԻԳ-ի կայքէջում կիսամյակային հաշվետվության հրապարակում  ԱԶԲ-ին ներկայացվելիք հետշինարարական աուդիտորական հաշվետվություն  Ինժեների ամսական	Կ/Զ	ԱԶԲ-ի կայքէջում կիսամյակային հաշվետվության հրապարակում

Նախնական գնահատման հայտ

	<p>Փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային չափումների մասին հաշվետվություն որպես Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվության մաս</p> <p>Պատահարների/միջադեպերի մասին հաշվետվություն ՀԱՎԵԼՎԱԾ Ի-ում ներկայացված ձևաչափով</p> <p>ԹՎԺ-ի ընթացքում տարեկան երկու անգամ մոնիտորինգային հաշվետվություն</p>	<p>Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվություն պատրաստում՝ որպես ՎԽ-ի (Բնժեներ) ԱԱՀ մաս</p> <p>Ծրագրի շինարարական փուլի ավարտին ավարտական հաշվետվության պատրաստում:</p>	<p>և ավարտական հաշվետվություններ ի ստուգում</p>		
--	---	--	---	--	--

**ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծություն**

	Օգուտներ	“Զրոյական” կան “ոչինչ չանել”	«Երևաննախագիծ»	ՔԿԶՆԾ
1	Երթևեկության հոսքի բարելավում և քաղաքային ճանապարհների գերբեռնվածության նվազեցում	Ոչ	Այո	Այո
2	Հրագրան գետի կամուրջների երթևեկության բեռի թեթևացում	Ոչ	Այո	Այո
3	Տեղական ճանապարհային ցանցի անշրջելի խաթարումներից խուսափում	Այո	Ոչ  Փակվում են Կաշեգործների և Բունիայան փողոցները	Այո  Կաշեգործների և Բունիայան փողոցների մուտքը դեպի Արշակունյաց պողոտա ապահովված է
4	Գերբեռնվածության նվազեցման և երթևեկության բարելավված պայմանների շնորհիվ տեղանքի օդի որակի բարելավում	Ոչ	Այո	Այո
5	Տնտեսական գործոնների և կենսապայմանների բարելավում. քաղաքի կենտրոնից երթևեկության բեռանթափումը էականորեն նվազեցնում է բեռնա- և ուղևորափոխադրումների վրա ծախսվող ժամանակը	Ոչ	Այո	Այո
6	Լիցքի ծավալների կրճատման միջոցով շրջակա միջավայրի վրա	Կ/Չ	Ոչ  լիցքի ավելի մեծ	Այո  Մեծածավալ հոծ

Նախնական գնահատման հայտ

	ծանրաբեռնվածության թերևացում. հողի ֆիզիկական զբաղեցվածության, հատվող ծառերի թվի, քարալիցքի նյութի ծավալի նվազեցում		ծավալ	լիցքեր փոխարինվում են կամրջի թռիչքներով
7	Բնակելի տարածքներ արևի լույսի ներթափանցմանը խանգարող օբյեկտներից խուսափում	Կ /Զ	Ոչ  հենապատերը փակում են արևի լույսը	Այո/ մասամբ  հենապատերը փոխարինվում են կամրջի թռիչքներով
8	Աղմուկի և ճանապարհային պատահարների նվազեցում	Ոչ	Ոչ	Այո  Չայնային մոդելավորման արդյունքներից ելնելով՝ աղմկապաշտպան պատնեշների տեղադրում
7	Քաղաքային զարգացման հետագա հեռանկարով ճանապարհի օտարման գոտում նոր կոյուղագծի տեղադրում	Ոչ	Ոչ	Այո

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Հաստատումներ և թույլտվություններ  
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ1. Նախագծման թույլտվություն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՀԱՍՄՅՆՔ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱՏԱԿԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ)

N 01/18-07/2-83751- 954 09 09 2020թ.

Օբյեկտ: Ճանապարհի կառուցման (օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
«Աշխատանքային նախագիծ» (շարժը ռիսկայնության օբյեկտ IV կատեգորիա) մախագծային փաստաթղթերի մշակման համար
Գտնվելու վայրը: Մ.Բաակովի և Արշակունյաց պողոտաների ճանապարհատված (վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող: Երևանի համայնք, ի դեմս՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ՄԻԳ» ՀՈԱԿ (ք. Երևան, Բուզանյ վտորց հ.1/3, հեռ. 010-52-09-73)
Առաջադրանքի տրամադրման հիմքը: Կառուցապատողի հայտը, տեխնիկական առաջադրանքը, Մ.Բաակովի և Արշակունյաց պողոտաների ճանապարհատվածի կառուցման նախագիծը՝ վավերացված ԱՄՆայանի կողմից, նախագծի էսքիզային առաջադրվել:
Առաջադրանքի գործողության ժամկետը: Երկու տարի: (ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Մ Ա Մ Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Բ Ը

- 1. Հողամասը գտնվում է: Խառը կառուցապատման գոտում: (հողամասի դիրքը ցուցաբերող հավելվածում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (\*) Հողամասի չափերը: Ճանապարհի երկարությունը՝ քաղաքային ճանապարհ մոտ 1.9կմ /առանց իջատեղերի/ և 5.7կմ իջատեղերով: (հողամասի սահմանները՝ կադրիստային նշանարմամբ, մակերեսը, (հա)
3. Հողամասի առկա վիճակը: Երևանի համայնքի սեփականության հանդիսացող հողատարածք: (օբյեկտի բնակարգային շենքերի (այլ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կայքերը և այլն), կառուցապատումը, բարեկարգումը և այլն)
4. (\*) Տրանսպորտային պայմանները: Մ.Բաակովի և Արշակունյաց պողոտաներ: (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուկեցումները և այլն)
5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ: Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այլ թվում՝ ստորգետնյա)
6. (\*) Կից հողամասեր: Բնակելի և նասարակական շինություններ, ճանապարհ: (կից հողատարածքում մտնող անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված պլանային)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ): Առկա չէ: (ուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)
8. (\*) Հատակագծային սահմանափակումներ: Հաշվի առնել առկա և նախատեսվող կառուցապատումը: (անվանումը գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրամպարային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այլ թվում՝ սերվիտուտները)
9. Ծառատարապետահատակագծային պահանջներ: Մշակել ավտոճանապարհի նախագիծ Մ.Բաակովի և Արշակունյաց պողոտաների ճանապարհատվածի համար: (Ենթվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, առկա չաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի որոշումները կամ որևէ բացակայության դեպքում՝ կազմակերպող (կազմակերպող) թաղաքաշինական միջավայրի պայմաններին, արտադրություններ ճակատների մակերևույթի, արտաքին դուրերի, պատուհանների համաստեղծությունների և գունային լուծումների վերաբերյալ)
9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կառմի գծից (մետր) -----
9.2. (\*) հեռավորությունը հարևան հողատարածքներից (օբյեկտներից) (մետր) -----
9.3. քույրատրիքի քարճությունը (մետր) -----
(սահմանային հարկայնության քարճությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագիծն ընդունվել է ՀՀ ԿՊ-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն նախագիծն նորմերը շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարճարճական միջոցառումներ և այլն)
9.4. կառուցապատման խտության գործակիցը -----
(կառուցիչ (կառուցիչների) ընդհանուր մակերեսի: Խտությունը որոշումը հողամասի մակերեսին)
9.5. կառուցապատման տոկոսը -----
(կառուցապատվող (անջրանճիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)
9.6. կամայապատման տոկոսը -----
(կամայապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)
9.7. այլ պահանջներ
• Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները:
• Նախատեսվող ճանապարհի թեքությունը և ջրանեղացումը նախագծել գործող նորմերին համապատասխան:
• Նախագիծը վճարել «ԵԿՆ ՄԻԳ» ՀՈԱԿ-ի կողմից վճարված տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան:
• Ճանապարհատվածի հիմնական մասը նախատեսել 6 (Յx2) երթևեկելի գոտով, յուրաքանչյուր երթևեկելի գոտին 3.30մ-3.75մ լայնությամբ:
• Նախագծով հնարավոր է նախատեսել երկաթբետոնի և /կամ/ մետաղական կոնստրուկցիաներով կամուրջ, ինչպես նաև թունելային անցում:
• Փողոցի ծածկույթը նախատեսել ասֆալտբետոնե, նախատեսել եզրաքարեր, աներաճեղատության դեպքում՝ հենապատեր,

# Նախնական գնահատման հայտ

*հնարավոր է կից մայթի սիգամայրգի նախատեսմամբ:*

- *Հենարանների կիրառման պարագայում նախատեսված կտտարել տվյալ հատվածի ինժեներական հետազոտություններ:*
- *Նախատեսված ճանապարհի արտաքին լուսավորության համակարգի իրականացում:*

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների բանդան կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսակողմի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ **Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ**

12.1. (\*) Զրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (\*) Էլեկտրամատակարարում  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (\*) Գազամատակարարում  
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (\*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը  
(համաձայն 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կառուցական պայմանների)

12.5. քույլ հասանքներ

12.6. արահամություն

13. Տարածքի ինժեներական մասնապատրաստում **Գազակերպիկ տարածքի ջրահեռացումը, աներաժջտության դեպքում նախատեսված ինժեներական պաշտպանության միջոցառումներ:**  
(տեխնիկական կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում **Ճանապարհի հարակից տարածքները բարեկարգել:**  
(անճշմամբ պլանավորման վերաբերյալ պահանջները, կամայականում, ճարտարապետական փորձեր, ցանկապատում, ցուլազ և այլն)

15. Երկարարկված նյութերի օգտագործման անադրվությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ **Երկաթբետոն, անֆայտբետոն, մետաղ, քար, պվազ, խիճ, այլ բարձրորակ նյութեր:**  
(չհնարարական նյութերի օգտագործման անադրվությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ **(արտակարգ իրավիճակներում մարզված օբյեկտների պաշտպանության միջոցառումները)**  
**Մտաճուրիկ հարկադրանքային նորմատիվ պահանջներ:**  
(հակահրդեհային և անվտանգության պահանջները միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ **Նախատեսված հաշմանդամների և ՔՄԻ-երի կենսազործունեության ապահովման ուղղված միջոցառումներ նախագծումը (սարքավորման և կանաչարման ընտրությունը) կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:**

19. Օբյեկտի միջավայրի պահպանում **Նախատեսված ջրհավաքի միջավայրի փտանգավոր ազդեցության բացառելու համապատասխան միջոցառումներ:**  
(շրջակա միջավայրի վնասվածքի ազդեցությանը բացառելու միջոցառումները)

20. Երկարարկված կազմակերպում **Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԲԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:**  
(տարածքային մեծ շինությունում կամ կապիտալ անբարենպաստ ազդեցության ընթացքում, բարձրալիք՝ տնտեսության և արտադրության/անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը **Երկու տարի:**  
(Հղվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

22. Նախագծային փաստաթղթերի փորձարկումային մեթոդաբանական պահանջներ **ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 պետական համալիր փորձարկումներ:**  
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձարկումային սենսակա ճակատների նրաշխարհագրվող՝ երկու կատարելով համապատասխան իրավունք ունեցող)

23. Միջանկյալ համաձայնեցում **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:**  
(իրավաստ մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրյալ մարմինների հետ նախնական նախնական համաձայնեցում, եղծում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հաստատված ընձարկումներ

25. Համաձայնեցումներ **(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)**  
• **Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:**  
• **Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:**  
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հաշմանդամների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ **Նախագծի կազմի և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության արժեքի կազմի և բովանդակության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները» և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ըստ վերջում մատչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  
Կ.Տ.  
Ա.Ս.  
/1844745/

Հ.ՄԱՐԴԻԹՅԱՆ

**«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ**

---

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

N 77-21  
«05» ապրիլի 2020թ. ԼԻՑ 17384

**Պարզվիրապու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**  
**Նախագծող՝ «ԱՐԽԻՏԵՏ» ՍՊԸ**  
**Տնօրեն՝ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով Երևանի Արշակունյաց պողոտայից դեպի Ծովակալ Իսակովի պողոտան միացնող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:


Նախահաշվային արժեքը կազմում է՝ 15 992 819.40 հազար դրամ, ներառյալ ԱԱԳ-ն:

Առդիր՝ եզրակացությունը 4 էջից:

Տնօրեն՝

**Սիրեկանյան**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ  
տնօրեն *Ս. Միրեկյան*



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Արշակունյաց պողոտայից դեպի Մովսիս Բակունյի պողոտան միացնող  
ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային  
փաստաթղթերը

**Պարզիրարժու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

**Նախագծող՝ «ԱՐԽԻՏԵՏ» ՍՊԸ**

**Տնօրեն՝ Վ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ**

Սույն նախագիծը կատարված է համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված տեխնիկական և ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախագիծը կազմվել է Երևանի Քաղաքապետարանի պատվերով Egis International-ի հետ կնքված պայմանագրի համաձայն: Նախագիծը ապահովելու է՝ Մոնթե Մելքոնյան Արշակունյաց պողոտայի կապը, ինչպես նաև Արշակունյաց պողոտայի անընդհատ երթևեկությունը: Նախագծով նախատեսված է՝ կառուցել օվալաձև հանգույց Մոնթե Մելքոնյան և Արշակունյաց պողոտա հատման կետում, մասնակի ձևափոխվում է Բակունյ Մոնթե մելքոնյան տրանսպորտային հանգույցը, դառնալով ամբողջական երեքնուկի տերև, ծրագծի ընդհանուր երկարությունը 1863+461 մ է: Նախատեսվում է՝ Երկու ուղեանցի կառուցում Արշակունյաց պողոտա ՊԿ 2+31.00, Մոնթե Մելքոնյան ՊԿ 17+00.00, Կամրջի կառուցում Մոնթե Մելքոնյան ՊԿ 3+40.00, Վերգետնյա հետիոտնային անցում Մոնթե Մելքոնյան ՊԿ 0+61.19, ՊԿ 13+80.00: Կամուրջը նախագծված է A14 և HK14(102) ժամանակակից նորմատիվ բեռների համար: Կամուրջը նախագծված է վեց երթևեկելի շերտի համար /երեք շերտ յուրաքանչյուր ուղղությամբ/, յուրաքանչյուր ուղղության համար կառուցվելու է առանձին կամուրջ: Կամրջի մակերեսը կազմում է 9059.92մ<sup>2</sup>: Թոփքային կառուցվածքները նախատեսված են գործարանային արտադրության նախալարված հեծաններից: Կամրջի լայնական կտրվածքում նախատեսված է տեղադրել՝ L=15մ և L=18մ թոփքների դեպքում 16 հեծան յուրաքանչյուր երթևեկության ուղղության համար: L=28մ թոփքի դեպքում 10 հեծան յուրաքանչյուր երթևեկության ուղղության համար: Թոփքային

կառուցվածքը բաժանված է 4 ջերմային անխազելի հատվածների վրա: Հեծանները նախատեսված է տեղադրել ռետինե-մետաղական հենարանային մասերի վրա: Ափային և միջանկյալ հեծանների հիմքերը և իրանները նախատեսված է իրականացնել մոնոլիտ երկաթբետոնից: Հեծանների պարզունակները նախատեսված է իրականացնել հավաքովի ե/բետոնե բլոկներից, որոնք միավորվում են միմյանց մոնոլիտ ե/բետոնե միջուկներով: Միջանկյալ հենարանների իրանի կոնստրուկցիան ընդունված է կանգնակային-երկու կանգնակով: Ափային հենարանների կոնստրուկցիան ընդունված է՝ A1 հենարանի համար զանգվածային, A2 հենարանի համար կանգնակային: Դեֆորմացիոն կարերի կոնստրուկցիան նախատեսված է բաց տիպի կոմպենսատորով: Նախատեսված է տեղադրել մետաղական արգելափակոցներ: Հրագղան գետի վրա նախատեսված է իրականացնել զաբիռնային կարգավորիչ պատեր: Երթևեկելի մասի ծածկը -վերին շերտը ա/բետոն 5սմ ,ստորին շերտը 6սմ ա/բետոն, ջրամեկուսիչ շերտ /տեխնոլոգիայով/ : Ճանապարհային հագուստի համար նախատեսվում են հետևյալ հիմնական աշխատանքները՝ մանրահատիկ ա/բ h=5սմ, խոշորահատիկ ա/բ h=7սմ, բարձր ծակոտկենությամբ ա/բ h=15սմ, խճավազային խառնուրդ C-6 h=37սմ, կոպճավազային խառնուրդ C-7 h=12սմ: Նախատեսվում է մայթերի կառուցում՝ ավազային ա/բ h=5սմ, ավազակոպճային հիմք=12սմ, բազալտե եզրաքար 15x30սմ, միաձույլ բետոնե եզրաշար 20x50սմ B-20, ճանապարհային նշանների տեղադրում: Նշանները նախատեսված է համապատասխան գործող ГОСТ-Р 52290-2004 պետական ստանդարտի:

Երթևեկային մասի գծանշումը նախատեսված է համապատասխան գործող ГОСТ-Р 51256-99 պետական ստանդարտի: Արգելափակոցներ՝ մետաղական W-աձև արգելափակոցներ , մետաղական բազրիք, «նյու ջերսի» բլոկների տեղադրում: Նախագծով նախատեսված է հենապատերի կառուցում: Իջատեղերի կառուցում իրականացնելով մանրահատիկ ա/բ h=5սմ, խոշորահատիկ ա/բ h=7սմ, բարձր ծակոտկենությամբ ա/բ h=15սմ, խճավազային խառնուրդ C-7 h=12սմ : Լուսավորություն -նախագծի տվյալ բաժինը կատարված է համաձայն գլխավոր ճարտարագետի առաջադրանքի, ինչպես նաև «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» և «Երթադույս» ՓԲԸ-ների կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և տեխնիկական պայմանների: Ավտոճանապարհի լուսավորության կազմակերպման համար տեղադրման են ենթակա թվով 4 հատ բաշխիչ պահարաններ: Մալուխագծերը նախատեսված են 4x35 կտրվածքի ալյումինե ջղերով մալուխներով: Ավտոճանապարհի երկայնքով տեղադրման են ենթակա թվով 167 ցինկապատ կցաշուրթավոր հենասյուն, բարձրությունը -10մ, լուսատուի բարձակի բարձրությունը- 2մ, թոփչքը-2.5մ,LED լուսատուի հզորությունը-215Վտ: Լուսավորության ղեկավարումը

նախատեսված է: Բոլոր հաղորդողիները անցնում են  $d=110 \times 4.5$  մմ պլաստիկ խողովակ պատյաներով: Նախագծվող մայրուղու հատող մալուխների հատվածները տեղափոխվում են նոր տեղադրվող խողովակային անցումներով: Խողովակների խորությունը երթևեկելի մասի մակերեսից՝ 1 մ է, առավելագույն քանակը՝ 8, նվազագույնը՝ 1: Կառուցման են ենթակա պահուստային անցումներ՝ հեռանկարային ցանցերի զարգացման համար, ինչպես նաև անցումներ՝ 0.4 կՎ օդային գծերի հատվածները ստորգետնայով փոխարինման համար: 6-10 կՎ տեղափոխվող մալուխներ տեղափոխումը նախատեսվել է գոյություն ունեցող մալուխի մակնիշով: Նախատեսված է միաշղթա 110 կՎ “Կենտրոնական 1” և “Կենտրոնական 2” օդային գծերի տեղափոխումը՝ կառուցվող ավտոճանապարհի տարածքից: Նեղվածքային պայմաններից էլնելով, նախատեսված է կառուցել երկշղթա օդային գիծ՝ 110 կՎ “Կենտրոնական 1” և “Կենտրոնական 2” օդային գծերի համար: Նոր կառուցվող երկշղթա հատվածի երկարությունը 750 մ է, միաշղթա հատվածների երկարությունները կազմում են.

ա) 198 մ (N4 Y110-2+9 հենարանից միացումը “Կենտրոնական 1” ՕԳ-ի գոյություն ունեցող N6 AY110”Սևան” հենարանին: Թռիչքում նախատեսված է 1 ճուպակի մոնտաժում):

բ) 199 մ (N4 Y110-2+9 հենարանից միացումը “Կենտրոնական 2” ՕԳ-ի գոյություն ունեցող N5 AY110”Սևան” հենարանին: Թռիչքում նախատեսված է 1 ճուպակի մոնտաժում): Նոր կառուցվող հատվածի համար նախատեսված են նոր նյութեր՝ համանուն գոյություն ունեցողի՝ պողպատալյումինե հաղորդալար- AC150/24 տիպի, շանթապաշտպանության համար նախատեսված է ցինկապատված պողպատե ճուպակ՝ C-50 տիպի: Հաղորդալարում և ճուպակում ընդունված լարվածությունները սրված են երկայնական պրոֆիլի վրա: Նախագծված է նոր ճանապարհահատվածում գոյություն ունեցող զազատարների վերատեղադրում, որոնք խոչընդոտում են հիմնական շինարարական՝ ճանապարհի կառուցման աշխատանքներն: Տնտեսական կենցաղային կոյուղի և դիտահորեր - Կոյուղագծի ե/բ  $D=1400$  մմ խողովակները փոխարինվել են CRP DN 1400 SN10000 խողովակներով: Հորերը նախատեսված են միաձույլ B 22,5 դասի բետոնից՝  $2600 \times 2600 \times H$  մմ չափերով: Ճանապարհի երկայնքով նախատեսվում է կառուցել  $D=500$  մմ կոյուղագծի խողովակ (հեռանկարային) առանց ցանցին միացման: Ջրագծեր և դիտահորեր - Պողպատե  $D=400$  մմ,  $D=250$  մմ և  $D=150$  մմ խողովակները փոխարինվել են պոլիէթիլենային  $D=400$  մմ,  $D=250$  մմ և  $D=150$  մմ խողովակներով: Ցանցը տեղափոխվել է 1,20 մ խորության վրա, նախատեսվել են նոր բաժանարար հորեր՝ փականերով և նոր հորեր՝ հակահրդեհային հիդրանտների

տեղափոխման համար: Հորերը միաձույլ B 22,5 դասի բետոնից են՝ 1500x1600xՀմմ չափերով: Նախատեսված է նաև նոր անձրևհորերի կառուցում:

Նախահաշվային մաս

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով  
Հաշվարկը կազմում է 15 992 819.40 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային  
նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը  
1931.29 և մեքենաների շահագործման ինդեքսը 2364.99

Նյութերի արժեքն ընդունված է 202թ. N 2 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ  
փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիայն  
համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային  
ծավալներին

4. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի  
11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ  
առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները  
քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:


Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ-նախահաշիվը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ  
օրենսդրության և նորմատիվակական փաստաթղթերի պարտադիր պահանջներին,  
նախագիծ-նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից  
ներկայացվել համաձայնեցման և հաստատման:



Ս. Սիրեկանյան

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Դ-3. Նախագծող Խորհրդատուի դիմումը  
շինարարական աղբի տեղադրման վայրի վերաբերյալ



Armenia Branch Office

Contact: Richard THADANI  
Tel.: + 374 11 58 44 04  
E-mail: richard.thadani@egis.fr  
Your reference(s):  
Our reference(s): ARM/ 130115L/2020/664  
Project no.: 130115L

«Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի  
տնօրեն պարոն Ա. Շեխոյանին  
Արզիշտի փ. 1, Երևանի քաղաքապետարան

Երևան, 12-ը հոկտեմբերի, 2020 թ.

*Թեմա՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհային հատված. ոչ պիտանի հանույթի և  
շինարարական աղբի տեղափոխման վերաբերյալ հարցում*

Հարգելի՛ պարոն Շեխոյան,

Հայտնում ենք Ձեզ, որ մեր ընկերությունը Երևանի քաղաքապետարանի  
պատվերով իրականացնում է Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի  
նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Նշված ծրագրի շրջանակներում անհրաժեշտություն է առաջանալու տեղափոխել  
մեծ ծավալի ոչ պիտանի հանույթ և շինարարական աղբ: Խնդրում ենք տրամադրել  
տեղեկատվություն, թե որտեղ կարող ենք տեղափոխել ոչ պիտանի հանույթը և  
շինարարական աղբը՝ նշելով ծառայության արժեքը՝ առանց ԱԱՀ-ի, եթե նշված  
ծառայությունը վճարովի է:

Հարգանքով,



Ռիչարդ Տադանի

«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության  
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

Կոնտակտային անձ՝ Արա Մարգարյան  
Հեռ.՝ +3749863630

*Ա. Քարամյան*  
*12.10.20p.*

Site Office address: Str. James Bryce, house 19/1, Yerevan, Armenia, Registration number: NO1P886180

Egis International

15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France  
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - [www.egis.fr](http://www.egis.fr) - S.A.S au capital de 14 855 100 Euros  
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B





## ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Ելակետային հետազոտություններ

### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1 Կենսաբազմազանության հետազոտության հաշվետվություն

Ծառաթփային բույսերի հատման ենթակա տեսակները

Species (Latin)	Տեսակ	Ծառերի (բների) քանակ	Թփերի (բների) քանակ	Բների տրամագի ծ՝ սմ (ø)
<i>Ailanthus altissima</i>	Երկնածառ բարձրավուն	157		5-40
<i>Swida australis</i>	Ճապկի հարավի		50	1-3
<i>Salix excelsa</i>	Ուռենի բարձր	22		10-35
<i>Morus alba</i>	Թթենի սպիտակ	30		3-67
<i>Ulmus glabra</i>	Թեղի մերկ	18		10-60
<i>Cercis siliquastrum</i>	Արճվան սովորական, Հուդայածառ	4		3-20
<i>Salix fragilis</i>	Ուռենի բեկուն	3		9-27
<i>Robinia pseudoacacia (globe)</i>	Ռոբինիա կեղծ ակացիա (գնդաձև)	24		3-6
<i>Robinia pseudoacacia (common)</i>	Ռոբինիա կեղծ ակացիա (սովորական)	23		4-15
<i>Thuja orientalis</i>	Թույա արևելյան	27		2-6
<i>Maclura aurantiaca</i>	Մակլուր նարնջագույն	20		3-62
<i>Platanus acerifolia</i>	Սոսի թխկիատերև	3		56
<i>Platanus orientalis</i>	Սոսի արևելյան	15		19-58
<i>Armeniaca vulgaris</i>	Ծիրանենի սովորական	14		14-43
<i>Fraxinus excelsior</i>	Հացենի սովորական	9		9-22
<i>Ulmus minor</i>	Թեղի փոքր	8		10-16

Նախնական գնահատման հայտ

<i>Acer negundo</i>	Թխկի հացենիատերև	5		3-44
<i>Ligustrum vulgare</i>	Կիպրոս սովորական		10	1-2
<i>Fraxinus pennsylvanica</i>	Հացենի Փենսիլվանյան	9		4-46
<i>Cerasus avium</i>	Կեռասենի անտառային	2		9-25
<i>Cerasus vulgaris</i>	Բալենի սովորական	3		3-13
<i>Forsythia intermedia</i>	Տորգիցիա միջին		5	1-2
<i>Populus nigra</i>	Բարդի սև	3		40-50
<i>Populus bolleana</i>	Բարդի Բոլլեի	2		15-25
<i>Populus deltoides</i>	Բարդի կանադական	2		3-5
<i>Acer pseudoplatanus</i>	Թխկի կեղծսսիատերև	2		3-4
<i>Fraxinus oxycarpa</i>	Հացենի սրապտուղ	1		5-17
<i>Syringa vulgaris</i>	Եղրևանի սովորական		3	2-3
<i>Juglans regia</i>	Ընկուզենի սովորական	1		2-45
<i>Hibiscus syriacus</i>	Բադրջուկ սիրիական		3	3
<i>Salix babylonica</i>	Ուռենի բաբելոնյան	2		20-40
<i>Populus nigra var. italica</i>	Բարդի իտալական	2		25-30
<i>Gleditschia triacanthos</i>	Գլեդիչիա եռասեղ	2		18-21
<i>Elaeagnus angustifolia</i>	Փշատ նեղատերև	1		35
<i>Juniperus virginiana</i>	Գիհի վիրգինյան	1		11
<i>Vitis vinifera</i>	Խաղող մշակովի		1	10
<b>Total</b>	Ընդհանուր ծառեր և թփեր	<b>415</b>	<b>67</b>	

Նախնական գնահատման հայտ

Հաշվետվությունը ամբողջությամբ կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը

**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-2 Մթնոլորտային օդի որակի ելակետային վիճակի հաշվետվություն**

Հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը

**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3 Աղմուկի մակարդակի ելակետային վիճակի և ազդեցության մոդելավորման հաշվետվություն**

Հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը

**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-4 Թրթռումների մակարդակի ելակետային վիճակի և ազդեցության մոդելավորման հաշվետվություն**

Հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը

**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5 Հրազան գետի և ոռոգման ջրանցքի ջրի որակի հետազոտության հաշվետվություն**

Հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը

**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-6 Հնագիտական և պատմամշակութային արժեքների մասին հաշվետվություն**

**Բսակով-Արշակունյաց պողոտաների միավորման ճանապարհաշինական նախագծի հնագիտական և պատմա-մշակութային միջավայրի խաթարման ռիսկերը**

Բսակով և Արշակունյաց պողոտաների միավորումը իրականացնող նախագծի ծրագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն նախատեսված է անց կացնել երբեմնի՝ «Մարտարի այգիներ» կոչվող պարտեզի տարածքով (Հատակագիծ 1): «Մարտարի այգիներ»-ը, որը պատմական Երևանի ամենահանրահայտ և ժողովրդականություն վայելող տարածքներից էր, հիմնադրվել էր XVI-XVII դդ.՝ Երևանի խանության շրջանում և հանդիսանում էր Երևանի կառավարիչների՝ Մարտարների հանգստավայրը: 1828 թ.՝ Արևելյան Հայաստանի և Երևանի Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, այգին հանրայնացվեց, իսկ որոշ հատվածներ՝ Դավայի այգիների օրինակով, հանձնվեց մասնավոր կառավարման (Նկարներ 1 և 2): Խորհրդային Հայաստանի իշխանությունները՝ ցավոք, չկարողացան պահպանել պատմական այս հուշարձանը, իսկ նորանկախ Հայաստանի կառավարությունն այն դուրս թողեց անշարժ հուշարձանների ցուցակից, քանի որ տարածքում արդեն ոչ մի տեսանելի արժեք կամ կառույցի հետք չէր մանցել: Այսպիսով, ծրագծի հիմնական հատվածը, որն անց է կացվելու երբեմնի այս կարևոր նշանակություն ունեցող հուշարձանի տարածքով, չի կարող համարվել պատմա-մշակութային խոչնդոտ:

Ծրագծի անմիջական հարևանությամբ են գտնվում նաև Երևանի տարածքով անցնող Հրազդան գետի կիրճի քարեդարյան կարևորագույն հուշարձանները՝ Երևան-1, Երևան-2 և Երևան-3 քարայր-կացարանները (11.1. 24., 11.1. 25. և 11.1. 26., ըստ Երևանի անշարժ հուշարձանների Շենգավիթ համայնքի ցուցակի), ինչպես նաև Նորագյուղ-1 և Նորագյուղ 2 քարայրները, որնք դեռևս չեն ընդգրկվել ցուցակում, սակայն 2010 թ. այստեղ իրականացված ստուգողական պեղումները փաստագրել են դրանցում մշակութային արժեք ներկայացնող հնագիտական շերտերի առկայությունը (Հատակագիծ 1, Նկարներ 3-5):

Ծրագծի հարևանությամբ հայտնվող՝ պատմա-մշակութային կարևոր նշանակություն ունեցող մյուս հուշարձանը վաստակաշատ քանդակագործ Ս. Բաղդասարյանի՝ 1965 թ. կերտած «Կաշեգործ» քանդակն է (11.1. 23. ըստ Երևանի անշարժ հուշարձանների Շենգավիթ համայնքի ցուցակի), որը տեղակայված է Հրազդանի սփին գտնվող երբեմնի Կաշվի գործարանի տարածքում (Հատակագիծ 1, Նկար 6):

Եվ վերջապես, Արշակունյաց պողոտային միանալու հատվածում, ըստ ծրագծի, ճանապարհն անցնելու է Պանթեոն – Կոմիտասի անվան զբոսայգի (11.1. 19. ըստ Երևանի անշարժ հուշարձանների Շենգավիթ համայնքի ցուցակի) միավորի տարածքով, որտեղ, ամենայն հավանականությամբ կարիք է առաջանալու ապամոնտաժել այն ներփակող ցանկապատի մի հատված (Հատակագիծ 1, Նկարներ 7-8):

Ներկայացված տեղեկություններից երևում է, որ ծրագրի իրականացման ընթացքում անմիջական ազդեցության է ենթարկվելու միայն մեկ՝ պաշտոնական

կարգավիճակ ունեցող պատմա-մշակութային միավոր՝ Պանթեոն – Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատը: Վերջինս ունի մետաղական և քարաշեն կառուցվածքով հատվածներ, որոնց պատմա-մշակութային արժեքի պահպանության պայմանները և մանրամասները պետք է քննարկվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ:

Հրազդան գետի կիրճի քարայր-կացարանները՝ ներկայացված ծրագծի հատվածում անմիջական ազդեցության չեն ենթարկվում, սակայն դրանց մի մասը՝ հատկապես Երևան-2-ը և Նորաջուղ-1-ն ու 2-ը շատ մոտ են գտնվում շինարարական աշխատանքների իրականացման և նախատեսվող ենթակառուցվածքների ստեղծման գոտուն, ուստի անհրաժեշտ է հսկողություն սահմանել, որպեսզի չխաթարվի այս հնավայրերի պատմա-մշակութային և նրանց անմիջական հարևանության առկա լանդշաֆտային միջավայրը:

«Մարադարի այգիներ»-ի պարագայում ցանկալի կլիներ խնդրել ճանապարհաշինական ծրագիրն ու աշխատանքներն իրականացնող կազմակերպություններին՝ հողաշինական աշխատանքների ընթացքում սահմանել հնագիտական հսկողություն և ներգրավել հնագետ, քանի որ դրանց իրականացման ընթացքում առկա է արժեքավոր շինությունների, կառույցների հետքերի բացման հնարավորություն:


Եվ վերջապես՝ «Կաշեգործ»-ի քանդակի կապակցությամբ, կարելի է հանդես գալ հետևյալ առաջարկությամբ: Քանի որ երբեմնի Կաշվի գործարանն այլևս գոյություն չունի և վեր է ածվել բառիս բուն իմաստով «ուրվականի», իսկ հանրահայտ վարպետի աշխատանքը պտք է որ դեռևս կանգնած լինի այս տարածքում, կարելի է կազմակերպել նրա տեղափոխումը կառուցվելիք ճանապարհի հանանությամբ գտնվող մի հարմարավետ վայր, որպեսզի մարդիկ կարողանան հինալ այս ստեղծագործությամբ: Հարցն անհրաժեշտ կլինի քննարկել Շենգավիթ համայնքի թաղապետարանի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից կազմակերպված համատեղ հանդիպման շրջանակներում:

Քորիս Գասպարյան


ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող




12.02.2021 թ.



Հաստակագիծ 1. Ճանապարհի շինարարության ծրագիծը և նրա ազդեցության գոտում առկա հնագիտական և սպասմա-մշակութային հուշարձանները



Նկար 1. Սարգսարի այգու ճեմուղիներից մեկը



Նկար 2. Գինու արտադրական համալիր Սարգսարի այգում




Նկար 3. Երևան-1 քարայրը Հրազդան գետի կիրճում



Նկար 4. Նորագյուղ-1 քարայրը Հրազդան գետի կիրճում





Նկար 5. Երևան-1 քարայրից հայնաբերված վաղ մարդու գործիքներ



Նկար 6. Քանդակ «Կաշեգործ», հեղինակ՝ Ս. Բաղդասարյան, 1965 թ.



Նկար 7. Պանթեոն – Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատը ծրագծի՝ Արշակունյաց պողոտայի հետ միացման տեղամասում




Նկար 8. Պանթեոն – Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատի մետաղական և քարաշեն հատվածները

## ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Ծրագրի ազդեցությունները




### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-1 Իսակով – Արշակունյաց

#### Ճանապարհահատվածի ծրագրի զգայուն ազդակիրների թերթիկ




Ծրագրի հետևյալ թերթիկը պատկերացում է տալիս Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի երկայնքով տեղակայված արժեքավոր բնապահպանական տարրերի և զգայուն ազդակիրների մասին: Ծրագրի թերթիկը ազդեցությունների մեղմացման միջոցառումների պլանավորման ժամանակ ընգծում է հատուկ ուշադրություն պահանջող տարրերը:

No	Տեղադիրքը	ՊԿ Կմ	Խնդիր	Շինարարության և շահագործման ընթացքում ստուգման ենթակա պարամետրեր
1	Իսակով-Արշակունյաց	1+65- 4+95	<i>Հրազդան գետի</i> վրայով նոր կամրջի կառուցումը կարող է հանգեցնել ջրի աղտոտմանը և նստվածքագոյացմանը:	Ջրի որակ (շինարարության ընթացքում չափագրումների ենթակա պարամետրերի մասին առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Գլուխ Ե.5)
				
2	Կաշեգործների փողոց Արշակունյաց պողոտայի հատված	2+35	<i>Հրազդան գետի</i> վրայով նոր կամրջի թռիչքների կառուցումը կարող է հանգեցնել գետի ջրի, ինչպես նաև <i>Ստորին Հրազդանի ոռոգման ջրանցքի</i> աղտոտմանն ու նստվածքագոյացմանը	Ջրի որակ (շինարարության ընթացքում չափագրումների ենթակա պարամետրերի մասին առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Գլուխ Ե.5)

Նախնական գնահատման հայտ

		<p>3 Արշակունյաց պողոտա</p>	<p>1+00</p>	<p>Ճանապարհի նոր ծրագիծը հատում է Կոմիտասի անվան զբոսայգին՝ անցնելով Պանթեոնի տարածքից մոտ 100 մ հեռավորության վրա: Զբոսայգու երկրորդ մուտքը կարող է փակվել: Զբոսայգու այցելուներին անհարմարություններ են պատճառվելու: Կարող է վտանգվել զբոսայգու և Պանթեոնի այցելուների անվտանգությունը:</p>	<p>ԲԿՊ-ում պլանավորվելու են հանրության անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումներ</p>
		<p>4 Արշակունյաց պողոտա</p>	<p>0+00</p>	<p>Ճանապարհի նոր ծրագիծը պահանջում է Կոմիտասի անվան զբոսայգու պատերի, ցանկապատի և սյուների ապամոնտաժում, որոնք, որպես ճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող օբյեկտներ արժեքավորվում են ԵՔ-ի կողմից (ապամոնտաժվող պատերի, մետաղական ցանկապատերի և սյուների տեղադիրքը տես ՆԱՎԵԼՎԱԾ Զ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-2)</p>	<p>Պլանավորվել են խնամքով ապամոնտաժման և ապամոնտաժված մասերի պահպանմանն ուղղված միջոցառումներ</p>

Նախնական գնահատման հայտ

		<p>5 Արշակունյաց պողոտա</p>	<p>0+00</p>	<p>Անխուսափելի է միջամտությունը <i>հանրային երթևեկությանը</i></p>	<p>Մշակվելու է ԵԿՊ, որը համաձայնեցվելու է ճանապարհային ոստիկանության հետ</p>
					
<p>6 Արշակունյաց պողոտայի հատված</p>	<p>2+35</p>	<p>Անհարմարություններ են պատճառվելու (փոշի, աղմուկ, մուտքի փոփոխություն) Կաշեգործների և Բունիայան փողոցների կառուցվելիք կամրջին մոտ գտնվող բնակելի տների <i>բնակիչներին</i>:</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսվելու են կանոնավոր մեղմացող միջոցառումներ</p>		

Նախնական գնահատման հայտ






		7	Արշակունյաց պողոտա	0+50	Բազմաբնակարան շենքի խաղահրապարակը գտնվում է նոր ճանապարհից և ապագա շինհրապարակից մոտ 15-20մ հեռավորության վրա: Երեխաների և շենքերի բնակիչների անվտանգությունը կարող է վտանգվել:	ԲԿՊ-ով նախատեսվելու են անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ
		5	Արշակունյաց պողոտայի կողմ	1+00- 2+35	Գազատար խողովակի և էլեկտրամատակարարման սյուները տեղափոխվելու են, հետևաբար հնարավոր է էներգա-գազամատակարարման ժամանակավոր խանգարումներ:	ԲԿՊ-ով նախատեսվելու են մեղմացնող միջոցառումներ

Նախնական գնահատման հայտ



		<p>6 Արշակունյաց պողոտա Իսակով պողոտա</p>		<p>Անհանգստություններ են պատճառվելու (փոշի, աղմուկ, թրթռումներ, մուտքի փոփոխում) շինհրապարակից մոտ 30մ հեռավորության վրա գտնվող <i>Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջին</i> և Արշակունյաց պողոտայի և Իսկավի պողոտայի երեքնուկի հանգույցի հարակից ձեռնարկատիրական օբյեկտներին:</p>	<p>Փոշու, աղմուկի թրթռումների գործիքային չափումներ և հանրային անվտանգությանն ուղղված մեղմացնող միջոցառումներ են նախատեսվելու ԲԿՊ-ում:</p>
		<p>7 Իսակովի պողոտայի կողմ</p>	<p>17+50</p>	<p>Անհարմարություններ (փոշի, աղմուկ, թրթռումներ) են պատճառվելու <i>Մանկան առողջության վերականգնման բժշկական կենտրոնին, ճանապարհային ոստիկանությանը</i> և նոր ճանապարհի օտարման գոտուն հարակից ձեռնարկություններին:</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսվելու են փոշու, աղմուկի և թրթռումների գործիքային չափումներ:</p>



Նախնական գնահատման հայտ

		<p>8 Իսակովի պողոտայի կողմ</p>	<p>17+50</p>	<p>Վնասման ենթակա <i>փոքր այգին</i> պատկանում է Մանկան առողջության վերականգնման բժշկական կենտրոնին:</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսվելու են մեղմացնող միջոցառումներ</p>
					
<p>9 Իսակովի պողոտայի կողմ</p>	<p>17+00</p>	<p>110 բարձր լարմամբ և 0.4 կվտ <i>էլեկտրական սյուներ</i> և գազատար խողովակները տեղափոխվելու են: Հնարավոր են էներգա-գազամատակարարման ժամանակավոր խանգարումներ:</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսվելու են մեղմացնող միջոցառումներ</p>		
		<p>10 Իսակովի պողոտա</p>	<p>17+10</p>	<p>Հեռացվելու են ճանապարհի օտարման գոտում գտնվող, շինարարության ընթացքը խոչընդոտող <i>համայնքային ծառերը</i>:</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսվում է ծառատունկ 1:6</p>

Նախնական գնահատման հայտ

<p>Կոմիտասի անվան զբոսայգի</p> <p>Արշակունյաց պողոտա</p>	<p>1+00</p>		<p>հարաբերակցությամբ</p>	
				
<p>11</p>	<p>Իսակովի հատված</p> <p>Հրազդան գետի կիրճ</p>		<p>Հնագիտական տեսանկյունից հետաքրքրություններ կայացնող տարածքներ (Նորագյուղի քարանձավներ) են գտնվում Հրազդան գետի կիրճում՝ նոր կառուցվող կամրջի միջանկյալ հենարաններից մոտ 60մ հեռավորության վրա</p>	<p>ՇՄԱԳ/ԲԿՊ-ով նախատեսվելու են շինարարության ընթացքում պատճառվող ազդեցությունները մեղմացնող հատուկ միջոցառումներ</p>
<p>12</p>	<p>Իսակովի պողոտա-Մոնթե Մելքոնյան</p>	<p>Նորագյուղ</p>	<p>Իվան Պասկեվիչի հուշարձան կառուցվող ճանապարհի եզրագծից մոտ 60մ հեռավորության վրա</p>	<p>ՇՄԱԳ/ԲԿՊ-ով նախատեսվելու են շինարարության ընթացքում պատճառվող ազդեցությունները մեղմացնող հատուկ միջոցառումներ</p>
				

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-2. Հատման ենթակա Մոսի արևելյան ծառերի և ապամոնտաժվող պարիսպի տեղադիրքը Արշակունյաց պողոտայում



Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-3. ԱԶԱ-րին պատճառված ուղղակի (D) և անուղղակի (I) ազդեցություններ

Ծրագրի գործողություններ	Օդի որակ			Զրի որակ		Սոցիալական համակարգեր			Երթևեկություն	Հնագիտական/պատմական օբյեկտներ	Լանդշաֆտ և էսթետիկա
	Փոշի	Աղմուկ	Թրթռում	Մակերեսային ջրային մարմին	Ստորգետնյա ջրի որակ	Հանրային շինություններ	Բնակելի տներ	Չեռնարկություններ			
Առկա կառույցների ապամոնտաժում	D	D	-	I	I	I	I	I	I	I	D
Հողային աշխատանքներ	D	D	-	I	I	I	I	I	D	I	D
Լիցք	D	D	D	I	I	I	I	I	D	I	D
Հրագրան գետի վրայով 252մ երկարությամբ նոր կամրջի կառուցում	D	D	D	D	I	I	I	I	I	I	I
Երեքնուկի հանգույց /օվալաձև հանգույց / ուղեանց/ մոտեցման իջատեղեր	D	D	D	-	-	I	I	I	D	I	D
Հաղորդուղիների, այդ թվում՝ բարձր լարման գծերի տեղափոխում	D	D	D	-	-	I	I	I	D	-	D
Սաֆալտապատում	D	D	D	I	I	I	I	I	D	-	D
Զրահեռացման համակարգի կառուցում	D	D	-	-	D	I	I	I	D	-	D
Լուսավորություն	-	D	-	-	-	I	I	I	D	-	D
Ճանապարհի գծանշում, ազդանշաններ, պաստառներ և արգելափակոցներ	D	D	-	D	-	I	I	I	D	-	D

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-4. Ազդեցությունների խստությունը

ԱԲԸ	Ազդեցության մեծությունը (փոփոխության նկատմամբ զգայունությունը)	Ազդեցության տարածումը	Ազդեցության տևողությունը	Ազդեցության հաճախականությունը	Ազդեցության հավանականությունը	Շրջափակումը / անդառնալի լինելը	Ազդեցության խստությունը (գնահատական)	Ազդեցության մակարդակը առանց մեղմացման միջոցառման <sup>16</sup>	Նկարագրություն
Մթնոլորտային օդի որակը (փոշի և արտանետվող գազեր)	3	1	3	4	4	3	Միջին (18)	ՑԱԾԲ	Շինարարության ընթացքում պարբերաբար տեղի կունենան փոշու և գազի արտանետումներ ծրագրի իրականացման վայրում և անմիջական հարակից տարածքում:  Աշխատանքների ավարտին փոշու և աղմուկի մակարդակը զգալիորեն կնվազի, սակայն նախաշինարարական մակարդակը չի պահպանվի կառուցված ճանապարհի շահագործման ինտենսիվության ավելացման պատճառով:
Աղմուկ թրթռում	4	1	4	4	4	4	Բարձր (21)	ՑԱԾԲ	Ծրագրի իրականացման և շահագործման ամբողջ ընթացքում շինհրապարակներում և անմիջական հարակից տարածքում պարբերաբար տեղի կունենա աղմուկի և թրթռումների

<sup>16</sup>Ազդեցության մակարդակը առանց մեղմացման միջոցառման որոշվել է Մխեմա Զ-2-ի հիման վրա:

Նախնական գնահատման հայտ

									մակարդակի աճ:  Անհրաժեշտ են ազդեցությունը մեղմացնող արդյունավետ միջոցառումներ:
Մակերեսային ջրերի հոսքը և որակը (Հրազդան գետ և ոռոգման ջրանցք)	4	2	3	4	4	2	Միջին (18)	ՄԻՋԻՆ	Կամրջի աշխատանքների պատճառով գետի աղտոտում և նստվածքագոյացում (նավթ/վառելանյութ և թափոններ, շինարարական աղբի ոչ պատշաճ հեռացում):  Ազդեցության գոտին տարածվում է ծրագրի տարածքից դուրս: Ազդեցությունները հաճախակի բնույթի են լինելու կամրջի շինարարության ընթացքում: Որոշակի մնացորդային ազդեցություն հնարավոր է նաև ճանապարհի շահագործման ընթացքում:
Բուսական և կենդանական աշխարհ (ջրային և ցամաքային)	3	1	2	2	4	3	15 թույլ	ՑԱՄԸ	Տեղամասի ներսում մաքրման աշխատանքների ընթացքում վստահաբար տեղի կունենա բնական միջավայրի և արեալների կորուստ: Հեռացված բուսականությունը կվերականգնվի նոր ծառեր և թփեր տնկելու միջոցով
Հողի գրունտներ, բուսահող	3	1	2	2	4	2	10 թույլ (12)	ՑԱՄԸ	Գրունտների և բուսահողի խաթարում և/կամ աղտոտում տեղի կունենա միայն ծրագրի իրականացման և հարակից տարածքում: Սա տեղի է ունենալու հողային աշխատանքների իրականացման փուլում: Ազդեցությունը հիմնականում

Նախնական գնահատման հայտ

									կվերացվի աշխատանքների ավարտից հետո տեղանքի վերականգնման միջոցով:
Նյութերի ռեսուրսների աղբյուրներ, (հանքեր/հանույթներ)	2	2	3	4	1	3	Թույլ (14)	ՑԱԾԲ	Ազդեցության հավանականությունը շատ ցածր է, քանի որ նոր հանքերի բացում չի նախատեսվում և անկանոն հանույթն արգելվում է ԲԿՊ-ով: Սրբույթի հաղթող կապալառուն շինարարական նյութերը գնելու է գրանցված մատակարարներից:
Հիդրոերկրաբանություն (ստորերկրյա ջրերի որակ)	2	2	3	2	2	1	Թույլ (12)	ՑԱԾԲ	Աղտոտիչների ներթափանցումը ստորերկրյա ջրերի մեջ հավանական է միայն գետի հունի մոտ: Ազդեցությունը փոքր է: ՇՄԱԳ/ԲԿՊ-ով նախատեսվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:
Մոցիալական համակարգեր	4	3	3	4	4	4	Թույլ (22)	ԲԱՐՁՐ	Սա ներառում է ազդակիր անձանց առողջությանը և կենսակերպին, մասնավոր և համայնքային սեփականությանը, ճամփեզրին կից գտնվող ձեռնարկատիրական օբյեկտներին, այդ թվում՝ Կոմիտասի անվան զբոսայգուն, բազմաբնակարան շենքի խաղահրապարակին, Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջին և այլ շինություններին սպառնացող վտանգները: ԲԿՊ-ով նախատեսվելու են խիստ և արդյունավետ մեղմացնող միջոցառումներ:
Կոմունալ հաղորդուղիներ	2	2	2	3	2	2	Թույլ (13)		Ծրագրի ուրբանիզացված հատվածում տեղակայված հաղորդուղիները կարող են ձգվել ծրագրի ընդգրկման տարածքից



Նախնական գնահատման հայտ

								ՑԱԾԲ	դուրս: Նախագծման փուլում իրականացվել է դրանց հետազոտությունը, և դրանց վնասումը քիչ հնարավոր է, թեև որոշակի հավանականություն, այնուամենայնիվ, առկա է: Ազդեցությունը կարող է ամբողջությամբ վերացվել վնասված հաղորդողիների վերանորոգմամբ կամ տեղափոխմամբ:
Երթևեկություն և տրանսպորտ	3	2	3	3	4	1	Միջին (16)	ՄԻՋԻՆ	Ծրագրի իրականացման ընթացքում տեղի կունենան ճանապարհային երթևեկության խանգարումներ շինարարական աշխատանքներով և նյութերի ու թափոնների տեղափոխմամբ պայմանավորված: Շինարարության ազդեցությունը կտարածվի նաև ծրագրի տարածքից դուրս, քանի որ քաղաքի ճանապարհները մասամբ փակվելու են: Մյուս կողմից, ազդեցությունը ամբողջովին շրջելի է, քանի որ ճանապարհի երթևեկությունը կբարելավվի:
Լանդշաֆտ և էսթետիկա	3	1	3	3	3	2	Միջին (16)	ՄԻՋԻՆ	Ազդեցության գոտին սահմանափակվում է ծրագրի և անմիջապես հարակից տարածքով: Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում անշուշտ տեղի կունենա լանդշաֆտի ձևափոխում: Ազդեցությունը միայն մասամբ կվերացվի, քանի որ նախաշինարարական իրավիճակը հնարավոր չէ վերականգնել:
Հնագիտական և մշակութային ժառանգություն	2	3	3	2	1	4	Թույլ (14)	ՄԻՋԻՆ	Թեև ազդեցությունը ուղղակի չէ, այնուամենայնիվ, աննշան խաթարումների վտանգը առկա է և,

Նախնական գնահատման հայտ

Պանթեոն և քանդակ «Կաշեգործ»									հաշվի առնելով ընկալիչի համազգային նշանակությունը, ԲԿՊ-ով նախատեսվելու են ազդակիրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
Մշակութային ժառանգություն` Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատ	3	3	1	1	4	3	Միջին (15)	ՄԻՋԻՆ	Ցանկապատն ապամոնտաժվելու է, այսինքն՝ ազդեցությունն ուղղակի է: Դրա հետ մեկտեղ այն կլինի մասամբ շրջելի, քանի որ նախատեսվելու են հատուկ միջոցառումներ. ապամոնտաժումը իրականացվելու է խնամքով և ապամոնտաժված մասերը հատուկ պահպանվելու են և պահվելու են ԵՔ-ի կողմից տրված ցուցումներին համապատասխան:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Զ-5. Ազդեցության մեծությունը մինչև մեղմացնող միջոցառումների իրականացումը և դրանիցից հետո

ԱԶԱ	Ազդեցության խստությունը (գնահատական)	Գնահատականը մինչև մեղմացնող միջոցառումների իրականացումը	Մեղմացնող միջոցառումների տեսակը	Մնացորդային (հետշինարարական) բացասական ազդեցություն	Ազդեցության նշանակությունը մեղմացնող միջոցառումներից հետո Նշանակալի (Ն)/ Ոչ նշանակալի (ՈՆ)
Մթնոլորտային օդի որակ (փոշի և արտանետվող գազեր)	Միջին (18)	ՑԱՕԲ	Շինարարական և հետշինարարական փուլերում բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված շարունակական մեղմացնող միջոցառումներ և	տրանսպորտային միջոցներից արտանետվող գազեր	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

			կանաչապատման նախագիծ:		
Աղմուկ և թրոսներ	Բարձր (21)	ՑԱԾԲ	Բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումներ:	աղմկապաշտպան պատնեշների միջոցով աղմուկի սահմանափակում	ՈՆ
Մակերևութային և ջրերի հոսք և որակ (Հրազդան գետ և ոռոգման ջրանցք)	Միջին (18)	ՄԻՋԻՆ	Ջրային մարմինների վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումներ	ազդեցություն չի լինելու ի շնորհիվ նախագծված տեղադրվող յուղային գատիչների	ՈՆ
Բուսական և կենդանական աշխարհի (ջրային և ցամաքային)	15 Ցածր	ՑԱԾԲ	Հատված ծառերի և թփերի փոխարեն նորերի տնկում և ԲԿՊ-ում մշակվել են մեղմացնող միջոցառումներ բուսական և կենդանական աշխարհի հետազոտության եզրակացությունների և փորձագետների առաջարկների հիման վրա	լայն տարածում ունեցող տեսակների բնական միջավայրի աննշան մասի կորուստներ	ՈՆ
Հողագրունտներ, և բուսահող	Ցածր (12)	ՑԱԾԲ	Բուսահողի պահպանում և կանաչապատման նպատակով վերօգտագործում և ԲԿՊ-ով նախատեսված, աղտոտման նվազեցմանն ուղղված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	ՈՆ
Նյութերի ստացման աղբյուրներ	Ցածր (14)	ՑԱԾԲ	Նյութերը ձեռք են բերվելու միայն գրանցված մատակարարներից Անկանոն և ապօրենի հանույթն	Կանխարգելիչ և վերականգնողական գործողությունների շնորհիվ	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

(հանքեր/ հանույթներ)			արգելվելու է	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	
Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրի որակ)	Ցածր (12)	ՑԱԾՐ	ԲԿՊ-ով նախատեսված, աղտոտման նվազեցմանն ուղղված կանոնավոր և երկրաբան ձորձագետի կողմից առաջարկված մեղմացնող միջոցառումներ	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	ՈՆ
Մոցիալական համակարգեր	Ցածր ( 22)	ԲԱՐՁՐ	Վնասների փոխհատուցում և ԲԿՊ-ի կանոնավոր միջոցառումներ	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	ՈՆ
Հաղորդողիներ ի վրա ազդեցություն	Ցածր (13)	ՑԱԾՐ	Հասցված վնասների փոխհատուցում, վնասված հաղորդողիների վերականգնում	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	ՈՆ
Երթևեկություն և տրանսպորտ	Միջին (16)	ՄԻՋԻՆ	Հանապարհների նախնական վիճակի և երթևեկության վերականգնում	Բարելավված երթևեկություն	ՈՆ
Լանդշաֆտ և էսթետիկա	Միջին (16)	ՄԻՋԻՆ	Տարածքի մաքրում, կանաչապատում, խախտված լանդշաֆտի վերականգնում	Բարելավված լանդշաֆտ	ՈՆ
Հնագիտական և մշակութային ժառանգություն	Ցածր (14)	ՄԻՋԻՆ	ԲԿՊ-ում նախատեսված կանխարգելիչ և պահպանության միջոցառումներ	մնացորդային ազդեցություններ չեն լինելու	ՈՆ
Մշակութային ժառանգություն (Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատ)	Միջին (15)	ՄԻՋԻՆ	Խնամքով ապամոնտաժում և պահպանություն	Ապամոնտաժված մասերի պահեստավորում ԵՔ կողմից հրահանգներին համապատասխան	ՈՆ

## ՀԱՎԵԼՎԱԾ Է. Հանրային լսումների և հաղորդակցության մասին հաշվետվություն

### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1. Ներածական հանդիպումներ Շենգավիթ, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ղեկավարների հետ

1. Մի շարք ներածական հանդիպումներ են տեղի ունեցել ազդակիր վարչական շրջանների՝ Շենգավիթի, Կենտրոնի և Մալաթիա-Սեբաստիայի ղեկավարների տեղակալների հետ:
2. Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմերի պատասխանատուների և Շենգավիթ համայնքի ղեկավարի տեղակալի՝ պրն. Համլետ Գրիգորյանի հետ համատեղ ներածական հանդիպումը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 29-ին, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Արմեն Ազիզյանի հետ՝ հոկտեմբերի 30-ին, և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Դավիթ Թումանյանի հետ՝ նոյեմբերի 3-ին:
3. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարության հետ ներածական հանդիպումը տեղի է ունեցել հոկտեմբերի 29-ին՝ 14:00-ին՝ Շենգավիթ վարչական շրջանի շենքում: Հանդիպմանը ներկա էին՝

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ պրն. Համլետ Գրիգորյան

ԵԿՆ ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետ պրն. Արմեն Բողոյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի համակարգող պրն. Տիգրան Մամիկոնյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության բնապահպանական հարցերով խորհրդատու տկն. Էդիտա Վարդգեսյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծային կազմակերպության տնօրեն պրն. Վահե Չիլինգարյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծային ինժեներ պրն. Էդգար Մակարյան



Նկր. 1. 2020թ.-ի հոկտեմբերի 29-ին Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարության հետ տեղի ունեցած ներածական հանդիպում

## Նախնական գնահատման հայտ

4. Կենտրոն վարչական շրջանի հետ ներածական հանդիպումը տեղի է ունեցել հոկտեմբերի 30-ին՝ 15:30-ին՝ Կենտրոն վարչական շրջանի վարչական շենքում: Հանդիպմանը ներկա էին՝

Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ պրն. Արմեն Ազիզյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի համակարգող պրն. Տիգրան Մամիկոնյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության բնապահպանական հարցերով խորհրդատու սկն. Էդիտա Վարդգեսյան

Նախագծող ընկերության «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի տնօրեն պրն. Վահե Զիլինգարյան



Նկր. 2. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարության հետ 2020թ.-ի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած ներածական հանդիպում

5. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալի հետ ներածական հանդիպումը տեղի է ունեցել նոյեմբերի 3-ին՝ 11:00-ին՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի վարչական շենքում: Հանդիպմանը ներկա էին՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալ պրն. Դավիթ Թումանյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի համակարգող պրն. Տիգրան Մամիկոնյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության բնապահպանական հարցերով խորհրդատու սկն. Էդիտա Վարդգեսյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծող ինժեներ պրն. Կարեն Խոջյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծող ինժեներ պրն. Էդգար Մակարյան



Նկր. 3. Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանի ղեկավարության հետ ներածական հանդիպումը տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 3-ին:

6. Ներածական հանդիպման ընթացքում նախագծային թիմը ներկայացրեց գծագրեր և Ծրագրի տեխնոլոգիական ու ինժեներական մասով այլ մանրամասներ, ազդակիր համայնքների ներկայացուցիչները տեղեկացվեցին բնապահպանական ազդեցության գնահատման գործընթացի և մեղմացնող միջոցառումների պլանավորման ընթացքին:
7. Ազդակիր շրջանների ղեկավարների տեղակալները տեղեկացվել են նաև այն մասին, որ Ծրագրի նախաձեռնողները հանրային լսումներ են կազմակերպում ՀՀ օրենսդրության և ԱԶԲ անվտագության քաղաքականության համաձայն և խնդրում են աջակցելու և նպաստել այս գործընթացին՝ ապահովելով հանրային մասնակցությունը, որպիսի հանրային խորհրդակցությունը լինի արդյունավետ և իմաստավից: Վարչական շրջանների ներկայացուցիչները խոստացան ուսումնասիրել նախագծային գծագրերը և օժանդակել ծրագրի հետ կապված հայտարարությունների և տեղեկատվության հրապարակմանը և տարածմանը՝ տեղադրել հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունը իրենց կայքէջերում և փակցնել դրանք հանրային տեսանելի վայրերում:
8. Ազդակիր և այլ շահագրգիռ անձանց շրջանում հրապարակման և տարածման համար ազդակիր վարչական շրջանների ղեկավարներին է ներկայացվել հայտարարության հետևյալ տեքստը .

## **ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

### **ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը պլանավորում են ՔԿԶՆԾ-ի շրջանակներում իրականացնել **ԻՍԱԿՈՎ - ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ**՝ որպես Երևանի՝ գոյություն ունեցող Իսակով - Լենինգրադյան ճանապարհահատվածի տրամաբանական շարունակություն, որը կապող օղակ է համարվում Իսակով և Արշակունյաց պողոտաների միջև: Ծրագրի նպատակն է բարելավել Երևան քաղաքի երթևեկության շարժունակությունը և նվազեցնել տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը: Հիշյալ ճանապարհային հանգույցի կառուցման արդյունքում երթևեկությունը դուրս կբերվի քաղաքի կենտրոնից, ինչն էականորեն կնվազեցնի ճանապարհի վրա ծախսվող ժամանակը և երթևեկության գերբեռնվածությունը:

Հետաքրքրված բոլոր անձինք և կազմակերպությունները կարող են մասնակցել հանրային քննարկումներին, որտեղ Ծրագիրը նախաձեռնողի ինժեներական և բնապահպանական թիմերը կներկայացնեն նախագիծը և ծրագրի հնարավոր բնապահպանական/առողջապահական և անվտանգային/սոցիալական ազդեցությունները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները: Հնարավորություն կտրվի քննարկելու ծրագիրը պատասխանատու մարմինների հետ, նախագծային փուլում բարձրացնելու հարցեր և ներկայացնելու առաջարկություններ:

Հանրային խորհրդատվությունը տեղի կունենա **2020թ.-ի նոյեմբերի 18-ին՝ չորեքշաբթի օրը, 14:00-ին:**

Վայրը՝ Շենգավիթի համայնքապետարանի շենք, 3-րդ հարկ, հանդիսությունների դահլիճ

Երևան, Գ. Նժդեհի փողոց, հ. 26

Հեռ.՝ +(374 11) 518 808

Հարցերի դեպքում դիմել՝

ՔԿԶՆԾ, Երևան քաղաքի ծրագրի իրականացման գրասենյակ

Երևան, Փ. Բյուզանդի փողոց 1/3, 5-րդ հարկ

Հեռ.՝ 374 (10) 520973, (10) 5565487



# ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2 Պաշտոնական ծանուցումներ ուղղված Շենգավիթ, Կենտրոն, Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանների ղեկավարներին



ՀԱՏԱՏՄԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1  
Հեռախոս՝ +374 11 584404  
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr  
Ծրագրի No՝ 130115L

Ում՝	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար պարոն Ռազմիկ Մկրտչյանին
Պատճենը՝	«ԵՎՆ ՄԻԳ» -ի ծրագրի ղեկավար տիկին Լորա Մարտիրոսյանին «ԵՎՆ ՄԻԳ» -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2020/666

9-ը նոյեմբերի, 2020թ.

### *Թեմա՝ Հանրային խորհրդատվության կազմակերպում*

Կոնտակտային անձ՝	Էդիտա Վարդգեսյան
Հեռախոս՝	+374 93 606017
Էլ. փոստ՝	editavard@gmail.com

Նախարարող գրություններ՝ անկա չեն

Հարգելի պարոն Մկրտչյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի երթևեկության շարժունակությունը բարելավելու և տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորում են իրականացնել ԻՍԱԿՈՎ- ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ քաղաքային տրանսպորտի ծրագիրը:

Ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՎՆ ՄԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի կազմակերպում է ՀԱՆՐԱՅԻՆ ԻՈՐՀՂՆԴՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ /ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ/, որտեղ հանրությունը և ծրագրի ազդակիր մարդիկ կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել իրենց կարծիքները և քննարկել իրենց հուզող հարցերը ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի հետ:

Հայցում ենք Ձեր աջակցությունը 2020թ.-ի նոյեմբերի 18-ին, ժ. 14:00-ին կայանալիք հանրային քննարկումների կազմակերպման և Շենգավիթ վարչական շրջանի ազդակիր բնակիչների, գործող բիզնեսների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությունն ապահովելու գործում:

Egis International  
15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France  
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - [www.egis.fr](http://www.egis.fr) - S.A.S au capital de 14 855 100 Euros  
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B





Սույն նպատակով խնդրում ենք.

- Ապահովել միջոցառման նախագահումը Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կամ թաղապետարանի ներկայացուցչի կողմից,
- միջոցառման անցկացման համար տրամադրել Շենգավիթի թաղապետարանի հանդիսությունների դահլիճը (ենթադրվող տևողությունը 1-2 ժամ),
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել թաղապետարանի հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր բնակելի թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քաննարկումների մասին հայտարարությունը թաղապետարանի վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում:

Առդիր՝ հայտարարության տեքստը, մեկ էջ:

Հարգանքով,



ՀԱՅԱՍՏԱՆԹԱՆ ԱՄՆԱԿԱՑՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1  
Հեռախոս՝ + 374 11 584404  
Էլ. փոստ՝ richard.chadant@egis.fr  
Մրագրի No՝ 130115L

Ում՝	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Ավետ Գոգոյանին
Պատճենը՝	«ԵՎՆ ՄԻՊ» -ի ծրագրի ղեկավար տիկին Նորա Մարտիրոսյանին «ԵՎՆ ՄԻՊ» -ի տեխնիկական մասնագետ պարոն Կարգան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2020/667

9-ը եղեմբերի, 2020թ.

**Թեմա՝ Հանրային խորհրդատվության կազմակերպում**

Կոնսուլտային սեմ՝ Հեռախոս՝ Էլ. փոստ՝	Էդիտա Կարգեայան +374 93 606017 editavard@gmail.com
Նախորդող գրություններ՝	անկա չկն

Հարգելի պարոն Գոգոյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի էրթնեկության շարժունակությունը բարելավելու և տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորում են իրականացնել ԽՍՀՄ-ՎՍՄՄ-ԱՐԵՄԿՈՒԹԱՑ ԿԱՆԱԳԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ քաղաքային տրանսպորտի ծրագիրը:

Մրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՎՆ ՄԻՊ) կազմում ստեղծված աշխատասեղային խմբի կազմակերպում է ՀԱՐԿԱՑՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ /ԲՆԱՎՈՒՄՆԵՐ/, որտեղ հանրությունը և ծրագրի ազդակիր մարդիկ կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ եղված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել իրենց կարծիքները և քննարկել իրենց հուզող հարցերը ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի հետ:



Քանի որ ծրագրի հասմաններից մեկն իրականացվելու է Վեներոն վարչական շրջանի տարածքում, ապա հայցում ենք Ձեր աջակցությունը հանրային քննարկման միջոցառմանը Վեներոն վարչական շրջանի շահագրգիռ կողմերի՝ ազդակիր բնակիչների, գործող բիզնեսների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությունը և մասնակցությունը ապահովելու գործում (ներառյալով տևողությունը 1-2 ժամ):

Միջոցառումը տեղի կունենա 2020թ.-ի նոյեմբերի 18-ին, ժ. 14:00-ին Շենգավիթի քաղապետարանի շենքի հասեղնաբյուրոների դահլիճում:

Մույն նպատակով խնդրում ենք.

- ապահովել Վեներոն վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությունը,
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել քաղապետարանի հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր բնակիչի թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քննարկումների մասին հայտարարությունը քաղապետարանի վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում,
- հնարավորության սահմաններում բնակիչներին և բիզնեսներին ներկայացուցիչներին տեղեկացնել անհատապես:

Առդիր՝ հայտարարության տեքստը, մեկ էջ:

Հարգանքով,

Ռիչարդ Տարյանի

«Էզիս ինքերևելիչ» ընկերության  
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյնս Բրայս 19/1  
Հեռախոս՝ +374 11 584404  
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr  
Մրագրի No՝ 130115L

Ում՝	Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ղեկավար պարոն Դավիթ Կարապետյանին
Պատճենը՝	• ԵՎՆ ՄԻԳ -ի ծրագրի ղեկավար տիկին Լորա Մարտիրոսյանին • ԵՎՆ ՄԻԳ -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2020/668

9-ը նոյեմբերի, 2020թ.

**Թեմա՝ Հանրային խորհրդատվության կազմակերպում**

Կոնտակտային անձ՝  
Հեռախոս՝  
Էլ. փոստ՝

Էդիտա Վարդգեսյան  
+374 93 606017  
editavard@gmail.com

Նախորդող գրություններ՝

անկա չեն

Հարգելի պարոն Կարապետյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի երթևեկության շարժունակությունը բարելավելու և տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորում են իրականացնել ԻՄԱԿՈՎ- ԱՐԵԱԿՈՒՆՅԱՑ ԿԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ քաղաքային տրանսպորտի ծրագիրը:

Մրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ի դեմս Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՎՆ ՄԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի կազմակերպում է ՀԱՆՐԱՅԻՆ ԻՌՀՂՂՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ /ՔՆԱՐԿՈՒՄՆԵՐ/, որտեղ հանրությունը և ծրագրի ազդակիր մարդիկ կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել իրենց կարծիքները և քննարկել իրենց հուզող հարցերը ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի հետ:

**Egis International**

15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France  
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - [www.egis.fr](http://www.egis.fr) - S.A.S au capital de 14 855 100 Euros  
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B





ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյնս Բրայս 19/1  
Հեռախոս՝ +374 11 584404  
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr  
Մրագրի No՝ 130115L

Ում՝	Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ղեկավար պարոն Դավիթ Կարապետյանին
Պատճենը՝	• ԵՎՆ ՄԻԳ -ի ծրագրի ղեկավար տիկին Լորա Մարտիրոսյանին • ԵՎՆ ՄԻԳ -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2020/668

9-ը նոյեմբերի, 2020թ.

**Թեմա՝ Հանրային խորհրդատվության կազմակերպում**

Կոնտակտային անձ՝  
Հեռախոս՝  
Էլ. փոստ՝

Էդիտա Վարդգեսյան  
+374 93 606017  
editavard@gmail.com

Նախորդող գրություններ՝

անկա չեն

Հարգելի պարոն Կարապետյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի երթևեկության շարժունակությունը բարելավելու և տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով պլանավորում են իրականացնել ԻՄԱԿՈՎ- ԱՐԵԱԿՈՒՆՅԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ քաղաքային տրանսպորտի ծրագիրը:

Մրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ի դեմս Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՎՆ ՄԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի կազմակերպում է ՀԱՆՐԱՅԻՆ ԻՈՐՀՂԴՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ /ՔՆԱՐԿՈՒՄՆԵՐ/, որտեղ հանրությունը և ծրագրի ազդակիր մարդիկ կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել իրենց կարծիքները և քննարկել իրենց հուզող հարցերը ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի հետ:

**Egis International**

15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France  
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - [www.egis.fr](http://www.egis.fr) - S.A.S au capital de 14 855 100 Euros  
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B



## Նախնական գնահատման հայտ

Միջոցառումը տեղի կունենա 2020թ.-ի նոյեմբերի 18-ին, ժ. 14:00-ին Շենգավիթի թաղապետարանի շենքի հանդիսությունների դահլիճում:

Սույն նպատակով խնդրում ենք.

- ապահովել Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությունը,
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել թաղապետարանի հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր բնակելի թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քննարկումների մասին հայտարարությունը թաղապետարանի վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում,
- հնարավորության սահմաններում բնակիչներին և քիզնեսների ներկայացուցիչներին տեղեկացնել անհատապես:

Առդիր հայտարարության տեքստը, մեկ էջ:

Հարգանքով,



### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3. 1-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Առաջին հանրային քննարկումն անցկացվել է 2020 թվականի նոյեմբերի 18-ին: Քննարկման նպատակն էր ապահովել ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկումը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (2014) Գլուխ 6-ի Հոդված 26-ի և «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության N 1325-Ն որոշման պահանջների (19.11.2014), ինչպես նաև «Հանրային քննարկումների անցկացման և տեղեկատվության հրապարակման մասին» ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հիմնադրույթների (2009)
2. Հանրային քննարկումների իրականացման մասին տեղեկատվական ծանուցումը փակցվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2020 թվականի նոյեմբերի 4-ի հրատարակման մեջ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Զ-Ա, ինչպես նաև կցված է սույն հաշվետվությանը թղթային տարբերակով):
3. Հայտարարություններ են փակցվել հանրային տեսանելի վայրերում:



4. Հայտարարությունները նաև առձեռն հանձնվել են բոլոր ազդակիր վարչական շրջանների բնակիչներին և գործող ձեռնարկատերերի ներկայացուցիչներին:







5. Հայտարարությունը և մասնակցության հրավերը Երևան Օրիուս կենտրոնի ցանցի միջոցով տարածվել է ՀԿ-ներին:
6. Հանրային քննարկումը տեղի է ունեցել Շենգավիթ թաղապետարանի շենքում և ղեկավարվել պրն. Արմեն Բողոյանի կողմից՝ որպես ազդակիր համայնքի՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ: Հանրային քննարկման արձանագրությունը, այդ թվում՝ մասնակիցների ցուցակը և մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների և հուզող հարցերի մասին ամբողջական տեղեկատվությունը պատշաճ կերպով փաստաթղթավորվել է և տեսաձայնագրության հետ միասին 2 էլեկտրական կրիչներով (Էլ. սկավառակներ) և արձանագրության թղթային տարբերակով կցվել սույն հաշվետվությանը որպես ՀԱՎԵԼՎԱՄ Զ-3:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-1. Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2020թ.-ի նոյեմբերի 4-ի համարում լույս տեսած հանրային քննարկման մասին հայտարարությունը:

**Հայաստանի Հանրապետություն** **ԷԶ 5**  
4 ՆՈՅԵՄԲԵՐ 2020,  
ՉՈՐԵԶՇՈՒՄԻ

**Ազդեցություն**


*Հանաս «գրկնկ է իսկողն) նագկս) է րարսս իսիր են) մակերն) հիմնկեց) նական շ 18-րդ դս եղան, ես*

**ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆՎՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՐԱՄԱՎ ՄԻՋԱՎԱՅԻ ԳԱՂՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՁԱԼ**  
Երևանի հաղաթյին կայուն զարգացման ծրագիր  
ՀՀ կառավարությունը և Երևանի հաղաթյան քաղաքապետարանը ղեկավարում են իրականացնել Երևան հաղաթի երկնեկության արժույթային քաղաքական և սրահայտային համակարգի ծանրաբեռնվածության նվազեցման ծրագիր, որի արգելափակում կիրականացվի **ԻՍԱԿՈՎ-ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԾԱՆԿԱՐԳԱՅԱՎՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ:**

Դուք հրավիրված եմ մասնակցելու համային խորհրդակցության, որտեղ կարող եմ առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նվազ ծրագրի նախագծի վերաբերյալ և հնարավորություն կունենամ փախանակել Ձեր կարծիքները և ֆեդերել Ձեզ հուզող հարցերն իմ ժամանակահատվածում թիմի հետ՝ մասնավորապես խնդիրը վերաբերվում է արգելա փախային դաշտային դաշտային:

Ժամը՝ 14:00-ին  
Չորեքաթի, 18 նոյեմբերի 2020թ-ի  
Վայրը՝ Ենդգավիթ վարչական արգելա քաղաքապետարանի ԵԵԲ,  
3-րդ հարկ, հանդիսությունների դահլիճ  
Հասցե՝ Բ. Երևան, Գ. Եժեղի, 26  
Հեռ՝ +(374 11) 518 808  
Հարցերի դեղումը դիմել  
Երևանի հաղաթյան քաղաքապետարանի <Երևանի կառուցարանային ներդրմային ծրագրի իրականացման գրասենյակի> (ԵԿՆ ԾԻԳ) կազմում սեղծված առխասանային խումբ

Բ. Երևան, Գ. Թյուզանդի, 1/3, 5-րդ հարկ  
Հեռ՝ 374 (10) 520973



**ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-2. 2020թ.-ի նոյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 2**

**Իսակով- Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման**

**շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում հանրային քննարկումների վերաբերյալ**

**Ծրագրի համար**

**Ծրագրի վերնագիր**

**Առարկա**

Իսակով- Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագրի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների նախնական ներկայացում

**Օրը/ ժամը`**

18 նոյեմբերի 2020 թ. / 14:00- 16:00

**Վայրը`**

Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանի շենք, 3-րդ հարկ, հանդիսությունների դահլիճ

**Հասցե`**

ք. Երևան, փ. Գ. Նժդեհի 26

**Մասնակցում էին**

1. Արամ Հայրապետյան, Շենգավիթ վարչական շրջանի Կոմունալ տնտեսության և ԲՇԿՄՀԱԿ բաժնի պետի տեղակալ
2. Երվանդ Բալայան, Կենտրոն վարչական շրջանի Տերյան ԿԿ առաջատար մասնագետ
3. Խաչատուր Կուրդոյան, Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի Քաղ. և հողօգտ. բաժնի գլխավոր մասնագետ
4. Տիգրան Օգանեզով, Ասիական Զարգացման Բանկի խորհրդատու
5. Արմեն Բողոյան, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 2, բնապահպանության մասնագետ

## Նախնական գնահատման հայտ

6. Տիգրան Մամիկոնյան, ծրագրի համակարգող, EGIS International խորհրդատվական կազմակերպություն
7. Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն, ծրագրի բնապահպանության խորհրդատու,
8. Վահե Չիլինգարյան, ՍՈՒՖԵՏ նախագծային կազմակերպություն, տնօրեն,
9. Անդրանիկ Օբազյան, ՍՈՒՖԵՏ ՍՊԸ նախագծային կազմակերպություն, ճարտարապետ
10. Կարեն Խոջոյան, ՍՈՒՖԵՏ ՍՊԸ նախագծային կազմակերպություն, ինժեներ- նախագծող
11. Ռուզաննա Ղազարյան, Դալմա- Սոնա հիմնադրամի նախագահ
12. Սիլվա Այվազյան, Երևանի Օրիուս կենտրոն
13. Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջանի բնակիչներ
14. այլ մասնակիցներ թվով 29 հոգի (ընդհանուր ցուցակը տես Հավելված 1)

**Օրինակներ՝** Արձանագրության բնօրինակները ներկայացված են

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն Շրջակա միջավայրի  
գնահատման փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ին  
Երևան քաղաքի ԾԻԳ-ին  
EGIS International խորհրդատվական կազմակերպությանը

**Հավելվածներ՝** Մասնակիցների ցուցակը

Հայաստանի Հանրապետություն օրաթերթում հայտարարությունը

Լուսանկարներ

Տեսագրությունը և ձայնագրությունը պարունակող էլեկտրոնային կրիչը

**Օրակարգը՝** Ծրագրի ընդհանուր ինժեներա- տեխնիկական նախագծային մասի,  
բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում

### 1. Բացման խոսք

Հանրային քննարկման միջոցառումը ողջունի խոսքով բացեց Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 2-ի բնապահպանության մասնագետ Արմեն

Նախնական գնահատման հայտ

Բողոյանը (Ա.Բ.), ով նշեց, որ քննարկման միջոցառումը նվիրված է ՀՀ Կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվող Իսակով- Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագրին, որն իրականացվելու է ԱԶԲ վարկային միջոցներով, այդ թվում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններին: Նա ներկայացրեց ծրագրի նպատակը, այն է՝ բարելավել Երևան քաղաքի երթևեկության շարժունակությունը և նվազեցնել տրանսպորտային համակարգի ծանրաբեռնվածությունը:

Արմեն Բողոյանը տեղեկացրեց, որ ծրագրի նախագիծը հանձնարարվել է EGIS International միջազգային խորհրդատվական կազմակերպությանը և ՍՈւՖԵՏ տեղական նախագծային կազմակերպությանը: Նա հակիրճ ներկայացրեց հանդիպման օրակարգը նշելով, որ ծրագրի նախագծից հետո կներկայացվեն շրջակա միջավայրի վրա գնահատված հնարավոր ազդեցությունները, այնուհետև կտրվի ժամանակ հարցուպատասխանի համար, կլսվեն նախագծի և ՇՄԱԳ-ի վերաբերյալ բարձրացվող բոլոր հարցերը, որոնց կտրվեն պատասխաններ:

Նա նաև տեղեկացրեց, որ ՇՄԱԳ-ի վրա աշխատել է ծրագրի բնապահպանական թիմը՝ ի դեմս EGIS International խորհրդատվական կազմակերպության և ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի, ինչպես նաև ներգրավվել են առանձին բնապահպանական ոլորտների մասնագետներ, ինչպիսիք են՝ բուսաբաններ, կենդանաբաններ, երկրաբաններ, հնէաբաններ և այլն:

2. Ծրագրի ինժեներա- տեխնիկական նախագծային մասի ներկայացում

Այնուհետև խոսքը տրվեց նախագծող կազմակերպության տնօրեն Վահե Զիլինգարյանին (Վ.Զ.), ով ՊՊ շնորհանդեսի միջոցով նախ ներկայացրեց նախագծի ծրագիծը Շենգավիթ վարչական շրջանի հատվածում, այդ թվում գծագրի վրա ցույց տվեց կառույցների, շրջադարձերի և վերգետնյա անցումների տեղերը: Այնուհետև հետագա քննարկումը վերածվեց հարցուպատասխանի.

Ն	հարց	պատասխան	լրացում
1	Ռ. Ղ. Դավնա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Արդյոք ազդեցություն կա Երևանյան լճի վրա</i>	Վ.Զ. Ոչ, Երևանյան լիճը գտնվում է կառուցվող ճանապարհից բավականին մեծ հեռավորության վրա	-
2	Մ.Մ., բազմաբնակարանային շենքի լիազոր  <i>Բազմաբնակարանային շենքի նկատմամբ ինչ հեռավորության և ինչ բարձրության վրա է լինելու</i>	Վ. Զ. Ճանապարհը կառուցվելու է գոյություն ունեցող նիշի վրա,	-

	<p><i>Ճանապարհը</i></p>	<p>Արշակունյացի վրա լինելու է թունել, քանի որ էստակադայի գաղափարը մերժվել է նախկին գլխավոր ճարտարապետի կողմից: Բազմաբնակարանային շենքից հեռավորությունը մոտ 70 մ, նշենք, որ ներկայումս այդ շենքը գտնվում է Արշակունյաց պողոտայից ընդամենը 10 մ հեռավորության վրա, այնպես որ մեր ազդեցությունը չի կարող ավելի մեծ լինել</p>	
<p>3</p>	<p><i>Շենգավիթ համայնքի բնակիչ Քանի տուն է իրացվելու, արդյոք կան հստակ հասցեներ</i></p>	<p>Վ. Չ. Իրացման գործընթացն ապահովելու համար ստեղծված է հատուկ աշխատանքային խումբ, որը կազմակերպելու է այդ հարցին վերաբերվող հատուկ հանրային լսումներ:</p>	<p>Ա. Բ. Օտարումն իրականացվելու է 32 մ ճանապարհի պլյուս ճանապարհի սպասարկման գոտի ընդհանուր առմամբ մոտ 70մ լայնության չափով: Օտարման խմբի մասնագետները աշխատել են անհատականորեն յուրաքանչյուր օտարվող գույքի սեփականատիրոջ հետ</p>
<p>4</p>	<p><i>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ Ինչ գրուևտներ են ճանապարհի հատվածում? Շինարարությունն ինչպես է ազդելու տների վրա?</i></p>	<p>Վ. Չ. Այդ խնդիրը հաշվի է առնված, այս պահին կասկածելի տները ընդգրկված են մեր կողմից առաջարկվող լրացուցիչ օտարման պլանի մեջ; Միջազգային կազմակերպություն միջոցով իրականացվելու է</p>	<p>S.Մ., նախագծող Երկրաբանական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հիմնականում ժայռային գրուևտներ են, իսկ ազդեցությունը տների վրա որոշվելու է թրթռումների չափագրումների</p>

Նախնական գնահատման հայտ

		թրթռումների գործիքային չափագրում, որի հիման վրա կկայացվի վերջնական որոշում:	միջոցով:
5	Շենգավիթ համայնքի բնակիչ <i>Երբ է սկսվելու կառուցումը?</i>	Վ.Չ.  Այս պահին հստակ ժամկետներ դեռ չկան, սակայն ենթադրվում է, որ մյուս տարվա հուլիսին	-
6	Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ <i>Արդյոք կառուցվող ճանապարհը հատելու է Կոմիտասի այգին? Իսկ Պանթեոնը?</i>	Վ.Չ.  Այո, ցավոք դա, ինչպես նաև ծառերի հատումը անխուսափելի է:  Պանթեոնը ոչ, չի ընկնում ճանապարհի գոտու տակ, գտնվում է բավականին մեծ մոտ 70 մ հեռավորության վրա:	-
7	Շենգավիթ համայնքի բնակիչ <i>Արշակունյացի թունելի կառուցման ժամանակ գործող ճանապարհը կփակվի, իսկ տրվելու է արդյոք այլընտրանքային ճանապարհ?</i>	Վ.Չ.  Երթևեկության պլանը կառաջարվի միջազգային մասնագետների կողմից: Սակայն կարող եմ ասել, որ Արշակունյաց պողոտան ամբողջությամբ չի փակվի, գործող գոտիներից մեկը կպահպանվի վերածվելով երկկողմանի երթևեկության	-
8	Շենգավիթ համայնքի բնակիչ <i>Կառուցվելու է արդյոք կինո Հայրենիքի էստակադան?</i>	Վ.Չ.  Այս պահի դրությամբ, ոչ:	

Նախնական գնահատման հայտ

Այնուհետև Վահե Չիլինգարյանը ներկայացրեց ճանապարհի ծրագիծը Կենտրոն և Մալաթիա -Սեբաստիա շրջանների հատվածում, այդ թվում կառույցները՝ կամուրջները, շրջադարձներն ու մուտքերը: Մանրամասնվեցին Երևան քաղաքի բոլոր հատվածներից դեպի նորակառույց ճանապարհ մուտք գործելու հնարավորությունները: Ներկայացմանը հետևեցին ճանապարհի այս հատվածին վերաբերվող հարցերը

Ն	հարց	պատասխան	լրացում
	Նորագյուղի բնակիչ  <i>Հին ճանապարհին ինչպես պետք է լինի?</i>	Վ.Զ.  Էջմիածնի հին ճանապարհը պահպանվում է, ուղղակի մի փոքր մոտ 10 մ տեղափոխվելու է դեպի Նորագյուղ և ընթանալու է կառուցվող ճանապարհին զուգահեռ: Կառուցվում է կամուրջ հիմնականում այն նպատակով, որ հին ճանապարհը որպես Երևան –Էջմիածին ամենահին ճանապարհ պահպանվի:	
9	Նորագյուղի բնակիչ  <i>Մենք ունենք հուշարձան, որն արդեն մեկ անգամ նախորդ ճանապարհաշինարարության ճամանակ տեղափոխվել է: Այս անգամ ինչպես պետք է լինի</i>	Վ.Զ.  Մեր ճանապարհը հուշարձանից հեռու է լինելու, սակայն մենք մեկ անգամ ևս կստուգենք հուշարձանի դիրքը շինարարության նկատմամբ	-
10	Նորագյուղի բնակիչ  <i>Նորագյուղի բնակիչը ինչպես կարող է մտնել Արշակունյաց գնացող ճանապարհի վրա?</i>	Վ.Զ.  Այո, դա հնարավոր կլինի երեքնուկի թևերից մեկի միջոցով	-
11	Նորագյուղի բնակիչ	Վ.Զ.	-



Նախնական գնահատման հայտ

	<i>Ում անունով է լինելու նոր ճանապարհը?</i>	Այս պահին չեմ կարող պատասխանել: Այդ հարցի պատասխանը գտնվում է քաղաքային իշխանությունների իրավասության ներքո:	
12	Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Ինչքան ժամանակ կպահանջվի ուղևորին Բսակով պողոտայից մինչև Արշակույանց հասնելու համար</i>	Վ.Չ.  2 կմ քաղաքային նշանակության ճանապարհ է 60 կմ/ժ արագությամբ, հետևաբար կպահանջվի մոտ 3 րոպե	-
	Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Ինչպես կարող ենք ծանոթանալ ծրագրի փաստաթղթերին?</i>	Ա.Բ.  Այս պահից բնապահպանական և սոցիալական ազդեցության մասին տեղեկատվությունը կտեղադրվի Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի կայքում, ինչպես նաև ՇՄԱԳ հաշվետվությունը պատրաստ լինելուն պես նաև ՇՄ փորձաքննության ՊՈԱԿԻ կայքում	-

2. Ծրագրի բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում Այնուհետև խոսքը փոխանցվեց խորհրդատու կազմակերպության բնապահպանության մասնագետ՝ Էդիտա Վարդգեսյանին (Է.Վ.), ով ներկայանալուց հետո տեղեկացրեց, որ պատասխանատու է ՇՄԱԳ գործընթացի համակարգման աշխատանքների համար:

## Նախնական գնահատման հայտ

Էդիտա Վարդգեսյանը տեղեկացրեց, որ ծրագիրն իրականացվում է ԱԶԲ վարկավորմամբ և ըստ այդմ հաշվի են առնվում ինչպես ՀՀ օրենսդրության և առաջին հերթին Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջները, այնպես էլ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) Անվտանգությունների Քաղաքականության դրույթները:

Է. Վարդգեսյանն ընդգծեց, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը սկսվել է հնարավորինս շուտ, քանի դեռ ծրագիրը գտնվում է նախագծման փուլում, որիպիսի ինժեներա- նախագծային աշխատանքների հետ զուգընթաց իրականացվի նախագծային լուծումների քննարկումը բնապահպանական տեսանկյունից և անմիջապես գնահատվի դրանց հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ընդ որում շրջակա միջավայր հասկացությունը ներառել է ոչ միայն բնությունը, այլև սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև անվտանգության ապահովման հետ կապված հարցերը:

Էդիտա Վարդգեսյանը նշեց, որ նախ իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատում՝ ծրագրի բնապահպանական կատեգորիան որոշելու նպատակով: Նախնական գնահատումն իրականացվել է ԱԶԲ համապատասխան գործընթացով, այն է՝ Արագ գնահատման ստուգաթերթիկի լարացման միջոցով, ինչպես նաև կիրառվել է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի գլուխ 3, հոդված 14-ը, որի համաձայն ծրագիրը որակավորվել է Բ կատեգորիա: Դա նշանակում է, որ ծրագիրն ենթարկվելու է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, որի շրջանակներում իրականացվելու են հանրային քննարկումներ և լսումներ, այդ թվում այսօրվա քննարկումը:

Վեր են հանվել հիմնական հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև առաջարկվել են դրանց ավելի խորը և մանրամասն ուսումնասիրության շրջանակները և մեթոդաբանությունը: Այս ամենն համապատասխանաբար ամփոփվել է Նախնական գնահատման հաշվետվության տեսքով:

Է. Վարդգեսյանն ընդգծեց, որ ազդեցությունները գնահատելիս հաշվի են առնվել ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջները, ինչպես նաև ԱԶԲ ուղեցույցը: Նա նշեց, որ իրականացվել է ծրագրի բոլոր հնարավոր ազդեցությունների ինչպես դրական, այնպես էլ բացասական ավելի մանրամասն ուսումնասիրություն և ներկայացրեց ծրագրի ՇՄԱԳ փաստաթղթի բովանդակությունը:

Ծրագիրն անշուշտ ունենալու է ինչպես բնապահպանական, ճանապարհային և հանրային անվտանգության, այնպես էլ սոցիալական բնույթի դրական էֆեկտներ: Դրական արդյունքներից կլինի այն, որ ծրագրի շնորհիվ ճանապարհային երթևեկությունը կշեղվի Երևան քաղաքի կենտրոնից, դրանով իսկ զգալիորեն կթեթևանա կենտրոնի փողոցների ծանրաբեռնվածությունը, կիջնի խցանումների հավանականությունը և հետևաբար կնվազի ճանապարհի վրա ծախսվող ուղեվորա- և բեռնա- փոխադրումների ժամանակը: Ենթադրվում է, որ նոր ճանապարհի շնորհիվ բարելավված հասանելիությունը հեռանկարում կխթանի և կնպաստի Երևանի տնտեսական աճին: Այս պահին դժվար է

**Նախնական գնահատման հայտ**

կանխատեսել սոցիալ- տնտեսական օգուտները, սակայն նվազագույնս հնարավոր կլինի ժամանակավոր զբաղվածություն ապահովել տեղաբնակների համար:

Ժամանակակից և միջազգային ստանդարտներին համապատասխանող նշագծումների շնորհիվ կբարձրանա ճանապարհային երթևեկության անվտանգությունը;

Ճանապարհային խցանումների կրճատումը, ինչպես նաև ճանապարհամերձ բարեկարգումն ու կանաչապատումը դրականորեն կանդրադառնան օդի որակի վրա: Բարեկարգման և կանաչապատման նախագծումն ու իրականացումը, ինչպես նաև հնուց կուտակված կենցաղային և շինարարական աղբի հեռացումը թույլ կտա զգալիորեն գեղեցկացնել քաղաքի այս հատվածը և ապահովել էսթետիկական տեսքը, ինչը նույնես դրական արժեք է համարվում:

Էդիտա Վարդգեսյանը նշեց, որ վեր են հանվել ցավոք նաև բացասական ազդեցություններ: Առանձնացվել են այսպես կոչված զգայուն ազդակիրները, որոնց թվում է առաջին հերթին Հրազդան գետը, որի վրայով կամուրջ է կառուցվելու: Բացասական ազդեցությունների կառավարման համար մշակվելու և Բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ) նախատեսվելու են մի շարք մեղմացնող միջոցառումներ: Նա ընդգծեց, որ ազդեցությունների մեծ մասը հիմնականում ժամանակավոր բնույթ է կրում, տևելու են միայն շինարարության ընթացքում: Դրանց թվին են պատկանում շինարարական տեխնիկայի տեղաշարժով պայմանավորված քաղաքային ճանապարհների արգելափակումը, տեխնիկայի աշխատանքով պայմանավորված աղմուկը, զազային արտանետումները, հողային աշխատանքների առաջացրած փոշին, շինարարական նյութերի և թափոնների կույտերը, այս բոլոր հանգամանքներով պայմանավորված տեղական բնակչությանը պատճառած ժամանակավոր անհանգստությունները:

Է. Վարդգեսյանը հատուկ ընդգծեց, որ ծրագրի բնապահպանական կառավարման արդյունավետության տեսանկյունից նախապատվությունը տրվել է նախագծային լուծումներով ազդեցություններից խուսափելուն, այնուհետև միջոցառումների պլանը մշակելիս առաջնային են համարվել կանխարգելիչ միջոցառումները, և միայն այն դեպքում, երբ դա հնարավոր չի եղել դիմել են փոխհատուցման միջոցառումներին: Նա նշեց նաև, որ բնապահպանական կառավարման պլանը որպես անբաժան մաս կցվելու է շինարար կապալառու կազմակերպության հետ պայմանագրին և պարտադիր է լինելու կատարման համար: Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում ԲԿՊ-ի կատարումը վերահսկվելու է Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի կողմից;

Է. Վարդգեսյանի ելույթն ընդհատվեց դահլիճից տրվող հարցերով, որոնք ամփոփված են ստորև

Ն	հարց	պատասխան	լրացում
1	Կենտրոն շրջանի բնակիչ <i>Ինչպես կարող ենք ծանոթանալ ազդեցության</i>	Է.Վ.  Այս պահի դրությամբ առկա է միայն նախնական	Է.Վ.  Հարցի կապակցությամբ

	<p><i>գնահատմանը?</i></p>	<p>գնահատումը, ՇՄԱԳ գործընթացն ընթացքի մեջ է գտնվում: Սակայն մենք կարևորում ենք տեղեկատվության հասանելիության սկզբունքը; ՇՄԱԳ հաշվետվությունը պատրաստ լինելու պահին կտեղադրվի և հանրությանը հասանելի կլինի Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի և ԱԶԲ կայքերում: Հանրությունը հնարավորություն կունենա նախորոք ծանոթանալ փաստաթղթի հետ և հաջորդ լսմանը ներկայանալ հարցերով:</p>	<p>կարևորեց ընդգծել հանդիպման նպատակը, այն է՝ հանրությանը արդեն իսկ նախնական փուլում ներկայացնել ծրագիրը և այս պահի դրությամբ վերհանված ազդեցությունները, լսել հանրության կարծիքը և պարզել այն օբյեկտները, որոնք կարևորվում են հասարակության կողմից, որոշելու համար արդյոք դրանք հաշվի են առնվել և/կամ պլանավորվել է արդյոք դրանց կանխարգելիչ/մեղմացուցիչ միջոցառումը:</p>
2	<p>Շենգավիթի բնակիչ <i>Ծառահատում լինելու է?</i></p>	<p>Է.Վ. Այո, ցավոք ծառահատումներից խուսափել չստացվեց: EGIS International կազմակերպությունը վարձել է համապատասխան կենսաբազմազանություն գնահատելու համար ազդեցությանը բուսական և կենդանական աշխարհի վրա: Մասնագետներն առաջարկելու են նաև այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ կլինեն ազդեցությունից խուսափելու կամ մեղմացնելու համար:</p>	<p>Է.Վ. Հաշվառվելու են բոլոր հատվող ծառերը և թփերը ըստ քանակի և տեսակի: Կազմվելու է Կանաչապատման նախագիծ և ԲԿՊ-ում նախատեսվելու է հատվող ծառերի փոխարեն տնկել 1:6 հարաբերակցությամբ:</p>
	<p>Ռ. Ղ. Դալմա-Սոնա հիմնադրամի նախագահ <i>Ձեր կարծիքով այդ նոր տնկած ծառերը քանի</i></p>	<p>Է.Վ. Հանրության մտահոգությունը հասկանալի է, սակայն</p>	<p>Ա.Բ. Ի հարկե կտրած հասուն ծառին ոչինչ չի կարող փոխարինել,</p>

	<p><i>տարում կհասնեն հասուն ծառի հզորությանը, որ թթվածին ապահովի այդ տարածքում</i></p>	<p>այլընտրանքը կլինեք, որ ճանապարհը չկառուցվի</p> <p>Նախորդ ծրագրերի փորձից գիտենք, որ ճանապարհամերձ հատվածում նախատեսված ծառերի քանակությունը չի տեղավորվում, այդ պատճառով դիմելու ենք համապատասխան վարչական շրջանի ղեկավարությանը լրացուցիչ տարածք տրամադրելու խնդրանքով</p>	<p>սակայն մենք վարձել ենք մասնագետներ, և հաշվարկներով 1:6 հենց այն հարաբերակցությունն է, որ թույլ կտա փոխարինել 1 կտրած ծառը: Ինչպես նաև մասնագետների առաջարկով կանաչապատման նախագծում կորոշվեն այդ ծառերի և թփերի տեղերը, որպիսի դրանք առավել օգտակար պաշտպանիչ շերտ ձևավորեն</p>
	<p>Ռ. Ղ. Դավա-Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Ներկա է արդյոք կանաչապատման ՊՈԱԿի ղեկավարության ներկայացուցիչը?</i></p>	<p>Ա.Բ.</p> <p>Շենգավիթի կոմունալ բաժնի պետի տեղակալը ներկա էր, սակայն այս պահին դուրս է եկել</p> <p>Կանաչապատումը ենթադրելու է նաև այլ տարրեր, ինչպիսիք են ճիմապատումը, ոռոգման համակարգը</p>	<p>Է.Վ.</p> <p>Կանաչապատման նախագիծը և դրա հետ կապված հարցերը համաձայնեցվելու են Երևանի քաղաքապետարանի կանաչապատման բաժնի հետ</p>
	<p>Ռ. Ղ. Դավա-Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Ես մտահոգ եմ ներկա սերնդի համար: Խիտ բնակեցված տարածքում մեծ ծառերը հանում էք, փոշի է լինելու: Ինչպիսին է լինելու ազդեցությունը մարդկանց առողջության վրա</i></p> <p><i>Առաջարկում եմ մոնիտորինգի պլանի մեջ ավելացնել մի կետ Մարդկանց առողջությանը հասցված վնասի</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Ազդակիր բնակչության առողջության վրա ազդեցությունները որոշելու համար վարձելու ենք մասնագիտացված կազմակերպություն, որը մոնիտորինգի պլանի հիման վրա, կիրականացնի փոշու, աղմուկի և թրթռումների պարբերական չափագրումներ: Ստացված արդյունքները կհամեմատվեն ելակետային տվյալների հետ, ինչպես նաև ՀՀ</p>	<p>-</p>

Նախնական գնահատման հայտ

	<p><i>մոնիտորինգը՝ քանի հոգի են դիմել իրենց պոլիկլինիկա կամ հիվանդանոց,</i></p>	<p>սահմանային թույլատրելի մեծությունների և միջազգային ստանդարտների հետ: Արդյունքները ներկայացվելու են հաշվետվություններում և ամփոփ տեսքով հասանելի կլինեն կիսամյակային հաշվետվության մեջ, որը կտեղադրվի Երևանի Քաղաքապետարանի ԾԻԳ-ի կայքում: Եթե հասարակությունը մտահոգություններ ունեն մեր կողմից կատարվող չափազրումների վերաբերյալ, ապա հանրության հսկողությունը ողջունելի կլինի:</p>	
	<p>Ս. Ա., Երևանի Օրիուս կենտրոն</p> <p><i>Հայաստանում լիցենզիա ունեցող կազմակերպություններ կան, որոնք կարող են բնապահպանական չափազրումներ իրականացնել?</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Լիցենզավորված կազմակերպություններ չկան, սակայն մենք ստուգում ենք այդ կազմակերպությունների սարքավորումների սերտիֆիկատների առկայությունը:</p>	<p>S.O., ԱԶԲ խորհրդատու</p> <p>ՀՀ օրենսդրությունը նման գործունեության լիցենզավորում չի պահանջում: Այս պահին ՀՀ-ում նման գործունեությամբ զբաղվող 10-ից ավելի կազմակերպություններ կան, ինչպես նաև անհատ ձեռներեցներ:</p> <p>Ա.Բ. Ընտրվող կազմակերպությունը հաստատվում է Քաղաքապետարանի ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կողմից</p>
	<p>Ռ. Ղ. Դավա-Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Ես պահանջ եմ ներկայացնելու յուրաքանչյուր բնակչի համար</i></p>	<p>Է. Վ.</p> <p>Եթե ծանոթանաք SUDIP ծրագրի նախապատմությանը, ապա կարող եք տեսնել, որ նախկինում ունեցել ենք</p>	<p>-</p>

Նախնական գնահատման հայտ

	<p><i>ապահովագրություն մարդկանց առողջությանը հասցված վնասի փոխհատուցման համար</i></p>	<p>նման փորձ, այսինքն առողջության հետ կապված վնասը փոխհատուցվել է:</p>	
	<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Մարդիկ պետք է տեղեկացված լինեն, որ դուք մտածում եք իրենց առողջության մասին</i></p>	<p>Է. Վ.</p> <p>Այսօրվա քննարկումից առաջ շրջել ենք ազդակիր հատվածներում, փակցրել ենք հայտարարություններ, անձամբ մոտեցել ենք բնակիչներին և բիզնեսներին և առաջարկել ենք մասնակցել միջոցառմանը:</p> <p>Ավելին, շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախաշինարարական հանդիպումներ են կազմակերպվելու տեղական բնակչության հետ և ավելի մանրամասն է ներկայացվելու ԲԿՊ-ն:</p>	<p>Է. Վ.</p> <p>Ծրագրում ներդրվելու է Բողոքների անդրադարձի մեխանիզմը, որի համակարգում լինելու են սոցիալական մասնագետներ, կոնտակտային անձի տվյալները պարունակող պաստառներ, վարվելու է բողոքների / առաջարկների գրանցամատյան, որը պարբերաբար ստուգվելու է վերահսկող կազմակերպության կողմից:</p> <p>Հավելեմ, որ ԱԶԲ-ը նույնպես վերահսկում է այդ պրոցեսը, մեծ ուշադրություն է դարձնում մարդկանց բողոքներին</p>
	<p>Ս. Ա. Երևանի Օրիուս կենտրոն</p> <p><i>Ողջունում եմ ձեր կանաչապատման ծրագիրը, սակայն արդյոք ունեք նախնական գնահատական թե քանի ծառ է հատվելու? Արդյոք հնարավոր չէր խուսափել? Ավելի լավ է ճանապարհը մի քիչ երկարի, բայց ծառեր չկտրվեն:</i></p>	<p>Ա.Բ.</p> <p>Քաղաքապետարանը նախագծող թիմի հետ միասին հատուկ աշխատել են այդ ուղղությամբ և ընտրել են ամենաքիչ ազդեցություն ունեցող ծրագիրը: Եթե ուշադրություն դարձնեք, կտեսնեք, որ ճանապարհը ուղիղ չի անցնում, որոշակի հատվածում թեքվում է և դա կապված է</p>	<p>Վ.Զ.</p> <p>Հիմնականում հատվելու են Արշակունյաց պողոտայի ճանապարհամերձ հանրային ծառերը թվով մոտ 30 հատ</p>

		<p>հենց զգայուն տարածքները շրջանցելու հետ: Հատուկ ընտրված է Կոմիտասի այգու այն հատվածը, որտեղ գրեթե ծառեր չկան: Այնուհետև Կաշեգործների փողոցի հատվածում մասնավոր տների մոտ տնկած փոքրիկ ծառեր են և Հրազդան գետի կիրճում թփանման ծառեր: Ընդհանուր մոտ 35 հատ ծառ է հատվում, ընդ որում ընդհանուր քանակի մեջ մեծ ծառերը իրոզ շատ չեն:</p>	
	<p>Ս. Ա. Երևանի Օրիուս կենտրոն</p> <p><i>Հնարավոր է, որ Կարմիր գրքային տեսակներ լինեն, հնարավոր չի արդյոք բուսական և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցություններից խուսափել? Ասենք քարանձավներում կարող են չղջիկներ լինեն, որոնց վրա աղմուկն ազդի:</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունը նախնական գնահատվել է միջին ծանրության, քանի որ ըստ նախնական փորձագիտական կարծիքի տարածքի հիմնական մասի ուրբանիզացված լինելու և ճանապարհի տակ ընկնող հատվածի ոչ մեծ մաշտաբների պատճառով ազդեցությունը մեծածավալ չէ և անդառնալի չէ, կարող է մեղմացվել համապատասխան միջոցառումներով:</p> <p>Չղջիկների առկայությունը Հրազդանի կիրճի քարանձավներում հնարավոր է: Սակայն այդ քարանձավները գտնվում են կառուցվող ճանապարհից մինչև 80-100 մ հեռավորություն վրա և ուղղակի ազդեցության</p>	-



Նախնական գնահատման հայտ

		տակ չեն գտնվում: Այնուհանդերձ ԲԿՊ պլանով կնախատեսվեն մեղմացնող միջոցառումներ, որոնք առաջարկված կլինեն փորձագետների կողմից:	
Ս. Ա., Երևանի Օրհուս կենտրոն  <i>Ինչ կատեգորիայի հոդեր են ազդեցության ենթարկվում, կարգավիճակի փոփոխություն կատարվելու է, թե ոչ?</i>	Է.Վ.  Այս հարցն ավելի շուտ ուղղված է հոդերի օտարման և վերաբնակեցման թիմին, որի հետ առանձին հանդիպումներ են կազմակերպվելու	Ա.Բ.  Եզրագծի 75%-ը համայնքային այլ կատեգորիայի հոդեր են, մնացածը արտադրական և մի պոքր հատված գյուղատնտեսական նշանակության, առկա են նաև մասնավոր հատվածի տնամերձ հոդեր:	
Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Ինչպես է կատարվելու կտրվող ծառերի փոխհատուցումը? Վնասը գնահատվելու է արդյոք?</i>	Ա.Բ.  Ծառերը փոխհատուցվում են այն դեպքում, երբ գտնվում են իրացման գոտում: Դրամական փոխհատուցում է տրվում սեփականատիրոջը: Այդ ամենը օտարման խմբի աշխատանքների մաս է կազմում:	Է.Վ.  Ծրագրի մոտեցումը հետևյալն է՝ մասնավոր հատվածում հատվածում է գույքը ամբողջությամբ, այդ թվում տնամերձ ծառերը, ընդ որում հաշվի է առնվում ծառերի տարիքը, բնի հաստությունը, և այլն: Իսկ համայնքային հատվածում իրականացվելու է փոխհատուցման գործողություն՝ այսինքն հատվածների դիմաց նոր ծառեր են տնկվելու 1:6 հարաբերակցությամբ:	
Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Որտեղ էք տնկելու այդքան ծառերը?</i>	Է.Վ.  Կանաչապատման նախագծով նախատեսվելու է ճանապարհամերձ կանաչապատումը և	-	

		<p>ծառերի/ թփերի մի մասը այդտեղ է տնկվելու:          Ավելցուկային քանակի համար լրացուցիչ տարածք ենք խնդրելու համապատասխան համայնքից: Այդ տարածքը գնահատվում է ոռոգման և հետագա խնամքի կազմակերպման ապահովման տեսանկյունից անխմաստ և աննպատակ ծառատունկից խուսափելու համար: Խնամքը շնարարության և թերությունների վերացման շրջանում դրվելու է շինարարի վրա, պահանջվելու է դրանց մինչև 98% կաշռողականության ապահովում: Ամբողջ գործընթացը լինելու է մասնագետների ներգրավմամբ:</p>	
<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Հնարավոր չէր արդյոք համատեղ հանդիպում կազմակերպել օտարման թիմի հետ?</i></p> <p><i>Իսկ ինչ կլինի, եթե օտարման խմբի աշխատանքներն ավարտելուց հետո պարզվի, որ համայնքը համաձայն չէ ծրագրի հետ? Այդ դեպքում ծրագիրը չի իրականացվի?</i></p>	<p>Ա.Բ.</p> <p>Օտարման խմբի աշխատանքը բավականին երկար է տևելու, այդ պատճառով իրենք առանձին լուումներ են կազմակերպելու</p>	<p>Վ.Զ.</p> <p>Այո, համայնքի անհամաձայնության դեպքում ճանապարհը չի կառուցվի</p>	
<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Առկա են արդյոք պատմամշակութային հուշարձաններ? Իմ</i></p>	<p>Ա.Բ.</p> <p>Հարցումով դիմել ենք Մշակույթի նախարարությանը պատմամշակութային</p>	<p>Է.Վ.</p> <p>Ծրագրի հնագիտության խորհրդատուն Բորիս Գասպարյանն է, որն</p>	

Նախնական գնահատման հայտ

	<p><i>իմանալով սա հենց այն տարածքն է, որտեղով նախկինում գետնուղիներ են անցել դեպի գինու գործարան</i></p>	<p>հուշարձանների առկայության վերաբերյալ և ստացել ենք պատասխան, որ ծրագրի տարածքում գրանցված հուշարձաններ չկան: Պատմամշակութային հուշարձանները այս պահին ուսումնասիրվում են, ինչպես նաև կիրառվելու է պատահական գտածոների արարողակարգը</p>	<p>իրականացրել է տարածքում շրջայց և եզրակացրել է, որ հնագիտական արժեքներ առկա չեն: Սարդարի այգիները ժամանակի ընթացքում արդեն ենթարկված են զգալի վերափոխումների և դրանց հնագիտական արժեքը ցավոք չի պահպանվել: Հետաքրքիր են հնագիտական քարանձավները, որոնք սակայն բավականին մեծ հեռավորության վրա են գտնվում և ազդեցության հավանականությունը ցածր է:</p>
<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Մի գուցե դրական էֆեկտներ ունենալու համար միջոցառումներ ձեռնարկել այդ քարանձավները գրոսաշրջության առումով գրավիչ դարձնելու համար</i></p>	<p>Է. Վ.</p> <p>Մեր հնագիտության մասնագետը ներկայացնելու է առաջարկների պլան: Պարտադիր պահանջ է լինելու շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավել հնագիտության մասնագետի, որի հսկողության տակ է լինելու այդ հատվածի հողային աշխատանքները</p>	<p>-</p>	
<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Յանկալի էր նախապես հնարավորություն ունենայինք ծանոթանալ նախագծի և ՇՄԱԳ-ի հետ</i></p>	<p>Է. Վ.</p> <p>Կրկնեմ, որ այս հանդիպման նպատակն է նախնական պատկերացում տալ ծրագրի մասին և ներկայացնել ՇՄ նախնական գնահատման արդյունքները: ՇՄԱԳ</p>	<p>Ա.Բ.</p> <p>Այս պահին իրականացված է նախնական գնահատում ԱԶԲ պահանջով, որոշելու համար ծրագիրը բանկի կողմից ֆինանսավորվելու է,</p>	

		<p>հաշվետվությունը ընթացքի մեջ է և տեխնիկա-ինժեներական նկարագրության հետ մախին, պատրաստ լինելուն պես հայերեն տարբերակով կտեղադրվի ԾԻԳ-ի, ԱԶԲ-ի և ՇՄ Փորձաքննության ՊՈԱԿ-ի կայքերում; Լրացուցիչ ևս չորս լսումներ / քննարկումներ են կազմակերպվելու և փաստաթղթերին նախորոք ծանոթանալու հնարավորությունը միանշանակ կտվի</p>	<p>թե ոչ</p>
<p>Ռ. Ղ. Դավա-Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Ռելիեֆի և լանդշաֆտի համար մասնագետի ներգրավելու եք, թե ոչ? Կամուրջի հենասյուների գրունտներն ուսումնասիրվել են արդյոք?</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Ռելիեֆային փոփոխությունները հնարավոր են Հրազդանի կիրճի հատվածում, սակայն տեղեկացնեմ, որ մեր նախագծից առաջ կազմվել է մեկ այլ նախագիծ, որի համաձայն այդ փոփոխությունները անհամեմատ ավելի մեծ կլինեն կիճում ընթացող լիցքի պատճառով: Ներկայացվող նախագծը թույլ է տալիս խուսափել այդ լիցքից 250 մ-ոց կամուրջի շնորհիվ և ազդեցությունը լինելու է միայն կամուրջի հենասյուների հատվածներում;</p>	<p>Ա.Բ.</p> <p>Արդեն իրականացվել են հորատումներ և երկրաբանական ուսումնասիրություն, որի համաձայն Արշակունյաց հատվածում հիմնականում ժայռային գրունտներ են, դեպի գետը այլովիալ բերուկներ, իսկ կիրճի Իսակով հատվածում դեյուվիալ ապարներ, որոնց տակ բազալտե ապարներ են հայտնաբերվել: Ստորգենյա ջրերը բավականին մեծ խորության վրա են գտնվում:</p>	
<p>Ռ. Ղ. Դավա-Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Գրունտների մասին հարց էր բարձրացվել ներկա մի կնոջ կողմից, որն այս պահին դուրս է եկել:</i></p>	<p>Է. Վ.</p> <p>Կարծում եմ, որ բնակչուհուն գրունտները հետաքրքրում էին իրենց գույքի վրա թրթռումների ազդեցության տեսանկյունից:</p>	<p>Ա.Բ.</p> <p>Իրականացվելու է թրթռումների մշտադիտարկում և սահմանային մեծություններին գերազանցելու</p>	

		<p>Ծրագիրն այս հարցին նունյպես մեծ ուշադրություն է դարձվելու. Կապալառու կազմակերպությունից պահանջվելու է շինարարությունը սկսելուց առաջ իրականացնել ազդակիր բնակելի տների ուսումնասիրություն դրանց սեյսմիկ խոցելիությունը որոշելու համար, ֆիքսվելու է դրանց նախնական վիճակը:</p>	<p>դեպքում շինարարին կարգադրվում է փոխել շինարարության մեթոդը ազդեցությունը մեղմացնելու նպատակով</p>
	<p>Վահրամ Մարգարյան, Շենգավիթի կոմունալ տնտեսության և ԲՇԿՄՀԱԿ բաժնի գլխավոր մասնագետ</p> <p><i>Հեղեղատար ջրերի հեռացման հարցն ինչպես պետք է լինի</i></p>	<p>Վ.Չ. Արշակունյաց պողոտայի վերևից եկող ջրերը հավաքվելու և նորակառույց ճանապարհի երկայնքով տարվելու են դեպի կամուրջ և թափվելու են Հրազդան գետը</p>	<p>-</p>
	<p>Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ</p> <p><i>Ծրագրի շնորհիվ կոնկրետ որ փողոցներն են բեռնաթափվելու?</i></p>	<p>Վ.Չ. Քանի որ ներկա պահին Երևան քաղաքում Հրազդան գետի վրա ընդամենը չորս կամուրջ է անցնում, ևս մեկն էլ գտնվում է կառուցման մեջ, ապա դա ակնհայտորեն քիչ է Երևանի տարբեր հատվածների և մարզերի կապը ապահովելու համար և միշտ խցանումներ են առկա, ապա այս նոր կամուրջի կառուցումը թույլ կտա համարյա ամենուրեք թեթևացնել ծանրաբեռնվածությունը: հատկապես մեր կարծիքով կթեթևանան Հաղթանակի</p>	<p>-</p>

Նախնական գնահատման հայտ

		և Երևանյան լճի կամուրջները:	
Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ	Վ.Զ.  <i>Իմ կարծիքով շատ մեծ ծանրաբեռնվածություն կա Մոնթե Մելքոնյան – Բասկով հանգույցում Բասկով պողոտա մտնելու հատվածում</i>	Վ.Զ.  Սկզբնականում մտահեղացում կար լրացուցիչ թև կառուցել Բասկով մտնելու համար սակայն հետագայում այդ մտքից հրաժարվեցինք, քանի որ այդ տարբերակը մեք քանակությամբ ծառերի հատում էր ենթադրում	Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  Այդ ծառերի հատումը կատեգորիկորեն չենք թույլ տա
Ս. Ա., Երևանի Օրիու կենտրոն	<i>Ծրագիրը և մինչ այս պահն արված աշխատանքը ողջունելի են, սակայն կլինդրեն, որ հետագայում թափանցիկությունն հնարավորինս ապահովվի, հանրությունը պաշաճ ապահովվի</i>	Է.Վ.  Այսօրվա համար ազդակիր մարդկանց իրազեկությունն ապահովելու նպատակով միջոցառումները պատշաճ կերպով իրականացվել են, հետագայում նույն քայլերը նորից կատարվելու են: Ազդակիր մարդկանց և շահագրգիռ կողմերի ներկայությունը ինչպես նաև ցանկացած առաջարկ մենք մշտապես ողջունում ենք:	-
Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ	<i>Ինչքան է տեղեկու շինարարությունը</i>	Վ.Զ.  1.5- 2 տարի	Ռ. Ղ. Դավա- Սոնա հիմնադրամի նախագահ  <i>Հալ, Աստված առաջ</i>

Է. Վարդգեսյանը հորդորեց ներկաներին շրջակա միջավայրի վերաբերյալ ներկայացնել իրենց մտահոգություններն ու առաջարկները ՇՄԱԳ գործընթացում դրանք առավել լիարժեք հաշվի առնելու և անդրադառնալու նպատակով

**Որոշվեց**

1. Ընդհանուր առմամբ նախնական կարգով հավանություն տալ ծրագրին կարևորելով դրա նշանակությունը Երևան քաղաքի համար:
2. Տեղադրել ՇՄԱԳ հաշվետվությունը Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակի կայքում, ինչպես նաև ԱԶԲ և ՇՄՓորձաքննության ՊՈԱԿ-ի կայքերում թափանցիկությունն ու հանրության կողմից հասանելիությունն ապահովելու նպատակով:
3. Քննարկել հնչեցված առաջարկությունները նախագծում դրանք հնարավորինս հաշվի առնելու նպատակով:
4. ՇՄԱԳ գործընթացում շարունակել համագործակցությունը վարչական շրջանների հետ հետագա հանրային քննարկումների ձևաչափով:

**Քննարկումների պատասխանատու՝**

Արամ Հայրապետյան, Ծենգավիթ վարչական շրջանի Կոմունալ տնտեսության և

ԲՇԿՄՀԱԿ բաժնի պետի տեղակալ

Արմեն Բողոյան, Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակ

**Վարող՝**

Արմեն Բողոյան, Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակ

**Ծրագրի ձեռնարկող՝**

Տիգրան Մամիկոնյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

**Արձանագրող՝**

Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

**Նկար Է-3-3 2020 թ. նոյեմբերի 18-ին կայացած հանրային քննարկումների լուսանկարներ**

Նախնական գնահատման հայտ





ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3-3 2020 թ. նոյեմբերի 18-ին կայացած հանրային  
 քննարկումների մասնակիցների ցուցակը



**Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում**  
 հանրային քննարկումներ  
 18 նոյեմբերի 2020 թ. ժ. 14:00  
 Մասնակիցների ցուցակ

Լ	անուն ազգանուն	վարչական շրջան	պաշտոն/ կոնտակտային տվյալ	Ստորագրություն
1	Գևորգ Վարդանյան	Շենգավիթ	Գեորգիանց Գեորգիանյան և ԲԵՊՄԶԵԿԿ լավեր գլխավոր նախագահ	
2	Կարապետյան Կարլոս	Շենգավիթ Գառնիցի 420/1	Շենգավիթ	
3.	Գաբրիել Գեորգիան	Նախշատի 438/1	Շենգավիթ	

1



**Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում**  
 հանրային քննարկումներ  
 18 նոյեմբերի 2020 թ. ժ. 14:00  
 Մասնակիցների ցուցակ

4	Ասատուր Գևորգյան	Շենգավիթ	Գառնիցի 430/1	
5.	Բաղդատ Զաչեյան	ԷՇենգավիթ	Գառնիցի 420/1	
6	Մելիքյան Էդուարդ	Կենտրոն	Ստորա 44, Կենտրոն (Գեորգի ԽՈՒ ՄԲԸ)	
7	Երվանդ Գառնիցի	Կենտրոն	Ստորա 44, Կենտրոն Ստորա 44, Կենտրոն Ստորա 44, Կենտրոն	
Լ	անուն ազգանուն	վարչական շրջան	պաշտոն	ստորագրություն

2



**Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում**

**հանրային քննարկումներ**

**18 նոյեմբերի 2020 թ. ժ. 14:00**

**Մասնակիցների ցուցակ**

8	Ներկայացրած Իրեր, որ	Ելն գավթը	Կոնտակտային տվյալներ	
9	Վարչապետի ԵԿԿ	Գրեյս Կար	Գաղափար 261 083 20 66-52 09842 15 89	
10	Չարանյան Անտոնյան	Գ ԵՂ գավթը	Կաշի Գրեյս 261/2	
11	Վերջին Կրճճ	Գճճրուն	Վճճրի Կրճճ 9/6	
12	Չարանյան Կարճճ	Գճճրուն	Կաշի Կրճճ 112 Կրճճ	
13	Չարանյան Արթուրյան	Կճճրուն	Կաշի Կրճճ 410/4	
14	Չարանյան Կարճճ Կրճճ	Կճճրուն	Կաշի Կրճճ 112 Կրճճ	



**Իսպանիա-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում**

հանրային քննարկումներ

18 նոյեմբերի 2020 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

Ը	անուն ազգանուն	վարչական շրջան	պաշտոն/ կոնտակտային տվյալներ	ստորագրություն
1	Արմենյան Վերա	Հենդալեր	հասցե 25 հոկտեմբերի 269	[Signature]
2	Ասրբա Ասրբա	Հենդալեր	հասցե 410/3	[Signature]
3	Վարդանիսյան Կարինե	Ճեզակ	հասցե 5 հոկտեմբերի 488	[Signature]
4	Մարգարիտյան Բարսեղ	Հենդալեր	հասցե 468	[Signature]
5	Պարսիկյան Անդրանիկ	Հենդալեր	հասցե 434	[Signature]
6	Գաբրիելյան Էդուարդ	Հենդալեր	հասցե 432	[Signature]
7	Նանուկյան Վահագն		հասցե 8 հոկտեմբերի 66	[Signature]

4



**Իսպանիա-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցում**

հանրային քննարկումներ

18 նոյեմբերի 2020 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

8	Տիգրան Օջանեդյան	ՆՅԲ	կոնտակտային տվյալներ	[Signature]
9	Բաբայան Գրիգոր	Հայաստանի Հանրապետության Կառավարության Գործառնական հարցերի կենտրոնի ղեկավար	096-64-65-09	[Signature]
10	Վարդանիսյան Վահագն	Հենդալեր	091816055 archushosting	[Signature]
11	Մարգարիտյան Կարինե	Հենդալեր	CADISE	[Signature]
12	Մանուկյան Արմեն	ՎՈՒՍՈՒՍ ՍՊԸ	051 60 77 78	[Signature]
13	Մարգարիտյան Կարինե	ՎՈՒՍՈՒՍ ՍՊԸ	051 60 77 78	[Signature]
14	Մանուկյան Վահագն	ՎՈՒՍՈՒՍ ՍՊԸ	055 62 66 16	[Signature]
15	Մարգարիտյան Կարինե	ՎՈՒՍՈՒՍ ՍՊԸ	091702814	[Signature]
16	Մանուկյան Վահագն			[Signature]
17	Մարգարիտյան Կարինե			[Signature]

5

## ՀԱՎԵԼՎԱԾ Ը. Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի աղյուսակ

Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացման միջոցառումներ				
Իսակով-Արշակունյաց – ճանապարհային հանգույց				
Ծրագրի գործողությունները	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացման միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացման միջոցառումների ինդիկատիվ արժեքը
<b>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈԻԼ</b>				
<b>Նախագծային փուլ</b>				
1. Մոնիթորինգի ելակետային հետազոտությունները (օդի, ջրի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի, հնագիտական հետազոտություններ)	Ազդեցության գնահատման ելակետային տվյալները հավաքագրված չլինելու դեպում խաթարված են հետազոտ գործիքային մոնիթորինգը և մեղմացման միջոցառումները	1. Իրականացնել մոնիթորինգի ելակետային հետազոտություններ՝ համաձայն Տվյալների հավաքագրման պլանի, և արդյունքները ներառել ՇՄԱԳ/ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ե, Աղյուսակ Ե-1)  2. Հետազոտ գործիքային մոնիթորինգի հատուկ պահանջը ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	<u>ՄՆԽ</u> Իրականացնել ջրի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի, հետազոտություններ և արդյունքները ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերի դրույթներում  <u>ԵՔՕԻԳ</u> Իրականացնել օդի որակի և հնագիտական հետազոտություններ, գնահատել մրցութային հայտերը և շնորհել պայմանագրային	Ջրի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի հետազոտությունները ներառված են ՄՆԽ բյուջեում:

Նախնական գնահատման հայտ

			<p>փաստաթղթերը</p> <p><u>ԱԶԲ</u></p> <p>Տեղեկանալ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում ելակետային հետազոտությունների արդյունքների մասին</p>	
<p>2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում</p>	<p>Անվտանգության մեխանիզմներն արտացոլված չեն մրցութային և պայմանագրային փաստաթղթերում</p>	<p>Մշակել Տեխնիկական մասնագրեր՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացման միջոցառումների վրա և ներառել բնապահպանական պահանջները մրցութային և պայմանագրային փաստաթղթերի Հատուկ Պայմաններում</p>	<p><u>ՄՆԽ</u></p> <p>Մշակել Տեխնիկական մասնագրեր (ՏՄ) և ներառել համապատասխան բնապահպանական պահանջները մրցութային և պայմանագրային փաստաթղթերում</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Դիտարկել մրցութային և պայմանագրային փաստաթղթերը</p> <p><u>ԱԶԲ</u></p> <p>Տեղեկանալ ԵՔՕԻԳ-ի դիտարկումների արդյունքներին</p>	<p>Ծախսերը հաշվառված են ՄՆԽ-ի բյուջեում</p>

Նախնական գնահատման հայտ

<p>3. Տեղեկատվության հրապարակում, հանրային հաղորդակցություն, հանրային լուսմներ և մասնակցություն</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և շահառուների՝ Ծրագրի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչի արդյունքում կարող են տեղի ունենալ ծրագրի կատարման ժամկետների խափանումներ:</p>	<p>1. Կազմակերպել հանդիպումներ հիմնական շահառուների հետ և Ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումներ/լուսմներ՝ համաձայն Հանրային լուսմների և հաղորդակցության պլանի (տե՛ս Գլուխ Է և Գլուխ Ը):</p> <p>2. Ներկայացնել ԲԼՄ-ն, որը կհիմնվի Ծրագրի համար ըստ Գլուխ Է-ում նկարագրված մեխանիզմի:</p> <p>3. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրել ԵՔԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում</p>	<p><u>ՄՆԽ</u> Կազմակերպել հանրային քննարկումներ/լուսմներ և պատրաստել փաստաթղթեր</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում</p> <p>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել հանրային լուսմներին/քննարկումներին</p> <p><u>ԱԶԲ</u> Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում</p> <p>Մասնակցել հանրային լուսմներին/քննարկումներին</p>	<p>Ներառված է ՄՆԽ-ի բյուջեում</p>
<p><b>ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b></p>				
<p><b>Մտքի իզագիայի փուլ</b></p>				
<p>4. Բնապահպանական, ԱևԱ (H&amp;S), սոցիալական երաշխիքների պատասխանատու անձնակազմի նշանակում</p>	<p>Բնապահպանական/ ԱևԱ և սոցիալական կառավարման բացակայությունը կարող է հանգեցնել պայմանագրային դրույթների, ՏՄ-ի և ՇՄԱԳ/ԲԿՊ-ի հետ անհամապատասխանության</p>	<p>Նշանակել անձնակազմ, որը պատասխանատու է Ծրագրի շինարարական և աշխատանքների պայմանագրային դրույթներին, այդ թվում՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ին համապատասխանության մոնիթորինգի իրականացման</p>	<p><u>ԵՔԾԻԳ</u> Նշանակել Ծրագրի բնապահպանության մասնագետ</p> <p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u> Նշանակել Բնապահպանության</p>	<p>Ներառված է համապատասխան բյուջեներում և պայմանագրում</p> <p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u></p>

Նախնական գնահատման հայտ

		<p>համար</p> <p>Պատրաստել և ներկայացնել ՇԲԿՊ, այդ թվում՝ Գլուխ Ը-ում ներառված բնապահպանական կառավարման ենթաձրագրերը</p>	<p>մասնագետ, ԱևԱ (H&amp;S) գծով մասնագետ և սոցիալական հարցերի մասնագետ՝ Ծրագրի դիտարկման նպատակով և հաստատել Կապալառուի ԲԿՊ-ն</p> <p><u>Կապալառու</u></p> <p>Վարձել լրիվ դրույքով աշխատող բնապահպանության/ առողջապահության և անվտանգության մեկ մասնագետ և լրիվ դրույքով աշխատող սոցիալական մասնագետ Պատրաստել և ներկայացնել ԿԲԿՊ</p>	<p>Վարձատրությունը 24 ամսվա համար ներառված է բյուջեում</p> <p><u>Կապալառու</u></p> <p>Մեկ ԱևԱ մասնագետի ամբողջ դրույքով 18 ամսվա աշխատանքը ներառված է կապալառուի բյուջեում</p> <p>Այդ պլանների արժեքը հաշվարկվել է ստորև մանրամասնած Շինարարական աշխատանքների յուրաքանչյուր պլանի համար</p>
<p>5. Հանրային հաղորդակցություն</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների վարչական տարածքների՝ ծրագրված աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է</p>	<p>Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Հանրային լսումների և հաղորդակցության պլանի (Գլուխ Ը)</p> <p>1. Կազմակերպել նախաշինարարական հանդիպումներ՝ պլանավորված աշխատանքների և դրանց</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Կազմակերպել հանդիպում</p> <p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Բնժեներ)</u></p> <p>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել</p>	<p>Ներառված է Կապալառուի բյուջեում</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>հանգեցնել հիասթափության ու դժգոհության, և արդյունքում տեղի ունենան ուշացումներ:</p>	<p>իրականացման ժամանակացույցի վերաբերյալ: Այդ նպատակով</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ որոշել պոտենցիալ զգայուն ընկալիչները՝ օգտագործելով առկա ՇՄԱԳ/ԲԿՊ-ով տրամադրված տվյալները և կատարելով տեղամասային այցելություններ,</li> <li>✓ հաղորդակցվել վարչական շրջանների ղեկավարների հետ՝ իրազեկելով նրանց և խնդրելով նրանց աջակցությունը,</li> <li>✓ իրազեկել պոտենցիալ ԱԵԱ-ներին և հանրությանը՝ տեսանելի վայրերում տեղադրված հայտարարությունների և պաստառների միջոցով, որոնք պարունակում են տեղեկություններ Ծրագրի վերաբերյալ՝ հանդիպման ամսաթիվը, վայրը և օրակարգը և կոնտակտային տվյալները,</li> </ul>	<p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել</p>	
--	--	---	--	--



		<p>✓ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հակիրճ վիզուալ շնորհանդեսներ (PP, գրաֆիկական պատկերներ), ներառյալ շինարարական աշխատանքների նկարագրությունը, ժամանակացույցը և բնապահպանական և ԱևԱ (H&amp;S) մեղմացման միջացառումները,</p> <p>✓ հանրությանը ներկայացնել սույն ՇՄԱԳ/ԲԿՊ-ի Գլուխ Է-ի կ. 3-ում նկարագրված ԲԼՄ-ն:</p> <p>2. Արձանագրել նախաշինարարական փուլի հանդիպումը (հանդիպման արձանագրությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը, բարձրացված հարցերը, լուսանկարները) և ամբողջական տեղեկությունը ներառել ԿԲԿՊ-ի մեջ:</p> <p>3. Լուծել բարձրացված խնդիրները կամ փոխանցել դրանք Վերահսկողության խորհրդատուին, այնուհետև առաջընթացի վերաբերյալ</p>		
--	--	--	--	--

Նախնական գնահատման հայտ

		առաջին հաշվետվությունում ներկայացնել կարգավիճակի (լուծված/ չլուծված)		
<p>6. Իրազեկվածության բարձրացում և Ծրագրի կողմերի վերապատրաստում բնապահպանական/ ԱնԱ (H&amp;S), սոցիալական երաշխիքների թեմաներով</p>	<p>Ծրագրի կառավարման, ինժեներական/տեխնիկական վերահսկողության և Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱնԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարման:</p>	<p>Իրականացնել միջոցառումներ՝ Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման ծրագրի համաձայն (տե՛ս Գլուխ Ը)</p> <p>1. ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների վերաբերյալ Վերահսկողության ինժեների կողմից (Ինժեներ) վերապատրաստման դասընթացների կազմակերպում ԵՔ-ի, ԵՔՕԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանության, առողջության և անվտանգության գծով անձնակազմի համար՝ նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:</p> <p>ii. ԿԲԿՊ-ում մշակել անվտանգության կողմնորոշման ծրագիր Կապալառուն կազմակերպում է Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթաց Կապալառուի և</p>	<p><u>Տեխնիկականության խորհրդատու (Ինժեներ)</u> Մեկնարկից հետո՝ մոբիլիզացիայի ժամանակահատվածում կազմակերպել վերապատրաստման դասընթաց նախքան շինարարական աշխատանքներն սկսելը</p> <p><u>Կապալառու</u> Մշակել Անվտանգության կողմնորոշման պլան և մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝ նախքան շինարարական աշխատանքներն սկսելը կազմակերպել ուսուցողական դասընթաց ողջ անձնակազմի համար</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p> <p><u>ԱԶԲ</u> Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p>	<p><u>Տեխնիկականության խորհրդատու (Ինժեներ)</u> Առողջության, անվտանգության և բնապահպանական ծրագրի 1 օրվա ուսուցման ծախսերը 50 շինարար-բանվորի համար գնահատված է 2 950 ԱՄՆ դոլար՝ կիրառելով հետևյալ հաշվարկը. օրական 50 ԱՄՆ դոլար՝ գումարած 3 օրվա համար ուսուցանողի վճարը՝ օրական 75 ԱՄՆ դոլարի չափով</p> <p><u>Կապալառու</u> Ուսուցման ծախսերը ներառված են 1՝</p>

Նախնական գնահատման հայտ

		ենթակապալառուների անձնակազմի համար մեկնարկից հետո՝ առաջին շաբաթվա ընթացքում և նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:		լրիվ դրույքով աշխատող ԱԱԲ մասնագետի ծախսերի մեջ և ներառված են Կապալառուի բյուջեում
7. Շինհրապարակի մոբիլիզացիայի աշխատանքները. գծանշում, գլխավոր գրասենյակ և դաշտային գրասենյակներ	Շինարարական աշխատանքները սկսվում են նախքան անվտանգության միջոցառումների ձեռնարկումը	1. Իրականացնել տեսանելի ճանապարհային գծանշում և հստակ ուրվագծել ճանապարհի օտարման գոտին տեղադրելով ամուր և ժապավենային ցանկապատեր (ինչպես պահանջվում է Ինժեների կողմից): 2. Կազմակերպել դաշտային ճամբարի տարածքը, ներառյալ պահեստը, ավտոկայանատեղին, արհեստանոցները և այլն: 3. Ապահովել սանիտարական հարմարություններ ամբողջ անձնակազմի համար: 4. Անձնակազմին ապահովել համաձգեստով և ԱՊՄ-ներով:	<u>Կապալառու</u> Իրականացնում է Մոբիլիզացիայի պլանը  <u>Ինժեներ</u> Իրականացնել Մոբիլիզացիայի պլանի մոնիտորինգ  <u>ԵՔՕԻԳ</u> Ստուգել Մոբիլիզացիայի ծրագրի իրականացումը	Ներառված է Կապալառուի բյուջեում
8. Կառույցների վրա թրթռման ազդեցության ելակետային տվյալների հետազոտություն	Կառույցները կարող են ազդեցության ենթարկվել պայթեցման աշխատանքների և լիցքերի խտացման համար գլղոնների աշխատանքի հետևանքով	Մշակել և հաստատման ներկայացնել հետազոտության և ազդեցության մեղմացման մեթոդաբանությունը  Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը	<u>Կապալառու</u> Մշակել մեթոդաբանությունը, կատարել հետազոտությունը և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը  <u>Ինժեներ</u>	Ներառված է Կապալառուի բյուջեում

Նախնական գնահատման հայտ

		պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը	Դիտարկել և հաստատել մեթոդաբանությունն ու հաշվետվությունը Մոնիտորինգի ենթարկել հետազոտության իրականացումը <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	
9. Ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն	Գոյություն ունեցող ճանապարհները կարող են վնասվել մեքենամեխանիզմների և բեռնատարների շահագործման հետևանքով	Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը	<u>Կապալառու</u> Կատարել հետազոտությունը և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը  <u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել հաշվետվությունը: Իրականացնել հետազոտության իրականացման մոնիտորինգ:  <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Ներառված է Կապալառուի բյուջեում
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>				
<b>1. Բնապահպանական, առողջության և անվտանգության կողմնորոշման պլան</b>				
10. Իրազեկվածության բարձրացում և Օրագրի կողմերի վերապատրաստում բնապահպանական/ ԱևԱ (H&S), սոցիալական երաշխիքների թեմաներով	Օրագրի կառավարման, ինժեներական/տեխնիկական վերահսկողության և Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱևԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության	Իրականացնել միջոցառումներ՝ Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման ծրագրի համաձայն (նաև տե՛ս Գլուխ Ը) 1. Անձնակազմի փոփոխության դեպքում կանոնավոր կերպով կազմակերպել Վերահսկողության խորհրդատուի (Ինժեների)	<u>Տեխնիկական վերահսկողության խորհրդատու (Ինժեներ)</u>  Նոր նշանակված անձնակազմի համար պարբերաբար կազմակերպում է ուսուցողական դասընթացներ  <u>Կապալառու</u> ՇԲԿՊ շրջանակում մշակել	<u>Տեխնիկողության խորհրդատու (Ինժեներ)</u>  Ներառված է ԲԱևԱ (EHSS) մասնագետի վարձատրության մեջ  <u>Կապալառու</u>

Նախնական գնահատման հայտ

	<p>երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարման:</p>	<p>անձնակազմի վերապատրաստման դասընթացներ՝ բնապահպանական, ԱևԱ և սոցիալական երաշխիքների վերաբերյալ:</p> <p>2. Կապալառուի և ենթակապալառուների անձնակազմի համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ համաձայն ԿԲԿՊ-ում մշակված Անվտանգության կողմնորոշման պլանի՝ հետևելով նշված պահանջներին.</p> <p>ա) տարեկան 2 պարտադիր վերապատրաստման դասընթաց ողջ անձնակազմի համար,</p> <p>բ) նախքան աշխատանքն սկսելը նոր վարձված աշխատակազմի համար անվտանգության երաշխիքների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու վերաբերյալ դասընթացի կազմակերպում,</p> <p>գ) աշխատանքին բնորոշ անվտանգության դասընթաց՝</p>	<p>իրազեկության բարձրացման պլան: Կազմակերպել կետ 2-ում նշված վերապատրաստման դասընթացները:</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել Ծրագիրը, իրականացնել Ծրագրի մոնիտորինգը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ստուգում է իրականացումը</p>	<p>Ներառված է լրիվ դրույքով աշխատող 1 ԲԱևԱ մասնագետի վարձատրության մեջ</p>
--	--	--	---	--

		<p>նախքան նոր տեսակի աշխատանք սկսելը,</p> <p>դ) Ինժեների պահանջով միջանկյալ լրացուցիչ դասընթացներ հատուկ թեմաների վերաբերյալ և / կամ թիրախային աշխատանքային խմբերի հետ,</p> <p>ե) այլ դասընթացներ և կողմնորոշման դասընթացներ՝ համաձայն Աշխատանքի անվտանգության և առողջության պլանի:</p>		
<b>2. Աշխատանքային անվտանգության և առողջության պլան</b>				
<p>11. Շինհրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>Տեղեկատվության պակասը Ծրագրի համար կիրառելի առողջության և անվտանգության կանոնների մասին կարող է հանգեցնել աշխատողների, Ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց և շինհրապարակի մերձակայքում գտնվող մարդկանց հիվանդության, վնասվածքի կամ մահվան՝ նյութերի ազդեցության պատճառով. սայթաքել,</p>	<p>I. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ</p> <p>1. Ապահովել, որ ողջ անձնակազմն անցնի Աշխատանքի անվտանգության և առողջության իրազեկության բարձրացման դասընթացներ՝ Գլուխ Ը-ում թվարկված թեմաների վերաբերյալ:</p> <p>2. Աշխատանքային տեղամասի յուրաքանչյուր հատվածում նշանակել Առողջության և անվտանգության գծով պատասխանատու, և նրանց կոնտակտային տվյալները տեղադրել տեսանելի</p>	<p><u>Կապալառու</u> Մշակել, ներկայացնել և իրականացնել ենթածրագրեր</p> <p><u>Ինժեներ</u> Ուսումնասիրել և հաստատել Պլանը, իրականացնել պատահարների գրանցամատյանի մոնիտորինգը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ուսումնասիրել Պլանը և աջակցել Ինժեներին</p>	<p>Կապալառուի ԱնԱ մասնագետի կողմից այս ենթածրագրի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 6-րդ կետում:</p> <p>50 բանվորի համար ԱՊՍ արժեքը՝ 250 ԱՄՆ դոլար, գնահատված է 12 500 ԱՄՆ դոլար:</p>

	<p>բախվել և ընկնել և ընկնող առարկաներ</p>	<p>վայրերում:          3. Պարբերաբար իրականացնել յուրաքանչյուր աշխատանքի տեսակի գծով աշխատանքային անվտանգության հրահանգավորում` համաձայն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև նոր աշխատանք սկսելուց առաջ և նոր վարձված աշխատողների համար` աշխատանքի անցնելուց առաջ: Վարել գրանցամատյան, որը հասանելի է ստուգման համար:</p> <p>II. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</p> <p>4. Շինհրապարակի աշխատակիցներին տրամադրել և ապահովել աշխատանքային համազգեստով և ԱՊՍ-ով, ինչպես մանրամասնորեն ներկայացված է Գլուխ --- ում)</p> <p>5. Առողջությանն ու անվտանգությանն առնչվող պատահարները պետք է արձանագրվեն և ծանուցվեն ԲՆԺՆԵՐԻՆ և համապատասխան ղեկավար մարմիններին` ըստ անհրաժեշտության</p>		<p>Առողջության ռիսկերի, COVID-19- ի և ապօրինի թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է վերոնշյալ 6-րդ կետում ներկայացված դասընթացում:</p>
--	---	--	--	--

		<p>III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</p> <p>6. Տրամադրել անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործիքները և լրացուցիչ սարքավորումները (տե՛ս Գլուխ -)</p> <p>7. Շինհրապարակից բացառել ոչ անվտանգ գործելակերպը և գործիքները</p> <p>8. Անվտանգ կերպով ցանկապատել, ծածկել և պաշտպանել բոլոր փորված խրամուղիները, փոսերը և դիտահորերը օրվա ընթացքում և մինչև աշխատանքային օրվա ավարտը</p> <p>9. Կրակմարիչի առկայություն, որը հեշտությամբ հասանելի կլինի բոլոր գործող սարքավորումներում, շինհրապարակի ճամբարներում և շինարարական հրապարակի բոլոր հատվածներում:</p> <p>IV. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՅՐՈՒՄ</p> <p>10. Բուժաշխատողի կողմից աշխատողների և այլ անձնակազմի համար կանոնավոր բժշկական ստուգումներ, և ստուգման</p>		
--	--	--	--	--



		<p>վերաբերյալ շինհրապարակում առկա գրանցումներ</p> <p>11. Շինհրապարակի բոլոր հատվածներում և շահագործվող մեքենամեխանիզմներում առաջին օգնության պարագաների առկայություն</p> <p>12. Կապալառուի անձնակազմին տրամադրել բավարար քանակությամբ բարձրորակ քսուքներ, կրթական նյութեր, պահպանակներ, կանոնավոր ՄՃՓՎ / ՄԻԱՎ-ի թեստեր, և անհրաժեշտ դեպքերում՝ սեռավարակների և ՁԻԱՀ-ի անվճար բուժում</p> <p>13. Մշակել COVID-19 Առողջության և անվտանգության պլան. Աշխատանքի բոլոր վայրերում ապահովել COVID-19-ի վերահսկողության միջոցներ, գործիքներ և հարմարություններ</p> <p>V. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</p> <p>13. Կիրառել բոլոր նախագրուշացնող միջոցները (կոշտ և ժապավենով</p>		
--	--	--	--	--

		<p>սահմանագծում, հսկիչ-անցակետեր, արգելող պաստառներ և այլն՝ աշխատանքային տեղամասը մեկուսացնելու և կողմնակի անձանց մուտքն աշխատանքային տեղամաս արգելելու համար,</p> <p>14. Տեսանելիորեն տեղադրել ցուցանակներ / պաստառներ, որոնք տեղեկացնում են ընթացիկ շինարարական աշխատանքների մասին և նախազգուշացնում են վտանգի մասին,</p> <p>15. Տեղի բնակիչների և այլ մարդկանց համար տրամադրել շրջանցիկ ճանապարհ՝ կանխելով նրանց մուտքը աշխատանքային տարածք: Անհրաժեշտ վայրերում տեղադրել ցուցանակներ, որոնք ցույց են տալիս շրջանցումները:</p> <p>16. Երբ շրջանցումը հնարավոր չէ, ապահովել անվտանգ միջանցք աշխատանքային տարածքում անցորդների համար,</p> <p>17. Ապահովել կամուրջներ փորված խրամուղիների վրա՝ տրամադրելով մուտքեր դեպի բնակելի տները և/կամ ձեռնարկությունները,</p> <p>18. Մաքուր պահել մարդկանց</p>		
--	--	--	--	--

		<p>կողմից օգտագործվող անցուղիները և չթողնել, որ մակերևույթը սայթաքուն դառնա շինհրապարակից տարածքվող ցեխից:</p> <p>VI ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՆԱՎՈՐ ՍՈՂՈՒՆՆԵՐԻՑ</p> <p>19. Կիրառել ԱՊՍ, երկարաճիտ կոշիկներ և պաշտպանիչ ձեռնոցներ,</p> <p>20. Հնարավորինս պահել անվտանգ հեռավորություն ցանկացած տեսակի օձերից և այլ սողուններից,</p> <p>21. Աշխատանքների սկզբում ներգրավել սողունների մասնագետի (հերպետոլոգ), որը կպատրաստի անձնակազմին, թե ինչպես դրանց ճանաչել, և կբռնի աշխատանքային տարածքում հայտնաբերված սողուններին և բաց կթողնի այդ կենդանիներին բնակության համար բարենպաստ և անվտանգ վայրում:</p> <p>22. Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են Երևանի տարածքում, որտեղ առկա է մասնագիտական բժշկական օգնություն</p>		
--	--	--	--	--

		<p>(հիվանդանոցներում), անհրաժեշտ չէ ունենալ օձի դեմ շիճուկ կամ թունավոր օձի խայթոցների դեպքում օգտագործվող այլ դեղամիջոցներ, տուժածը պետք է հնարավորինս շուտ տեղափոխվի մոտակա հիվանդանոց:</p>		
<b>3. Հանրային լսումների և հաղորդակցության պլան</b>				
<p>12. Հանրային քննարկումներ, լսումներ, իրազեկման մակարդակի բարձրացում</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների կողմից տեղեկատվության և ըմբռնման պակասը ծրագրված աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչն էլ իր հերթին՝ խոչընդոտների և ուշացումների:</p>	<p>1. Ձեռնարկել սույն ՇՄՆՈՒ-Գլուխ – ում նկարագրված միջոցները՝ ԿԲԿՊ շրջանակում Հանրային լսումների և հաղորդակցության պլանը մշակելու համար 2. Ծրագրի համար հիմնել և վարել ԲԼՄ, մասնավորապես՝ ա. Հանրության համար տեղադրել պաստառներ կամ Ծրագրի մասին տեղեկություններ պարունակող ցուցատախտակներ, այդ թվում՝ դաշտային գրասենյակի վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոտային հասցեն, էլեկտրոնային հասցեները և այլն: բ. Նշանակել անձնակազմ, որի</p>	<p><u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ում Հանրային լսումների և հաղորդակցության պլանի մշակում և ԲԼՄ-ի հիմնում  <u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել ՀԼՀՊ-ն, լուծել բողոքները կամ Կապալառուի պատասխանատվությունից դուրս լինելու դեպքում դրանք հասցեագրել այլ մարմինների:  <u>ԵՔԾԻԳ</u> Լուծել իր պատասխանատվության ներքո գտնվող խնդիրները</p>	<p>Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից այս ենթածրագրի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 4-րդ կետում:</p>

		<p>անդամները պատասխանատու կլինեն ճանապարհի յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ հանրության և ԱԵԱ-ների կողմից առաջ քաշված հարցերը լուծելու համար:</p> <p>Ապահովել անհապաղ համագործակցությունը սոցիալական մասնագետի հետ:</p> <p>գ. Հանրային բողոքների և առաջարկների համար մշակել դիմումի ձև:</p> <p>դ. Վարել բողոքների գրանցամատյան, որը դաշտային գրասենյակում հեշտությամբ հասանելի կլինի ազդեցությանը ենթարկված անձանց և ստուգման նպատակով:</p> <p>Գրանցամատյանում գրանցել ԱԵԱ-ների բոլոր բողոքները (բանավոր և գրավոր) և առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություններում ներկայացնել դրանց լուծման կարգավիճակը:</p> <p>3. Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքի անդամների հետ՝ նոր ծագած խնդիրները քննարկելու համար, եթե այդպիսիք կան:</p>		
--	--	---	--	--

		<p>4. Ազդեցության ենթակա բնակչությանը նախապես (առնվազն 1 օր առաջ) ցուցանակների և պաստառների միջոցով տեղեկացնել ցանկացած անհարմարության մասին, օրինակ՝ երթևեկության խափանումների և պայմանների, պայթեցման աշխատանքերի, տեղական ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման և այլն:</p>		
<b>4. Մշակութային ժառանգության կառավարման պլան</b>				
<p>13. Հնագիտական և պատմական վայրերի անմիջական հարևանությամբ ճանապարհի և կամրջի շինարարական աշխատանքները նշված են Գլուխ Ե-ում և Հավելված Դ-ում</p>	<p>Հնագիտական, պատմական և մշակութային ռեսուրսների հասցվող վնասը և կորուստները</p>	<p>1. Սահմանափակել աշխատանքները օտարման գոտում և բացառել որևէ գործողության իրականացում՝ առանց նախապես ՎԻ-ի հետ համաձայնեցնելու: 2. Հստակորեն ուրվագծել և նշել արժեքավոր մշակութային ընկալիչների գոտին՝ օգտագործելով ցանկապատներ, նախազգուշացնող պաստառներ և պահպանել բուֆերային գոտին ցանկացած շինարարական գործունեություն իրականացնելիս: 3. Ներգրավել հնագետի և ապահովել նրա ներկայությունը շինհրապարակում նախքան</p>	<p><u>Կապալառու</u> Վարձել հնագետի՝ հողային աշխատանքների վերահսկողությունն իրականացնելու համար ԿԲԿՊ –ում մշակել և իրականացնել մշակութային ժառանգության կառավարման պլան Անհրաժեշտության դեպքում հետևել գտածոների ընթացակարգին <u>Ինժեներ</u> Փոփոխություններ կատարել ճանապարհի նախագծում՝ ներառելով հնագիտական</p>	<p><u>Կապալառու</u> Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատի ապամոնտաժման և վերականգնման ծախսերը ներառված են շինարարության ընդհանուր ծախսերում Հնագիտական գտածոների հայտնաբերման դեպքում, որոնք ներառված են ընդհանուր շինարարական</p>

		<p>հնագիտական և մշակութային հետաքրքրություններ կայացնող գոտիների մերձակայքում աշխատանքներն սկսելը, ապահովել ցանկապատերի և նախազգուշացնող նշանների տեղադրումը և բանվորների վերապատրաստումը:</p> <p>4. Աշխատանքների ընթացքում զերծ պահել մշակութային (հնագիտական) գոտին ցանկացած շինարարական գործունեությունից, ինչպես օրինակ՝ բեռնատարների և այլ ծանր սարքավորումների ու մեքենամեխանիզմների շարժը և/կամ կայանումը, թափոնների և աղբի տեղավորումը և այլն:</p> <p>5. Արգելել հնագիտական վայրերի հողի օգտագործումը կամ պահեստավորումը շինարարական նկատառումներով:</p> <p>6. Ցանկապատել մուտքը և արգելել ու սահմանափակել աշխատողների և այլ անձնակազմի մուտքը Հրազդան գետի աջ ափին գտնվող հնագիտական քարանձավներ:</p> <p>7. Հնագիտական գտածո հայտնաբերելու դեպքում Կապալառուն պետք է հետևի ՀՀ կառավարության թիվ 438 (20.04.</p>	<p>հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկությունները, եթե առկա են:</p> <p>Դիտարկել և հաստատել Պլանի առաջարկությունները և մոնիտորինգի ենթարկել իրականացումը:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Աջակցել համապատասխան մարմինների հետ համագործակցելիս</p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>ծախսերում, գնահատված է առավելագույնը 2%:</p> <p><u>Ա.Չ.Բ</u></p> <p>Ներառված է ընդհանուր բնապահպանական պատշաճ կատարման ծախսերի մեջ</p>
--	--	--	---	---

		<p>2002 թ.) որոշմամբ սահմանված ստորև ընթացակարգին.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ անմիջապես պետք է դադարեցնի աշխատանքները,</li> <li>✓ ծանուցի ՎԻ-ին, ԵՔՄԻԳ-ին;</li> <li>✓ մեկուսացնի տեղավայրը,</li> <li>✓ փաստաթղթավորի և լուսանկարի գտածոն և անմիջապես դրան շրջապատող տարածքը,</li> <li>✓ տեղեկացնի ԿԳՄՄՆ-ին՝ խորհրդակցելով ինչպես պետք է գտածոն պահպանվի,</li> <li>✓ ԿԳՄՄՆ-ից ձեռք բերի թույլտվություն՝ շինարարական աշխատանքները շարունակելու համար:</li> </ul> <p>8. Ապամոնտաժել ցանկապատը, պահպանել մասերը և հանձնել ԵՔ-ին:</p>		
<b>5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան</b>				
<p>14. Կամրջի կառուցման աշխատանքներ</p>	<p>Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածություն</p>	<p>1. Աղտոտող, փոշի և նստվածքներ արտանետող օբյեկտներն ու սարքավորումները տեղադրել Հրազդան գետից և ոռոգման ջրանցքից հնարավորինս հեռու:</p> <p>2. Աշխատանքային տեղամասի</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ շրջանակում մշակել Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանման պլան և իրականացնել պահանջվող մեղմացման միջոցառումները: Վարձել մասնագիտացված</p>	<p>Ստորև բերված ծախսերը մասնավորապես ուղղված են ջրային մարմինների պահպանությանը. ա) շինարարական</p>



		<p>տարածքում կառուցել ջրահեռացման համակարգ, նախնական հավաքել հոսող ջրերը և մաքրել ջրային մարմիններ թափվելուց առաջ: Կանխել չմաքրված հեղեղաջրերի և կեղտաջրերի հոսքը շինհրապարակից:</p> <p>3. Կանխել ջրերի արտահոսքը շինարարական բոլոր տեղամասերից, այդ թվում՝ շինարարական ճամբարներից, քարհանքերից, ջարդիչ գործարաններից և բետոնի դոզավորման գործարաններից, թափոնների կուտակավայրերից և այլն:</p> <p>4. Մաքրել արտահոսքերը, որոնք առաջացել են շինարարական գործունեության արդյունքում հողից և այլ նստվածքներից՝ նախքան մակերեսային ջրային մարմիններ թափվելը:</p> <p>5. Շինարարության ընթացքում ցանց կամ կտորից ծածկ տեղադրել կամրջի տակ այն նյութերի համար, որոնք հնարավոր է ընկնեն:</p> <p>6. Կանոնավոր կերպով ստուգել, վերանորոգել կամ կարգավորել ջրահեռացման կառույցները՝ հատկապես</p>	<p>ենթակապալառու՝ ջրի որակի էլակետային և կանոնավոր ստուգումների համար:</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել Պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը</p> <p><u>ԷՔՕԻԳ</u> Աջակցել ՇՄՆ-ի հետ համագործակցելիս Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>աշխատանքների արդյունքում առաջացած նստվածքների մշակման արժեքը (նախքան դրանց գետերը թափվելը), գնահատվում է՝ 5 000 ԱՄՆ դոլար ք) յուրի գատիչի տեղադրման արժեքը գնահատվում է՝ 12 000 ԱՄՆ դոլար</p> <p>Մակերևութային ջրերի մոնիտորինգի տվյալների հավաքագրման և վերլուծության համար մասնագիտացված կապալառու վարձելու ծախսերը կազմում են 2 500 ԱՄՆ դոլար</p>
--	--	--	---	---

		<p>հեղեղաջրերից հետո նստվածքները կանխելու համար:</p> <p>7. Կառուցել յուղի զատիչներ և այլ նյութերը հավաքող սարքեր՝ խստորեն վերահսկելով կոշտ և հեղուկ թափոնների արտանետումը դեպի գետը:</p> <p>8. Կանոնավոր իրականացնել Հրազդան գետի և ոռոգման ջրանցքի ջրի որակի մոնիտորինգ: Տեղադրել մոնիտորինգի իրականացման կետեր կամրջի աշխատանքների իրականացման վայրից 50 մ հոսանքն ի վեր և 50 մ հոսանքն ի վար.</p> <p>9. Բետոնալցումը, կարերի լցափակումը, ջրակայուն ներկերի կամ պաշտպանիչ համակարգերի, ամրացնող նյութերի օգտագործումն իրականացնել ըստ ժամանակացույցի՝ ջրային մարմինների աղտոտվածությունը կանխելու համար:</p> <p>10. Մաքրել մեքնամեխանիզմներն ու սարքավորումները, և դրանց վերանորոգումն ու վերալիցքավորումը</p>		
--	--	--	--	--

		<p>իրականացնել ջրային մարմիններից հեռու՝ անվտանգ հեռավորության վրա:</p> <p>11. Յուրաքանչյուր ջրթող կետում տեղադրել յուղահավաք սարքեր:</p> <p>12. Տեղադրել յուղահավաք սարքեր բոլոր սարքավորումների և օբյեկտների մոտ՝ արտահոսքի դեպքում ջրի աղտոտումը կանխելու համար:</p> <p>13. Բացառել որևէ չթույլատրված ջրառ և Հրագդան գետում պահպանել բավարար ջրահոսք՝ ձկների ազատ տեղաշարժն ապահովելու համար:</p> <p>14. Գետի երկայնքով՝ հունից անվտանգ հեռավորության վրա կառուցել առափնյա պատվար՝ շինհրապարակից հանույթի մասնիկների արտահոսքը կանխելու համար:</p> <p>15. Գետաբերանի ջրթող հարմարանքներին տեղադրել նստվածքները հավաքող սարքեր՝ տիղմի արտահոսքի ռիսկը դեպի ջրային մարմին նվազեցնելու համար:</p> <p>16. Շինարարության ընթացքում ցանց կամ կտորից ծածկ</p>		
--	--	---	--	--

		<p>տեղադրել կամրջի տակ այն նյութերի համար, որոնք հնարավոր է ընկնեն:</p> <p>17. Տեղադրել ճնշումային խողովակ կամ նմանատիպ սահմանափակող այլ սարքեր բոլոր հարմարությունների վրա՝ պատահական արտահոսքի դեպքում աղտոտումը կանխելու համար:</p>		
<b>6. Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան</b>				
<p>15. Մաքրում և արմատահանում, հողային աշխատանքներ և այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Ֆլորայի և ֆաունայի բնական միջավայրի խաթարումը և քայքայումը, Կարմիր գրքի և հազվագյուտ տեսակների՝ հատկապես 19 արևելյան սուսիների (<i>Platanus orientalis</i>)</p> <p>Բուսականության մաքրման ընթացքում Ֆաունայի բնական միջավայրի խաթարումը</p>	<p>1. Ապահովել, որ բոլոր բանվորները և անձնակազմի այլ անդամները վերապատրաստվեն՝ ըստ Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլանի պահանջների՝ նախքան որևէ հատվածում աշխատանքներն սկսելը:</p> <p><b><i>Ծառերի (թփերի) կտրում</i></b></p> <p>2. Նվազագույնի հասցնել և նշել մաքրման ենթակա կամ այլ կերպ խաթարվող տարածքները: Բանվորներն ու սարքավորումները մնում են նշված տարածքներում՝ կանխելով բնակավայրերին հասցվող վնասը:</p> <p>2. Ծանուցել Ինժեներին</p>	<p><u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան, ներառյալ՝ Ծառերի կառավարման պլանը, իրականացնել պահանջվող մեղմացման միջոցառումները և կառավարումը: Բարձել ֆլորայի և ֆաունայի խորհրդատու՝ միջոցառումների իրականացման համար:</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը</p> <p><u>ԷՔՕԻԳ</u> Աջակցել ՇՄՆ-ի հետ համագործակցելիս</p>	<p>Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից այս ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 4-րդ կետում: Ֆաունայի և ֆլորայի մասնագետի 20 օրվա վարձակալության արժեքը (օրական՝ 75 ԱՄՆ դոլար) գնահատված է 1500 ԱՄՆ դոլար</p>

Նախնական գնահատման հայտ

		<p>նախքան ծառերի և թփերի ցանկացած հատում սկսելը, որոնք ներառված են Ծառերի կառավարման պլանում կամ նոր են հայտնաբերվել:</p> <p>3. Պահել կտրված ծառերի և թփերի գրանցամատյան, որը հասանելի կլինի ստուգումների համար:</p> <p>4. Բուսականության հատման և մաքրման աշխատանքները իստագույնս իրականացնել համաձայն Տեխնիկական մասնագրերի Բաժին 401-ի – Մաքրում և արմատահանում և Բաժին 1003 –ի Ծառեր և թփեր:</p> <p>5. Ստուգել և համոզվել, որ աշխատողներն օգտագործում են պաշտպանիչ հանդերձանք (ԱՂՍ/PPE) ծառերը կտրելիս կամ բուսականության մաքրման համար քիմիական նյութեր կիրառելիս:</p> <p>6. Կտրված և մաքրված բուսականության կառավարում ըստ Թափոնների և նյութերի տեղավորման պլանի: Բացառել փայտանյութի թափոնների այրումը:</p> <p>7. Փայտանյութի թափոնների և մաքրված խոտի կուտակման համար հատկացնել ժամանակավոր տարածք և</p>	<p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>Գոյություն ունեցող համայնքային ծառերի պահպանման ծախսերը 100 ծառի համար՝ յուրաքանչյուրը 15 ԱՄՆ դոլար, գնահատված է 1500 ԱՄՆ դոլար: Կենդանիների համար որպես անցուղի ծառայող խողովակի արժեքը ներառված է բյուջեում:</p>
--	--	--	--	---

		<p>հեռացնել 2 օրվա ընթացքում:</p> <p>8. Միջոցներ ձեռնարկել ծառերի և թփերի պաշտպանության համար, որոնք չեն հատվելու, բայց կարող են ազդեցության ենթարկվել (նշելով դրանք այնպես, որ հեշտությամբ ճանաչելի լինեն աշխատողների համար, երթևեկության կարգավորում, թափոնների և նյութերի տեղավորում և այլն):</p> <p>9. Խուսափել տարածքի ցանկացած աղտոտումից և ավելորդ ծառահատումներից ու բուսականության մաքրումից: Կտրել միայն այն ծառերն ու թփերը, որոնք խոչընդոտում են աշխատանքներին, առավելագույնս զերծ մնալ ավելորդ ծառերի, փայտանյութի, թփերի, մշակաբույսերի և այլ բուսական աշխարհի ոչնչացումից, հեռացումից կամ մաքրումից, քան անհրաժեշտ է աշխատանքների կատարման համար:</p> <p>10. Վերականգնել խոտածածկը և այլ բուսականությունը ժամանակավոր օգտագործվող տարածքներում:</p>		
--	--	--	--	--

		<p><b>Ֆաունայի պաշտպանության միջոցառումներ</b></p> <p>11. Դադարեցնել աշխատանքներն այն տարածքներում, որտեղ հանդիպել են անհայտ տեսակներ և պարզել՝ արդյոք դրանք Կարմիր Գրքում գրանցված, հազվագյուտ կամ վտանգված տեսակներ են: Տեղադրել ժամանակավոր պաշտպանիչ պատեր այն հատվածներում, որտեղ կենդանիները հաճախ են հայտնվում, եթե կիրառելի է:</p> <p>12. Խուսափել թափոնները և/կամ նյութերը Հրագրան գետի հյուսիսային ափին գտնվող քարանձավների մուտքի մոտ տեղադրելուց: Քարանձավներում չղջիկներ հանդիպելու դեպքում տեղեկացնել Ինժեներին, քարանձավի մուտքի մոտ ցանկապատ տեղադրել և հետագա գործողությունների համար խորհրդակցել մասնագետների հետ:</p> <p>13. Օգտագործել ավելի ցածր աղմուկով, թրթռումով և ավելի քիչ հոգնեցնող</p>		
--	--	---	--	--

		<p>սարքավորումներ չղջիկների քարանձավներին և այլ հատվածներին մոտ տարածքներում, որտեղ հաճախ կենդանիներ են հայտնվում:</p> <p>14. Աշխատանքները պլանավորել այնպես, որ նվազագույնի հասցվի բնադրման/բազմացման խաթարման ռիսկը: Խուսափել շինարարական աշխատանքներից երեկոյան և գիշերային ժամերին կենդանիների բազմացման շրջանում և այլն:</p> <p>15. Խուսափել Հրազդան գետում ցանկացած աշխատանքի իրականացումից և գետի ստորին և առափնյա հունների ցանկացած ձևափոխումից, քանի որ դրանք կարող են հանգեցնել արժեքավոր ձկնատեսակների, ինչպես օրինակ՝ կովկասյան կողակի և Կուրի բեղաձկան բազմացման վայրերի ոչնչացմանը:</p> <p>16. Բացառել ջրառը Հրազդան գետից և պահպանել ջրի անխափան հոսքը՝ ձկների ազատ տեղաշարժն ապահովելու համար՝ գետն ի վեր և գետն ի վար:</p> <p>17. Արգելել վայրի բնության մեջ ձկնորսությունն ու</p>		
--	--	---	--	--



		<p>որտրոյությունը:</p> <p>18. Ձեռնարկել պաշտպանական միջոցառումներ և վիրավոր կենդանի գտնելու դեպքում տեղեկացնել Ինժեներին:</p> <p>19. Հնարավորության դեպքում բռնել շինհրապարակի տարածքում գտնված ողնաշարավոր կենդանիներին, տեղադրել հատուկ տարաներում և տեղափոխել տվյալ տեսակի համար բնորոշ տարածք՝ հեռու բնակավայրերից:</p> <p>20. Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ներգրավել սողունագետի (հերպետոլոգի), ով կհավաքի և կմեկուսացնի առանձնյակներին, մասնավորապես՝ Կարմիր ցուցակում գրանցված կատվածին:</p> <p>21. Թունավոր սողուններից պաշտպանելու միջոցառումները առաջարկված են Գլուխ Ը-ում:</p> <p>22. Տեղադրեք 0,5 մ տրամագծով խողովակներ ճանապարհի օտարման գոտու երկայնքով վայրի բնությանը հարող տարածքներում, որպեսզի կենդանիները կարողանան</p>		
--	--	--	--	--

		<p>անցնել ճանապարհը:                  23. Առավելագույնս խուսափել տարածքի հետագա աղտոտումից և սահմանափակել ծառահատումը: Հրազդան գետի առափնյա վայրի բնության առավելագույնս պահպանումը խիստ ցանկալի է:</p>		
<p><b>7. Հաղորդողիների պահպանման և տեղափոխման պլան</b></p>				
<p>16. Հողային աշխատանքներ հաղորդողիների տեղափոխման աշխատանքներ</p>	<p>և                  Գործող հաղորդողիների վնասումը և ծառայությունների ընդհատման ազդեցությունը առաջացնում է ԱԵԱ-ների դժգոհությունը:</p>	<p>Կապալառուն պետք է բնակիչներին ծանուցի ջրի, էլեկտրականության և գազի մատակարարման բոլոր խափանումների մասին, նախքան տարածքում աշխատանքներն սկսելը:</p> <p>1. Հաղորդողիների պահպանությունը և տեղափոխությունն իրականացնել համաձայն Տեխնիկական մասնագրերի (հղումը ենթակա է հաստատման):</p> <p>2. Հաղորդողիների սեփականատիրոջ հետ ճշտել հաղորդողու ճշգրիտ տեղադիրքը և անհրաժեշտության դեպքում իրականացնել</p>	<p><u>Կապալառու</u>                  Հետագոտել հաղորդողները նախքան հողային աշխատանքներն իրականացնելը:                  Փոխգործակցել տեղական իշխանությունների ներկայացուցիչների և ծառայություններ մատուցողների հետ:                  Վարձել հաստատված մասնագիտացված կապալառուների:</p> <p><u>Ինժեներ</u>                  Վերահսկել և մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u>                  Աջակցել սեփականատերերի, տեղական իշխանությունների և ծառայություն մատուցողների հետ</p>	<p>Հաղորդողների պահպանման և տեղափոխման արժեքը չի կարող հաշվարկվել որպես բնապահպանական մեղմացման միջոցառում:</p>

		<p>փորձնական հորատումներ:</p> <p>3. Ծրագրել և կատարել աշխատանքներ՝ հաղորդողիների ժամանակավոր խափանումները նվազեցնելու ուղղությամբ:</p> <p>4. ԱԵԱ-ներին հաղորդողիների հնարավոր խափանման մասին տեղեկացնել նախքան աշխատանքներն սկսելը:</p> <p>5. Տեղափոխել շինարարության ընթացքում հայտնաբերված հաղորդողիները, որոնք չեն հայտնաբերվել նախագծման փուլում և պահպանել դրանք հնարավոր վնասումներից:</p> <p>6. Վերականգնել վնասված հաղորդողիներն առավելագույնը 1-2 օրվա ընթացքում՝ Կապալառուի ծախսերով:</p>	<p>համագործակցելիս:</p>	
<b>8. Շրջակա միջավայրի պահպանության պլան</b>				
<p>17. Հողային աշխատանքներ</p> <p>Ճանապարհային աշխատանքներ</p>	<p>Հողի էրոզիա</p> <p>Փոշու և մեքենաների արտանետումների պատճառով մթնոլորտային</p>	<p><i>Հողի էրոզիա և նստվածքազոյացման վերահսկում</i></p> <p>1. Պահպանել առկա հողի շերտը այնտեղ, որտեղ հնարավոր է:</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել գործիքային չափումների և մոնիտորինգի պլանը, իրականացնել պահանջվող</p>	<p>Մտորև ներկայացված ծախսերն ուղղված են շրջակա միջավայրի</p>

Նախնական գնահատման հայտ

<p>Նյութերի տեղափոխում և տրանսպորտ</p> <p>Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>օդի աղտոտման մակարդակի ավելացում</p> <p>Շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի և թրթռման ավելացում</p>	<p>Եթե անհրաժեշտ չէ, չխաթարել հողը:</p> <p>2. Ապահովել ժամանակավոր ծածկ (ինչպես օրինակ՝ արագ աճող խոտի տեսակներ) այն տարածքների համար, որտեղից հողի շերտը հեռացվում է և գետինը մերկանում է երկար ժամանակով:</p> <p>3. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հողի էրոզիան կանխելու և շեպերի կայունությունն ապահովելու համար:</p> <p>4. Նախքան հողային աշխատանքներն սկսելը, մաքրման և արմատահանման աշխատանքներից հետո հեռացնել բուսահողը և առանձնացնել մեծ քարերն ու ժայռերը:</p> <p>5. Չափել հեռացված և պահեստավորված բուսահողը և գրանցամատյանում կատարել գրանցումներ ստուգման համար:</p> <p>6. Պահել բուսահողը մինչև 2 մ հասնող կանոնավոր կույտերով նախապես որոշված և Բնժեների հետ համաձայնեցված տարածքներում՝ անվտանգ հեռավորություն պահպանելով թավոններից և այլ նյութերից:</p>	<p>մեղմացման միջոցառումները և կառավարումը</p> <p><u>Բնժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Աջակցել ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս</p> <p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>պահպանությանը. ա) Բուսահողի հանման, պահեստավորման և վերաօգտագործման արժեքը՝ 3 ԱՄՆ դոլար 1մ<sup>3</sup>-ի համար: Բուսահողի ծավալը գնահատված է 16 500 ԱՄՆ դոլար բ) 23 928 մ<sup>2</sup> մակերեսով անբերրի հողի վրա (որտեղ էրոզիայի ռիսկը և արտաքին անցանկալի բույսերի աճի հավանականությունը բարձր են) խոտի ցանման արժեքը կազմում է 23 928 ԱՄՆ դոլար՝ ըստ 1 քմ համար 1 ԱՄՆ դոլար հաշվարկի: գ) Շինարարության 18 ամսից 6 ամսվա (180 օր) ընթացքում փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով անբերրի հողի և շինարարական ճանապարհների</p>
---	--	--	--	---

		<p>7. Այնպես տնօրինել բուսահողը, որ պահպանվեն դրա քիմիական և կենսաբանական հատկանիշները: Բուսահողը նորից օգտագործել թփեր, ծառեր տնկելու և կանաչապատման այլ նպատակների համար:</p> <p>8. Ցանել խոտ բուսահողի կույտերի վրա, որոնք պահպանվում են երկար ժամանակով՝ խուսափելու էրոզիայից և կորուստներից:</p> <p>9. Բուսահողի կույտերի վրա իրականացնել ջրահեռացման ալոսներ՝ էրոզիայից խուսափելու նպատակով հեղեղաջրերի հեռացումն ապահովելու համար:</p> <p><i>Օդի աղտոտվածության և փոշու վերահսկողություն</i></p> <p>1. Նվազագույնի հասցնել փոշու արտանետումները՝ շինարարական հրապարակը կանոնավոր կերպով ջրցանելու միջոցով:</p> <p>Ջրցանման հաճախականությունը պետք է համաձայնեցվի Ինժեների հետ՝ կախված հողի տեսակից, սեզոնային և եղանակային պայմաններից, սակայն ոչ պակաս, քան աշխատանքային</p>	<p>վրա ջրի ցանման արժեքը՝ 100 դոլար մեկ օրվա համար հաշվարկով, գնահատված է 18 000 ԱՄՆ դոլար գումարի չափով:</p> <p>դ) օդի, աղմուկի և թրթռումների մակարդակի վերաբերյալ մոնիտորինգի տվյալների հավաքագրման համար մասնագիտացված Կապալառու վարձելու արժեքը գնահատված է 2500 ԱՄՆ դոլար:</p> <p>ե) Աղմուկի պատնեշի արժեքը գնահատված է 900 000 ԱՄՆ դոլարի չափով՝ միջին արժեքը 230 ԱՄՆ դոլար:</p>
--	--	--	--

		<p>օրվա ընթացքում 3-4 անգամ:</p> <p>2. Աշխատանքները պլանավորել այնպես, որպեսզի նվազագույնի հասցվեն հանույթի տարածքների՝ որպես փոշու հիմնական աղբյուրի մակերեսները և խուսափել երկար ժամանակ շինհրապարակում հողի կույտերը պահելուց:</p> <p>3. Շինարարական նյութերը մատակարարել օգտագործման ժամանակ և բացառել լիցքի նյութերի վաղաժամ կուտակումը շինհրապարակում, որոնք հնարավոր չէ օգտագործել տվյալ օրը:</p> <p>4. Ծածկել լիցքի նյութերի կույտերը, եթե դրանք, այնուամենայնիվ, երկար են մնալու շինհրապարակում՝ փոշու արտանետումները կանխելու համար:</p> <p>5. Կարգավորել փոխադրամիջոցների և սարքավորումների արագության սահմանափակումները՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու համար:</p> <p>Շինարարական հրապարակում արագությունը չպետք է գերազանցի 10-20կմ/ժ-ը:</p> <p>6. Պարբերաբար մաքրել</p>		
--	--	---	--	--

		<p>ճանապարհները եզրերին կուտակված ցեխից և ավազից, քանի որ դրանք դառնում են փոշու արտանետումների աղբյուր:</p> <p>7. Ապահովել, որ բոլոր բեռնատարները օգտագործեն ծածկեր հանրային ճանապարհներով և բնակելի տարածքներին կից շինհրապարակներում սորուն նյութեր տեղափոխելիս:</p> <p>8. Աշխատողներին ըստ անհրաժեշտության ապահովել փոշու պաշտպանիչ դիմակներով և համոզվել, որ նրանք օգտագործում են դրանք:</p> <p>9. Իրականացնել մեքենաների և սարքավորումների կանոնավոր տեխնիկական ստուգումներ և նորոգում՝ գազի ավելորդ արտանետումներից խուսափելու համար:</p> <p><i>Աղմուկի և թրթռման վերահսկողություն.</i></p> <p>1. Խուսափել շինարարական գործողությունները, ճամբարները և սարքավորումներն ազդեցության նկատմամբ առավել զգայուն ընկալիչների մոտ տեղակայելուց, ինչպես օրինակ՝</p>		
--	--	--	--	--

		<p>վատ մեկուսացում ունեցող տներն են, դպրոցները, այլ հասարակական և բնակելի վայրերը:</p> <p>2. Աղմկոտ գործողությունների իրականացումը ծրագրել օրվա կեսերին, եթե հնարավոր է:</p> <p>3. Կանոնավոր կերպով ստուգել աղմուկի և թրթռման գործիքային չափազանցումների տվյալները և համապատասխանաբար փոխել շինարարական մեթոդը աղմուկի և թրթռման մակարդակը նվազեցնելու համար, որպեսզի վերջիններս չգերազանցեն ՇՄԱԳ Աղյուսակ Ե-3-ում ներկայացված առավելագույն թույլատրելի մակարդակները:</p> <p>4. Ապահովել, որ առավել զգայուն տարածքներում (վատ մեկուսացում ունեցող տները, դպրոցները հնագիտական վայրերը) թրթռումների մակարդակները կանոնավոր կերպով վերահսկվեն. աշխղեկն ու աշխատողները տեղյակ են գործիքային չափումների տվյալներին և կիրառվում է Ինժեների պահանջած պատշաճ շինարարական մեթոդը:</p> <p>5. Ապահովել, որ բոլոր մեքենաները համալրված լինեն համապատասխան</p>		
--	--	--	--	--



		<p>իլացուցիչներով և չօգտագործել այն սարքավորումները, որոնք սարքին չեն:</p> <p>6. Ապահովել, որ բանվորներին և շինհրապարակի այլ անձնակազմին տրամադրվեն համապատասխան ԱՊՍ-ներ, այդ թվում՝ աղմկոտ միջավայրում աշխատելու համար նախատեսված ակնջակայներ:</p>		
<b>9. Շինարարական աշխատանքի ճամբարների պլան</b>				
<p>18. Աշխատանքի հետ կապված հարմարությունների ստեղծում/հիմնում՝ հիմնական գրասենյակը և դաշտային ճամբարները, ներառյալ շարժական տները, սարքավորումների և նյութերի պահեստավորման տարածքը, մեքենաների կայանման տարածքը, սանիտարական, ընդմիջման և հանգստի հարմարություններ՝ բանվորների և այլ անձնակազմի համար:</p>	<p>Տեղի բնակչությանը պատճառվող անհարմարություններ, բնակչության և տեղական / կենտրոնական իշխանությունների հետ հնարավոր կոնֆլիկտային իրավիճակ, ինչպես նաև հողի և ստորերկրյա ջրերի աղտոտում</p>	<p>1. Շինարարական ճամբարները տեղակայել օտարման գոտու սահմաններում՝ բնակելի տարածքներից հնարավորինս հեռու՝ բնակիչներին չանհանգստացնելու համար: Պահպանել 50 մ բուֆերային հեռավորություն զգայուն ընկալիչներից՝ բնակելի և այլ շինություններից, ձեռնարկատիրական գործունեություններից:</p> <p>2. Շինարարական ճամբարը օտարման գոտու սահմաններից դուրս հիմնելու դեպքում ձեռք բերել հողի սեփականատիրոջ թույլտվությունը, նախքան նրա տարածքում ճամբարի</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Մշակել Շինարարական աշխատանքների ճամբարների պլան Մոբիլիզացիայի պլանի և ԿԲԿՊ-ի շրջանակում, իրականացնել պահանջվող մեղմացման միջոցառումները և կառավարումը:</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԷՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ:</p> <p>Սույն ենթապլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Դրա արժեքը հաշվառված է</p>

		<p>հիմնումը:</p> <p>3. Շինարարական աշխատանքի ճամբարները, փոխադրամիջոցների և սարքավորումների կայանատեղիները և այլ հարմարանքները չտեղակայել անվնաս/պահպանված լանդշաֆտի վրա և բուսածածկ տարածքներում:</p> <p>4. Ողջ անձնակազմի համար ապահովել սանիտարական հարմարություններ՝ բավարար քանակությամբ խմելու և լվացվելու ջուր, զուգարաններ, սեզոնին համապատասխան ճաշելու և հանգստի հարմարություններ: Ապահովել, այդպիսի հարմարությունների հասանելիությունը բոլոր ճանապարհահատվածներում, որպեսզի բանվորները և անձնակազմի մյուս անդամները մուտք ունենան դեպի հանգստի կայաններ (զուգարաններ, ձեռքի լվացարաններ, ցնցուղներ և այլն), ճաշարան և գրասենյակներ:</p> <p>5. Գիշերային ժամերին ապահովել շինհրապարակի և</p>	<p>վերոնշյալ կետ 4-ում:</p>
--	--	--	-----------------------------

		<p>ճամբարի լուսավորությունը:</p> <p>6. Հատկացնել նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքներ, նյութերը հավաքել կանոնավոր կույտերով և ծածկել ոչ պինդ նյութերը:</p> <p>7. Պարկերն ու տարաները պետք է լինեն պիտակավորված, որտեղ նշվում է նյութի անվանումը և վնասակարությունը՝ վտանգավոր / ոչ վտանգավոր:</p> <p>8. Մեքենամեխանիզմների կայանատեղին, նորոգման և վերալիցքավորման արհեստանոցները տեղակայել կոպճային և այլ ներծծող նյութերով պատված տարածքներում:</p> <p>9. Աշխատանքային օրն սկսվելուց առաջ իրականացնել մեքենաների կանոնավոր տեխնիկական ստուգումներ՝ ցանկացած արտահոսք և հողի աղտոտումը կանխելու համար:</p> <p>10. Յուղի, քսայուղի և վառելանյութի արտահոսքի դեպքում մաքրվում է տարածքը</p>		
--	--	--	--	--

		<p>և աղտոտված ներծծող նյութը տեղափոխվում է թափոնների կուտակման համար հատկացված վայր:</p> <p>11. Կանոնավոր կերպով կազմակերպել մեքենամեխանիզմների լվացում և ճամբարի տարածքի մաքրում՝ կանխելու կեղտի և ցեխի տարածումը շինհրապարակից:</p> <p>12. Ձեռնարկել են բոլոր ողջամիտ նախագուշակյան միջոցները (ժապավենային ցանկապատեր, պահակակետեր և այլն)՝ դեպի շինհրապարակ չարտոնված մուտքը կանխելու համար:</p> <p>13. Բոլոր մեքենաների, այդ թվում՝ աշխատող անձնակազմի անձնական մեքենաների համար տրամադրվում է Ծրագրի և / կամ ընկերության պատկերանշանը:</p>		
<b>10. Շինհրապարակի կառավարման պլան (Օտարման գոտուց դուրս տարածքների համար)</b>				
19. Քարհանքեր և բացահանքեր	Աղմուկի և փոշու պատճառած	1. Նախապատվություն տալ գոյություն ունեցող քարհանքերին, բետոնի	<u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի ներքո մշակել ՇԿՊ, իրականացնել պահանջվող	Կապալառուի կողմից սույն ենթապլանի

Նախնական գնահատման հայտ

<p>Բետոնի դոզավորման և ասֆալտի գործարաններ</p> <p>Ջարդիչ գործարաններ</p> <p>Թափոնների կուտակման վայրեր</p>	<p>անհարմարությունները, Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, այդ թվում՝ պատմական և մշակութային վայրերի և հուշարձանների վրա, գեղագիտական տեսքի կորուստ, տեղական կենսապայմանների և հաղորդակցության միջոցների խափանում, փոխգործակցություն շինարարական աշխատուժի հետ, ճնշումը շրջակա միջավայրի բնական ռեսուրսների վրա, ինչպես օրինակ՝ էրոզիան և նստվածքները, վնասված ճանապարհը, մարդկանց կողմից մատուցվող ծառայությունները</p>	<p>դոզավորման և ասֆալտի գործարաններին՝ նորերը բացելու փոխարեն:</p> <p>2. Քարհանքերի, բացահանքերի, թափոնների կուտակման վայրերի, բետոնի դոզավորման և ասֆալտի գործարանների հիմնումն ու շահագործումն իրականացնել՝ ըստ Հավելված Ժ-ի պահանջների մշակված և Ինժեների կողմից հաստատված ՇԿՊ-ի:</p> <p>3. Կապալառուի կողմից բետոնի դոզավորման և ասֆալտի նոր գործարաններ բացելու դեպքում դրանք հնարավորինս պետք է հեռու լինեն ՇԿՊ շրջանակում ռիսկի գնահատման հիման վրա հայտնաբերված հնարավոր ընկալիչներից, այն է՝ բնակելի տարածքներից՝ տեղի բնակչությանը անհանգստություն չպատճառելու համար:</p> <p>4. Խուսափել բետոնի դոզավորման և ասֆալտի գործարանները չհաթարված բնական լանդշաֆտում և բուսականությամբ ծածկված մակերևույթին տեղադրելուց:</p> <p>5. Կիրառել վերը նշված բոլոր նախատեսված մեղմացման միջոցառումները՝ օդի, ջրի որակի, բուսական և կենդանական աշխարհների,</p>	<p>մեղմացման միջոցառումները և կառավարումը</p> <p><u>Վերահսկողության ինժեներ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԷՔՕԻԳ</u> Ստուգել իրականացումը</p>	<p>մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերում:</p> <p>Սույն ենթապլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Դրա արժեքը հաշվառված է վերոնշյալ կետ 4-ում:</p>
--	---	--	---	---

		<p>ջրահեռացման և այլ հաղորդողիների, ինչպես նաև հարակից բնակելի վայրերի բնակչության վրա ազդեցությունը նվազեցնելու համար:</p> <p>6. Մշակել երթևեկության կառավարման պլան մուտքի և մեքենամեխանիզմների շահագործման համար:</p> <p>7. Մշակել թափոնների կառավարման պլան՝ թափոնների առաջացմանն առնչվող բոլոր հարցերին անդրադառնալու համար:</p>		
<b>11. Երթևեկության և մուտքերի կառավարման պլան</b>				
<p>20. Փոխադրամիջոցների շարժն աշխատանքային տեղամասում և տեղամասից դուրս</p>	<p>Երթևեկության արգելափակում</p> <p>Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</p> <p>Շինարարական ծանր սարքավորումների և մեքենաների կողմից ճանապարհներին հասցված վնասը</p> <p>Փոշի, աղմուկ և թրթռում</p> <p>Դեպի հանրային ճանապարհները տարվող կեղտը և ցեխը</p>	<p>1. Փոխադրամիջոցների և սարքավորումների շարժն իրականացնել՝ հնարավորինս քիչ միջամտելով երթևեկության հոսքին:</p> <p>2. Խուսափել հանրային ճանապարհները արգելափակելուց ԵԿՊ-ով չնախատեսված դեպքերում:</p> <p>3. Ապահովել երթևեկության և հետիոտների համար ժամանակավոր շրջանցիկ ճանապարհներ: Պետական կազմակերպություններից և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ հաստատումներ ԵԿՊ-ի համար, այդ թվում՝ ժամանակավոր</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ շրջանակում մշակել և իրականացնել, կառավարել ԵՊԿ-ն:</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մենիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարել</p> <p><u>ԵՔՄԻԳ</u></p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>Կապալառուի կողմից այս պլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ: Մույն պլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱնԱ մասնագետի կողմից:</p>

		<p>շրջանցիկ ճանապարհների:</p> <p>4. Շինհրապարակների մուտքերը և ելքերը տեղակայել այնպես, որ դրանք նվազագույնս խանգարեն ընդհանուր երթևեկությանը և չտուժի հանրային անվտանգությունը:</p> <p>5. Տեղադրել բավարար քանկությամբ նշաններ, որոնք նախագուշացնում են ընթացող շինարարական աշխատանքների մասին, ինչպես նաև ազդանշանային համակարգ, գծանշումներ, դեպի շինհրապարակ բոլոր հնարավոր մուտքերում երթևեկությունը կարգավորող դրոշակակիրներ համաձայն ԵԿՊ-ի:</p> <p>6. Իրականացնել համապատասխան շինարարական ազդանշանային համակարգ, այդ թվում՝ ուղղություն ցույց տվող նշաններ, գծանշումներ, երթևեկության ազդանշաններ, լուսավորություն, հստակ տեսանելի ամուր արգելապատնեշներ երթևեկությունը հոսքավորելու համար, և շրջանցումների կարգավորումներ:</p>		
--	--	---	--	--

		<p>7. Հետիոտների համար ապահովել անվտանգ ցանկապատված այլընտրանքային անցուղիներ:</p> <p>8. Ապահովել մարդկանց շուրջօրյա (24 ժամ) անխափան մուտքը դեպի տները, խանութները, աշխատավայրերը և այլն:</p> <p>9. Խստացնել 20 կմ/ժ արագության սահմանափակումը աշխատանքային տարածքում՝ անվտանգության և փոշու վերահսկման նպատակով:</p> <p>10. Փոխադրամիջոցների շարժը կազմակերպել՝ ըստ ժամանակացույցի՝ պիկ ժամերից հնարավորինս խուսափելու համար:</p> <p><b><i>Փոխադրամիջոցների կառավարումը շինհրապարակում և շինհրապարակից դուրս</i></b></p> <p>11. Վարորդների հետ կանոնավոր կերպով կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ԵԿՊ-ի և անվտանգության թեմաներով, սահմանել աշխատանքային ժամերը և արագության</p>		
--	--	---	--	--



		<p>սահմանափակումները (20 կմ/ժ), խախտումների համար կիրառել տուգանային համակարգ:</p> <p>12. Հատկացնել կայանատեղիների տարածքներ և տեղակայել դրանք միայն նախատեսված վայրերում:</p> <p>13. Ապահովել, որ բոլոր փոխադրամիջոցներն (բեռնատարները և մասնավոր մեքենաները) ունենան կազմակերպության պատկերանշանը:</p> <p>14. Միջոցներ ձեռնարկել, որպեսզի փոխադրամիջոցներն ապահովվեն ծածկոցներով՝ ավազի, հողի, ոչ պիտանի նյութի և թափոնների փոխադրման և շինհրապարակից դուրս գալու ժամանակ և շինհրապարակի բնակելի տներին և ձեռնարկատիրական գործունեություններին մոտ գտնվող տարածքներում:</p> <p>15. Ապահովել, որ փոխադրամիջոցներն ունենան աղմկակլանիչներ և խլացուցիչներ:</p> <p>16. Բեռնատար մեքենաների նորոգման, վերալիցքավորման և տեխնիկական սպասարկման համար հատկացնել պատշաճ սարքավորումներով</p>		
--	--	--	--	--

		<p>արհեստանոցային տարածք, և մեքենաների տեխնիկական սպասարկումն իրականացնել միայն այս տարածքում:</p> <p>17. Ստուգել, որ փոխադրամիջոցները կանոնավոր կերպով տեխնիկապես սպասարկվեն՝ կանխելու վառելանյութի և յուղերի արտահոսքը:</p> <p>18. Դադարեցնել արտահոսք ունեցող մեքենաների գործածումը և փոխարինել դրանք պատշաճ վիճակում գտնվողներով:</p> <p>19. Ապահովել անվադողերի մաքրման համար միջոցներ (շինհրապարակում կոպճային մակերևույթների և մեքենաների լվացման հարմարանքներ՝ արտահոսքի կանխարգելման համակարգով) նախքան շինհրապարակից դուրս գալը՝ շինարարական կեղտի և ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>20. Պարբերաբար ստուգել շինհրապարակից եկող կեղտի և ցեխի կուտակումները հարակից ճանապարհների վրա: Անհրաժեշտության և անվտանգ լինելու դեպքում՝ ավլել և մաքրել:</p>			
<b>12. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</b>					
21. Վտանգավոր նյութերի	Շինարարության	հետ	<b><i>Վտանգավոր նյութերի հետ</i></b>	<u>Գապալառու</u>	Գապալառուի

Նախնական գնահատման հայտ

<p>հետև և այլ արտակարգ իրավիճակների դեպքում (դժբախտ պատահարներ և այլն) ճիշտ վարվելը</p>	<p>կապված աշխատանքային և հանրային անվտանգությանը սպառնացող հնարավոր վտանգները</p> <p>Դիզելի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով նյութերի ներթափանցումը հողի, մակերևութային ջրերի և/կամ գրունտային ջրերի մեջ</p>	<p><b>Վարվելը</b></p> <p>1. Մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգեր: Արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերի վերաբերյալ պաստառները փակցնել տեսանելի վայրերում, և անվտանգության վերաբերյալ տվյալների թերթիկները պետք է հասանելի լինեն ստուգման նպատակով:</p> <p>2. Արտահոսքերի մաքրող գործիքները պետք է հասանելի լինեն աշխատանքային տեղամասում, և աշխատակիցներին սովորեցնել դրանց ճիշտ օգտագործման եղանակները:</p> <p>3. Ներծծող նյութի միջոցով անմիջապես մաքրել այն տարածքը, որտեղ հոսք է տեղի ունեցել հողի և գրունտային ջրերի հնարավոր թունավորումը կանխելու համար:</p> <p>4. Օգտագործել միայն Մոբիլիզացիոն պլանում նշված քիմիական և վտանգավոր նյութերը և անհրաժեշտության դեպքում թարմացնել ցանկը:</p> <p>5. Այդ նյութերը պետք պահվեն շինհրապարակում՝ ծածկված,</p>	<p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, իրականացնել անհրաժեշտ մեղմացման միջոցառումները և կառավարումը</p> <p><b>ՎԻ</b></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը</p> <p><b>ԵՔԾԻԳ</b></p> <p>Աջակցել՝ ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս</p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>կողմից այս ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը ներառված են ընդհանուր շինարարության արժեքի մեջ: Այս պլանի իրականացումը վերահսկվելու է Կապալառուի՝ շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության մասնագետի կողմից: Ծախսերն ընդգրկված են Կետ 4-ում:</p> <p>Արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի՝ 10 անդամների եռօրյա ուսուցման արժեքը՝ յուրաքանչյուր օրվա համար 50 ԱՄՆ դոլար արժողությամբ,</p>
---	---	---	--	--

		<p>անվտանգ և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ունի անանցանելի/անթափանցելի հատակ և թմբապատնեշ: Թմբապատնեշը պետք է ունենա ամենամեծ բաքի 150%-ի չափով տարողունակություն:</p> <p>6. Պահեստային տարածքները տեղակայել ջրահեռացման համակարգերից հեռու և խստորեն սահմանափակել մուտքը (միայն լիազորված անձանց համար)</p> <p>7. Բոլոր շինհրապարակներն ապահովել արտակարգ իրավիճակների դեպքում կիրառելի կոնտակտային տվյալներով, պատասխանատու անձանց և անվտանգության աշխատակիցների անուններով, հեռախոսահամարներով և այլն:</p> <p>8. Ապահովել, որ ER –ը և քիմիական և վտանգավոր նյութերի հետ առնչվող ողջ անձնակազմը ստանա վտանգների և ռիսկերի կառավարման վերաբերյալ ուսուցում:</p> <p>9. Վերահսկողության ինժեներին տեղեկացնել ցանկացած մեծամասշտաբ արտահոսքի</p>	<p>գումարած ուսուցանողի՝ 3 օրվա վճարը՝ 75 ԱՄՆ դոլար, գնահատվում է՝ 1725 ԱՄՆ դոլար:</p>
--	--	---	--

		<p>մասին, որը կարող է հանգեցնել հողի և ջրի աղտոտման:</p> <p><b><i>Աշխատանքային և հանրային անվտանգությանը սպառնացող պատահարները</i></b></p> <p>10. Ինժեներին անմիջապես տեղեկացնել ցանկացած պատահարի մասին, որը տեղի է ունեցել շինհրապարակի տարածքում և մերձակայքում և ձեռնարկել առաջին օգնության միջոցառումները:</p> <p>11. Ուսումնասիրել դեպքը՝ որոշելով պատճառները և զեկուցել պատահարի մասին՝ լրացնելով պատահարի հաշվետվության ձևը:</p> <p>12. Նախաձեռնել արդյունավետ միջոցներ՝ հետագայում դրանց կրկնվելը կանխելու համար:</p> <p><b><i>COVID-19-ի դեմ ուղղված միջոցառումներ</i></b></p> <p>13. Արտակարգ իրավիճակների պատասխանատուի և/կամ շինհրապարակի բուժաշխատողի որոշմամբ անմիջապես 14 օրով մեկուսացնել այն աշխատողին, որն ունի COVID-19-ի ախտանիշներ (ջերմություն, չոր հազ, հոգնածություն):</p> <p>14. Անհրաժեշտության դեպքում</p>		
--	--	--	--	--

		<p>կանխել հիվանդ անձնակազմի մուտքը գործունեության տարածք:</p> <p>15. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել աշխատողին բժշկական հաստատություն տեղափոխելը և թեստավորումը: Եթե աշխատողի մոտ ախտորոշվել է վարակ (դրական պատասխան), ապա նա պետք է մնա մեկուսացված վիճակում, մինչև լիովին ապաքինվելը, այնուհետև նա կկարողանա վերադառնալ աշխատանքի:</p> <p>16. Եթե անձնակազմի անդամներից որևէ մեկի մոտ հաստատվել է COVID-19 վարակը, ապա այցելուների մուտքը գործունեության տարածք պետք է սահմանափակվի, և անձնակազմի խմբերը հնարավորինս մեկուսացված լինեն միմյանցից:</p> <p>17. Տեղեկացնել ՎԻ-ին անձնակազմի յուրաքանչյուր վարակվածության դեպքի մասին ԿԲԿՊ-ում ներկայացված վթարի ձևանմուշի միջոցով:</p> <p>18. Որոշել վարակված անձի հետ շփում ունեցած անձանց շրջանակը և անմիջապես</p>		
--	--	--	--	--

		<p>մեկուսացնել նրան և կազմակերպել COVID-19-ի ստուգման թեստավորում:</p> <p>19. Վերահսկել վարակված անձի կողմից 14-օրյա ինքնամեկուսացման ժամանակահատվածի պահպանումը:</p> <p>20 Ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ և պահանջել, որ աշխատողը կատարի հետևյալը.</p> <p>ա. ձեռքերը հաճախակի լվանալ օձառով՝ առնվազն 20 վայրկյան: Եթե օձառն ու հոսող ջուրն անհասանելի են, օգտագործել ալկոհել կամ ալկոհոլային հիմքով ձեռքի քսուք՝ առնվազն 60% ալկոհոլով: Միշտ լվանալ ձեռքերը, երբ դրանք տեսանելիորեն աղտոտված են հողով:</p> <p>բ. Ծածկել բերանը և քիթը կտորով՝ հազալիս կամ փռշտալիս:</p> <p>գ. Խուսափել աչքերին, քթին կամ բերանին չլվացված ձեռքերով հպելուց:</p> <p>դ. Խուսափել ախտանիշներ ունեցող մարդկանց հետ սերտ շփումից:</p> <p>ե. Աշխատողներից պահանջվում է օգտագործել սննդի անձնական տարաներ ու</p>		
--	--	---	--	--

		<p>ջրի շերտ: գ. Հիվանդ աշխատակիցները չպետք է վերադառնան աշխատանքի, քանի դեռ առողջապահության տեղական բաժանմունքից թույլտվությունը չի ստացվել:</p>		
<b>13. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>				
<p>22. Շինհրապարակի բոլոր աշխատանքները</p>	<p>Աղբի տեղավորումն անհամապատասխան վայրերում</p> <p>Ջրահեռացման համակարգ և/կամ ստորգետնյա ջրեր ներթափանցող թափոնների և նյութերի աղտոտիչներ</p> <p>Շինարարական նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, պոտենցիալ վտանգ են հանդիսանում</p>	<p><b><i>Շինարարական նյութերի կառավարում</i></b></p> <p>1. Հատկացնել պահեստային տարածք՝ հազեցած համապատասխան հարմարություններով շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի նյութերի համար:</p> <p>2. Խուսափել շինարարության տարածք ավելորդ քանակությամբ նյութեր տեղափոխելուց և դրանց երկարաժամկետ կուտակումից:</p> <p>3. Ծածկել ստրուն նյութերի կույտերը՝ տարածումից և փոշուց խուսափելու համար:</p> <p>4. Հատկացված պահեստային տարածքներում դասավորված պահել աշխատանքային գործիքները և օժանդակ սարքավորումները, ինչպիսիք են սանդուղքները, փայտամածր, եռակցման և կտրող սարքավորումները:</p>	<p><u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջնակում մշակել Թափոնների կառավարման պլանը, իրականացնել և մոնիտորինգի ենթարկել</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Աջակցել ԵՔ-ի և ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս՝ թափոնների տեղադրան վայրերի թույլտվություններ ձեռք բերելիս:</p>	<p>Մույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ: Թափոնների հեռացման և տեղավորման գինը ներառված է Կապալառուի բյուջեում:</p> <p>Մույն ենթապլանի իրականացումը պետք է վերահսկվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Ծախսերն ընդգրկված են Կետ 4-ում:</p>



		<p>5. Վտանգավոր նյութերը պահել հատուկ հարմարություններում, որոնք ապահովված են անվտանգության սարքավորումներով, պիտակներով և վտանգի մասին նախազգուշացնող պիտակներով: Հարմարանքը ծածկելու է և անվտանգությունն ապահովվելու է՝ մուտքը սահմանափակելու համար, և ունենալու է ջրակայուն պատվածք, որը հոսքը կողմի դեպի անվտանգ պահեստային տարածք:</p> <p>6. Պարբերաբար ստուգել հեղուկ նյութերը պահելու համար նախատեսված տարաների ամբողջականությունը՝ արտահոսքից խուսափելու համար:</p> <p><b><i>Թափոնների կառավարում</i></b></p> <p>1. Դասակարգել ոչ պիտանի և այլ շինարարական թափոններն՝ ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ, վտանգավոր և վնասակար, ինչպես նաև վերամշակման ենթակա:</p> <p>2. Շինիրապարակում պահել թափոնների գրանցամատյան՝ դրանց տեսակի և քանակի գրանցման համար, թարմացնել</p>		
--	--	--	--	--

		<p>գրանցված տվյալները յուրաքանչյուր ամսվա սկզբում և ապահովել հասանելիությունը՝ ստուգման նպատակով:</p> <p>3. Կապալառուի անձնակազմի համար կազմակերպել ուսուցողական ծրագիր թափոնների կառավարման վերաբերյալ և համոզվել, որ ողջ անձնակազմը վերապատրաստված է:</p> <p>4. Կանոնավոր կերպով շինհրապարակից հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և աղբի երկարատև կուտակումը կանխելու համար: Կապալառուն պետք է սահմանի թափոնների հեռացման հաճախականությունը ԿԲԿՊ-ում՝ որպես մոնիտորինգի սկիզբ:</p> <p>5. Փոխադրումից և վերջնական տեղավորումից առաջ թափոններն ու նյութերը կանոնավոր կույտերով հավաքել ճանապարհի՝ օտարման գոտում՝ ժամանակավոր կուտակվալրերում կամ հողամասի սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում:</p> <p>6. Հավաքել նավթի, քսայուղերի և վառելանյութի՝ ավելորդ քանակությունները՝ դրանց</p>		
--	--	---	--	--

		<p>արտահոսքից և տարածումից խուսափելու համար: Տեղավորել դրանք հերմետիկ փակված տարաների մեջ՝ հատկացված կուտակավայրերում պատշաճ կերպով տեղավորելու համար:</p> <p>7. Շինարարության ընթացքում հավաքել յուրի բոլոր թափոնները և վերաօգտագործել շինարարական աշխատանքներում կամ տեղափոխել յուրի թափոնների վերամշակման հարմարանք, հակառակ դեպքում հավաքել հատուկ տարաների մեջ և տեղափոխել հաստատված կուտակավայր:</p> <p>8. Կառուցել լվացման ջրերի ջրահեռացման համակարգ և ուղղել դեպի տեղական ջրահեռացման համակարգ կամ հավաքել և թափել ԵՔ-ի կողմից թույլատրված վայրերում:</p> <p>9. Թափոնաջրերը հավաքել հատուկ ջրամբարներում և պատշաճ կերպով մաքրել դրանք նավթից և վառելիքից՝ նախքան ջրային մարմիններ թափվելը:</p> <p>10. Ձեռք բերել թափոնների տեղավորման բոլոր թույլտվությունները, և թափոնները տեղավորել միայն</p>		
--	--	--	--	--

		<p>թույլատրված վայրերում:</p> <p>11. Շինարարական աշխատանքների բոլոր հատվածներում տեղադրել հատուկ տարաներ աղբի հավաքման համար, որոնք անհրաժեշտ քանակությամբ կափարիչներ ունեն: Դրանք տեղադրել օգտագործման համար հարմարավետ հեռավորության վրա, ինչպես նաև Կապալառուի գրասենյակներում, դաշտային ճամբարներում և շարժական տներում:</p> <p>12. Թափոնների հավաքման տարաները պետք է ունենան բավարար տարողունակություն՝ կանխատեսվող թափոնները մինչև դրանց հաջորդ դատարկումը տեղավորելու համար:</p> <p>13. Ժամանակին դատարկել շինարարական թափոնների հավաքման տարաները՝ խուսափելով ավելորդ կուտակումներից:</p> <p>Շինարարական թափոնները պետք է ամեն օր կամ նույնիսկ ավելի հաճախակի հեռացվեն շինհրապարակից հատկապես ամռան սեզոնին:</p> <p>14. Խուսափել օտարման</p>		
--	--	---	--	--

		<p>գոտուց դուրս կուտակումներից, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ երթևեկության և հանրության համար:</p>		
<p><b>14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան</b></p>				
<p>23. Շինարարական բոլոր տեղամասերի վերականգնում</p> <p>Բուսականության վերականգնում կանաչապատում</p>	<p>Շինարարական թափոնները և շինանյութերը հեռացված չեն և գտնվում են շինհրապարակում:</p> <p>Մաքրված բուսականությունը և ծառերը ամբողջությամբ չեն փոխհատուցվել բուսականության վերականգնման աշխատանքների միջոցով:</p> <p>Շինհրապարակի գեղագիտական տեսքը բավարար չէ:</p>	<p>1. Շինհրապարակից հեռացնել շինարարության հետ կապված բոլոր նյութերը և սարքավորումները, ներառյալ թափոնները և չօգտագործված նյութերը:</p> <p>2. Բոլոր մեքենամեխանիզմները, ներառյալ չսպասարկվող մեքենամեխանիզմները և փոխադրամիջոցները, պետք է հեռացվեն շինհրապարակից:</p> <p>3. Հեռացնել բոլոր ժամանակավոր և հարմարությունները և ցանկապատերը, եթե հողի սեփականատերը կամ շինհրապարակն ընդունող Պատվիրատուն այլ կերպ չի պահանջում:</p> <p>4. Վերականգնել բնական ջրահեռացումն ու մյուս վնասված կամ տեղափոխված հաղորդողիները:</p> <p>Ձևավորվել շինհրապարակի լանդշաֆտը՝ ապահովելով տարածքի պատշաճ ջրահեռացումը:</p>	<p><u>Կապալառու</u> Իրականացնել պարբերություններ 1- 5-ում նշված միջազատումները</p> <p><u>Ինժեներ</u> Տրամադրել կանաչապատման նախագիծը: Դիտարկել պլանն ու մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԷՔՕԻԳ</u> Մոնիտորինգի ենթարկել իրականացումը</p>	<p>Յուրաքանչյուր ծառի և թփի տնկման արժեքը՝ 50 ԱՄՆ դոլար:</p> <p>Ծախսերը վերաբերում են միայն համայնքային ծառերին և թփերին: Ծրագրի հետևանքով ազդեցության ենթակա մասնավոր ծառերի, թփերի և մշակաբույսերի ծախսերը փոխհատուցվում են ՀՕՏԾ-ի շրջանակում:</p>

		<p>3. Շինհրապարակը մաքրել աղբից և յուղային նյութերի և վառելանյութի արտահոսքի հետքերից, եթե կան այդպիսիք: Մանրակրկիտ զննել վառելիքի պահեստավորման բոլոր տարածքները, աղտոտված հողը հեռացնել և տեղափոխել թույլատրված տարածք:</p> <p>4. Վերականգնել հողաշերտը և փխրեցնել ծանր մեքենաների կիրառման հետևանքով տոփանված հողը:</p> <p>5. Կատարել բուսականության վերականգնման աշխատանքներ՝ ըստ կանաչապատման նախագծի և ծառերի կառավարման պլանի, որը ներառում է տնկումը, խնամքը և մոնիտորինգի իրականացումը՝ ծառերի, թփերի, սիզամարգերի և այլ բույսերի գոյատևման բարձր աստիճանն ու արագ աճն ապահովելու համար:</p>		
<b>ՀԵՇԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>				
Թերությունների շտկման ժամանակահատված	Շինարարության փուլում բացահայտված ազդեցությունները	Շինարարության փուլում նախատեսված հատուկ մեղմացման միջոցառումներ:  Բնապահպանական աուդիտի իրականացում մինչև ԹՇԺ-ի ավարտը	<u>Կապալառու</u> Թերությունների շտկման ժամանակահատվածում Կապալառուն պետք է իրականացնի ԲԿՊ և ԿԲԿՊ, ինչպես նաև ապահովի շրջակա միջավայրի անվտանգության հաշվետվություններ:	Կապալառուի կողմից երկարաժամկետ մոնիտորինգի իրականացման արժեքն այս պահին չի կարող գնահատվել:

Նախնական գնահատման հայտ

			<p><u>Ինժեներ</u> Աշխատանքների իրականացման և թերությունների շտկման ժամանակահատվածում մոնիտորինգի ենթարկել ծառերի և այլ բույսերի գոյատևման գործընթացը և ԵՔՕԻԳ-ին ներկայացնել բնապահպանական անվտանգության վերաբերյալ հաշվետվություններ:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ, պատրաստել ստուգաթերթիկ և ներկայացնել ԱԶԲ-ին:</p> <p><u>ԵՔ</u> Իրականացնել ճանապարհների շահագործման/սպասարկման աշխատանքներ՝ ապահովելով մաքրություն և անվտանգություն</p>	
<p>Շահագործում և սպասարկում/պահպանում</p>	<p>Բուսականությունը չի աճում, ինչպես ակնկալվում էր</p> <p>Տարածքը մաքրված չէ,</p> <p>Ճանապարհն անվտանգ չէ</p> <p>Աղմուկի ազդեցությունը</p> <p>Կանաչապատումը</p>	<p>1. Իրականացնել ճանապարհների պահպանման աշխատանքները՝ ապահովելով մաքրությունն ու անվտանգությունը:</p> <p>2. Ապահովել աղմկապաշտպան արգելապատնեշներ՝ տեղադրված ըստ աղմուկի հետազոտության արդյունքների և նախագծի:</p>	<p>ԵՔ</p>	<p>ԵՔ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ սպասարկման արժեքն այս պահին չի կարող գնահատվել:</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>գեղագիտական առումով վտանգված է</p>	<p>3. Ներառել Ծրագրի համար նախատեսված բույսերը ԵՔ կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: Այն կներառի ծառերի, թփերի, սիզամարգերի և այլ բուսականության աճի ու առողջական վիճակի մոնիտորինգը, բոլոր մահացած, վնասված կամ անառողջ տեսակների փոխարինումը և ոչ ճիշտ աճած սիզամարգերի տարածքների նորից ցանումը:</p>		
--	---------------------------------------	---	--	--



## ՀԱՎԵԼՎԱԾ Թ. Շինարարության բնապահպանական կառավարման պլանի կառուցվածքը (կազմվում է Կապալառուի կողմից)

Ա. Ներածություն. ՇԲԿՊ-ի նկարագրությունը, աշխարհագրական դիրքը, պիկետաժը, կից քարտեզը:

Բ. ՇԲԿՊ-ի նպատակը

Գ. Պատասխանատու մարմիններ և անձինք

Դ. Օրենսդրական շրջանակները

Ե. Թույլտվություններ և հաստատումներ

Զ. Տեղանքի նկարագրություն`

I. ներկա իրավիճակը, վայրի բնության, բուսահողի, աղտոտված գրունտի, կուտակված թափոնների, ծառերի և թփերի, փոշու, աղմուկի, ջրային մարմինների, այլ գործոնների առկայությունը, որոնք կարող են ազդել շինարարության վրա, կից լուսանկարներ,

II. ենթակառուցվածքների առկայությունը` մուտքեր, դաշտային ճանապարհներ, խողովակներ, էլեկտրականություն, ոռոգում, ջրահեռացում և այլն,

III. զգայուն ընկալիչների առկայությունը` բնակելի տներ, գրասենյակներ, ձեռնարկություններ և այլն, կից լուսանկարներ:

Է. Տեղամասային աշխատանքներ`

- i. այստեղ իրականացվելիք աշխատանքների ցանկ,
- ii. մեքենաներ և մեխանիզմներ,
- iii. շինհրապարակի անձնակազմ:

Ը. Ազդեցությունների և ռիսկերի գնահատում

Լրացնել աղյուսակը

N	Շինարարական աշխատանք	Դիտարկման ենթակա վտանգները	Հավանականություն (1-5)	Հետևանք (1-5)	Գնահատական	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ

Թ. Բնապահպանական կառավարման պլաններ

I. Մեղմացնող միջոցառումներ

1. Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման պլան,

## Նախնական գնահատման հայտ

2. Մասնագիտական առողջության և անվտանգության պլան,
3. Հանրային քննարկումների և խորհրդակցությունների անցկացման պլան,
4. Մշակութային ժառանգության կառավարման պլան,
5. Մակերեսային և ստորգետնյա ջրերի պահպանման պլան,
6. Բուսական և կենդանական աշխարհի պահպանման և բուսականության մաքրման պլան, այդ թվում՝ ծառերի կառավարման պլան,
7. Հաղորդողիների պահպանման և տեղափոխման պլան,
8. Շրջակա միջավայրի պահպանության պլան,
9. Շինարարական ճամբարների տեղակայման պլան (նկարագրել ճամբարները, կցել ճամբարների ՏԿՊ-ը),
10. Տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ),
11. Երթևեկության և մուտքերի կառավարման պլան,
12. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան,
13. Թափոնների և նյութերի կառավարման պլան (նկարագրել նյութերի տեսակները և ստացման աղբյուրները՝ գոյություն ունեցող կամ նոր բացված, այս բաժնում կցել առաջացող թափոնների տեսակների և ծավալների մասով թույլտվությունները, նկարագրել ասֆալտից առաջացած թափոնների կառավարումը, գոյություն ունեցող կամ նոր բացված լցակույտերը, կցել թույլտվությունները),
14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Նկարագրել տեղամասի տեսքը ծրագրի ավարտից հետո:

### Մոնիտորինգ

- I. Բնապահպանական պարամետրեր՝ ջրի որակ, օդի աղտոտում, աղմուկ և թրթռում: Նկարագրել չափումների կետերը և կցել քարտեզը:
- II. ՏԿՊ-ի համաձայն՝ տեղանքի կանոնավոր մոնիտորինգ:

Ժ. Հաշվետվություն

ՀԱՎԵԼՎԱԾ Ի. ՊԱՏԱՀԱՐԻ/ՄԻՋԱԴԵՊԻ ՄԱՍԻՆ  
ՀԱՇՎԵՌՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Ծրագիր \_\_\_\_\_

1.	Ամսաթիվ/ Ժամ	
2.	Ճանապարհահատված	
3.	Շինարարության Կապալառու/ Ենթակապալառու	
4.	Պատահարի/ Միջադեպի տեսակը	
5.	Ծանրությունը	Բարձր Միջին Ցածր
6.	Պատահարի/միջադեպի նկարագրությունը	
7.	Պատահարի/միջադեպի պատճառի նկարագրությունը	
8.	Կից նկար	
9.	Ձեռնարկված ուղղիչ միջոցառումը	
10.	Ուղղիչ միջոցառումը փաստող կից լուսանկար	
11.	Հետագայում ձեռնարկվելիք ուղղիչ միջոցառումը	
12.	Կրկնվելը կանխարգելուն ուղղված ձեռնարկվելիք գործողությունը	
13.	Ուղղիչ միջոցառումն իրականացնող անձը	
14.	Փակման ամսաթիվ	
15.	Ներգրավված անձինք	

Նախնական գնահատման հայտ

16.	Ներգրավված սարքավորումները	մեքենա-	
17.	Երրորդ կողմի ներգրավում		
18.	Զեկուցման ամսաթիվ		
19.	Զեկույցը կազմեց		

***Միայն Բնժեների օգտագործման համար***

<i>Ամսաթիվ</i>	
<i>Ստացող</i>	
<i>Կայացված որոշում/ձեռնարկված գործողություն</i>	

ՀԱՎԵԼՎԱԾ Լ. Կանաչապատման նախագիծ



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՑՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1  
Հեռախոս՝ + 374 11 584404  
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr  
Օրագրի No՝ 130115L

Ում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Արա Աղայանին

Պատճենը՝ «ԵՎՆ ՕԻԳ» -ի ծրագրի ղեկավար տիկին Նորա Մարտիրոսյանին  
«ԵՎՆ ՕԻԳ» -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2020/676

14-ը դեկտեմբերի, 2020թ.

*Թեև՝ Նախագծի համաձայնեցում*

Կոնտակտային անձ՝  
Հեռախոս՝  
Էլ. փոստ՝

Արա Մարգարյան  
+374 98 636303  
ara.margaryan93@gmail.com

Նախորդող գրություններ՝

անկա չեն

Հարգելի՛ պարոն Աղայան,

Հայտնում եմ Ձեզ, որ մեր ընկերությունը Երևանի քաղաքապետարանի պատվերով իրականացնում է Բսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Համաձայնեցման նպատակով Ձեզ եմ ներկայացնում նշված ճանապարհահատվածի ոռոգման և կանաչապատման նախագիծը:

Առդիր՝ 18 էջ, 3 օրինակից

Հարգանքով,



Ռիչարդ Տադանի  
«Էգիս ինթերնեյշնլ» ընկերության  
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

*Արապյան Մարգարյան*

*15.12.2020թ.*

Egis International  
15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France  
Tél +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - [www.egis.fr](http://www.egis.fr) - S.A.S au capital de 14 855 100 Euros  
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.LCS Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B





ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
«ԿԱՆԱԶՎԱԴԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ: kanach@yerevan.am

Հ/Հ Ելից72/124781

«18» դեկտեմբերի 2020թ.

«ԷԳԻՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ  
ՌԻԶԱՐԴ ՏԱԴԱՆԻՆ

Հարգելի պարոն Տադանի

Ի պատասխան Ձեր 14.12.2020թ-ի N/ARM/130115L/2020/676 (գրանցման համար՝ 20/124781) գրության հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի պատվերով իրականացվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կանաչապատման նախագիծը «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի մասնագետների կողմից հավանության է արժանացել: Ծառերի ու թփերի տեսականու ճիշտ ընտրություն կատարելու նպատակով անհրաժեշտ է կանաչապատման առանձին հատվածների ճշգրտում, որի համար պատրաստ ենք հանդիպել և քննարկել Ձեր մասնագետների հետ: Նախագծի ոռոգման համակարգին վերաբերող հատվածը ընդհանուր առմամբ ընդունելի է «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի համար, միաժամանակ ոռոգման ցանցի կարևոր հանգույցների կառուցման ժամանակ, ինչպես նաև շինարարության ընթացքում խնդիրների առաջացման (որոնք հետագայում կարող են խնդրահարույց դարձնել ՀՈԱԿ-ի կողմից համակարգի շահագործումը) դեպքում առաջարկում ենք դրանք համաձայնեցնել կամ խորհրդակցել ՀՈԱԿ-ի մասնագետների հետ:

Հարգանքով՝

Տնօրեն՝



Ա. Աղայան

Կառ.՝ Ա.Գրիգորյան  
Հեռ.՝ (091) 555-341



